Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

830

2037
F 8

2 010

ՊՈՍԻԻԷԹԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԵԼԳԱՑԻՈՑ

ՃԱՌՔ ԴԱՄԲԱՆԱԿԱՆՔ ՎԵՑ

2037
Բ-84

ՊՈՍԻԻԷԹԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԵԼԳԱՑԻՈՅ

ՃՍՈՒՔ ԴԱՄԲԱՆԱԿԱՆՔ ՎԵՑ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Հ. ԱՐՍԵՆԻ ԿՈՄԻՏԱՍԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1870

11506



4961
47

ԱՌ ՄԵԿԵՆԱՍ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ

Ի ՄԵՐՍ ԲԱՐԲԱՌ

ԴԱՄԲԱՆԱԿԱՆԱՅ

ՎԵՀԻՆ Ի ՀԱՐՏԱՐԱԽՕՍՍ ԳԱԼԼԻՈՅ

ԱՌ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԷՅ ՍԵՊՈՒՀ ՏԻՒՋ

ՇՆՈՐՀԱՊԱՐՏ ՈՒԽՏ ՄԽԻԹԱՐԵԱՆ

ԳԻՏԵԼԻՔ

Որպէս ճակատ մատենիս յայտ առնէ՝ վեցք միայն 'ի դամբանական ճառիցն Պոսիւէթի կան 'ի սմա յեղեալք 'ի մերս։ Զի են նորա և այլք երեք՝ առ հարկէ ճառագրեալք ոչ 'ի կամակար խանդէ մըտաց, որք ըստ նոցին իսկ լանիբուն ազգայնոցն գատաստանի՝ յոյժ հեռի են 'ի գեղջ և 'ի կատարմանէ սոցին, մինչև ասել նոցա՝ թէ չիցեն ինչ ցանկալիք և արժանաւորք մեծի անուան ճարտարախօսին, և թագեալ իսկ 'ի մոռացութեան կան իբրև զայնոսիկ՝ զորոց ճառքն են։ Իսկ վեցերին սոքա, իւրաքանչիւր յիւրում՝ պատշաճի, ծագ և աւարտ համարին սքանչելի հոգեխառն ճարտարախօսութեան և պերճաբանութեան լեզուի մեծի այնր վսեմական հանճարոյն՝ յաչս մոռաւորաբար ընթերցանելեաց, թէ միայն մի յեռանեցի հայն առաջի գալլիական լնագրին։ Բայց հարկ է գիտել՝ զի ինչ ինչ 'ի գովեստ Լուդուիկեայ ԺԴ արքայի՝ առաւելութեամբ են ասացեալ ըստ մեծարոյ կարծեաց ժամանակին։

Ուր ուրեք 'ի կարգի անդ ճառիցն կարևոր պիտոյ թուեցաւ, յաւելաք մեկնութիւնս ինչ կարճառօտս. իսկ յայլ տեղիս, որ բաւուք 'ի մոնն ոք ունիցի զնախակարգեալ պատմական տեղեկութիւնսն, յուսամք թէ առաւելագունի իմիք ոչ կարօտասցի՝ հասանել կալ 'ի վերայ զօրութեան բանին։

1866.

ՃԱՌ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ (Ա)

ՀԵՆՐԻԿԷԻ ՄԱՐԻԱՄՈՒ ԳԱԼԼԻՈՅ

ԴՇԽՈՅԻ ՄԵԾԻՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հենրիկէ Մարիամ էր վեցերորդ 'ի զաւակս Հենրիկոսի չորրորդի, արքայի Գալլիոյ, 'ի Մարիամայ Մեդիկեանց՝ 'ի կնոջէն իւրմէ, Ծնեալ 'ի 1609, և 'ի 1625 հարսնացեալ Կարոլոսի առաջնոյ, արքայի անգլիացւոց՝ ամենայն ազատութեամբք ուղղափառ կրօնից իւրոց։ Ի բորբոքել քաղաքական և կրօնական աղմկի թագաւորութեանն, կեանք դշխոյիս և առնն իւրոյ՝ փոխեցան յանդգնար աղէտս արկածից դամ՝ քան զգամ դժնդակս։ Ապստամբեալ սկովտիացւոց և անգլիացւոց՝ զէն առին ընդդէմ արքային, որ ստիպեցաւ տալ ընդ նոսա պատերազմ. 'ի սաստկանալ ամբոխի վտարանջութեանն և խազմին, հարկ եղև արքայի մեկնել 'ի Լոնդոնէ և 'ի թագուհւոյն։ Այրասիրտ դշխոյն չոգաւ յայնժամ 'ի Հոլանդիա՝ խնդրել նպաստաւորութիւն զօրու և արծաթոյ առն իւրում։ Ի դարձին՝ յանհնարին մրրկէ վտանգեալ՝ փոթորկեալ անկաւ անդրէն 'ի Հոլանդիա, ուստի մուսանգամ չու արարեալ՝ եհաս յԱնգլիա։ Իրազեկ լեալ թշնամեաց, հասին 'ի վերայ հրազէն անօթովք զնդակակոծ առնել զվայրն, ուր կայր արիաբար ահագին վտանգաւ։ Ժամանեալ առ արքայ և այսր անդր ուղեկիցնմա լեալ, բռնադատեցաւ թողուլ զնա վերստին. և զնքբոդեր ապաստան իւր արարեալ, անդ ծնաւ զդուստրն Հենրիկէ Աննա, որ ապա եղև տիկին իշխանին Օռլէանայ Գալլիոյ։

Հազիւ կազդուրեալ 'ի Ծննդոցն՝ հարկեցաւ ապաւինել 'ի Հայրենիս իւր 'ի Գալլիա յերեսաց թշնամեացն, թողեալ զդստրիկն 'ի խնամս օտարաց. և արկեալ անդրէն զանձն 'ի ծով խռովախուժ, և հալածեալ դնդակօք հրազէն անօթոց մինչ 'ի ծովեզերս Գալլիոյ, բիւր վտանգօք կենացն Եհաս հուսկ ուրեմն անդր: Բայց և անդ մնային նմա այլ տառապանք. ժամանակն գալլիացւոց դեպ եղև յաղմուկ մեծի շփոթի. ստէպ ստէպ թշնամանեալ դշխոյիս յապստամբաց անտի՝ մինչ 'ի յապարանսն անդ իւրում 'ի Լուվրին, 'ի կարևորս անգամ կենաց կարօտացաւ ողորմութեան յազգային ժողովոյն: Յայսմ ողորմ պայմանի՝ լուաւ զմահ արքային առն իւրոյ, զոր ետ Քառմուէլ պարտաւոր առնել և դլխատել յամի 1649 'ի փետրուարի 9: Այնուհետև ոչ յայլ ինչ խորհեցաւ դշխոյս՝ բայց 'ի հայթայթել իւր առանձնոյ ինչ, ծածկել անդ զթշուառութիւն իւր, և վախճանել խաղաղութեամբ զաւուրսն: Յայս միտս կառոյց զկուսաստանն Այցելութեան 'ի Շայլեօթ, ուր և նստաւ խակ հանդերձ արքայորդւովն և այլովք զաւակօքն, զորս և հրահանգուցանէր յուղղափառ հաւատս: Ի խաղաղել Գալլիոյ և դառնալ 'ի Փարիզ տանն արքունի, եղև և արքայորդւոյն իւրոյ Կարոլոսի երկրորդի ամբառնալ 'ի գահ նախնեացն իւրոց: Յայնժամ փոքր մի արծարծեալ ոգի դշխոյիս՝ հանդեաւ ինն 'ի դառն վշտացն. մինչ զի առ անձուկ տեսոյ թագաւորեալ զաւակին, ևս առաւել յուսով օգտի ուղղափառացն, երկիցս ճանապարհ արար յԱնգլիա՝ բազում հռչակաւ և մեծարանօք և գորովով ժողովրդեանն: Իբրև անդրէն դարձաւ 'ի Գալլիա, խորհուրդ 'ի մտի դնէր զնշխարեալ աւուրս կենացն վճարել յառանձնոյն անդ Շայլեօթայ. բայց էր նորա և ամարաստուն ապարանք մի 'ի Բոլոնիոյ՝ մօտ 'ի Փարիզ, ուր անցուցանէր զհովոց ժամանակն, և անդ վախճանեցաւ 'ի 1669 'ի սեպտեմբերի 10, ամաց վաթսնից:

Լուդովիկ ԺԴ, եւ փոխել զմարմին նորա 'ի Սուրբ Դիոնեսիոս՝ 'ի դերեզմանս թագաւորացն, իսկ զսիրտ նորա՝ 'ի կուսաստանն Այցելութեան, զոր ինքնին ընտրեալ էր իւր տեղի թաղման: Յետ աւուրց բառասնից Իշխանն Օռլէանայ՝ փեսայ իւր և եղբայր արքային, և բամբինին Հենրիկէ Անն՝ դուստր իւր՝ Տիկնին մեծ, եռուն առնել վասն նորա հանդիսաւոր պաշտօն պատարագի, յորում Պոսիւէթ, առ ժամն Եպիսկոպոս Քոնտոմոյ, խօսեցաւ զնառս զայս դամբանական:

Արդ, թագաւորք, զայս 'ի մտս առէք, խրատեցարուք ամենեքեան ոյք դատիք զերկիր:

Սաղմ. Բ. 10:

Մեծապատիւ Տէր,

Որ թագաւորէն յերկինս՝ հանուրց թագաւորութեանց տէր, որում միայնոյ են փառք՝ մեծութիւն և իշխանութիւն, նա ինքն միայն է փառաւորեալ 'ի դնել օրէնս թագաւորաց, և տալ նոցա՝ յորժամ հաճեսցի՝ խրատս մեծամեծս և ահագինս: Թէպէտ բարձր առնիցէ զգահս, թէպէտ նիզուն. թէ հաղորդս զօրութեան իւրում արասցէ զնշխանս, և թէ առ ինքն զայն ամփոփեալ՝ զհիքութիւն ևեթ նոցին թողցէ 'ի նոսա, զպարտս նոցուն ուսուցանէ նոցա բարձրագոյն օրինակաւ ըստ իւրում արժանին: Քանզի յընձեռուել նոցա զզօրութիւն իւր, հրաման տայ 'ի պէտս բարեաց աշխարհի վարել զայն՝ իբրև զինքն. և յամփոփելն, յայտ առնէ նոցա, թէ ամենայն մեծութիւն նոցին՝ փոխ

առեալ է, և զի թէ և յաթոռ ամբարձեալք՝ ոչ ինչ ընդ-
հատ ընդ ձեռամբ իւրով են և ընդ գերակայ իշխանու-
թեամբն: Այսպէս խրատէ նա զԹագաւորս՝ ոչ բանիւք
և ևթ և պատգամաւք, այլ՝ և արդեամբք և օրինակօք. Արդ,
Խաղաւորք, զայս 'ի մէջ առէք, խրատիչքարոք ամենեքեան ոյք դա-
տիք զերկիր:

Քրիստոնեայք, զորս յիշատակ մեծի դշխոյիս, դատեր՝
տիկնոջ և մոր Թագաւորաց հզօրաց, և երից Թագաւորու-
թեանց բամբիշնս, Ժողովէ՝ 'ի կողմանց կողմանց յայս պաշտօն
ազաւոր, Ճառս այս ցուցցէ ձեզ մի յահաւոր օրինակաց ան-
տի՝ որ յանդիման առնեն յաչս աշխարհի զուշանալութիւն իւր
բովանդակ: Ի մի և ևթ կեանս տեսանիցէք համօրէն զծայրս
երաց մարդկայնոց. երջանկութիւն անսահման, նոյն և տա-
ռապանք. երկար և խաղաղ վայելք միոյ յերևելի Թագաց
տիեզերաց. ամենայն փառք զարմի և մեծութեան հաւա-
քեալ 'ի մի գլուխ, որ մատնի ապա յամենայն թշնամանս
բախտին. իրաւունք արդարութեան՝ յաջողութիւն գտեալ
նախ, և ապա յետս ընդդէմ յանկարծ պատահարք, ան-
լուր փոփոխմունք. ապստամբութիւն յերկար սանձահա-
րեալ, հուսկ ապա ընդվզեալ տիրացեալ 'ի սպառ. ստամ-
բակութիւն սպերասան ամենեին, օրէնք բարձեալ, Թա-
գին մեծվայելչութիւն առ ոտն հարեալ՝ ցայնժամ անծա-
նօթ ոճրագործութեամբք, յափշտակութիւն և բռնակա-
լութիւն ընդ անուամբ ազատութեան. դշխոյ մի փախչ-
տեայ՝ ոչ ուրեք ինչ գտեալ ապաստան յերեսին Թագա-
ւորութիւնն, և աշխարհ իսկ իւր հայրենի՝ տեղի սքսո-
ւրանաց միայն լեալ նմա այնուհետև. ինն Ճանապարհք
բամբշան ընդ ծով մրրկածուփ. ովկիանոս հիացեալ՝ տե-
սանելով զինքն յայնքան նուազս հատեալ անցեալ պէսպէս
հանդերձանօքք և յայլեայլ պատճառս. ութոտ մի անար-
գաբար տապալեալ, և աքանչելապէս կանգնեալ վերատին:

Զայդ աւադիկ ուսուցանէ Աստուած զԹագաւորսն,
այդպէս ցուցանէ աշխարհի զոչնչութիւն փառաց նորա և

պերճանաց: Եթէ մեզ պակասեցին բանք, եթէ Ճառքս
ոչ հաւասարեցին մեծութեան և բարձրութեան առաջ-
արկութեանս, արդիւնք իրացն ինքնին խօսեցին բաւա-
կան. սիրա մեծի դշխոյիս՝ ամբարձեալ երբեմն բազմապա-
տիկ երկար բարեբախտութեամբք, և ապա յեղակարծումն
տարակարծի 'ի խորս ընկղմեալ դառնութեան, շատ իսկ
բարձրաբարբառ խօսեցին. և եթէ չիցէ օրէն առանձին ու-
մեք խօսել խրատս առ իշխանսն զնորանշան անցիցս, Թա-
գաւոր ոմն մատուցցէ ինձ զբարբառ իւր՝ ասել ցնոսա.
Արդ, Խաղաւորք, զայս 'ի մէջ առէք, խրատիչքարոք ամենեքեան ոյք
դատիք զերկիր. խելամուտ լերուք, ով մեծամեծք երկրի,
ուսարուք՝ դատաւորք աշխարհի:

Բայց խմաստուն և աստուածասէր բամբիշնն՝ զորմէ մեր
բանքս են, ոչ միայն տեսիլ եղև առաջի մարդկան՝ ուսա-
նել անտի նոցա զնորհուրդս աստուածախնամ Տեսչու-
թեանն և զանհրաժեշտ յեղյեղմունս պետութեանց. ան-
ձամբ զանձն խրատեաց նա, մինչդեռ Աստուած իւրով
օրինակաւն խրատէր զԹագաւորս: Ասացի իսկ, թէ մեծն
Աստուած ուսուցանէ զնոսա՝ և յընձեռելն և 'ի հանել 'ի
նոցանէ զիշխանութիւն: Դշխոյն զորմէ խօսիմք՝ 'ի միտ առ
նմանապէս երկուս խրատս ծայրայեղս. մա՝ քրիստոնէա-
բար վարեցաւ 'ի յաջող և յանյաջող բախտին: Ի միումն
բարեբարոյ գտեալ, 'ի միւսումն միշտ երևեալ անպար-
տելի: Մինչ յերջանկութեան էր, անբաւ բարեբարու-
թեամբք եցոյց աշխարհի զզօրութիւն իւր. իբրև լնք եթող
զնա բախտն, առաւել քան յամենայն ժամանակս առա-
քինութեամբք Ճոխացոյց զանձն, մինչև յիւր 'ի բարի՝ կո-
րուսանել զիշխանութիւնն արքայական զոր ունէր 'ի բարի
այլոց. և եթէ հնազանդեալքն իւր և դաշնակիցք և Եկե-
ղեցի համօրէն օգտեցաւ 'ի մեծութեանց իւրոց, նա ինքն
դիտաց շահել յաղետից իւրոց և 'ի չուառութեանց առա-
ւել քան յամենայն փառաց իւրոց: Այսմ միտ եդեալ ուշ
արասցուք 'ի յաւերժ յիշատակաց վարս բարձրապատիւ

և վերափառ հզօր բամբշանն Հենրիկէի Մարիամու Գալ-
ղիոյ, Դշխոյի Մեծին Բրիտանիայ։

Թէպէտ և ոչ ոք անգիտանայ զմեծաշնորհ կատարելու-
թիւնս դշխոյի՝ որոյ զքուցացն համբաւ լցեալ է զոլորտս
տիեզերաց, պարտ սակայն անձին համարիմ՝ յուշ ածել
ձեզ նախ զայնս, զի այս տեղեկութիւնն՝ մեզ 'ի պէտս եղիցի
ընդ Ճառս ողջոյն։ Աւետարան է երկարապատում՝ առնել
զմեծափառ ազգատոհմ տիկնոջս. ոչ ինչ ուրեք ընդ արե-
գակամբ տեսանի զուգական մեծութեան նորա։ Սուրբն
Գրիգոր Հռովմայ քահանայապետ՝ զայս 'ի սկզբանց անտի
դարուց մատուցեալ է գովութիւն առանձին Թագին գալ-
ղիական, թէ այնչափ 'ի վեր է նա քան զայլ Թագս աշխար-
հի, որչափ շուք արքունի զանցանէ զհասարակածին բախ-
տիւք [1]։ Իսկ եթէ զայս այսպէս ասացեալ է զաւուրց անտի
ժամանակաց Շելգեբերտի՝ բարձրացուցեալ զազգն Մե-
րովեայ, տեսէք զինչ ունէր ասել զզուարակին Լուդուիկոսի
սրբոյ և Մեծին Կարոլոսի։ Այսր զարմի եղեալ շառաւիղ,
դուստր Հենրիկոսի Մեծի և Թագաւորաց բազմաց, սիրտ
իւր մեծ անցոյց զանցոյց զծննդեամբն. բայց 'ի գահոյիցս՝
այլ ամենայն բարձ անարժան էր նմա։ Եհաս արդարև 'ի
հաճոյս կամաց մեծանձնութեան իւրոյ, իբրև ետես թէ 'ի
մի զօդելոց էր զաւուրն գալ՛ղիական ընդ արքունական զար-
մին Սուտարտեանց, առ որս հասեալ էր ժառանգութիւն
Թագին Անգլոյ 'ի գստերէն Հենրիկոսի եօթներորդի. բայց
'ի յոլով դարուց ունէին առանձին սեփականութեամբ ըղ-
գաւազանն Սկովտիոյ, և կարդեալ գայն 'ի վաղնջուց Թա-
գաւորաց անտի՝ որոց սկիզբն ծրարեալ Թաքուցեալ կայ
'ի մթան կանուխ ժամանակաց։ Սակայն ուրախութիւն
Թագաւորելոյն 'ի վերայ ազգին մեծի՝ էր վասն կարող լի-
նելոյ ընալ զանհունն ցանկութիւն սրտին, որ անդուլ յոր-
դորեր զնա 'ի բարի առնել։ Էր նորա առատաբաշխութիւն
արքայատուր, և գոյր ասել՝ թէ զոր ոչն տայր՝ կորուսանէր։

1 Գիրք Զ. Թուղթ Զ։

Այլ և նորա առաքինութիւնք ոչ ինչ ընդհատ զարդ-
մանալիք էին։ Հաւատարիմ գտեալ խորհրդատահ տարանջ-
մանց և դաղանեաց՝ ասէր. թէ պարտ է արքայից հանդոյն
հարց խոստովանութեան պահել լռութիւն և զնոյն զգու-
շութիւն ունել։ Ի մոլեգին զայրուցս քաղաքական պատե-
բազմացն չգերկուացաւ ոք երբեք զխոստմանէ նորա, և ոչ
յուսահատ եղև 'ի գթութենէն։ Ո՞վ ոք այլ Ճարտարա-
գոյնս առ 'ի կիր զարուեստն շնորհալից, որ տայ խոնարհել
առանց անարգութեան, և յաջողապէս միաբանել զազգ-
ութիւն ընդ պատկառանաց։ Քաղցր՝ ընդել և հաճոյ,
որպէս և պէնդ և ժիր, գիտէր 'ի հաւան ածել և ըմբերա-
նել՝ որպէս և հրամայել, և զոյդ իշխանութեան ազգական
առնել զբանն։ Տեսջիք քանիսն խմաստութեամբ պարա-
պէր 'ի գործս արքունի. և ձեռնն Ճարտար փրկէր զաբրու-
թիւնն, եթէ գոյր տերութեանն փրկութիւն։ Զէ հնար
գովել ըստ արժան բաւականին զմեծութիւն սրտի դշխո-
յիս։ Ոչ իւիք կարէր ստանալ նմա բախտն. ոչ կանխա-
գուշակ էարիք, ոչ անակնկալք նկուն արարին զարութիւն
նորա։ Զի՞նչ ասացից զանդեղաւուն հաստատութենէ նորա
'ի կրօնս նախնեացն իւրոց։ Քաջ գիտաց առնուլ 'ի միտ,
թէ այն հաստատութիւն՝ պարծանք էին տան իւրում որ-
պէս և Գալ՛ղիոյ առ հասարակ, ազգ՝ որ միայն ընդ տիե-
զերս յերկոտասան դարուց հետէ, յորմէ Թագաւորք իւր
նուիրեցան քրիստոնէութեան, չետես զոք 'ի գահն արքու-
նի բայց զնկեղեցւոյ ևեթ որդիս։ Վասն որոյ և նա յայտ
արար միշտ՝ թէ ոչ ինչ բաւական գոյն մեկնել զինքն 'ի
հաւատոց սրբոյն Լուդուիկոսի։ Այր իւր արքայն՝ զայս
գեղեցիկ գովութիւն մատոյց նմա մինչև ցմահ, թէ կրօնից
մասամբ ևեթ զատեալ գտանէին սիրտք իւրեանց. և իւ-
րով վկայութեամբն երաշխաւորեալ զբարեպաշտութիւն
Թագուհւոյն, արքայն խմաստուն եցոյց միանգամայն ամ-
նայն երկրի զգութ՝ զսէր ամուսնական և զանդրժելի հա-
ւատարմութիւն անհամեմատ տիկնոջ իւրոյ։

Աստուած, որ զամենայն զնորհուրդս իւր կարգէ 'ի պահպանութիւն Եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, և ամենահնար հանճարով վարէ զամենայն 'ի թաքուն դիտաւորութիւնս իւր, առ 'ի ձեռս երբեմն զզգաստական դեղեցկութիւնս երկուց կանանց սրբոց դիւցազանց՝ 'ի փրկել զհաւատացեալս իւր 'ի ձեռաց թշնամեաց իւրեանց: Իբրև կամեցաւ աղատել զքաղաքն Բեթիղուա, 'ի գեղն Յուդթայ լարեաց որոգայթ անակնկալ և անճողոպրելի զաչացու անբանութեանն Հոլոփեռնեայ: Պարկեշտագեղ վայելչութիւնք տիկնոջն Եսթերայ՝ զնոյն փրկական արդիւնս մատուցին, բայց ոչ նովին սաստկութեամբ: Որսացաւնա զսիրտ թագաւորին զառն իւրոյ, և զարքայն անհաւատ եդ հաչակաւոր պաշտպան ժողովրդեանն Աստուծոյ: Այսպիսեաւ իմն գոգցես խորհրդով մեծն այն Աստուած հմայս ինչ անմեղանչական կազմեալ էր արքային Անգլիոյ յանսպառ շնորհս անդ տիկնոջ իւրոյ դշնոյն: Քանզի ժառանգեալ էր սորա զսէր նորա, – զի որ 'ի սկզբան անդ երևեալ մեայլ՝ փութով փարատեցաւ –, և բարեբախտ ծննդականութիւն սորա կրկնապատկէր օր ըստ օրէ զսուրբ կապանս սիրոյ նոցին առ միմեանս, առանց ինչ վտանգի իշխանութեան արքային տեառն իւրոյ՝ 'ի գործ արկանէր զսրբութիւն իւր 'ի հայթայթել դոյզն ինչ դիւր ուղղափառացն տառապելոց: Անդստին 'ի հնգետասանամենից 'ի խնամս յայս գտաւ բաւական. և վեշտասան ամք անթերի յաջողութեան՝ սահեալք անընդհատ 'ի զարմանս բոլոր աշխարհի, եղեն ամք վեշտասան՝ հեշտականութեան վշտմբեր Եկեղեցւոյն: Անուն դշնոյս նօթձեաց ուղղափառաց զբախան չքնաղ և գոգ անհաւատալի՝ ընդ տեսչութեամբ լինելոյ հետ զհետէ երից առաքելական նուիրակաց, որ բերին առ նոսա զմխիթարութիւնսն՝ զոր որդիքն Աստուծոյ ընդունին 'ի հաղորդակցութենէ սրբոյ Գահին: Քահանայապետն Գրիգոր սուրբ, 'ի գրին առ բարեպաշտ ինքնակալն Մաւրիկ, առաջի առնէ նմա զպարտս քրիստոնեայ թագաւորաց բանիւքս

այսոքիւք. «Գիտեա, ով մեծդ ինքնակալ, զի պետական իշխանութիւնդ շնորհեալ է ձեզ 'ի վերուստ 'ի նպաստ առաքինութեան, 'ի հորդել զճանապարհս երկնից, և երկրաւոր թագաւորութեան ծառայել երկնաւորին[1]»:

Այսմ բանից ճշմարտութիւնն ինքնին թելադիր եղեալ է նմա: Զի զի՞նչ իշխանութեան վայելչագոյն՝ որպէս օգնական առաքինութեան լինել. իմ իմիք սպասաւոր պարտիցն լինել զօրութիւն, բայց պաշտպանելոյ իրաւանց. և առ ինչ հրամայիցեն մարդիկ, բայց 'ի հնազանդեցուցանել Արարչին: Մտադրութեան արժանի է մանաւանդ հարկն մեծաշուք, զոր քահանայապետն մեծ դնէ 'ի վերայ թագաւորաց, հորդելոյ զերկնից ճանապարհսն: Ասաց Փրկիչն յիւրում Աւետարանին. Քանի՞ նեղ է ճանապարհն որ տանի 'ի կեանս. և որ նեղէն զոյն՝ այս ինչ է: Քանզի արդարն՝ անաչառ առ ինքն և անուէր հալածիչ անիրաւ կարեացն, գտանի հալածեալ և յանիրաւ կարեաց այլոց, և չմարթէ իսկ տալ աշխարհի թողացուցանել զինքն անվրդով յամայն և յառապար ճանապարհի անդ, ուր յափսիթերս սողալով մագլի մանաւանդ քան թէ ընթանայ: Հասէք, ասէ սուրբն Գրիգոր, զօրութիւնք յաւիտենից, տեսէք ընդ ո՞ր շաւիղ ճանապարհ առնէ առաքինութիւն, կրկին 'ի նեղ անկեալ, ինքնին՝ և 'ի բռնութենէ հալածչաց. օգնեցէք նմա, ձեռն կարկառէք, զի ահա տեսանէք զնա տաժանեալ 'ի մարտին՝ յորում կուռի 'ի նեղբոյ ընդդէմ բաղում փորձութեանց որ տագնապին զմարդոյս բնութիւն. ամրացուցէք գոնեայ զնա յարտաքին թշնամանաց. գովին լայնեսցիք փոքր մի զճանապարհս երկնից, և յար-

[1] Զի իշխանութիւն առ այն շնորհեցաւ յերկնուստ բարեպաշտութեան տերանցդ իմոց 'ի վերայ ամենայն մարդկան, զի բարեսէրք օգնութիւն գացին, զի լայնեսցի երկնից ճանապարհն, զի երկրաւոր արքայութիւնս սպասաւորեսցի երկնաւոր արքայութեանն: Գէր+. Բ. ԽոՀ՝ԼԻ ԿԲ:

դարեսջիք զշաւիղն, որոյ զառ՝ի վեր բարձրութիւն իւր և խոժոռութիւն՝ դժուարին յոյժ գործեսցեն զնա միշտ։

Սակայն, եթէ դուցէ երբեք նեղ ասել զմանապարհ քրիստոնէին, տեսրը, ՝ի ժամանակս հալածանաց է. զի զինչ թշուառագոյն մարթիցի խմանալ քան զայն՝ զի չուենիցի ոք պահել զհաւատն առանց ՝ի տանջանս մատնելոյ, ոչ անխռով զոհս մատուցանել և ոչ խնդրել զԱստուած՝ բայց եթէ դողութեամբ։ Այս ողբալի վիճակ էր ուղղափառացն անգլեացւոց։ Մոլորութիւն և նորաձայնութիւն լսելի լինէին յամենայն տեղեաս, և հինաւուրցն վարդապետութիւն՝ որում արժան է ըստ աւետարանական պատգամին մինչև ՝ի վերայ տանեաց քարոզել, հաղիւ կարէր խօսել յունկանէ։ Զարմացեալ կային որդիքն Աստուծոյ, զի ոչ էս տեսանէին ոչ սեղան, ոչ նուիրան, ոչ դատարանս ողորմութեան՝ արդարացուցիչս խոստովանողաց։ Ո՛վ ցաւոց։ հարկ էր թաքուցանել զպաշտաւութիւն նովին խնամով որով զմեզ։ և Կենարարն ինքնին՝ տեսանէր զանձն բռնադատեալ, ՝ի մեծ թշուառութիւն մարդկան ապերախտից, խնդրել այլ իմն առագաստս և այլ իմն խաւար քան զնորհրդական քողն և զմութն՝ որովք ծածկի կամաւ ՝ի Սրբութեան սեղանոյն։ Իսկ իբրև եկն եհաս դշխոյս, խստութիւնն մեղմացաւ, և ոգի առին ուղղափառք։

Տաճարն արքունական՝ զոր բաղմածախս ետ շինել յապարանս իւր ՝ի Սըմբրսէդ, տայր եկեղեցւոյն զնախատիպ կերպարանսն։ Հենրիկ, արժանաւոր գուսար Լուդովիկոսի սրբոյ, եռանդն ածէր անդ ամենայն բաղմութեանն իւրով օրինակաւն. և առանձնութեամբք իւրովք և աղօթիւք և ջերմեռանդն պաշտամամբք ՝ի հաստոյ պահէր անդ զվաղեմի հմբաւ երիցս քրիստոնեայ տանն Գալլիոյ։ Քահանայք Աղօթարանին՝ զոր մեծն Պետրոս Բերուլեան (Բ) ընդ իւր տարեալ էր, և յետ նոցա կնկղաւոր կրօնաւորքն փրանկիսկեանք, բարեպաշտութեամբ իւրեանց պճնեցին զսեղանան ՝ի Ճշմարիտ զարդ իւրեանց, և զպաշտօնն աստուածային ՝ի բուն իսկ յիւր ՝ի մեծվայելչութիւնն։ Քահանայքն այն և կրօնաւորքը, նախանձաւոր և անխոնջ հովիւք վշտաւեսս այնր հօտի, որ և կէին յԱնգլիա աղքատք, անյարկք և յանծանօթս, «զորս և ոչ արժէ աշխարհս[1]» գայլն զգենուլ ինդութեամբ զփառացն նշանակս կարգին իւրեանց ՝ի տաճարի դշխոյիս, և սգազգեաց Եկեղեցին՝ որ երբեմն հաղիւ կարէր հեծել ազատօրէն և ողբալ զանցեալ փառսն, բարձրաձայն հնչեցուցանէր զերգս Սիոնի յերկիր օտար։ Այսպէս դշխոյն բարեպաշտն միթիթար լինէր հաւատացելոցն, և զյոյս նոցա զօրացուցանէր։

Յորժամ թոյլ տայ Աստուած ելանել ՝ի գերոյն անդընդոց զծուխն խաւարիչ արեգական, ըստ բարբառոյ Յայտնութեանն[2], զնոտորութիւն ասեմ և զհերձուածութիւն. յորժամ՝ ՝ի պատժել զգայթագղութիւնս, կամ՝ ՝ի զարթուցանել զժողովուրդս և զհովիւս, ՝ներսէ ոգւոյն մոլորութեան պատրել զամբարտաւան հոգիս, արկանել ընդ բնաւս թախանձ վիսուութեան, անստամ ընդվայրախուզութիւն և ոգի ապստամբութեան, ՝ի խորախորհուրդ իմաստութեան անդ իւրում սահմանս հատանել չարաշչուկ ընթացից խոտորութեանն և կրից Եկեղեցւոյ իւրոյ։ Ոչ միթիմ, քրիստոնեայք, ՝ի ճառս բանից հանդերձեալ վիճակի հերձուածոց յետին դարուցս, և ոչ սահմանեալ չափոյն՝ յորում ՝ի մտի ունի Աստուած կարձել զդէմն նորա. այլ թէ չնաբեն զնս միաբիմ, եթէ յուշ ածեալ զդարսն զառաջինս՝ ատոյգ գտակաւ ՝ի կշիռ արկեալ եմ ընդ այժմու հանգամանացս, համարձակիմ կարծել, և միաբան տեսանեմ զիմաստունս ՝ի կարծիս յայս, թէ անցին գնացին աւուրք կուրութեանն, և ժամանակ է այսուհետև վերստին ծագելոյ լուսոյն։ Իբրև Հենրիկոս արքայ Ը, իշխան՝ յայլում ամենայնի կատարեալ, սաերիւբեցաւ ՝ի կարիսն՝ որ կորուսին զԱլոմոն և

1 Եբր. ԺԱ, 38։
2 Յայտ. Թ, 1։

այլ ոչ սակաւ թագաւորս, և խախտել ձեռն արկ զԵկե-
ղեցւոյ իշխանութիւն, ազգ արարին նմա հանձարեալք՝ զի
'ի գրգռութեցուցանելն զայս կէտ միայն, զամենայն վասն-
դէր, և ընդդէմ խորհրդոց իւրոց տայր ապագայ ժամա-
նակաց համարձակութիւն արձակերասանակ: Կանխեցին
ազդեցին նմա զայդ խմաստուն՝ն. իսկ լինիցին ըսելի խմա-
ստունք 'ի ժամանակս մոլութեան, ոչ ծաղր լինիցին մար-
գարէութիւնք նոցա: Զոր զգնամիտ նախատեսութիւն
չմարթաց 'ի մոի գնել մարդկան, իշխան ոք զօրագոյն, ըզ-
փորձոյ ասեմ, սոխլեաց զնոսա հաւատալ: Ամենայն սըբ-
բութիւնք կրօնից յաւար մատնեցան. այնչափ փոփոխե-
ցաւ Անգլիա, զի ինքն իսկ ոչ գիտէ՝ յինչ արժան իցէ կալ.
և յերկրի ևս իւրում և 'ի նաւահանգիստսն՝ առաւել ալե-
կոծ քան զաշխարհածովն որ պատի զնովաւ, տեսանէ զինքն
հեղեղեալ սոսկալի ուխտիւք հազար աղանդոց այլանդակաց:
Ո՛ գիտէ, թէ 'ի միտս եկեալ յանօրինակ սխալմանց թա-
գաւորութեան, ոչ ևս յառաջադէմն նկրտիցի 'ի խոր-
հուրդս իւր, և 'ի փոփոխմանցն տաղտկացեալ՝ քաղցր ակն-
արկիցէ յառաջին վիճակն:

Այլ զարմանացուք աստանօր ընդ բարեպաշտութիւն
դշխոյիս՝ որ գիտաց պահպանել քաջ զպատուական նրշ-
խարս այնչափ հալածանաց. ոգբան տնանկք, քանի տա-
ռապեալք, քանիսն տունք կործանեալք 'ի պատճառս հա-
ւատոց՝ կանգնեցան կացին ընդ բովանդակ աւուրս կենաց
սորա յանչափ առատութենէ տրոց ողորմութեան իւրոյ,
որ զեղեալ ծաւալէին ընդ ամենայն կողմանս՝ մինչև 'ի ծագս
երկից իւրոց թագաւորութեանցն, և յորդորեալ տարա-
ծեալ մինչև 'ի թշնամիս հաւատոցն՝ քաղցրացուցանէին
զդաժանութիւն նոցա և ածէին անդրէն յԵկեղեցի: Ուս-
տի ոչ պահպաներ ևեթ, այլ և բարգաւաճեր զժողովուրդն
Աստուծոյ. անթիւ էին մոլորելոցն դարձք. և որ ակամա-
տես վկայքն կացին երացն, ցուցին մեզ՝ զի յերիս ամսն
զորս եկաց յարքունիս որդւոյ իւրոյ արքայի, միայն տա-

ճարն արքայական առաւել քան զերիս հարիւրս ետես 'ի
դարձ եկեալ, որ թող զայլն՝ յուրաստ կացին սրբու-
թեամբ 'ի մոլորութենէ իւրեանց առ ոտս պարգևատեաց
իւրոց: Երանի՛ նմա վասն այսպիսի խնամով պահպանե-
լոյն զկայծակն աստուածային հրոյն, զոր եկն Յիսուս լու-
ցանել յաշխարհի: Եթէ երբեք յինքն եկեսցէ Անգլիա,
եթէ մեծագոն խմորն յաւուր միում սուրբ առնիցէ զա-
մենայն զանգուածն յոր յարքայական ձեռաց անտի իւ-
րոց խառնեցաւ, կարի յոյժ հեռաւոր յեսինք ոչ գտա-
նիցեն գովեստ բաւական 'ի հռչակ հարկանել զառաքինու-
թիւնս աստուածասիրին Հենրիկէի, և բարեպաշտութեան
իւրում պարտ համարեսցին ընծայել զյիշատակաց արդ-
ժանի գործ հաստատութեան Եկեղեցւոյ:

Զի եթէ Եկեղեցւոյ պատմութիւն՝ մատղիւր յօժա-
րութեամբ պահելոց է զյիշատակ դշխոյիս, պատմութիւնս
մեր ոչ լռեսցէ զգուստն զոր հայթայթեաց իւրում տանն
և հայրենի աշխարհին. տիկին և մայր սերտիւ սիրելի և մե-
ծարոյ՝ հաշտեցոյց ընդ Գալլիոյ զայր իւր զարքայ, և զարք-
քայ՝ զորդի իւր: Ո՞վ ոչ գիտիցէ, զի յետ անուանի պա-
տերազմի Ռէյ կղզւոյն և մեծահռչակ պաշարմանն Ռօ-
շէլայ, բամբիշնա՝ ժիր 'ի ձեռն առնուլ զպիտոյի ժամն դի-
պոյս, ետ կռել զդաշն հաշտութեանն, որ խափանեաց
զԱնգլիա 'ի յերկարելոյ զօգնականութիւն իւր առ ապըս-
տամբ կալուլենականսն. և 'ի յետին ամս, իբրև մեծ թա-
գաւորն մեր՝ առաւել քան շահուն իւրոյ՝ խոստման իւ-
րում և հպատակացն փրկութեան նախանձաւոր, ազգ ա-
բար պատերազմ առ անգլիացիս, ոչ ապաքէն սա գտաւ
միջնորդ խմաստուն և աջողակ. ոչ սա միաբանեաց զերկո-
սին թագաւորութիւնսն, ոչ և զկնի յամենայն 'ի դէպս միա
եղեալ գուն գործեաց պահել զնոյն միամտութիւն: Այս
խնամք այժմ ձերում արքայական բարձրութենդ (Դ) մը-
նան. և օրինակ մեծի դշխոյիս, որպէս և արիւն գալլիա-
կան և անգլիական՝ զոր երջանիկ հարսանեացդ պատաւ 'ի

մի խառնեցէք, պնորսի հնչել 'ի ձեզ զրգռումն անհանգիստ
Ջանալոյ 'ի միութիւն երկոցունց Թագաւորացն՝ ձերոյդ
մերձաւորաց, որոց իշխանութիւն և զօրութիւն բաւական
են յօրինել զբաստ համօրէն Եւրոպէի:

Մեծապայծառ տէր, ոչ եթէ բազկաւդ և եթ այդու հզ-
ըրաւ՝ և մեծաւ սրտիւդ առնիցէք ձեզ անուն քաջութեան.
այլ և 'ի հանդստի խոր խաղաղութեան դասնիցէք մար-
թանս փառաւորութեան: Եւ կարող էք վաստակել 'ի վե-
րայ աշխարհիս առանց խաղի վրդովից, զոր օրինակ արա-
րէք բաղում անգամ 'ի մեծամեծ վտանգս մարտից՝ կա-
լեալ 'ի բռնի զոգիսդ ձեր զզատուական և զկարևոր: Մե-
ծապայծառ տէր, ոչ այսմ և եթ պաշտման ակնկալու-
թիւն է առ 'ի քէն, այլ գոյ ամենայնի յոյս յիշխանէ՝ ո-
րում խորհրդական է խմաստութիւն, խրախոյս՝ քաջու-
թիւն, և արդարութիւն՝ գործակից յամենայնի: Բայց յով
առեալ տանի զիս նախանձն իմ 'ի տխուր նպաստակս 'ի
բաց. 'ի քէնն յառեալ կամ առաքինութեանցն Փիլիպպէայ,
և ջանեմ զմտաւ՝ թէ առաջի կայ ինձ պատմութիւն ապե-
տիցն Հենրիկէի:

Խոստովան լինիմ ասա 'ի սկզբանս, զի այժմ առաւել
քան զյոյժ 'ի միտ առնում զդժուարութիւն ձեռնարկու-
թեանս: Յորժամ 'ի մտոյ հայիմ յանլուր տառապանս
մեծի դշխոյիս, ոչ ևս դասանեմ բանս, և միաբ իմ տոսկա-
ցեալ 'ի բաղում անարժան կրից զոր հասուցին մեծի շքոյ
և առաքինութեան, ջառնոյր բնաւ յանձն դալ անկանել
յայնքան զարհուրանս, եթէ սքանչելի արութիւն բամ-
բասանս՝ որով տարաւ վշտացն, ոչ յոյժ դեր 'ի վերոյ անցա-
նէր զանցաներ զմեղքն որ զայն գործեցին: Սակայն, քրիս-
տոնեայք, և այլ ինն հոգ միանգամայն տարդնապէ զիս. ոչ
մարդկայնն է գործս զոր խորհիմ. ոչ պատմաբան ոք եմ
ասասնօր՝ մեկնել ձեզ զդաղանիս խորհրդարանաց, կամ
զառաքմունս Ճակատուց, կամ զասսի անտի կողմանցն խըն-
դիրս. հարկ է ինձ վերանալ քան զմարդ՝ առ 'ի դողացու-

ցանել զարարածս ամենայն ընդ դատաստանաւք Արարչին:
Մտից ընդ Դաւթի 'ի զօրութիւնս Տեառն [1]. և ունիմ ցու-
ցանել ձեզ զզարմանալիս ձեռնոնորա և զնորհրդոցն. խոր-
հրդոցն արդար վրէժինդրութեան 'ի վերայ Անգլիոյ, խոր-
հրդոց ողորմութեան 'ի փրկութիւն զշնայիս. այլ խոր-
հրդոց՝ որ դրոշմեալ են մատամբն Աստուծոյ, որոյ այն-
պէս կենդանի են տիպք և ծանօթական յառաջի եղեալ
դէպսդ, զի չէք այնմ լուսաւորութեան ընդդէմ խնուլ
զաչս:

Թէպէտ և 'ի վեր յոյժ ոք ելանիցէ՝ խուզել 'ի վէպս զօ-
րինակս ահեղագղորդ ատանութեանց, դատանի՝ զի մինչև
ցայս վայր պատճառս առեալ են կամ 'ի թուլութենէ և
կամ 'ի բռնութենէ իշխանաց: Քանզի իբրև իշխանք, ան-
փոյթ արարեալ տեղեկութեան գործոց իւրեանց և զօրաց,
յորս և եթ պատաղիցին, որպէս ասէր ոմն 'ի պատմա-
գրաց[2], չունիցին ինչ պարծանս՝ բայց միայն 'ի զեղծութեան,
և ոչ հանձար՝ բայց 'ի հայթայթանս հեշտութեանց. կամ
'ի բուռն յարձակմանէ բնութեան վարեալք, ոչ ջափ պա-
հիցեն և ոչ օրէնս, և զանիծութիւն և զերկիւղ բառնայ-
ցեն 'ի մարդկանէ, մինչև երևեալ նոցա, թէ չարիքն զոր կրեն՝
'ի վեր քան զանկալութիւն իւրեանց անտանելի եղեն,
յայնժամ կամ ստամբակութիւն տարապայման, կամ
վշտամբերութիւն 'ի ծայր հասեալ, ահագինս սպառնան
տանցն Թագաւորմէց: Կարդայս առաջին, Թագաւոր Անգ-
լիոյ, էր այր արդար, համեստ, մեծանձն, քաջահմուտ 'ի
գործս և 'ի հեթեթանս Թագաւորութեան. չեղև ոք երբէք
իշխան առաւել քան զնա կարող՝ ոչ միայն մեծարոյ և սուրբ
առնելոյ զարքայութիւն, այլ և սիրելի և յանկալի իւրոց
ժողովրդոցն: Զի՞նչ ունիցի ոք 'ի բիծ տանել նմա՝ եթէ ոչ
զգթութիւն: Կամ է ինձ վկայել զնմանէ զոր ասացն զԿե-

1 Սաղմ. Հ, 16:
2 Կուինտոս Կուրտիոս, գիրք Ը, 9:

սարէ մատենագիր ոք հաչակաւոր, թէ գթած եղև՝ մինչև ստիպեցաւ 'ի ղջու�ն գալ. Կեսարու առանձինն և սեփական իցէ գթութեանն գրոշմ, որով զանցոյց զամենեքումբք մինչև յապաշաւ [1]: Այս ուրեմն, եթէ կամք իցեն, լինիցի փառաւոր Թերութիւն Կարոլոսի՝ որպէս և Կեսարու. այլ որ կամինն կարծել՝ թէ 'ի տառապելս և 'ի պարտեալս տկար է ամենայն, մի այնու զմտաւ լինչ ածիցեն սաղրել մեզ, թէ արութեան իւրում պակասէր զօրութիւն, և խորհրդոց իւրոց՝ ուժգնութիւն: Սատիկ անհնարին հալածեալ յանողոք դժնէութենէ բախտին, մատնեալ յիւրոցն ամենեցունց, ինքն յինքենէ ոչ պակասեաց. 'ի վերայ ամենայն ձախողանաց զնուազն անբախտից, եթէ յաղթեցին ինչ նմա, սակայն ոչ զօրեցին ստիպել տագնապել զնա. և որպէս ոչ երբեք 'ի յաղթութեանն մերժեաց զբանաւոր ինչ, զանարի ինչ և զանիրաւ միշտ անկուշեաց 'ի գերութեանն: Վասն զի ինձ նկատեալ զսիրա նորա մեծ 'ի վերջին փորձանն. բայց արդարև յայտ արար, թէ չիք տուեալ ապստամբաց օձան՝ արկանել 'ի շէջոյն զայր թագաւոր որ գիտէ ճանաչել զանձն. և որ տեսին զնա՝ յոր տեսիլ երեսաց երևեցաւ 'ի սրահին Վեսպմինոգրի և 'ի Հուայդհոլ հրապարակին, նոքա կարեն գիւրաւ հասանել՝ քանիսն աներկիւղ էր 'ի գլուխս գնդի բանակացն, քանիսն մեծաշուք և վեհափառ յապարանսն իւր և յարքունիս:

Դշխոյ մեծ, 'ի գրուատելս զթագաւորն զայն՝ զգորովասէր ըղձումդ կատարեմ. և սիրոյ այդ՝ որ նմա միայնում եկեաց միշտ, խլրտեալ զարթնու, թէպէտ և ածիւն, և թինդս առեալ խանդաղատի՝ ևս և ընդ գիսպատիկ ծածկութիւդ, յանուն ցանկալի փեսայիդ՝ որում թշնամիք իւր անդամ շնորհեսցեն զանուն խմաստնոյ և արդարոյ, և կարդեսցեն զնա յեանիկ 'ի դասս արքայից մեծաց, եթէ վկայք իւր գտանիցեն ընթեռնլիս աղատամիտս յերեսաց պատահարաց և բախտին:

1 Պլինիոս, գիրք Թ. գլ. ԻԸ:

Իրագէտքն՝ ստիպեալք խոստովան լինել, թէ չէր արքային գամ և մուտ տուեալ և ոչ պատճառանս ամպարշտութեան յանցանացն՝ զորոյ առեամք զյիշատակն, զամբարտաւան շփացութենէ ազգին լինին ամբաստան. և ես վկայեմ՝ զի տիրասպանիցն ոմք կարէին մղել արկանել զոգիսն յայն միտս: Բայց եթէ մանր զննեսցի պատմութիւն մեծի թագաւորութեանն, մանաւանդ յետին արքայութիւնք, յորս ոչ միայն թագաւորք յերիցութեան չափսն հասեալք, այլ և ընդ խնամակալութեամբ կըրասելք, և թագուհիք անդամ, տեսանին ինքնիշխանք և ահարկուք. եթէ ուշ կալցի՝ որով անհաւատալի գիւրաւ տապալեցան կրօնք կամ հաստատեցան 'ի ձեռն Հենրիկոսի, Եդուարդայ, Մարիամու և Եղիսաբեթի, ոչ գոցի՝ ոչ ազգն ապստամբ, ոչ աւադանին իւր բարձրավիզք և խաղմարարք. այլ հարկ լինի մեղադիր լինել ժողովրդեանն՝ զանչափ հպատակութիւն, մինչ զի և զհաւատս իւրեանց անդամ և զմտացն խիղճ ընդ լծով արկին: Ապա մի կուրաբար չարախօս լեցուք զընութենէ բնակչաց գերահաչակ կղզւոյ աշխարհիս, որ ըստ հաւատարմագրոյն պատմագրաց՝ 'ի Գալատացւոց առնուն սկիզբն. և մի կարծեսցուք՝ Մերսեանց և Դանեայց և Սաքսոնաց եղծեալ 'ի նոսա զարիւնն ազնիւ զառ 'ի հարց մերոց հեղեալ 'ի նոսին, մինչև բաւական լինելոյ մոլեգնիլ յայն վայրենաբարոյ գնացս, եթէ չէին 'ի նոսա խառն այլ պատճառք: Իսկ արդ զինչ իցէ որ գրդեացն զնոսա. ո՞ր բռնութիւն, ո՞ր ընդ խաբս և ընդ խոլ մոլութիւն. ո՞ր անհարթութիւն գործեաց զվրդովս զայս և զհարստահարութիւն: Մի յերկուսացուք, քրիստոնեայք, պատիր կրօնք, ստահակութիւն մտաց, աւիւն և մարմաջ անդուշ պայքարելոյ զաստուածայնոց՝ առանց վախճանի և օրինաց և հլութեան, յափշտակեալ տարան զսիրտս: Այդ ենահա թշնամիք՝ ընդ որս և դշխոյս եհաս տալ մարտ պատերազմի, և ոչ կարացին յաղթել՝ ոչ խմաստութիւն իւր, ոչ քաղցրութիւն և ոչ պնդութիւն:

4961
47
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ ԱԿԱ.ՍՍՌ

Ասացի ինչ յառաջագոյն զԺպրհութենէն՝ յոր սողս-
կեալ գլին միտք, իբրև խախտիցին հիմունքք հաւատոց, և
սահմանքն եղեալք միանգամ շարժեսցին. բայց քանզի Ճառ-
բանիցս մատուցանեմ ինձ օրինակ մի ծանօթ և միակ յամե-
նայն դարս՝ զծայրայեղ մոլեգնութեանցս՝ ի հարկէ խօսիցս
է, տեսցք, մինչև՝ ի սկիզբն անդր ելանել, և ոտն ոտն ա-
ծել զձեզ ընդ ամենայն ոճիրսն՝ յորս արհամարհութիւն
նախնոյ կրօնիցն և Եկեղեցւոյ իշխանութեանն՝ բաւական
եղեն մղել զմարդիկ:

Արդ աղբիւր ամենայն չարեացն այն է, զի որ յանցե-
լում դարու ոչ երկեան փորձ փորձել նորոգութեան՝ ի
ձեռն հերձուածոյ, քանզի չգային այլ ինչ պատուար ա-
մուր ընդդէմ ամենայն նորաձայնութեանց իբրեանց՝ բաց
՝ի նուիրական իշխանութենէ Եկեղեցւոյ, հարկեցան քան-
դել զայն: Վասն որոյ վՃիռք ժողովոց, հարցն վարդապե-
տութիւն և միաշնչութիւն նոցա, հին աւանդ սրբոյ Գա-
հին և ուղղափառ եկեղեցւոյ, ոչ էս եղեն այնուհետև օ-
րէնք աստուածայինք և անխախտաք՝ որպէս երբեմն. այլ
իւրաքանչիւր ատեան կացոյց իւր առանձինն, ուր ինքն
եղև դատաւոր իւրում դաւանութեանն: Եւ թէպէտ կա-
մել թուին նորակրօնք չափ դնել մտաց՝ պարուրեալ զայն
՝ի սահմանի գրոց սրբոց, բայց քանզի պայմանաւ էր և այն,
զի ամենայն անձն հաւատացեալ՝ ինքն լինիցի նոցին մեկ-
նիչ, և հաւատայցէ՝ թէ Հոգին սուրբ թելադրէ նմա զի-
մաստն, չիք որ որ ոչ համարիցի զանձն՝ իշխանութիւն ու-
նել՝ ի վարդապետութենէ ասել՝ ՝ի պաշտել զմտացածին
գիւտս իւր, ՝ի սուրբ առնել զմոլորութիւնս իւր, և զոր ինչ
և խորհիցին՝ աստուած անուանել: Գուշակեցաւ յայնմհե-
տէ՝ զի յանդգնութեանն ապերասան ապարթանեալ՝ բաղ-
մասցին այնուհետև աղանդք յանբաւս, յամառութիւն
լեցի անընկճելի, և ՝ի չլսել կիսոց ՝ի բանակռուութենէ,
կամ յաւանդել զնոսս իւրեանց իբրև հոգեշունչ ազդե-
ցութիւնս, այլք ձանձրացեալ ՝ի խօլական անրջոց անսի,

և անկարօղք ՝ի Ճանաչել զմեծութիւն կրօնիցն հերձելոց
յայնչափ՝ ի բազում աղանդս, ելցին հուսկ ուրեմն խնդրել
հանդիստս մտաւբեր, և կատարեալ աղատութիւն յան-
խարարութեան կրօնից կամ յանաստուածութեան:

Այսպիսի՝ և էս առաւել ժամտ էն, որպէս տեսջիք,
յառաջիկայսդ, ընդաբոյս արգասիք նորակրօն ուսմանն:
Այլ՝ օրինակ ինն ուղիք յորդահեղեղք ոչ ամենայն ուրեք
զնոյն աւերած գործեն. զի սրընթացութիւն նոցա՝ ոչ ընդ
ամենայն զնոյն զառ՝ ի թափ և զնոյն խրամատս գտանէ,
նոյնպէս ոգին խեռութեան և անսաստութեան՝ թէպէտ և
հարթ հաւասար միատարր ծաւալեալ յամենայն հեր-
ձուածողութիւնս դարուցս յեանոց, ոչ զնոյն արդիւնս
երևեցոյց առհասարակ. զանազան սահմանս ընկալաւ ըստ
դիմակալ լինելոյ երկիրս ինն կամ շահու կամ բնութեան ան-
ձանց և ազգաց, և կամ առաւաձեղն զօրութեանն, որ
յորժամ կամի՝ չափ դնէ զանխուզ՝ ցանկութեան մարդկան
և ուժգին մոլեկանաց: Իսկ ԷԹԷ լն բովանդակ երևեցաւ
այն ՅԱնգլիա, և ժանտութիւն նորա անդ անարգել յայտ-
նեցաւ, տանջեցան թագաւորքն, այլ՝ նոքին իսկ թագա-
ւորք եղեն նորա պատճառք. կարի ինն զարթուցին զմիտս
ժողովրդոց՝ թէ առաջին կրօնիցն մարթէր փոփոխել. կա-
սեցին հպատակք յայն ածելոյ յօրինաց նորա, տեսեալ
զնոսին խոնարհեալս առաջի կարեաց և շահուց իշխանաց
իւրեանց: Գեսինք՝ անչափ քրքրեալք և անհնարինք ՝ի
արամանալ, խարխարեալ խորխորեալ անդնդասոյզ եղեն
յամենայն կողմանց, և ոչ ինչ այլ՝ ի յայտ ածին՝ բայց
վախս ինն քամնելս. յայդ անուն կոչեմ զժիրս և զայլ-
անդակ մոլորութիւնսն՝ որ զոր ամենայն փեռեկեալ՝ ի վեր
երևէին: Մի կարծիցեք թէ եպիսկոպոսութեան միայն
կազք և կռիւք, կամ պատ՝ ի պատ ծեքածուռ խարդա-
խանք զանդլիական պաշտամանէ պատարագին, ժխորեալ
ինչ իցեն զժողովուրդսն. այն վէճք՝ տակաւին անզոր ինչ
սկիզբն էին, որով ոգիքն խռովայոյզք՝ փորձ ինն փորձէին

ինքնագլխութեան իւրեանց. այլ այլ ամն բանագոյն խլրտաբը 'ի խորս անդ սրտից, այն էր Թաքուն ամն բարկութիւն յամենայնի՝ որոյ գուցէ ինչ իշխանութիւն, և մարմնաւորն անդադար նորաձև առնելոյ՝ յետ գամ մի տեսանելոյ զառաջին օրինակն:

Ուստի կալուինականք՝ քան զլութերականն յանդգնագոյնք՝ պատճառս եառուն յառնելոյ սակինեանց՝ անդը ևս քան զնոսա արշաւելոց, և զօրհանապազ զնոցանս նոցա ստուարացուցանեն. անթիւ ազանդք Վերակնքողաց յայնմ աղբեբէ բղխեցին. և կարծիք նոցա խառնեալք 'ի կալուինութիւն անդը, ծնան զինքնագլուխան՝ զապստամբս յամենայն չափոյ և 'ի սահմանէ, յորոց միջի է տեսանել ըղդողդոմատն, որեար մոլեռանդն՝ որ համարին զնորս իւրեանց հոգեշնչութիւնս, և զանուանեալսն խուզարկս, զի հազար եօթն հարիւր ամաւ զկնի Քրիստոսի՝ 'ի խոշ և 'ի խնդիր են տակաւին կրօնից, և չեն ինչ կացուցեալ:

Օրինակ զայս, տեսարք, ոգիքն գլորդեալք միանդամ, փուլ 'ի փուլ գլորեալք, յայնքան ազանդս պառակտեցան: Ի նանիր համարեցան արքայք Անգլիոյ թէ կարող լցեն նահանջել զնոսա 'ի վանդաւոր վախուտ զառ 'ի վայրին՝ պահելով զեպիսկոպոսութիւնն: Զի զինչ կարիցեն եպիսկոպոսք՝ որ ինքեանք յոչինչ դարձուցին զիշխանութիւն աթոռոյ իւրեանց, և զօրինի մեծարանս յաջորդութեանն, յայտ յանգիման դատապարտ արարեալ զնախնիս իւրեանց մինչև յաղբիւր անդր օծութեան իւրեանց, խնամ մինչև 'ի սուրբն Գրիգոր քահանայապետ Հռովմայ և 'ի սուրբ վանականն Աւգոստինոս՝ աշակերտ նորին և նախաքարոզ Անգլիական ազգին: Զի՞նչ լցէ եպիսկոպոսութիւն օգտեալ յԵկեղեցւոյ՝ որ է նորա ամենայն ինչ, նոյն և 'ի սրբոյ Գահէն՝ որ է նորա զոգ միութեան, և երթեալ յարեալ՝ հակառակ իւրում բնութեանն՝ յարքայութիւն անդը եբև 'ի գլուխ իւր: Երկոքին իշխանութիւնքդ այլաբանք՝ ոչ զոգին 'ի մի, այլ շփոթեն զմիմեանս՝ եթէ ընդ

իրեարս խառնեսցին: Եւ մեծութիւն արքայից Անգլիոյ անդրժելի կայր միայր, եթէ իւրով իրաւամբքն սրբոյք շատացեալ՝ էր նկրտեալ յինքն կորզել զիրաւունս և զիշխանութիւն Եկեղեցւոյ. վասն որոյ և ոչ մի ինչ ընկրկեաց զբաղմավրէպ ոգիսն. և Աստուած՝ 'ի պատիժ անկրօն յողդողդութեան ժողովրդոցն՝ մատնեաց զնոսա յանժուժութիւն անմիտ վայրախուզութեան իւրեանց. որպէս զի ետանդն անիմաստ պայքարմանց նոցա և ինքնակամ կրօնք՝ քան զամենայն ախտս նոցա եղեն եղեռնաւոր:

Զէ պարտ զարմանալ եթէ մերկացան զպատկառանս արքայական շքոյ և օրինաց, և եղեն խաղմարարք, ստամբակք և յետասամիտք: Խախտեալ զհաւատս՝ ջնատեալ է զայն, և հանեալ ինն 'ի նոմանէ զկշռոցն՝ որ միայն է բաւական զուսոյ և ամփոփ ուշեալ զժողովուրդս: Է յայլ անդ սրտից նոցա չգիտեմ զինչ անհանդարտ, որ եթէ բարձցի 'ի նոմանէ սանձն կարևոր՝ ընդդահկեալ 'ի բաց վազէ. և եթէ թողասցի նմա տիրանալ կրօնիցն, այլ ինչ ամենևին չմնայ նմա այնուհետև պատկառելի: Անոր ծնաւ մեզ կարծեալ թագաւորութիւնն Քրիստոսի՝ անծանօթ մինչև ցայնժամ 'ի քրիստոնէութենէ, որում հասանէր բնաջինջ կորուսանել զամենայն թագաւորութիւն, և միահարթ հաւասարել զամենայն մարդիկ. երազ ապստամբական ինքնագլխացն, և ամպարիշտ և սեղանաձերժ նոցին ցնորք: Այսչափ անշուշտ է՝ թէ ամենայն ինչ 'ի հեստութիւն և յաղմկայոյզ միտս փոխի, յորժամ հաւատոց իշխանութիւն բարձցի 'ի միջոց: Իսկ զի՞ է խնդրել հաւասարս ճշմարտութեան՝ զոր հոգին աստուածեղէն բարբառեցաւ քաջայայտ պատգամաւ: Աստուած ինքնին սաստնայ ժողովրդոց՝ որ այլայլեցեն զնորա հաստատեալ կրօնսն, ելանել գնալ 'ի միջոց նոցա, և նովին իսկ մատնել զնոսա յընտանի պատերազմունս: Լուարուք զոր խօսի բերանով մարգարէին Զաքարեայ. «Անձն նոցա, ասէ Տէր, փոխեցաւ ընդ իս», 'ի փոփոխել ստէպ ստէպ զկրօնսն. «և ես ասացի ցնոսա. Ոչ ևս եղէց ձեզ հովիւ».

այս է՝ լքից զձեզ 'ի ձեզ ինքեանս, և յանողորմ բախտ ձեր. և որ զհեան գայ՝ տեսէք. «Եւ որ մեռանելոցն է՝ երթիցէ 'ի մահ, և որ կոծոպելոցն է՝ կոծոպեսցի». խմանցք զբանքս. «և որ մնայցենն՝ կերիցեն զմիմեանս[1]»: Ո՛վ մարդարէութիւն ՃՇմարիտ յոյժ, և բազում ստուգիւ կատարեալ:

Կարի քաջ յիրաւի անհնարին դատէր դշխոյս հատանել զպատճառս քաղաքական պատերազմաց՝ առանց դառնալոյ 'ի կաթողիկէ միութիւն, որ ընդ այնչափ դարս ծաղկեցոյց զեկեղեցի և զթագաւորութիւն անգլիական՝ հաւասար սրբոց եկեղեցեաց և հոյակապ պետութեանց աշխարհի: Վասն որոյ դշխոյս 'ի պաշտեն զԵկեղեցի՝ համարէր սպաս հարկանել տերութեան. վարկանէր անկորուստ պահել ծառայս արքային՝ պահպանելով Աստուծոյ՝ հաւատացեալս: Արդարութեան մտացն վկայեաց փորձն. և արդարև իսկ որդին իւր թագաւոր՝ ոչ զոք եդիտ սնդագոյն 'ի ծառայութիւն իւր քան զուղղափառսն ատեցեալս և հալածեալս, զորս ապրեցուցեալ է դշխոյի մօր իւրոյ: Ցայտ իսկ է, զի որովհետև օգտութիւն և ապստամբութիւն յիշխանութենէ Եկեղեցւոյ՝ եղև աղբիւր ամենայն չարեացն, ոչ երբեք գացին նոցա դարմանք՝ բայց միայն դառնալով 'ի միութիւն, և նախկին հնազանդութեամբն: Այնկուշնեալն 'ի միութենէ անտի՝ պառակտեաց զԱնգլիա: Իսկ եթէ հարցանիցէք զիս, զիարդ այնչափ հակառակ հերձուածք և այնքան աղանդք անվիաբանք, որոց հարկ թուէր եղծանել զմիմեանս, այնպէս համաշունչ խստավիզ գոան՝ միագունդ կռուել ընդ գահուն արքունի, այժմ տեսանէք:

Գոաւ այր մի (Դ) խորամանդ ծածկամիտ անհնարին, կեղծաւոր բազմահնար՝ որպէս և Ճարտար քաղաքական, ձեռներէց յամենայն և գաղտնագործ, 'ի խաղաղութեան և 'ի պատերազմի ժիր և անխոնջ, որ ոչինչ թողացուցանէր

1 Զաք. ԺԱ, 9:

բախտին յորոց կարէին շրջել 'ինքանէ հանձարով և յառաջատեսութեամբ: Բայց և այնպիսի արթուն և կազմառ ամենայն, զի ոչ երբեք ապախտ արար զգիպող ինչ ժամաւ 'ինքանէ մատուցելոյ. բովանդակ ասել, մի յանհանդարտ և 'ի ժպիրհ ոգւոց անտի՝ որ թուին ծնեալ 'ի կերպարանափոխ առնել զաշխարհ: Քանի բազմավատագ է վիճակ ոգւոց այսպիսեաց, և քանիք երևին 'ի պատմութեան՝ որոց յանդգնութիւն մահագոյժ եղև նոցա: Բայց և զինչ չգործեն, յորժամ Աստուած 'ի ձեռս առնուլ կամիցի զնոսա: Ցուաւ սմա պատրել զժողովուրդս, և յաղթահարել զթագաւորս[1]: Քանզի իբրև եաեսս՝ զի յանբաւ խառնակութեան անդ աղանդոց՝ սատանեալոց առանց ինչ հաստատուն օրինաց, հեշտութիւն վարդապետելոց անսաստ և անարդել յամենայն իշխանութենէ յեկեղեցական և յաշխարհական՝ կախարդեալ էր զոգիսն, դիտաց այնպէս ճարտար յանդուցանել զնոսա առ իրեարս, մինչև յայլանդակ շեղջակուտ անտի կազմել մարմին մի ահաւոր: Իբրև դամ մի դոանէ ոք զմարթանս որսալոյ զնատնաղանճն խանձիւ աղատութեան, շատ է լսել ևեթ նմա զայնր անուն, այնուհետև կուրաբար զհետ ընթանայ: Սոցա ուշ եդեալ յառաջին խնդիրն՝ որ մոլեցոյց զնոսա, երթային միշտ՝ առանց հայելոյ զի 'ի ծառայութիւն երթային. և խորամանդ առաջնորդին նոցա, որ կռուէր և վարդապետէր և բիւր այլ և այլ դէմս խառներ 'ի մի, վարդապետ լինէր և մարգարէ՝ որպէս և զնուռոր և զօրավար, տեսեալ թէ այնպէս զուշ և զուրուշ մոգեալ էր զամբոխին, զի իբրև յաստուածառաք ոմն գլուխ հայէին 'ինա զօրքն ամենայն՝ 'ի պաշտպանութիւն աղատութեան, սկսաւ խելամուտ լինել՝ թէ մարթէր անգրագոյն ևս վարել ածել զնոսա:

Ոչ Ճառեցից ձեզ զամենայն տարապայման յաջողուածս գործոց նորա, ոչ զհռչակաւոր յաղթութիւնսն՝ ընդ որ

1 Յայտն. ԺԳ, 5, 7:

որամտեալ կայր առաքինութիւն, և ոչ զերկար խաղաղութիւնն՝ որ ապչեցոյց զտիեզերս: Խորհուրդ էր այն Աստուծոյ 'ի խրատել զԹագաւորս՝ մի 'ի բաց կալ յԵկեղեցւոյ իւրմէ: Կամէր մեծաւ ինն օրինակաւ մերկանալ զամենայն զոր կարէր կատարել աղանդութիւն, քանի հեստոզ է այն 'ի բնէ և ենթնագլուխ, քանի օրհասական Թագաւորութեան և ամենայն օրինաւոր իշխանութեան: Այլ իբրև մեծն այն Աստուած ընտրեաց զոք իւր գործի խորհրդոց, ոչ ինչ խափանէ զընթացս նորա. կամ կապէ, կամ կուրացուցանէ, կամ առաթուր կոխէ զամենայն դիմակաց: «Ես եմ Տէր, ասէ նա 'ի բերանոյ Երեմիայի. ես արարի զերկիր և զմարդիկ և զանասուն. և տայ զնա ում և կամ իցէ առաջի աչաց իմոց. և արդ ես եմ որ եառու զամենայն երկիր 'ի ձեռս Նաբուքոդոնոսորայ արքայի բաբելացւոց ծառայի իմոյ [1]»: Ծառայ իւր կոչէ զանհաւատն՝ զի ընտրեաց զնա կատարել զհրամանս իւր: «Նա և զգաղանս անապատի, ասէ, եառու նմա 'ի ծառայութիւն». արդարև իսկ խոնարհի ամենայն և տեղն տայ, յորժամ Աստուած հրամայեցէ: Այլ միա գլուխ ելից մարդարէութեանն. «Ծառայեսցեն նմա ամենայն ազգք, և որդւոց նորա, մինչև եկեսցէ ժամանակ բարկութեան երկրի նորա և նորա»: Տեսէք, քրիստոնեայք, որպէս ժամանակեալ են ժամանակք, զնարդ Թուեալ ազգք. սահմանէ Աստուած ցորժամ տեսցէ իցէ Թմբրութիւնն, և էրբ զարԹնեցոց աշխարհ:

Անդ'լոյ՝ այս եղև վիճակ: Բայց 'ի սոսկալի շփոթս անդ ամենայնի, քաջը է նկատել յորս ձեռն արկ դշխոյս մեծ 'ի փրկութիւն Թագաւորութեանն, զուղղորութիւնս իւր, զքանագնացութիւնսն, զդաշնաւորութիւնսն, զամենայն զոր խոհականութիւն իւր և արիութիւն ընդդէմ դնէր վըտանգի տերութեանն, և զանդրդուութիւն իւր՝ որով իբրև չկարաց պարտել զբռնութիւն ճակատագրին, մեծանձնութեամբ տարաւ ուժգնութեան նորա: Զօր ամենայն ողջքէր շահէր զոք յապստամբացն. և զի մի յանցուցեալ միանգամ՝ ցանդ 'ի յանցանս ըմբռնեսցին Թշնառութեամբ, կամէր զի զբան իւր կալցին իւրեանց ապաւէն: Բերդակալն Աքարպրոյի 'ի ձեռս նորա աւանդեաց զնաւահանգիստն և զամրոցն զայն անմատոյց: Հօրեղբն երկոքին՝ հայր և որդի, որոց տուեալ էր զառաջին օրինակ ուխտանենդութեան՝ մերժելով զինքնին իսկ զԹագաւորն 'ի դրանց անտի բերդին և նաւակայիցն Հրէայ, միջնորդ ընտրեցին զբամբիշնս, և տալոց էին արքայի զամուրսն հանդերձ Պերբլեաւ. բայց ձերբակալ եղեն և կառափեցան. և կամեցեալ Աստուծոյ 'ի ձեռն ապստամբացն պատուհասել զամենայն խեռութիւն նոցա, չէտ Թոյլ օգտել արքայի 'ի զղջութենէ նոցին: Որսացեալ էր դշխոյին և զշահատն Լոնդոնի զմեծանուն, և ոչ սակաւս 'ի գլխաւորաց կողմանն: Որք միանգամ խօսեին ընդ նմա, գրեթէ ամենեքեան անձնատուր 'ի նա լինէին. և եԹէ Աստուած չէր անողոքելի, և կուրութիւն ժողովրդոցն անբժշկական, ածէր նա զոգիսն յաւուրջութիւն, և արդարութեանն կողմ լինէր հզօրագոյն:

Գիտուն է ամենեցուն, տեսրք, զի 'ի գաղտնի խորհրդակցութիւնսն անդ՝ զգլուխս իւր եդ դշխոյս բազումանգամ 'ի կշիռս. բայց մեծագոյն ևս առաջի կայ ինձ ցուցանել ձեզ վտանգս: Ապստամբաց կաչեալ էր զզինանոցսն և զհամբարանոցս. և յետ նշկահելոյ այնչափ հպատակաց և անարժան վտարանջութեան ևս զօրուն, դիւրագոյն էր արքայի գունդ կազմել՝ քան զնեալ զնոսին: Առ զնուց և համբարոց հայթայթանս ընդ վայր հարկանէ դշխոյս ոչ միայն զզարդս իւր զոսկւոյ և զակաց, այլ և զկենացն խըՆամս: Ծովամուխս լինի յամսեանն փետրուարի՝ քամահանս առնելով ձմերայնոյն և մրրկաց. և պատճառանօք 'ի Հոլանդիա ածէլոյ զարքայական բամբիշնն՝ զդուստր իւր զերէց, որ խօսեալն էր 'ի կնութիւն Գուլիելմի իշխանին

[1] Եբեմ ԻԷ, 5, 6, 7:

ՕրանՃայ, երթայ յորդորել զպեատութիւնն 'ի Թիկուն օգնականութեան արքայի, ապահս յինքն յանկուցանել, և տանել նմա պէտս և կազմս պատերազմի: Ի մեկնելն յԱնգլնոյ ոչ զարհուրեցոյց զնա Ճմեռն. յետ մեռասան տմնոյ ոչ խափանէ զնա Ճմեռն՝ մինչ հարկ է դարձ առնել առ արքայ. բայց եկեալ իրացն ոչ հանգոյն պատահեցին:

Սարատիեմ 'ի զոյցս ևեթ մոլեգին ծովակոծութեանն, որով տանջեցաւ նաւատորմին իւր զաւուրս տասն: Զահի հարան նաւասանք մինչև սրտաթափ լինելոյ, և ոմանք 'ի նոցանէ հոսեցին զանձինս 'ի ծովն: Ինքն, միշտ անվեհեր որչափ խառվեալ էին ալիքն, սրտապնդէր զամբոխն իւրով սնդուքութեամբն. զորս ընդ իւրն էին քաջալերէր յԱստուած յուսալ 'ի միայն ապաւէն իւր. և առ փարատելոյ 'ի մտաց նոցա զսխրական կասկած մահուն յամենուստ երևելոյ, ասէր լուրջ ինն երեսօք՝ որ ածել թուէր զնաղաղութիւն, թէ թագուհիք ոչ ընկղմին: Եղուկ, յայլ ինչ առաւել անսովոր պահեցաւ նա. և թէպէտ և ապրեցաւ 'ի նաւաբեկութենէ, ոչ այնու չնչին աղէտք նորա աղեղորմք: Եաւս զկորուստս նաւացն, և զոգ զբնաւ իսկ զանկիպարութեան մեծի օգնականութեանն: Նաւն զօրագլխական յորում ինքն կայր, առաջնորդեալ ձեռամբ Ցեառն խորոց անդնդոց ծովուն, որ և զկուտակումն լեռնացելոյ կոհակացն ցածուցանէ, վարեցաւ անդրէն 'ի նաւահանգիստսն Հոլանդիոյ. և Ժողովուրդք առհասարակ հիացան ընդ սքանչելի փրկութիւնն:

Փրծեալքն 'ի նաւակոծութենէ՝ յաւիտենական բարեաւ մնալ ասեն ծովուն և նաւաց [1]. և որպէս ասէր ոմն 'ի հնոցն օրինակագրաց, և ոչ տեսլեան նոցա հանդուրժել կարեն: Եւ տակայն՝ յետ աւուրց մեռասանից, ոչ զարմանալի հաստատութեան մտացն, այն ինչ եղեալ դշխոյիս

1 Ցերծեալքն 'ի նաւաբեկութենէ հրաժեշտ տան այնուհետև և 'ի նաւէ և 'ի ծովէ: Տերտուլ. յաղագս Ապոլ.

յահեղ վշտաց ամպրոպացն, առ անձուկ կարօտոց երեսաց արքային և 'ի Թիկունս նմա հասանելոյ, իշեալ վերատին հաւատալ զանձն կատարութեան ովկիանու և դառնաշունչ օդոց ՃմերայնոյՆ: Ժողովեալ նաւս քանի մի՝ ընդ սպահիւք և կազմութեամբ մարտի, և երթայ անցանէ յԱնգլիա: Այլ ոչ զարմացցի ընդ անողորմ բախտ դշխոյիս: Յետ միանգամ ապրելոյ յալեաց, միւս ևս մրրիկ գրեթէ մահահրաւէր եղև նմա. հարիւր անօթք ամբաձիգք որոտացին 'ի վերայ նորա 'ի հասանել իւր, և առնուն յոր եմուտ՝ ծակոտեցաւ 'ի գնդակաց նոցին. մեծ եղև արութիւն նորա յահագին վտանգին, բայց մեծ եղև և գթութիւն նորա առ առաջնորդ դժոխային վերագութեանն: Սուղ ինչ յետոյ գերի վարեալ ածաւ այրն. ներեաց նա նմա զոճիրն, և փոխանակ ամենայն պատուհասի՝ մատնեաց զնա նմա զոճիրն իւրում և ամօթոյ ձեռս արկանելոյն յարև այնպիսի բարեաց և մեծանձն բամբասանս. այսչափ գեր 'ի վերոյ կայր նա վրէժխնդրութեան, որպէս և երկիւղն:

Իսկ ապա ջուտանիցեմք զնա առ արքայի՝ եռանդնալից ցանկացելոյն դարձի նորա: Եւ նա ինքն նովին տենչանօք տոչորի, և ահա տեսանեմ զնա նորանշան հանդերձանօք երևեալ: Իբրև զօրավարք ընթանայ 'ի դլուխս արքայապատուիդ բանակի, խաղալ անցանել ընդ դաւառս՝ դրեթէ առհասարակ նուաճեալս յաղագամբեցն. պատնէշ պաշարմամբ գրոհ տուեալ առնու զբերդաքաղաքս մի ամուր՝ որ ընդդէմ կայր իւրում արշաւանին. նշան յաղթութեան կանգնէ, թողութիւն շնորհէ, և ապա դայ հասանէ արքայ ընդառաջել զնա 'ի դաշտի ուրեք՝ ուր ամաւ յառաջ յաղթութիւն մեծ տարեալ էր նորա 'ի վերայ զօրագլխին Իսէքսի: Յետ ժամուս լու եղև յաղթանակ ահեղ ինն Ճակատամարտի: Սմենայն ինչ յաջողել թուէր առաջի երեսաց նորա. քամակաբեկ կային ապստամբք. և եթէ անսային դշխոյիս, եթէ փոխանակ զօրահատոյց առնելոյ յարքայատուիդ բանակացն, և հակառակ խորհրդոց իւրոց՝ զբոսե-

ցուցանելոյ զնոսա 'ի թշուառ պաշարումն Հրէայ և Կլ-
սրսդրի՝ արշաւեալ էին դէպ ուղիղ 'ի Լոնդոն, յայնոսիկ
լինէր կռիւն, և այս գուսարած վնաս առնէր պատերազ-
մին: Բայց կորուսաւ ժամն դիպող, մերձենայր ողորմ
վախճան կատարածին. և երկինք՝ որ 'ի հնոցս բարեպաշ-
տութեան դշխոյս յապաղել թուէր զերկնեալ վրէժխնդ-
րութիւնն, սկսաւ յայտնել զանձն: «Դիտեա յաղթել,
ասէր ափրիկէցի ոմն քաջ ցղօրավարն խորամանդ քան
զբնաւս, այլ ոչ գիտես 'ի կիր արկանել զյաղթութիւնդ:
Հռովմ՝ զոր ըմբռնեալ էիր, զերծանի՝ 'ի ձեռացդ. և բախան
օսերիմ բարձ 'ի քէն մերթ զհարս, և մերթ զնորհուրդս
հատու այնմ լինելոյ [1]»: Յետ այնր չուառական ժամու,
ամենայն ինչ ակներև յեղծումն և յապականութիւն դը-
նաց, և գործեանն արքունի անոյշ մնացին: Դշխոյս՝ որ յոլ
գտաւ, և ամենայն զորութեամբն չկարաց յետս դարձու-
ցանել զնոսա յերկոցունց պաշարմանց անտի՝ որ և ձախող
տեսան յոյժ, անկաւ 'ի թալուկ, և տերութիւնն համօրէն
լքաւ նուաղեցաւ ընդ նմա: Ստիպեցաւ անջատել յար-
քայէ՝ որ գրեթէ պաշարեալ էր յԱքսֆիրդրսի, և եռուն
միմեանց ողջոյն հրաժարական յոյժ արամալոց, թէպէտ և
գիտէին ոչ՝ թէ վերջին էր այն: Մեկնեցաւ ինքն յԵքսրդէր՝
'ի քաղաք ամուր, յորում և ինքն ևս պաշարեցաւ խակ և
խակ: Անդ ծնաւ օրիորդ մի, և յետ երկոտասան աւուր
բռնադատեցաւ աճապարել 'ի փախուստ՝ ապաւինել 'ի
Գալլիա:

Ո՛վ օրիորդ, որոյ այնչափ մեծ է և փառաւոր բախան,
խղճ արժան ծնանել քեզ 'ի տերութեան թշնամեաց տան
քոյ: Յաւիտենականդ, աչք քո բաց եղեն 'ի վերայ նորա.
զուարթունք սուրբք, բոլորեցէք շուրջ զանեւոյթ գու-

1 Յայնժամ Մահարբալ. Յաղթել գիտես, Անիբալ զյաղթու-
թիւն 'ի վար արկանել ոչ գիտես: . . . Տիրելոյ քաղաքին Հռովմայ՝ է
զի միտքն ոչ տուաւ քեզ, է զի բախան: Լիւիոս:

մարտակոդ, արիէք պահ զորրոցաւ մեծի և անտերունչ
օրիորդին. պատրաստեալ է նա խմասանոյն և քաջին Փի-
լիպպեայ (Ե), և տալոց է իշխանաղուշնս արժանիս նմա, ար-
ժանիս իւր և հաւուց իւրեանց: Եղև նմա Աստուած հո-
վանի, տեսցէք. դայեակ նորա յետ ամաց երկուց հանէ
զողջոյն մեծադին 'ի ձեռաց ապստամբացն. և թէպէտ ան-
գէտ գերութեան իւրոյ, և մեծութեանն իրազգաց խեղա-
մուտ, ինքնին յայտնէ զանձն. յամենայն անուանց տուեալ
հրաժեշտ, յամառեալ պնդի ասել թէ ինքն է օրիորդն
գուսար արքային: Աղաւ ապա առ տիկին մայր իւր 'ի սփո-
փանս տառապանաց նորա, մինչև զմեծի ուրուք իշխանի
գործեացէ ինքն զերջանկութիւն, և զուրախութիւն ողջոյն
Գալլիոյ:

Բայց հատանեմ ես զթել պատմութեանս: Ասացի թէ
հարկեցաւ դշխոյս տեղն տալ յիւրմէ արքայութենէն:
Քանզի մեկնեցաւ 'ի նաւահանգստից Անգլիոյ ակն յանդի-
ման նաւաց ապստամբացն, որ հալածէին զնա մօտալուտ՝
մինչ գրեթէ լսել նմա զաղաղակ նոցա և զլրբենի սպառնա-
լս: Ո՛վ Ճանապարհ անմման այնմ զոր արար 'ի նմին ծո-
վու, մինչդեռ գնայր առնուլ զժառանգութիւն գաւազանի
Մեծին Բրիտանիոյ, և տեսանէր գոգցես զալեան խոնար-
հեալս ընդ իւրև, և զամենայն կոհակս իւրեանց հնազան-
դեալս ծովուս իշխեցողին. այժմ մերժեալ՝ հալածական
յանհաշտ թշնամեացն՝ որոց ժպրհեալ էր գտատասան առ-
նել 'ի վերայ նորա, մերթ փախստեայ, մերթ գրեթէ ձեր-
բակալ, յամենայն քառորդս ժամու փոփոխեալ զբախան,
ոչինչ ունելով իւր՝ բաց յԱստուծոյ և յանսասան արու-
թենէն. ոչ գոյր նմա ոչ հողմ բաւական, ոչ բաւական ա-
ռաղաստ 'ի յաջողել զառգնասպփոյթ փախուստ իւր խու-
ճապական: Սակայն ժամանէ 'ի Պրեսդ, ուր յետ այնքա-
նոյ վշտաց՝ շնորհեցաւ նմա սակաւիկ մի ոգի առնուլ:

Իբրև զմտաւ ածեմ զանհնարին և զհանապազորդ վը-
տանգսն՝ ընդ որս անց դշխոյս 'ի ծովու և 'ի ցամաքի զամ

իբրև տան, նա և տեսանեմ և՝ զի ամենայն մենքենայք ընդունայն են ընդդէմ անձին նորա, իսկ ընդդէմ տերու-թեանն՝ ամենայն ինչ յաջող սքանչելապէս, զի՞նչ այլ ևս ինձ խորհել, բայց զի Խնամքն աստուածեղէն՝ միտ եդեալ պահպանել զկեանս նորա և կործանել զնշանութիւնն, հաճեցաւ՝ զի երկարակեաց եղիցի քան զփառս իւր, որպէս զի կենդանի մնասցէ և յետ արձակելոյ 'ի կապանաց աշխարհի և յամբարտաւանութեան խորհրդոցն, որ ըստ մեծութեան իւրեանց և բարձրութեան՝ նոյնչափ և զոգիսն տապականեն: Աչսպիսի ինն էր և խորհուրդն՝ որ նկուն ա-րար երբեմն զԴաւիթ ընդ ձեռամբ ապստամբին Աբեսա-ղոմայ: «Տեսանէք զմեծ թագաւորն, ասէր սուրբ և Ճար-տարաբան քահանայն Մասիլիոյ, տեսանէք զնա անոք, լքեալ, այնպէս անկեալ 'ի սրտէ իւրոցն՝ մինչ զի կիսոց յարհամարհանս լինել, և որ առաւել անհանդուրժելին է մեծանձնութեան՝ յաչս այլոց ողորմելի. ոչ գիտելով, յա-ւելու նոյն Սալուիանոս, զնմա՛ առաւել քանքառել զկե-րակրելոյն 'ի Սիբայէ, թէ զլրութենէ անիծիցն Սեմայ [1]: Աւադիկ, տեարք, պատկեր ինն, բայց թերակատար, դըշ-խոյիս Անգլիոյ, յորժամ յետ այնպիսի նորացոյց կորա-նայ, ստիպեցաւ տակաւին երևել աշխարհի, և նշաւակել դոգես Գալլիոյ անգամ, և յարքունի ապարանսն ուր ծնեալն էր յայնչափ փառս, զթշուառութիւն իւր զամ-նայն բուսնդակ: Ցայնժամ կարաց քաջ՝ ասել ընդ մար-գարէին Եսայեայ. «Տէր զորութեանց արար զայս, կորու-սանել զամենայն պերճութիւն մեծութեան մարդկան, և զմեծ փառս տիեզերաց շջջել յանարգանս [2]:

Ոչ եթէ անտես արար Գալլիա զդուստր Մեծին Հեն-րիկոսի. մեծանձն և բարեպաշտն Աննա (2), զոր ոչ երբեք

1 Սալուիանոս յաղագս աստուածպետութեան. Գիրք Բ:

2 Տէր զորութեանց խորհեցաւ քակել զամենայն ամբարտաւա-նութիւն փառաւորաց, և անարգել զամենայն պատուական 'ի վերայ երկրի: Եսայ. ԻԳ, 9:

առանց ցաւոց յիշեցուք, այնպէս ընկալաւ զնա՝ որպէս վայելէր մեծութեան երկոցուն դշխոյնցն: Բայց քանզի հանգամանք իրացն արքունի ոչ ներեին խնամակալն արժանի ըստ ցաւոցն դարմանս մատուցանել, 'ի միտ առեալ զպայման երկոցունց բամբշանցն. Հենրիկէ մե-ծասիրտ՝ ստիպի օգնականութիւն խնդրել. մեծասիրտն Աննա՝ չկարէ տալ բաւական: Եթէ գոյր հնար 'ի վեր անդր յառաջ տանել զգեղեցիկ ամուս զայսոսիկ՝ ընդ որոց այժմ ընդ մեծափառ ընթացան սիրանամբ, Լուդուիկոս՝ որ 'ի հեռուստ ասի լսէ զհեծութիւն քրիստոնէիցն տառապե-լոց, որ ընդ փառսն իւր անկասած, զի խորհրդոցն հան-ճար և մտացն ուղղութիւն՝ երաշխաւոր կան նմա միշտ ընդդէմ պատահարացն անյայտութեան, ինքն միայն ձեռն 'ի գործ առնէ հաստարակաց վրիժուց. և զահաւոր զրկնան տանի ընդ անհուն ասպարէս ծովու և ցամաքի (Է), մինչ զանա՞յր նա զբաղուկ իւր մերձաւոր դրացեացն իւրոց, իւրոց դաշնաւորացն, իւրում արեանն, աստուածային ի-րաւանց արքայութեան՝ զորս այսպէս քաջ գիտէ պահպա-նել: Որո՞վ ահեղ զօրութեամբ չտեսանէր զնա Անգլիա ա-խոյտեան կանգնեալ անպարտելի, կամ վրէժինդիր հասեալ վեհապետութեանն թշնամանելոյ:

Բայց Աստուծոյ չէր ինչ թողեալ ապաւէն արքային Անգլիոյ. ամենայն ինչ պակասէ, 'ի հեռուն կայ ամենայն. սկսուսիացիք՝ յորս ապաստան լինի՝ ասն զնա 'ի ձեռս գեղ-պանացն անգլիացւոց, և հաւատարիմ թիկնապահք արքայից մերոց՝ մատնեն զնուրեանցն: Մինչդեռ աւադանին Անգլիոյ խորհուրդ առնու արձակել զզօրականն. զորքն ամենեքին ինքնիշխանք՝ փոխոխեն զաւադանին 'ի քմայ իւ-րեանց, և տիրանան ամենայնի: Վասն որոյ վարի արքայն գերութենէ 'ի գերութիւն, և դշխոյս 'ինանիր դրդե զԳալ-լիա, զՀոլանդիա և զԼիհս անգամ, և զհեռաւոր զորու-թիւնս հիւսիսի: Անդրէն քաջալերէ զսկոտիացիս, որ գու-մարտակ առնեն երեսուն հազար արանց. ընդ իշխանին Լո-

ընեայ՝ գործ 'ի ձեռն առնու ազատել զարքայ զտէր իւր. առ Ճշգրիտ կշռութեան խորհրդոցն՝ եկք իրացն Թուին անվրէպ. կորզէ զմանկունս իւր զսիրելս, զմիայն յոյս տանն իւրոյ. և զայս նուագ խոստովան լինի, թէ և 'ի մահաբեր երաշխէպս իսկ գոյ տակաւին ուրախութեան տեղի. մինթարէ զարքայ՝ որ զրէ առ նա 'ի բանտէն, թէ դու եւթ քաջալերութիւն ես մուցա, և մի կասկածեր յինէն ընաւ և ոչ մի ինչ վատութիւն, զի անդուէ յիշեմ՝ թէ քո եմ։ Ո՛վ մայր, ով կին, ով դշխոյ զարմանալի և լաւագոյն բախտի արժանաւոր, եթէ բախտք երկրաւորք էին ինչ. հարկ է հուսկ ուրեմն տեղի տալ դիպուածոյդ, շատ իսկ օժանդակ կացեր պետութեանն, ընդ որում պատերազմի զօրութիւն անկռուելի և աստուածային. այսուհետև ոչ մնայ քեզ, բայց զինդ կալ 'ի մէջ աւերակացդ։

Զոր օրինակ սիւն մի սնդակազմ՝ անսասան ամրութիւն երևեալ կործանական տաճարի, յորժամ ահագին շինուածն զոր 'ի վեր ունէր՝ անկանիցի յիւր վերայ և ոչ տապալիցէ զնա, սմին հանգոյն երևի դշխոյս՝ տէրութեանն նեցուկ անկործան, զորոյ յերկար բարձեալ զբեռնն՝ և ոչ իսկ կբի ընդ դղորդմամբ նորա։

Այլ ո՞ պատմեսցէ զնրաւացի երկունս նորա, ո՞ զողբուսիմն Ճառեսցէ։ Ոչ, տեարք, և ոչ Երեմիա ինքնին՝ որ միայն Թուի Ճարտար 'ի հաւասարել զողբսն ընդ աղէտս, չէր բաւական առ սոյնօրինակ ցաւս։ Գոչէ նա ընդ մարգարէիս. «Տէս, Տէր, զառաւանս իմ, զի զօրացաւ թշնամին իմ, և որդիք իմ կորեան. արկ անողորմն զձեռն իւր ամպարիշտ 'ի ցանկալիսն իմ. պղծեցաւ թագաւորութիւնն, և առ ոսն կոխեցան իշխանք։ Թոյլ տուք՝ լացից դառնապէս, մի բռնադատէք մխիթարել զիս։ Արտաքուստ եհար սուր, բայց և յանձն իմ կրեմ նմանօրինակ մահ [1]»։

Սակայն յետ լսելոյ զսուգս նորա, դուք դատերք

[1] Ողբք. Ա, 10, 16, 20։ Բ, 2։ Եսայ. ԻԲ, 4։

սուրբք (Ը), մտերիմք իւր սիրելիք, – զի այսպէս սիրէր նա անուանել զձեզ, – դուք որ տեսէքդ զնա յաշխարհ 'ի հեծել առ սեղանովք միոյ միայնոյ պաշտպանին իւրոյ, և յորոց 'ի ծոցսդ եհեղ զծածուկ մխիթարութիւնսն ընկալեալս առ 'ինմանէ, դուք արարէք վախճան ճառիցս, պատմելով մեզ զնորա քրիստոսասէր խմացուածս սրտին՝ որոց վկայք եղերուք հաւատարիմք։ Քանիցս անգամ գոհութիւն մատոյց նա ասա 'ի տեղւոջս յայսմիկ Աստուծոյ խոնարհաբար՝ 'ի վերայ երկուց մեծամեծ շնորհաց. մի՝ զի արար զնա քրիստոնեայ. և միւս, զինչ ակն ունիք, տեարք. թերևս զի պատասպարեսցէ զնրս որդւոյն իւրոյ արքայի։ Ո՛չ, այլ զի եդ զնա դշխոյ թշուառական։ Ո՛հ, սկսանիմ սարսիանալ ընդ անձկութիւն տեղւոյս յորում խօսիմս. պարտ է պայթուցանել, պատառել զցանկ որմոցս, և մինչ 'ի յոյժ հեռաստան հնչեցուցանել զբանս՝ որում չէք ըստ արժանի լսելի լինել։ Իբրև զի ցաւք նորա՝ խմատուն արարին զնա 'ի գիտութիւն Աւետարանին, և զի քաջ խելամուտ եղև հաւատոց և զօրութեան խաչին, յորժամ զբրիստոնէութիւն ընդ տառապանս զուգաւորեաց։ Մեծամեծ յաջողութիւնք կուրացուցանեն զմեզ, յափշտակեն, տերիւրեն, մոռացուցանեն զԱրարիչն, զմեզ ինքեանս և զհաւատոցն խմատս. անտի ծնանին մեզք այլանգակք, հեշտութեանց Ճարտարմտութիւնք, ամբարհաւաճութեան քընքշանք, որ կարի իրաւունս տան սոսկալի նղովիցն՝ զորս արձակեաց Փրկիչն Քրիստոս յԱւետարանին իւրում. «Վայ ձեզ որ ծիծաղիքդ այժմ, վայ ձեզ որ յագեալք էք այժմ և գոհ աշխարհաս [1]»։ Իսկ քրիստոնէութիւն զի խաչիւն ծնաւ, և աղէտք կազդուրեն զնա. անդ քաւին մեզք, անդ յուսակին միաք և խորհուրդք, անդ յերկրէ յերկինս փոխին իղձք, անդ անհամին ամենայն ախորժք աշխարհականք, և հատանի յոյս մարդոյն յանձնէ և յիմաստութենէ իւրմէ։

[1] Ղուկ. Զ, 25։

Զէ արժան փարաւազս տալ անձին. հմտագոյնք իրաց մեծամեծս յանցանեն. իսկ զիւրաւ ներեսմք մեզ զյանցանս, յորժամ բախտն ներլցէ. և յորժամ բարձր իցեմք և երանելիք, առ հանճարեղս և ճարտարս քան զամենայն ունիմք զանձինս. ձախողանք են միայն վարդապետք կարօղք կըշտամբել զմեզ յօգուտ, և կորզել 'ի մենջ զնոստովանութիւն յանցուածոցս, որ այնչափ ծանր է ամբարտաւանութեան մերում: Յայնժամ, իբրև թշուառութիւնք բանան զաչս մեր, դառնամք դառնապէս ակն արկանեմք յամենայն 'ի գայթս մեր. միապէս 'ի տագնապի տեսանեմք զմեզ յորոց գործեցաքն և յորոց զանցն արարաք, և չգտանեմք այնուհետև իւ արդարացուցցուք զիմաստութիւնն զայն բարձրայօն՝ յաչս անձին անսխալ կարծեցեալ. իմանամք զի Աստուած ևեթ է իմաստուն, և յաշխարհէն 'ի զուր զյանցանն խանգարիչս իրաց մերոց՝ խորհուրդ լաւագոյն ողբալ ուսուցանէ մեզ զայնս՝ որ զյաւիտենականութիւն մեր կորուսին, այլ՝ հանդերձ չքնաղ ափոփութեամբս՝ զի արտասուելով դարման լինի նոցա:

Անմիտթար 'ի մարդկանէ զամս երկոտասան կալաւ Աստուած և ոչ եթող զթշուառական դշխոյս, – տացուք նմա համարձակ զանուանս զայս՝ զոր նա ինքնին շնորհակալութեան արար պատճառս, – և ուստոյգ զա ընդ իւրով ձեռամբ՝ չամբեալով սմա զնրատս զայս դառն, բայց հաստատուն: Հուսկ տալա խոնարհեալ ուխտիւք սորա և խոնարհ համբերութեամբն՝ կանգնեցոյց զտունն արքունի. Կարոյոս երկրորդ ծանուցաւ թագաւոր, և խնդրեցաւ վրէժ թշնամանաց արքայից: Որոց ոչ ազդեցին զէնք, և ոչ խրատք 'ի զգաստութիւն, անդէն վաղվաղակի իւրովն 'ի դարձ եկեալ նուաճեցան. 'ի դերև ելեալք յաղատութենէ իւրեանց՝ ատեցին զանչափութիւն նորին, ամաչեցեալք ընդ այնչափ յանդգնութիւնն, և 'ի յաջողուածոց անտի իւրեանց քաստնեալք: Զեմք անտեղեակ՝ զի Թագաւորս այս մեծանձն կարօղ էր ՀՆԳ տալ իրաց իւրոց 'ի ձեռն այնոցիկ, որ ինքնամատոյց

լինէին քակտել զբռնաւորութիւն միով ևեթ հարուածով. սիրա նորա մեծ՝ անարժան իւր վաթկուցեալ զանարդ հընարսն, համարեցաւ թէ յինչ պայման և դասանիցի այր թագաւոր, օրինօք կամ զինուք ևեթ վայելէ գործ վճարել մեծութեան իւրում: Օրէնքն՝ որոց պաշտպան եկաց, գրեթէ նոքին ևեթ ամբարձին զնա. թագաւորէ արդ 'ի խաղաղութեան և 'ի փառս 'ի գահու նախնեացն իւրոց, և թագաւորեցուցանէ ընդ իւր զարդարութիւն, զիմաստութիւն և զգթութիւն:

Աւելորդ է ասել առ ձեզ՝ քանիսն 'ի սքանչելի դիպուածոց ասի մխիթարեցաւ դշխոյս. բայց յաղեալից իւրոց ուսեալ էր՝ 'ի մեծի փոփոխման անդ տերութեան իւրոյ մնալ անփոփոխ. մի անգամ հալածեալ աշխարհ 'ի սըրատ իւրմէ՝ ոչ ևս դարձաւ անդրէն: Եւ տես հիացմամբ՝ զի Աստուած, որոյ 'ի գերևս արարեալ էր զամենայն վստակ և զքանս, քանզի ժամանակեալ ժամուն մնայր, ընդ հասանել նորա, երթեալ առ իբրև զձեռանէ զարդին իւր զարքայ և տարաւ յաթոռ իւր: Խոնարհեցաւ առաւել քան զառաւել ընդ ամենակալ ձեռամբն՝ որ 'ի բարձանց երկնից ունի զերասանակս ամենայն թագաւորութեանց. և անդոմանեալ զվտարական դահս՝ բևեռեաց զոտիրս իւր ընդ արքայութիւնն, յորում չեք երկիւղ հաւասարորդս ունելոց [1], և մրցակիցքն՝ աննախանձ տեսանեն զմիմեանս: Ի խորհրդոյ ասի յորդորեալ՝ սիրեաց զնոսարհ յարկս զայս քան զապարանս իւր. և ոչ յայլ ինչ վարեաց յայնմհետէ զզօրութիւն իւր՝ բայց 'ի պաշտպանել հաւատոցն ուղղափառութեան, 'ի յանձախել զողորմութիւնսն, և 'ի սփոփել առատապէս զտունս փախստականս յերից անտի թագաւորութեանց, և զորս միանգամ թշուառացեալն էին 'ի պատճառս կրօնից և ծառայութեան արքային:

[1] Առաւել զայն արքայութիւն սիրեն, յորում չգանգիտեն ունել բաժանակիցս: Ս. Աղոստ. յաղագս Քաղաք. Ե. 24:

Աղէ ածէք զմտաւ՝ որով խնամով խնայէր 'ի մերձաւորն, և որչափ ատեայր զթուռնալն խօսս բամբասանաց։ Գիտէր զկշիռ ոչ միայն զգոյշն ինչ բանի, այլ և զլռութեան իշխանաց, և որչափ խրոխտեալ Ճոխանայ չարախօսութիւն՝ իբրև գամ մի իշխեսցէ երևեալ առաջի երեսաց մեծութեան նոցա։ Ոչք տեսանէին զնա մտադիւր 'ի կշռեալ զամենայն բանս իւր, իմանային թէ հանապազ առաջի աչաց Աստուծոյ կայր, և հաւատարիմ նախանձաւոր կարդի Սրբոյն Մարիամու՝ ոչ երբեք մոռանայր զպատկառելի յանդիմանակացութիւն ահաւոր երեսացն Աստուծոյ։ Ուստի ստէպ յուշ ածէր զպաշտելի յիշատակդ աղօթիւք և ընթերցմամբ գրոցն նմանօղ լինելոյ Յիսուսի, յորմէ ուսանէր յանձին բերել զնմանութիւն Ճշմարիտ օրինակին քրիստոսասիրաց։ Արթուն կայր և սկէր ցանդ 'ի վերայ խղճի մտացն։ Յետ այնքանոյ չարեաց և տառապանաց՝ ոչ զոք թշնամի գիտաց իւր՝ բայց 'ի մեղաց իւրոց, և ոչ մի թեթև թուեցաւ նմա. մանրակրկիտ քննէր զնոսա. և փոյթ 'ի մէջ առեալ քաւել զնոսին ապաշխարութեամբ և ողորմութեամբք, այնպէս 'ի պատրաստի կայր, զի չկարաց մահ յանկարծս 'ի վերայ հասանել, թէպէտ և 'ի կերպարանս քնոյ մատուցեալ։

Մեռաւ մեծս դշխոյ, և մահուամբն եթող կսկիծ յաւիտենական, ոչ միայն արքայեղբօր իշխանիս մեծի և տիկնոջ իւրում, որ անվրէպ յամենայն 'ի պարտս իւրեանց՝ այնպիսի հլու՝ անկեղծ և անպակաս մեծարանօք վարեցան ընդ նմա, այլ և նոցա ամենեցուն՝ որոց եհաս պատիւ պաշտելոյ զսա կամ ճանաչելոյ։ Մի ապա այսուհետև լացցուք զաղէտս սորա՝ որ արդ զերանութիւն սորա գործեն։ Եթէ առաւել բարեբախտութեան էր դիպեալ, պերճագոյն լինէր պատմութիւն սորա, այլ գործք իւր ոչ այնչափ պատարուն. և չքեղ անուամբք մեծամեծօք՝ թերևս առաջի Աստուծոյ դատարկ երևէր։ Իսկ արդ զի զնաչն քան զգահոյս նախամեծար ընտրեաց, և զտառապանս իւր առ մեծ շնորհս

կալաւ, ընկալցի միսիթարութիւնս զաւետարանեալսն ագաւորաց։ Տացէ արդ Տէր Աստուած ողորմութեանց, զի վիշաք իւր ընդունելի եղիցին նմա 'ի պատարագ հաճոյական, դասեսցէ զսա 'ի գոգն Աբրահամու, և հաճեալ ընդ չարչարանս իւր՝ անխայեսցէ յայսմհետէ զտուն իւր և զշխարհս յահագին պատուհասից աստի։

ՎԱԽՃԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԻ ԴՇԽՈՅԻՆ ԱՆԳԼԻՈՅ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Թիւ (Ա.) խօսեալ է Ճառս 'ի 1669 Նոյեմբ. 16, առաջի մեծի իշխանին Փիլիպպոսի՝ միոյ միայնոյ եղբօր արքային Լուդուիկոսի ԺԴ, և Տիկնոջ նորա՝ Հենրիկեի Անգլիոյ, յեկեղեցւոջ կուսաստանի Սրբոյն Մարիամու Շայլէօթայ, ուր հանդուցեալ կայ սիրտ դշխոյիս:

(Բ) Հ. Պետրոս Բերուլեան խոստովանահայրն էր Հենրիկեի, որոյ երթեալ ընդ նմա յԱնգլիա՝ տարեալ էր և զքահանայսն յՈխտոն Աղօթարանին, և ապա 'ի տեղի նոցա մատուցեալ զմիւս կրօնաւորսն: Զկնի ուրեմն Բերուլեանն ծերանափառեցաւ 'ի Հռովմայ, եղեալ Կարդինալ սրբոյ Եկեղեցւոյն:

(Գ) Սա յառաջագահս ակնարկին դարձուցանէ զդէմսն, որ էին Փիլիպպոս եղբայր թագաւորին, և տիկին նորա՝ դուստր վախճանելոյ դշխոյիս:

(Դ) Օլիվիէ Քռոմուէլ, զլուխ ապստամբութեանն:

(Ե) Եղբօր արքային Գալլիոյ, առն իւրոյ, որ և ընդ իւր կայր անդ յունկնդրութիւն Ճառիս:

(Զ) Աննա աւստրիական, կին Լուդուիկոսի ԺԴ, մայր Լուդուիկոսի ԺԴ, որ 'ի կրասերութեան որդւոյն խնամակալ եկաց տերութեան, և բաղում ինչ զոր ծեաց արիաբար, և մեռաւ 'ի 1666:

(Է) Զի նաւք նորա ամս եօթն սրբեցին զծով յափրիկեցի հինից ծովու, և երիցս հարին զՇեղայիր՝ ազատել զգերեալ և զհարստահար քրիստոնեայս: Յայն ստիպեցան և Թունուզ և Թրիփոլի:

(Ը) Ի դէմս հաւատաւոր կուսանաց սրբուհւոյն Մարիամու Շայլէօթայ, յորոց եկեղեցւոջն խօսեալ է Ճառս:

ՃԱՌ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ (Ա)

ՀԵՆՐԻԿԷԻ ԱՆՆԱՑԻ ԱՆԳԼԻՈՅ

ՏԻԿՆՈՋ ԻՇԽԱՆԻՆ ՕՌԼԷԱՆԱՅ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հենրիկէ Անն Անգլիոյ՝ էր վերջին զաւակ արքային Կարոլոսի առաջնոյ, և Հենրիկէի Մարիամու Գալլիոյ՝ տիկնոջ նորա, զորմէ էր նախաճառեալ դամբանականդ՝ յորում՝ ազդող զօրութեամբ նը-կարագրեաց Պօսուէթ զաղէտս նորա։ Ծնաւ, որպէս ասացաքն, 'ի փախստեան Աբբայի և Դշխոյին յերեսաց ապստամբ հպատակացն, որոց նշկահեալ զնոսա՝ արարեալ էին վտարանդիս։ Ստիպեալ դըշ-խոյին բաժանել յարքայէ և մեկնել զնալ յԵքսըդէր 'ի 1644, անդ ծնաւ զդուստրս զայս, և հաղիւ հանգուցեալ 'ի ծննդոցն՝ զերծաւ 'ի Գալլիա, և ելթող անդ զդստրիկն 'ի դայեակն իւր, որոյ յետ երկուց ամաց մարթանօք գողացեալ զնա 'ի պահապանացն տարաւ առ դըշ-խոյ մայրն 'ի Գալլիա. անդ առաջի նորա մնաւ ամենայն խնամովք։

Հաղիւ 'ի չափ հասեալ ամաց չորեքտասանից՝ խորհեցան հարմնա-ցուցանել զնա։ Թագուհին՝ մայր Լուդուիկեայ ԺԴ՝ փափաքել թուէր առնուլ զնա արքայի որդւոյ իւրում՝ երիցու. բայց նա վասն մատաղ մանկութեան օրիորդին, թերևս և յայլ ինչ աղագս, ոչ յօժարեաց։ Յայնժամ թագուհին կամեցեալ առնուլ զնա կրտսերոյ որդւոյն՝ Փի-լիպպոսի իշխանին Օռլէանայ՝ գնաց անձամբ խնդրել զօրիորդն 'ի մը-բէն իւրմէ, որ մտադիւր հաճեցաւ. բայց յապաղեաց պատն, զի դշխոյն Անգլիոյ դստերքն հանդերձ գնաց յԱնգլիա, ուր այլով ինն

յեղափոխութեամբ ամբարձեալ էր յաթոռ հարց իւրոց որդին իւր Կարոլոս երկրորդ. և կատարեցաւ 'ի դարձի նոցա 'ի 1661։

Մանկամարդ բամբիշնն, զարդարեալ ամենայն պարգևօք բնութեան, բազում հանճարով և բիւր չքնաղ հանգամանօք, 'ի սուղ անդ կեանս իւր՝ զուարճութիւն եղև ընդհաշուք արքունեացն. և հեղգանձն 'ի փափկութիւնս, մոռացեալ խակ երբեմն զիմաստութիւն և զզգուշութիւն վայելուչ բնութեան իւրում և կարգին։ Սկեսուր իւր և մայրն խրատէին զնա յաճախ. բայց խրատուցն օգուտ սակաւաժամանակեան լինէր։

Տարին 1670 'ի մեծ փառս եղև նմա։ Լուդովիկոս արքայ՝ նկատեալ զմեծ հանճար նորա և զերևելի հանգամանսն, և մտերմութիւն բազում կալեալ ընդ նմա, դորձ մի արքունի դժուարին եւ 'ի ձեռս նորա, և առաքեաց առ արքայ Կարոլոս Բ, եղբայր իւր, զոր կամէր քակել յերեքկին ուխտակցութենէն Անգլիոյ, Շուեսացոյ և Հոլանդիոյ, եղեալ 'ի մոն տալ պատերազմ ընդ վերջնոյդ։ Ամենայն յաջողութեամբ դարձ արար տիկինն, ունելով 'ի ձեռին զդաշն եղբօրն՝ զորմէ կախեալ կայր բախտ մոյ մասին Եւրոպէի, 'ի մեծ պարծանս իակ նըմին առժամայն և առ յապա։ Այլ անդէն մահ անողորմ և ցաւագին հասեալ 'ի վերայ՝ եհատ զամենայն ակնկալութիւն։

Յառաջնեմ ամի հետէ՝ մահ մօր իւրոյ, զեղեցիկ դամբանականն Պօսիւէթի՝ զոր տեսաք, և հոգեշահ խօսակցութիւնք անուանի առաքինորդիդ՝ ուժգին և փրկաւէտ գործեալ էին 'ի սիրտ նորա ազդումն, որ և արծարծեցաւ անդրէն յելս կենացն։

Յետ ութ աւուր դարձի իւրոյ 'ի Գալլիա, յանկարծակի անկաւ ընտվաւ հիւանդութիւն դժուարին 'ի Սէնքլու, ուր առանձնացեալ էր 'ի հանգիստ աշխատանացն. այնպէս ահագինս զայրացեալ սխտին վաղվաղակի, մինչև խակ և խակ 'ի միտ առնուլ նմա՝ թէ հասեալ է ժամ իւր։ Փահանայն որ հրաւիրեալ առ նմա կայր, յերկար 'ի գիր աւանդեաց զցաւն՝ որոց մոգիւրութեամբ տարեալ 'ի կամս Աստուծոյ՝ ճշմարիտ զղջմամբ մինչև 'ի շունչ վախճանին, եղև 'ի մեծ շինութիւն։ Պօսիւէթի՝ յայնժամ եւս Քօնտոմայ եպիսկոպոս՝ ժիրաժիր փութով կոչեցեալ՝ եհաս 'ի ժամու. լինել վկայ ականատես, և ընդունել զվերջին հեծութիւնսն յամի 1670 'ի յունիսի 30։



Ունայնութիւն ունայնութեանց՝ ասաց Իսաղոմն, ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է։

Իսաղ. Ա, 1։

Մեծապատիւ Տէր,

Ինձ ուրեմն պահեալ կայր և զայս հարկ սգաւոր պաշտաման հատուցանել բարձրապատիւ և հզօր բամբիշնս Հենրիկեի Ամենայի Անգլիոյ՝ տիկնոջ Իշխանին Օռլէանայ։ Այն՝ որ տեսանէի այնպէս մտադիր ուշնկալ 'ի հարկանելս իմ զսոյն սգաս մօր իւրում դշխոյի, այսպէս ուրեմն վաղվաղակի էր լինելոց պատճառ նոյնօրինակ Ճաւի, և խմոյ ցաւագին ձայնիս մնայր այս աղիողորմ սգասաւորութիւն։ Ո՛վ ունայնութիւն, ո՛վ ոչինչ, ո՛վ անդէաք բախտին իւրեանց մահկանացուք։ Կարծէ՞ր ինչ նա բնաւ յառաջ քան զամիսս տասն։ Եւ դուք, տեարք, ածէ՞ք ինչ զմտաւ, մինչդեռ յանհնարին արտասուս հարեալ կայր 'ի տեղւոջս յայսմիկ (բ), թէ այսպէս փութանակի ժողովելոց էին զձեզ

անդր՝ աշխարել զինքն։ Ո՛վ բամբիշն, զարմանալիդ երկուց մեծաց թագաւորութեանց, չէ՞ր շատ Անդ՚լիոյ լալ զբաժանումն քո՝ ինմանէ՝ առանց հարկ լինելոյ նմա ողբալ և զմահդ. և Դալ՚ղլիոյ՝ որ եռես զքեզ դարձեալ վերատին այնչափ ցնծութեամբ պար առեալ՝ ինորանշոյլ փառաց, միթէ չէ՞ն այլ ևս հանդէսք և այլ ինչ յաղթանակք վասն քո՝ ի դարձիդ քում՝ այսրէն՝ ի հռչակելն ուղղոյդ, ուստի առեալ ածեր այնքան պարծանս և այնպիսի գեղեցիկ ակնկալս։ «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է»։

Այս բարբառ ևեթ մնայ ինձ, զայս միայն ներէ՛ ինձ խոկա՝ ինորանշան պատահարիս՝ ցաւ մի այսպիսի արդար և կարևոր։ Վասն որոյ ոչ յուզեցի՝ ի գիրս սուրբս՝ գտանել բնաբան մի պատշաճող տիկնոջս, առի անաշխատ և անխոսիր զառաջին բանս ժողովողին, յորս թէպէտ և յեղյեղուկս արկեալ է ունայնութիւն, այլ ըստ իս՝ դեռ ևս ոչ բաւական՝ ի պէտս առաջի եդեալս խորհրդոյ։ Կամ է՞ ինձ՝ ի մեծ միայնում թշուառութեան աշխարել զթշուառութիւնս ազգի մարդկան առ հասարակ, և՝ ի միում ևեթ մահու՝ յանդիման առնել զմահ և զոչնչն ամենայն մարդկեղէն մեծութեանց։ Այս բնաբան, յոյժ՝ ի դէպ ամենայն վիճակի և ամենայն դիպուածոյ կենցաղիս, առանձին իմն երաւամբք վայելուչ է ողբանուէր առաջարկութեանս, զի ոչ ուրեք այսպէս յայտ յանդիման մերկացան և համաձայնն նշաւակեցան ունայնութիւնք աշխարհս։ Ո՛չ. յետ դամ՝ մի զայս տեսանելոյ մեր, առողջութիւն չէ՞ ինչ՝ բայց անուն ևեթ, կեանքն՝ երազ, փառքն՝ երևոյթ, շնորհքն և հաճոյք՝ վտանգաւոր զբօսանք. ամենայն ինչ մնոտի է՝ ի մեզ՝ բաց յանկեղծ խոստովանութենէ ընդունայնութեանցս առաջի Աստուծոյ, և՝ ի հաստատուն խորհրդոց արհամարհելոյ զամենայն որ ինչ և եմքս։

Այլ միթէ զշնմարտութիւն խօսիցիմ. զոր՝ ի պատկեր իւր արար Աստուած զմարդն՝ միթէ սու

՞ր ևեթ իցէ. զոր

յերկնից յերկիր եկն խնդրել Յիսուս Քրիստոս, զոր ոչ անարգութիւն համարեցաւ գնել բոլորով իւրովարեամբն, չի՞նչ ևեթ իցէ։ Այլ՝ ի միտս եկեսցուք՝ ի մոլորութենէս. ապաքէն պատրէ զմեզ այս տխուր տեսիլ մարդկային ունայնութեանց. և յոյս աշխարհիս՝ ի դերև ելեալ յանկարծոյն մահուամբ տիկնոջս՝ անդրագոյնս վարէ զմեզ։ Ոչ նեղրելի է մարդոյս խոտել բոլորովին զանձն, զուցէ ընդ ամպարիշտսն խաղ իմն՝ ի ձեռս դիպուածոյ վարկուցեալ ըղկեանս, ստերիւր և ստահակ գնայցէ ըստ կամս զաչացու յօժարութեանցն։ Ամին իրի ժողովողին սկիզբն եդեալ ասաուածեղէն գրոյն զատացեալ բանքս, և զամենայն էլսն լցեալ արհամարհութեամբ մարդկայնոցս, կամի ապա հաստատուն ինչ առաջի առնել մարդոյն, և զամենայն ճառսն տանի կնքէ՞ յայս. «ՅԱստուծոյ երկիր և զպատուիրանս նորա պահեա. զի այս է մարդն ամենեին. զի զամենայն արարածս ածցէ Աստուած՝ ի դատաստան՝ յամենայնի անտես արարելոյն, եթէ բարի և եթէ չար [1]»։ Վասն որոյ՝ ամենայն ինչ մնոտի է՝ ի մարդն, եթէ յայն հայեցիմք՝ զոր տայն աշխարհի. իսկ եթէ զոր Աստուծոյն պարտի՝ զայն զմոտաւ ածիցեմք, մեծարգի է ամենայն։ Դարձեալ միւսանգամ, մնոտի է ամենայն՝ ի մարդն, եթէ միտ եդեալ նայեցիմք յընթացս մահկանացու կենացն. բայց պատուական է ամենայն, կարևոր ամենայն, եթէ զվախճանն յոր յանդ ելանէ՞ նկատիցեմք, և զհամարն զոր պարտի տալ զամենայնէ։

Խոկացուք ուրեմն այսօր առաջի սեղանոյս և դամբանիս զառաջին և զվերջին պատգամն ժողովողին, զմին՝ որ զունայնութիւն մարդոյն ցուցանէ, և զմիւսն՝ որ սահմանէ զմեծութիւն նորա։ Դամբանս այս արասցէ զմեզ խելամուտ ոչնչութեան մերում, միայն թէ սեղանս՝ յորում հանապազօր մատչի վասն մեր պատարագ մեծագին՝ ու-

[1] Ժող. ԺԲ, 13, 14։

սուսցէ մեզ միանգամայն զպատիւ մեր. երկոցուն ևս վկայ հաւատարիմ եղոյցի տիկինս զոր արտասուեմք: Տեսցուք զոր մահ արդարվախճան խլեաց 'ի նմանէ, տեսցուք զոր մահ բարի պարգևեաց նմա: Այսպէս ուսցուք արհամարհել զոր նա անվնաս ելիք. զի զմիտս մեր բովանդակ յայն յառեսցուք՝ զոր ընդդրկեաց նա ջերմեռանդն տենչմամբ, յորժամ հոգի իւր պարզեալ յամենայն երկրաւոր խորհրդոց և երկնիւք լցեալ՝ յոր հուսն կայր, եառեալ զայսն յայտ յանդիման: Այդ են ճշմարտութիւնքն՝ զորոց ճառելոցս եմ, արժանի զայնս համարեալ լսելեաց իշխանիս մեծի, և ժողովոյս ականաւորի ընդ տիեզերս:

«Ամենեքեան մեռանիմք, ասէր կինն՝ զորոյ գովն գիրք զնմուստութիւն յերկրորդումն Թագաւորութեանց, և գընամք անդադար 'ի գերեզման, իբրև զջուրս որ անդարձ կորնչին[1]»: Արդարև նմանեալ եմք ամենեքին ջուրց հոսանաց: Յոր մեծաշուք պատիւ և նազեսցին մարդիկ, նոյն և մի ծագումն է նոցա, և ծագումն այն դոյզն ինչ ևեթ: Ամք նոցա ետ զեռէ մղեն զմիմեանս զօրէն ալեաց, սահին գնան անդադար, մինչև յետ խուն ինչ առաւել կարկաջելոյ և ընդ գոն ինչ առաւել երկիր. քան զերեսարս անցանելոյ, երթան առ հասարակ ընկղմին յանդունդս ուրեք, ուր ոչ ևս ճանաչին՝ ոչ իշխանք, ոչ թագաւորք, և ոչ այլ ինչ ամբարտաւան պերճանք զանազանեալք 'ի մարդիկ, որպէս դեռք անուանիք՝ անանուն և անշուք մնան՝ խառնեալք յաշխարհածոնին ընդ աննշան վտականին:

Եւ յիրաւի, տեսրք, եթէ դոյր ինչ 'ի բարձր առնել զմարդիկ 'ի վեր քան զբնաւորական հիքութիւնն, եթէ ծագումնս հասարակածին ընդունէր ինչ անխախտաւ և տեղ խոսիր 'ի նոյն հողանգուած սաեղծուածս Արարչին, զի՞նչ վեհագոյն գտանէր ընդ տիեզերս քան զբամբինս զորմէ

1 Ամենեքեան մեռանիմք, և իբրև զջուրս սահիմք ընդ երկիր, որ ոչ ևս դառնան, Բ Թագ. ԺԴ, 14: Ըստ լատին թարգմանութեան:

բանքս են: Զոր ինչ առնել է՝ ոչ միայն սերնդեան և բախտի, այլ և չքնաղ հանգամանաց մտաց՝ 'ի բարձրութիւն տիկնոջ ուրուք, միախուռն բովանդակեալ գտանին 'ի մեր բուսն ասա, և ապա յոչինչ եղեալ: Յորմէ կուսէ և հայեցիմ ընդ հետս մեծափառ ծագման իւրոյ, այլ ինչ ոչ նըշմարեմ՝ բայց թագաւորս, և ամենայն ուրեք շլանան աչք իմ 'ի խաղտելոյ նշուլից հոյակապ թագացն: Տեսանեմ ըզտունն գալիլեական՝ զանհամեմատ մեծն համբրէն տիեզերաց, որում աննախանձ կարէն տալ տեղն տունք հաստատարուստք, քանզի և յայտնէ անտի հնարին ձգել զփառս իւրեանց. տեսանեմ զթագաւորսն Սկոտիոյ, զթագաւորսն Անգլիոյ, որ յայնքան դարուց հետէ թագաւորեցին 'ի վերոյ ազգի պատերազմող քան զբնաւս ընդ ամենայն երկիր, մանաւանդ արութեամբ քաջութեամբ իւրեանց, քան սասսիւ գաւազանին արքունի: Բայց բամբինս այս ծնեալ 'ի գահու՝ միտս լմն և սիրտ բարձրագոյն քան զծնունդսն ստացեալ ուներ: Ազէտք տան իւրոյ ոչ կարացին ընկճել զնա 'ի ծաղրի անդ հասակին, և յայնմ հետէ երևէր 'ի նմա մեծութիւն լմն անմսան ամենեքին 'ի բախտին: Խոնդամիտ ասէաք, սքանչելեօք լմն թափեալ զնա երկնից 'ի ձեռաց թշնամեաց հօր իւրոյ արքայի՝ առ 'ի շնորհել գալիլեայ. տուրքք ազնուական, պարգև անգին, եթէ միայն առաւել երկարատև էր լեալ ժառանգութիւն նորա: Իսկ ընդէր բնաւ գայ յիշատակս այս խզել ընդ մէջ զբանիցս թել: Ա՛ւաղ. ջմարթեմք վայրիկ մի ակնկառոյց լինել 'ի փառս օրհորդիս, և ահա անդէն 'ի ներքս անկանի մահ՝ մթագնել զամենայն իւրով ստուերաւն: Ո՛վ մահ, 'ի բաց կաց 'ի մըտաց մերոց, և թոյլ տուր մեզ փոքր մի ժամանակ խաբել զբռնութիւն ցաւոցս յիշատակաւ ցնծութեան մերոյ:

Արդ յիշեցէք, տեսրք, յոր հիացումն կրթէր զաքքուենան ողջոյն օրիորդս Անգլիոյ, ուշ ձեր ճարտար ևս նկատեսցէ զնա ձեզ՝ ամենայն զխմակօքն և անզուգական քաղցրութեամբն, որպիսի չէք ամենայն ճառիցս հնար վճարել:

Զարդանայր յօրհնութիւնս հանուրց ազանց, և ոչ դադարէին ամբ բերել նմա շնորհս նորանորս: Վասն որոյ մայր իւր դշխոյն, որում միութարութիւն եղև սա միշտ, ոչ աւելի ինչ սիրով խանդաղատէր զնովաւ քան զԱննա (գ) ստանիական: Անա, գիտէք դուք, տեսրք, ոչինչ դեր 'ի վերոյ քան զօրիորդս զայս դասնէր: Յետ տալոյ մեզ Թագուհի զմն՝ միայն բաւական բարեպաշտութեամբ իւրով և այլովք արքայական առաքինութեամբք բառնալոյ զանուն այնքանոյ հռչակաւոր հօրաքեռ, կամեցեալ 'ի տուն իւր մուծանել որ ինչ մեծ կայցէ ընդ տիեզերս, երկրորդի որդւոյ իւրում Փիլիպպոսի Գալլիոյ ընտրեաց 'ի տիկնութիւն զօրիորդս Հենրիկէ: Եւ թէպէտ արքայն Անգլիոյ, որոյ սիրտ հաւասար է իմաստութեանն, գիտէր զի քոյր իւր օրիորդս, ցանկալին բազում թագաւորաց, կարօղ էր փառաւորել զգահ մի արքունական, խնդութեամբ ետես զնա բազմեալ յերկրորդական բարձին Գալլիոյ, զոր մեծի թագաւորութեանս շուք կարէ ընդ առաջինն աշխարհի զուգաթուել:

Իսկ եթէ բարձն զնա փառաւորէր, յիրաւի ասացի ձեզ՝ թէ իւրով պարծանօքն առաւել էր փառաւոր: Գոյր ինձ յուշ արկանել ձեզ՝ զի այնպէս քաջահմուտ էր դեղոյ յօրինուածոց ճարտարութեան, մինչև համարել 'ի կատարումն արուեստին հասեալ՝ եթէ միայն գիտաց զք հաճոյ տիկնոջս լինել. գոյր ինձ և յաւելուլ, զի հանճարեղք և փորձք զարմանային ընդ աշխոյժ և խորազգաց միտսն, որ անաշխատ հասանէր կայր 'ի վերոյ մեծամեծ գործոց արքունի, և շահիցն ծածկելոց լիներ խելամուտ: Այլ զի է ինձ երկարել զճառս, ուր մարթի ինձ միով բանիւ ասել բովանդակ: Արքայ՝ որոյ ընտրութիւն իւր օրէնք անսխալ են, կշռեալ զկար բամբշանս, մեծարանօք իւրով կացոյց զնա դեր 'ի վերոյ ամենայն դրուատեաց մերոց:

Սակայն ոչ այս մեծարանք և ոչ այն ամենայն առաւելութիւնք, ոչ ինչ կարացին սանանել պարկեշտութեան

իւրում: Ամենայն գիտութեամբն ոչ մեծամտեաց ընդ հըմտութիւնս իւր, և ոչ մոռայն լուսաւորութիւն շլացոյց երբեք զնա: Դուք աղէ՝ զորս տիկինս մեծ պատուեաց իւրով մտերմութեամբն, վկայ լերուք բանիս: Զմի միոյ տեսէք քան զսորայս բարձրագոյն. և սակայն զմի միոյ առաւել հլուական: Են են բաղումք, որ առ խղճի յոյժ հեշտալուր լինելոյ՝ խստերախ առ իրաւունս դատանին, և ընդդէմ յամառեալ պնդին: Տիկինս՝ որպէս 'ի յանդգնութենէ, նոյն և 'ի մեղկութենէ հեռի կայր միշտ. միապէս մեծարոյ և 'ի գիւտ խմաստուն խորհրդոց, և յընդունել զայնս: Քաջ ճանաչին այնոքիկ յորժամ հաւատեաւ ոք այնմ միտ դնիցէ քննութեան, որ սիրելին էր յոյժ տիկնոջս. ուստուն նոր, և զոգ անծանօթ անձանց համատոյց նորա և պատուակցաց, եթէ ախորժէք՝ յաւելցուք թէ և համաբնեայց: Սա և զանձին թերութիւնս 'ի քէնին առնոյր, սիրէր զի անաչառ մատուցին նմա առ այն խրատք. անվրէպ նշան արիական հոգւոյ՝ որում սխալանք իւր ոչ տիրեն նմա, և չզանգիտէ նկատել զայնս 'ի մտուստ, վստահացեալ 'ի սրտին՝ 'ի յոյս յաղթանակելոյ 'ի վերայ նոցա:

Խորհրդով յառաջադէմ զարգանալոյ յայս ուստուն իմաստութեան, անդուլ ընդելանէր յընթերցումն պատմութեան, զոր յիրաւի կոչէն իմաստուն խորհրդական իշխանաց: Անդ արքայք մեծամեծք ոչ այլ ինչ կարդ ունին քան զառաքինութեան իւրեանց, և 'ի ձեռս մահուն անշքացեալք յաւէժ, առանց արքունեաց և պաշտօնեից դան կրել դատաստան յամենայն ազգաց և ազանց. անդ 'ի յայտ եկանէ՝ թէ մարդահաճոյ շողոմիցն շուք՝ վեր 'ի վերոյ հարևանցի իմն է, և թէ սնոտիապատուասաշարաեալ երանգք՝ թէ և ճարտարութեամբ հարեալք, չկան յակաստանի կռուեալք և տարրացեալք: Անդ բամբիշն մեր աբանչելի՝ 'ի միա առնոյր զպատշաճն այնոցիկ՝ յորոց 'ի վարուցն հիւսի պատմութիւն, և տակաւ երթայր և մերկանայր զախորժակ առասպելապատում վկայասանութեանցն և զան-

համ գիւղացանց նոցին. և ուշ եղեալ տպաւորել յանձին զտուգութիւն՝ արհամարհէր զցուրտ և զինատակար պաճուճեալ կեղծիսն: Ուստի ընդ զուարթ և լուրջ երեսաք, ընդ առդգ մանկութեանն կերպարանաք՝ յորում խաղաց ևեթ ակնկալութիւն թուէր, թաքուցեալ ունէր միտս ինն և զգօնութիւն՝ ընդ որ զարմանային կենցաղակիցք իւր:

Վասն որոյ մարթ էր զամենայն կարևոր գաղտնիս հաւատալ 'ի նա անվեհեր: Տիր, ծն անդր 'ի բաց 'ի կցորդութենէ գործոց և 'ի զոլողութենէ մարդկան ոգեբն ապիկարք և անհաւատք, որ ոչ գիտեն ունել զանզգոյշ լեզուս իւրեանց: «Նման են, ասէ Իմաստուն, անպարիսպ քաղաքի, որ յամենայն կողմանց բաց է [1]». և յաւար մտանի որում առաջին 'ի վերայ երթայցէ: Քանի գեր 'ի վերոյ էր Տիկնոջ 'ի ակարութենէ ասսի յայսմանէ: Ոչ ընդ խաբս պատարանք, ոչ շահ, ոչ անապարծութիւն, ոչ խանձ մեղմախառն սրտկանաց կամ քաղցրախօսիկ կենակցութեան, որ զսիրան հոլանեալ՝ զդաղանիսն կորզել սովոր է, չէր բաւական 'ի վեր հանել զնրան. և աներկիւանութիւնն 'ի տիկնոջէն, զոր հանձար իւր՝ պատշաճաւոր կացուցանէր մեծամեծ գործոց, զկարևորագոյնս անգամ տայր 'ի նա հաւատալ:

Մի համարիք թէ կամիցիմ՝ երբև զյանդուգն ոք թարգման գաղտնեաց տերութեան՝ խօսել զուղղորութենէն Յանգլիա, կամ զբրինակ յանձին բերել զմտատես քաղաքականացն, որ ըստ խելս իւրեանց յօրինեն զնորհուրդս թագաւորաց, և անհրահանգ՝ զժամանակս դարուն իւրեանց մատենագրեն: Զայս ևեթ ասացից զմեծաշուք Ճանապարհէն, զի քան ամենայն ուրեք՝ անդ զարմանալի եղև Տիկնոջ: Զգոյր այլ ինչ բարբառ՝ բայց սքանչելութեան ընդ

[1] Որպէս քաղաք անփակ և առանց շրջապատ պարսպաց, նոյնպէս այր՝ որ ոչ կարէ 'ի խօսս արգելուլ զոգի իւր: Առակ, ԻԵ, 28. ըստ լատին թարգմանութեան:

բարութիւն բամբշանս, որ և 'ի վերայ երկպառակութեանցն սովորելոց յարքունիս՝ ած անդէն զիւրև զամենայն ոգի: Զէր մարթ գովել ըստ արժան բաւականին զչաւատալն Ճարտարութիւն նորա 'ի վճարումն վտանգաւոր իրաց, 'ի բժշկել զծածուկ երկմտութիւնս՝ որ յաճախ 'ի կախ մընացուցանեն, և առ 'ի յանդ հանել զամենայն վէճ՝ միաբանեալ զհակառակ միմեանց խնդիրս:

Իսկ ո՞ կարասցէ առանց հեղման արտասուաց զմտաւ ածել զցուցակութիւնս մեծարանաց և գորովց՝ զոր արար ընդ նմա տայդր իւր արքայն: Թագաւորն այն մեծ, որում առաւել էր գութ ընդ արժանիս քան ընդ արիւն, ոչ թուլանայր 'ի սքանչանալոյ ընդ գերապանծ հանգամանս Տիկնոջս: Ո՞վ վերք անհնարին. որ 'ի Ճանապարհի անդ պատճառն գտաւ իրաւացի զարմանաց, եղև պատճառ արքային այնմ անվախճան ցաւոց: Բամբիշն, վայելուչ յօգակապ երկոցուն մեծազօր թագաւորաց աշխարհի, զմի այսպէս արագ յաջշանակեցար 'ի նոցանէ: Երկոքին թագաւորքն մեծք՝ Ճանաչէն զմիմեանս. արդիւնք են այս խնամոց Տիկնոջս. ուստի սիրաք նոցին աղնուականք՝ միաբանեսցին ըստ միտս նոցա, և առաքինութիւն 'ի միջն նոցա եղիցի միջնորդ անեղծական: Բայց թէպէտ և զուգութիւն նոցին չկորուսանէ ինչ 'ի հաստատութենէն, մեք յաւիտեան ոգբաստցուք զկորուստս անուշակ գեղոյ զարդուն նորին, և զանիեղբաց սիրելի բամբշանս գահավէժ գլորումն 'ի վիհ գերեզմանին, մինչդեռ մտերմութիւն երկուց արքայից մեծաց՝ ամբառնայր զնա 'ի կատարս բարձրութեան փառաց և պատուոյ:

Փառք և պատիւ: Եւ իցէ՞ մեզ գեռ ևս մարթ լսել ըզբարբառս զայս 'ի յաղթանակի ասս մահուն: Ոչ, տեսցք, ոչ ևս ժուժեմ՝ բերել զդոչաւորագոյն ձայնսդ, որովք ամբարհաւաճութիւն մարդկան ճգնի ափշեցուցանել անձամբ զանձն, առ 'ի չտեսանելոյ զչքութիւն իւր: Ցիսմ է արդ յանդիման առնելոյ, թէ որ գամ մի մահկանացու է, որ

զինչ և յարեսցի 'ինա արտաքուստ առ 'ի մեծ երևեցու-
ցանել, ինքնին 'ի բնէ իւրմէ անընդունակ է բարձրութեան։
Յայս միտս լուարուք զխորախորհուրդ բան, ոչ զիմաստա-
սիրի ուրուք՝ որ վիճիցի ուրեք 'ի դպրոցս, և ոչ զուրուք
կրօնաւորի՝ որ 'ի մենաստանի ուրեմն 'ի խոկ կրթեսցի, կամ
է ինձ նոքօք յամօթ առնել զաշխարհ՝ զորս աշխարհ ինքնին
գեր 'ի վերոյ մեծարէ, նոքօք՝ որ քաջածանօթքն են նորա,
և առ ափ 'ի բերան առնելոյ զնա՝ ոչ այլ կամիմ տալ նմա
վարդապետս, բայց գահակալս աթոռոց արքունեաց։ «Ա-
տուած, ասէ Թագաւորս մարգարէն, ահա չափով եդիր
զաւուրս իմ, և կար զօրութեան իմոյ որպէս ոչինչ է ա-
ռաջի քո[1]»։

Այո՛, քրիստոնեայք. ամենայնի որոյ չափ ինչ է, վախ-
ճան առնու. և ամենայն որ ծնանի 'ի վախճանել, չէ բովան-
դակ զերծեալ յոչնչէն՝ յոր անդրէն այսպէս վաղվաղակի
սուզանի։ Եթէ գոյութիւն մեր, եթէ կար զօրութեան
մերոյ ոչինչ է, զամենայն զոր 'ի վերայն շինեմք՝ զի՞նչ ու-
նիցի լինել։ Ոչ շինուածն ամուր քան զհիմն է, և ոչ պա-
տահումն զէութեամբն եկեալ՝ սերտ ինչ քան զբուն էու-
թիւնն։ Յորժամ բնութիւն այսպէս 'ի խոնարհ ունի զմեզ,
զի՞նչ զօրէ առնել բանսն առ 'ի զմեզ բարձրացուցանելոյ։
Հետազօտեցէք, ածէք զմտաւ 'ի մէջ մարդկան զամենայն է-
րևելս երևելի պարծանս քաջութեան, ոչ գտանիցէք նշանա-
ւոր ինչ և անկեղակարծ քան զայն՝ որ զյաղթօղն 'ի վերայ
պարտելոյն ամբառնայ, զոր առ ոտն տեսանէ անկեալ
տապստա։ Սակայն յաղթականն այն փքացեալ ուռուցեալ
պարծանօքն՝ անկցի և նա 'ի ժամու իւրում 'ի ձեռս
մահուն։ Յայնժամ թշուառական պարտեալքն յուշ ա-
բասցեն ընկերակցաց իւրեանց զգոռոզ յաղթականն իւ-
րեանց. և 'ի խորոց գերեզմանի նոցա ելցէ բարբառս այս՝
որ շանթահար առնէ զամենայն պերճութիւնս. «Եւ դու

1 Սաղմ. ԼԹ, 6։

իբրև զմեզ ըմբռնեցար, և ընդ մեզ համարեցար[1]»։ Մի՞
այսուհետև հնարեսցի բանսն ձգել հանել զմեզ յոչնչէն,
և մի՞ զխոնարհութիւն բնութեանս յարուցանել։

Բայց թերևս փոխանակ բանսին՝ հանգամանք հոգւոյն,
մեծամեծ առաջարկութիւնք, ընդարձակատարը խոր-
հուրդք, կարծիցի նոցն շքեղացուցանել զմեզ քան զայլս։
Զդոյշ լերուք՝ մի՛ հաւատայցէք. զի ամենայն խորհուրդք
մեր արտաքոյ Աստուծոյ՝ ընդ իշխանութեամբ մահուն են։
«Մեռցին, ասէ Թագաւոր մարգարէն, և յայնմ աւուր
կորիցեն ամենայն խորհուրդք նոցա[2].» այս են խորհուրդք
աշխարհակալաց, խորհուրդք քաղաքավարաց՝ որ նստեալ
'ի դահլիճս իւրեանց անդաճիցեն առաջարկութիւնս զբա-
վանդակ աշխարհի։ Անբաւ խնամովք պահ զնուրեամբք ար-
կեալ իցեն յամենայն կողմանց. ամենայնի յառաջատես
գտանիցին, բայց 'ի մահուանէ իւրեանց, որ աւար հարցէ
յահան թօթափել զամենայն խորհուրդս նոցա։ Վասն այ-
սորիկ Ժողովողն, արքայ Սաղոմոն՝ որդի արքայի Դաւթի,
– քանզի քաղցր է ինձ ցուցանել ձեզ զկարգառութիւն
նոյն վարդապետութեան 'ի նմին դահու, – յայս սակս,
ասեմ, 'ի թիւս արկեալ Ժողովողին զպատարանս՝ որ ըստ
զորդիս մարդկան, զիմաստութիւն և ընդ նոսին համարի։
«Հայեցայ ես, ասէ, տեսանել զիմաստութիւն. և տեսի
զի և այս իսկ ունայնութիւն է[3]». քանզի է իսկ իմաստու-
թիւն սուտ, որ յիրս մահկանացուս ևեթ ամփոփեալ՝ ընդ
նոսին թաղի յոչնչէն։ Ուստի չեք ինչ իմ արարեալ վասն
Տիկնոջս 'ի յանդիման առնելս ձեզ զգեղեցիկ գեղեցիկ հան-
գամանսն՝ որ զարմացուցին ընդ նա զաշխարհ, և զնա բա-
ւական արարին խորհրդոց բարձրագունից՝ ցոր վայր բամ-
բիշն ոք կարէր ժամանել։ Մինչ չև սկիզբն արարեալ պատ-

1 Եսայ. ԺԴ, 10։
2 Սաղմ. ՃԽԵ, 4։
3 Ժող. Բ, 12, 15։

մեջ ձեզ՝ ի՛ւ միացաւ ընդ Աստուած, տիկին մի այսպիսի հոյակապ ոչ այլ ինչ երևեցի 'ի Ճառիս, բայց օրինակ մի մեծ՝ կէս եղեալ առաջի, և բաւական յրմբերանել զիա-ռամոլս՝ թէ չիք նոցա հնար երևելի քան զայլս լինելոյ ոչ առհմիւ, ոչ մեծութեամբ, և ոչ հանճարով. քանզի որ զամենայն հաւասարէ մահ՝ ամենուստ տիրէ նոցա բուռն զօրութեամբ, և արագ և իշխանական բազկաւ ըզ-մեծամեծսն զլուխս տապալէ։

Մի՛ թիւք, տեսրք, ահաւոր պատուութեանցն յորս մեք 'ի՛ներքուստ ասոն ակնարկեմք. մինչդեռ դողմք մեք ընդ ձեռամբ նոցա, Աստուած հարկանէ զնոսա՝ մեզ 'ի խրատ. պատճառք՝ բարձրութիւն նոցա է, և այնչափ չզընդայ ընդ նոսա, զի չզեմեղէ պարտ բաշխի տալ զնոսա 'ի խրատս այ-լոց։ Մի՛ քրթմնջիք, քրիստոնեայք, թէ զի Տիկինս ընտրե-ցաւ՝ առնել մեզ զայս ազգեցութիւն. չիք ինչ դժնէ աս-տանօր վասն նորա. զի որպէս յառաջիկայսդ տեսջիք, նո-վին հարուածով որ զմեզն խրատէ՝ կէցուցանէ զնա Աս-տուած։ Պարտ էր հաստատ դիտել զոնչութիւն մեր. բայց եթէ անակնկալ հարուածք պակուցցիք պիտոյ լցեն սըր-տիցս կախարդելոյ 'ի սէր աշխարհի, շատ իսկ մեծ է այս և կարի ահագին։

Ո՛վ դիշեր աղետաբեր, ո՛վ դիշեր ահաւոր, յորում հնչեաց յանկարծահաս իբրև զշանդն Ճայթելոյ որոտման այս բօթ սոսկալի. Տիկինն ահա մեռանի, Տիկինն մեռաւ։ Ո՞վ ոք 'ի մէնք ոչ յանձն իւր առ զաղդ հարուածոյդ, որ-պէս եթէ դէպք ինչ եղեռնաւոր զոռն իւր յաւեր դարձ-ուցանէին։ Յառաջին անդ շուկ նորանշան ախսին, յա-մենայն կողմանց ընթացք 'ի Սէնքլու, ամենայն ինչ արհաւ-րօք լի, բայց միայն 'ի սրտէ Տիկնոջս. ամենայն ուրեք ձիչ և գէր լսելի, ամենայն ուրեք ցաւք և յուսահատութիւն և կերպարանք մահու։ Թագաւոր, թագուհի, արքայազ-բայրք, արքունիք ողջոյն, համօրէն ժողովուրդ, ամենայն խոնարհեալ անկեալ, ամենայն յուսահատուբ. և թուիմ

տեսանել զլուսն մարգարէաբարոյ. «Թա-գաւորն սգացցի, և իշխանն զգեցցի զապականութիւն, և ձեռք ժողովրդեան երկրին լքցին [1]» 'ի ցաւոց և յապշու-թենէ։

Բայց իշխանքն և ժողովուրդք 'ի նանիր հաչէին հառա-չէին, 'ի նանիր արքայազբայրն, 'ի նանիր թագաւորն ինք-նին գրկապինդ ունէր զՏիկինս։ Յայնժամ գոյր նոցա ասել այր ցընկեր ընդ սրբոյն Ամբրոսիոսի. Պինդ ունէի զ'Բաղբնոն, այլ զոր ունէիս՝ վաղ իսկ կորուսեալ էի [2]։ Ի գորովալիր անդ գրկախառնութիւնն՝ թռանէր 'ի նոցանէ բամբիշնն. և մահ հզօրացեալ՝ 'ի միջոց անտի արքայական բազկացն յափշտա-կէր զնա 'ի մէնք։ Իսկ զնա՞դ, էր ինչ պարտ այսպէս հապ-ճեպ տագնապաւ գնալ նմա։ Առ յոլովս 'ի մարգկանէ առ փոքր փոքր լինին այլայլութիւնք, և սովոր է մահ պա-տրաստել զնոսա 'ի հարուած իւր վերջին. իսկ Տիկինս՝ յայ-գուէ ցերեկ անց իբրև զնոսա դաշտի. վաղորդայն ծաղկեալ կայր, և որով գեղով, գիտէք դուք. ընդ երեկս տեսաք զնա ցամաքեալ. և ազգոյ բանք աստուածեղէն տաւիցն՝ որովք կուտակէ զողդողութիւն մարդկայնոցս՝ հանդերձեալ էին սնսպէս ճչգրտիւ և ըստ նկարագրին կատարել 'ի վե-րայ բամբիշնս։

Վա՛յ և եղուկ. մեք զպատմութիւն նորա յօրինեաք ա-մենայն մարթելի փառօք. անցեալն և որ կայրն երաշխա-ւորեին մեզ զապառնին, և 'ի չքնաղ առաւելութեանց ան-տի՝ կայր ամենայնի ակն։ Գնայր նա շահել երկուս մեծա-զօր թագաւորութիւնս հեշտալի հնարիւք. միշտ քաղցր, միշտ համբոյր՝ որպէս և առատ և բարերար, չէր բնաւ մարթ ատելի լինել անդ անուան իւրոյ. չէր երբեք տեսա-նել զնա՝ փառս անձին իւրում որսալ տագնապող և խու-ճապական մտրութեամբ. ինքն ժուժեալ մնայր նմա ան-

1 Եղեկ. Է, 27։
2 Ճառ 'ի մահ Սատիրոսի եղբօր իւրոյ։

երկմիտ եմն ընդ Ժառանգութիւն նորին. միամտութիւն՝ զոր աննենդ եցոյց ընդ արքայի մինչև 'ի վախճան կենացն՝ տայր նմա զհնարս ելից երացն. և հաստատ՝ բարեբախտութիւն աւուրցս է, մեծարանաց զոգ ընթանալ ընդ պարտս պաշաձիկ, և ըստ մեծարելոյ իշխանութեան և ահաւորութեան արքայի՝ նոյնչափ և առ անձն նորա և առ երախտիս նորին միամտել: Կամք սրտի Տիկնոջս ոչինչ ընդհատ սերտիւ զոգէին զնա ընդ այլ ամենայն պարտս իւր. արդիւնն որով եռայր 'ի փառս Արքայեղբօրն՝ անչափակալ էր. մինչ գեռ իշխանս այս մեծ՝ զհետ անցեալ եղբօրն անպարտելւոյ, արութեամբ բազմաց և յաջողուածիւ գործակից նմա լիներ 'ի շքեղ և գիւցազնական արարուածս Ճակատուցն Փլանտրաց, անհաւատալի եմն էր ուրախութիւն բամբչանս: Այսպէս սիրտ նորա ազատամիտ տանէր զնա 'ի փառս ընդ Ճանապարհ գեղապանծ յաչս աշխարհի. և եթէ կարօտէր ևս խմբք յերջանկութիւն, քաղցրութեամբ լուրով և վարուքն արկանէր զամենայն 'ի բուռն:

Այսպիսի եմն էր ախորժ պատմութիւնն՝ զոր յօրինեաք զՏիկնոջէս. և 'ի կնիք գործոյս մեծի չալակասեր ինչ՝ բայց երկարութիւն կենացն, ընդ որ չէին մեզ կարծիք վարանաց. զի ո՞ կարէր հաշուել անդամ, թէ կարՃեսցին ամք՝ այնպիսի առոյգ երևեալ մանկութեան: Համայն յայսմ կուսէ 'ի վայրկեան Ժամանակի ցնդեալ ցրուեցաւ ամենայն: Փոխանակ պատմութեան գեղեցիկ եմն կենաց, մնայ մեզ արդ առնել զարմանալի՝ բայց սգաղգեաց մահուան պատմութիւն: Արդարև յիրաւի, տեարք, ոչ ինչ բնաւ հաւասարեաց արութեան հոգւոյն, և ոչ անխռով պլինդութեան սրտին, որ առանց ինչ գուն 'ի վերայ գործելոյ՝ բնութեամբ գեր 'ի վերոյ գտաւ սոսկալի արկածից: Օն և օն՝ քաղցր գտաւ Տիկինս ընդդէմ մահուն, որպէս և էրն իսկ ընդ ամենեսեան. սիրտ նորա մեծ՝ ոչ զայրացաւ և ոչ գառնացաւ ընդ նա, և ոչ վհատութեամբ ընդդէմ խրոխտացաւ, բաւական համարեալ անվեհեր 'ի նա ակնարկել, և անվրդով ընդունել զայն: Տիսուր սիրտքանք զի ընդ հենդն մեծի արիութեանն՝ ահա կորուսաք մեք զնա: Այս իսկ է անհնարին ուսայնութիւն մարդկայնոցս: Իբրև ուժգին պընդութեամբ սրտի յաղթեմք գոգցես մահու, շնչուցանէ՞նա 'ի մեզ և զարութիւնն՝ որով ձայնատուր նմա լինել Թուէաք: Աւադիկ, մեծաւ սրտիւն հանդերձ, բամբիշնս զարմանաքանչ և սիրատարփ. աւադիկ՝ որպիսի ինչ գործեաց զնա մեզ մահն. նա աւանիկ և նշխարդ այդ որ ինչ էն՝ անհետացցի 'ի մէնջ, ստուերդ այդ փառաց՝ չքացցի 'ի միջոց, և տեսցուք զնա մերկ կողոպուտ ևս և 'ի տխրալի պաՃուՃանացդ: Իշանելոց է 'ի մթին վայրս, 'ի սանդարամետական օթևանսն՝ ննջել անդ 'ի հող ընդ մեծամեծս երկրի, որպէս ասէն Յոբ[1], ընդ Թագաւորս և ընդ իշխանս չքոտեալս, յորս և հաղիւ թէ գտանիցի նմա տեղի. այնչափ խծկեալ և խռնեալ են կարգք, այնչափ ժիր և ժաման է մահ 'ի խՃողել զվայրսն: Բայց ասա ևս պատրէն զմեզ ցնորքս. մահն ոչ թողու մեզ այնչափ ինչ մարմին՝ մինչև զվայրս դրաւելոյ. ոչինչ տեսանի անդ երևելի բայց շիրիմք ևեթ. մարմինք մեր իսկ և իսկ փոխին 'ի բնութենէն, իրան մեր՝ այլ եմն անուն ժառանգէ. նոյն իսկ դիական կոչումն, ասէ Տերտուղիանոս[2], քանզի դեռ ևս մարդկային եմն կերպարանս մեզ 'ի դէմս ածէ, չմնայ նմա ընդ երկար. դառնայ չգիտեմ զինչ լինի, որոյ չիք ինչ անուն և ոչ 'ի լեզուի ուրիք. այսչափ Ճշմարիտ է՝ թէ ամենայն մեռանի 'ի նմա, մինչև տխրական ձայնքն անգամ, ողորմելի նշխարեալ մնացորդացն նշանակիչք:

Այսպէս զօրութիւնն աստուածական՝ յարժանի սրբամտեալ ընդ ամբարտաւանութիւն մեր, տանի արկանէ զնա մինչև յոչինչն, և առ 'ի հարթ հաւասար յատակել 'ի սպառ զաշխարՃանս՝ զամենեսին զմեզ 'ի մի և նոյն մոխիր լուծանէ:

[1] Յոբ. ԻԱ, 26:
[2] Տերտուղ. յաղագս յարութեան մարմնոյ. Գ:

Իցէ՞ հնար չինել 'ի վերայ աւերակացս. Իցէ՞ յեցուցանել յօրինուած ինչ մեծ յանփրկանաւոր աւերածի ասա ի բաց մարդոյս:

Իսկ ապա զինչ, տեսարք. անյոյս ուրեմն է ամենայն վասն մեր: Աստուած՝ որ փայլատակմամբք սատակէ զամենայն զմեծութիւնս մեր՝ մինչև յաճիւն դարձուցանել զայն, չթողուցո՞ւ ինչ մեզ յոյս. նա՝ որոյ առաջի կորնչի և ոչ ինչ, և զամենայն գոյն խրխոր մարմնոցս՝ յոր տարակոյս աշխարհիս և ցնդեցէ զնոսա քայքայումն կամ գիպուած՝ նշմարէ, տեսանիցէ՞ յանյոյս կորուստ անկեալ զոր բաւականն արար 'ի ճանաչել զնոքն և 'ի սիրել: Աստանօր նոր իմն կարգ երաց յանդիման լինի ինձ, փարատին ստուերքք մահու. «Հորդեցան ինձ ճանապարհք 'ի ճշմարիտ կեանս[1]»: Ոչ ևս 'ի գերեզմանի է Տիկինս. որ զամենայն եղծանել թուէր մահն, զամենայն հաստատեաց. այս խորհուրդք են Ժողովողին՝ զոր 'ի գլուխս ճառիս ակնարկեցի ձեզ, և այժմ արժան է զնորան փեռեկել:

Խորհել արժան է արդ, քրիստոնեայք, զի թող զնմանութիւն մեր ըստ մարմնոյ ընդ յեղյեղուկ և մեռուտ բնութեան, ըստ այլում մասին սերտ հաղորդութիւն ունիմք և ծածուկ ազգակցութիւն ընդ Արարչին. զի Աստուած ինքնին խառնեաց ինչ 'ի մեզ՝ որ կարող է խոստովանել ըղձմարտութիւն էութեան նորա, կատարելութեան նորա երկիր պագանել, սիրանալ ընդ լրութիւն նորա. ինչ մի՝ որ կարող գոյ հպատակել ամենիշխան զօրութեան նորա, դերագոյն և անհաս իմաստութեան նորա լինել յանձն, ապաւինել 'ի բարութիւնն, երկնչել յարդարութենէն, սին ունել իւրում մշանջենաւորութեանն: Ըստ մասինս ըստ այսմիկ, տեսարք, եթէ բարձրութիւն յանձին ունել հաւատասցէ մարդս, ոչ պատրեսցի. զի որպէս ամենայնի հարկ է 'ի սկիզբն իւր միանալ, և 'ի սոյն միտս ասէ Ժողովողն, թէ «մարմինն դարձցի յերկիր ուստի առաւ[1]», ըստ նմին բանի պարտ է, զի որ 'ի մեզ զդրոշին ունի զաստուածեղէնն, որ կարօղն է միանալ ընդ Աստուած, դարձցի անդրէն 'ի նոյն: Արդ որում պարտն է երթալ անդրէն առ Արարիչն, որ առաջին և էական մեծութիւնն է, ո՞չ ապաքէն մեծ իցէ և բարձր:

Վասն որոյ՝ յասելս առ ձեզ՝ զմեծութիւն և զփառս 'ի միջի մերում պերճանաց ևեթ անուանս լինել, թափուրս յիմաստից և յարդեանց, միաք իմ 'ի թիւր առուսն ձայնիցդ հայեին՝ յոր սխալեմքս: Իսկ առ 'ի խօսել զՇշմարիտն բոլանդակ, ոչ վրէպ և ոչ զրպարտութիւն հնարեցան ըղպերճապայծառ անուանդ, նա մանաւանդ ոչ հնարագիւտ նոցին լինէաք, եթէ զհին նոցա չիրէաք յանձին. զի յոչընչէ՞ սատ ուստեք իցէ առնուլ զՀոխապատիւ իրացն կերպարանս: Ապա վրիպակ մեր ոչ 'ի վարեն է զանուանդ, այլ 'ի վերայ անարժան իրաց առնուլն: Քաջ խելամուտ դասաւ Շշմարտութեանս Ոսկեբերանն սուրբ, զի ասաց. «Փառք և իշխանութիւն, մեծութիւնք և աղնուականութիւն, առ աշխարհիկսն անուանք ևեթ են, իսկ առ մեզ՝ եթէ Աստուծոյ ծառայիցեմք՝ իրք են. իսկ աղքատութիւն, արհամարհանք և մահ՝ հաւասարի և Շշմարիտ իրք են առ նոսա, իսկ առ մեզ՝ անուանք սոսկ[2]». զի որ ՅԱստուածն յարեացի՝ ոչ կորուսանէ ոչ զինչսն, ոչ զպատիւն և ոչ ըղկեանսն:

Ապա մի՞ ինչ զարմանայք՝ զի Ժողովողն ասէպ յեղյեղէ. «Ամենայն ինչ ունայնութիւն է». ինքնին զմիտս իւր յայտ արասրեալ. «ամենայն ընդունայնութիւն է 'ի ներքոյ արեգական[3]», այս է՝ ամենայն որ ամօք չափի, ամենայն որ

1 Ցուցեր ինձ զՀանապարհս քո կենաց. Սաղմ. ԺԵ, 10:

1 Դարձցի հողն յերկիր՝ որպէս և էրն, և հոգին դարձցի առ Աստուած որ ետ զնա. Ժող. ԺԲ, 7:

2 Ոսկ. Մատթ. ԾԸ կամ ԾԹ:

3 Ժող. Ա, 2, 14. Բ. 11, 17:

երգումեամբ ժամանակի սրանոյ։ Եկէք ըստ ժամանակ և ըստ փոփոխումն, զյաւիտենականութեան թէին ածէք, ոչ և ընդ հարկաւ վարեսցէ զձեզ ընդունայնութիւն։ Մի՛ ինչ զարմանայք՝ եթէ նոյն Ժողովող[1] զամենայն ինչ անգոսնէ՝ ի մեզ, մինչև զիմաստութիւն անգամ, և չգտանէ ինչ բարի, քան՝ զի ուտիցէ ոք հանգստեամբ զպտուղ վաստակոց իւրոց։ Զիմաստութիւն զոր ասասանօր ասէ՝ է յիմար իմաստութիւնն՝ հանձարեղ՝ ի տանջել զանձն, ճարտար՝ ի խաբել զինքն, որ յոր կանս զեղծանի, մոլորի յապատնիսն. որ բազում ճարտարմտութեամբ և ուժգին ճգամբ վայրապար հաշի և մաշի՝ ի մթերել՝ զոր հոգմ և մրրիկ յափշտակեալ ցրուէ. «Աղէ, գոչէ իմաստուն Թագաւորս, եղէ՛ ինչ ընդունայն իբրև զայս[2]»։ Եւ չիցէ՞ նմա յիրաւի՝ առաւել ընտրել զանպատճոյռ պարզութիւն առանձնական կենաց, որ հանդարտիկ և անմեղութեամբ վայելէ՝ ի սակաւիկ ինչ բնաւորս բարիսն, քան զհոգս և զվիշտս ագահացն, քան զանդոհական անուրջս փառասիրացն։ Բայց «և այս ինքն, ասէ, այս ևս հանգիստ և քաղցրութիւն կենաց՝ ունայնութիւն է[3]». զի մահ վրդովէ և բառնայ տանի զամենայն։

Թոյլ տացուք նմա այսուհետև խոտել զբնաւ իսկ պայմանս այսր կենաց, զի յոր կոյս և դարձցուք, յանդիման տեսանեմք ցանգ զմահ, որ խաւար ածեալ՝ ի մութ թաթաւէ զամենայն ցանկալի աւուրս մեր. Թոյլ տացուք նմա հաւասարել զանմիտն ընդ իմաստնոյն, և ոչինչ խղճեցեալ ասել համարձակաձայն՝ ի բեմէ ատի, Թոյլ արասցուք և զմարդ խառնիխուռն ընդ անասունս շինել։ «Մի մահ է մարդոյ և անասնոց[4]»։ Քանզի մինչև գտանիցեմք զստոյգ

1 Ժող. Բ, 24։
2 Ժող. Բ, 19. ըստ լատ. Թարգ. ուր մերս ասէ. Սակայն և այս ունայնութիւն է։
3 Ժող. Բ, 1. Ը, 10։
4 Ժող. Գ, 19։

իմաստութիւնն, ցորչափ մարմնոյ աչքք հայեցիմք՝ ի մարդն՝ առանց ուշիւ նկատելոյ՝ ի նմա զԹաքուն սկիզբն ամենայն գործոցս, որ քանզի բաւական է միանալ ընդ Աստուած, հարկաւ դառնալ պարտի անդր, զի՞նչ այլ տեսանիցեմք՝ ի կեանս մեր, բայց խօլական տատամութիւնս. և զի՞նչ՝ ի մահուն մերում նշմարիցեմք, բայց շոգի ցնդական, շունչս սպառելիս, օձառք վատնելիք և խաթարելիք, համայն ասել՝ կազմած ինչ քայքայելի՝ ի բեկորս բեկորս։

Յունայնութեանց ասել տաղտկացեալ՝ խնդրեսցուք զվերջն և զհաստատունն՝ ի մեզ։ Եցոյց մեզ զայն Իմաստունն՝ ի վերջին բանս Ժողովողին. և Տիկինս յանդիման առաքեաց մեզ զայն ընդ հուպ՝ ի վերջին գործս կենաց իւրոց։ «ՅԱստուծոյ երկիր, և զպատուիրանս նորա պահեա. զի այս է մարդն ամենեին[1]». որպէս թէ ասել. Ոչ եթէ ըզմարդն քամահեցի, մի՛ զայդ կարծիցէք, այլ՝ զկարծիս և զթուիս, այլ՝ զպատրանս՝ յորոց խարդաւանեալ մարդ անպատուէ զանձն։ Կամիցիս գիտել՝ ի մի բան՝ զի՞նչ է մարդն։ Ամենայն պարտք իւր, բնաւ կէտ նպատակին և բնութիւն իւր բովանդակ՝ է երկնչել յԱստուծոյ. այլն ամենայն՝ անոտի է, ահա յայտնի քարոզեմ աւագիկ. բայց այլն այն ամենայն՝ ոչ է մարդն։ Աւասիկ սերան և անխաղաղ՝ զոր մահ չզօրէ յափշտակել. զի ածէ թափէ Ժողովողն. Զի զամենայն արարածս ածցէ Աստուած՝ ի դատաստան՝ յամենայնի անտես արարելոցն, եթէ բարի և եթէ չար»։

Արդ այժմ դիւրին է միաբանել զամենայն։ Սաղմոսանուագն ասէ. «Ի մահուն կորիցեն ամենայն խորհուրդք մեր[2]». այո՛, զորս յառ և յապուռ թողուցումք՝ ի ձեռս աշխարհի, որոյ վայելչութիւնն անցանէ և կորնչի։ Զի թէպէտ և ոգիքս մեր մշտնջենական էին, զոր և ինչ յիրս

1 Ժող. ԺԲ, 13։
2 Սաղմ. ՃԽԵ, 4։

մահկանացուս նուիրեն՝ հանեալ տան 'ի ձեռս մահուն, մինչև խորհրդոցս՝ որոց պարտ էր անապականս լինել ըստ սկզբանն իւրեանց՝ դառնալ լինել կորստականս ըստ կէտ եղեալ իրացն։ Կամիցին զերծուցանել ինչ 'ի համակոծման և յանդիմանուստ աւերածոյ աստի. հան մատռ Արարչին զսիրտ. քո. ջիք զօրութիւն որ շորթեսցէ 'ի քէն զոր միանգամ յաստուածեղէն ձեռան աւանդեսցես. կարօղ լիցես այնուհետև աներկիւղ ունչս ընկենուլ զմահուամբ ըստ օրինակի քրիստոսակրօն մերոյ զիւցաղինս։ Բայց որպէս զի 'ի գեղեցիկ օրինակէ աստի զամենայն հանցուք զառ 'ինմանէ հրահանգս, մացուք աղէ 'ի խորս քննութեան գնացից Արարչին ընդ նմա, և 'ի բամբշանս յայսմիկ երկիր պագցուք խորհրդոյ յառաջադրութեանն Աստուծոյ և շնորհացն։

Գիտակ էք, զի բովանդակ կեանք քրիստոնէութեան, զի ամենայն գործ փրկութեան մերոյ՝ շար իմն տողանի է աստուածակամ ողորմութեանցն. այլ հաւատարիմ թարգմանն շնորհաց խորհրդոյն, զմեծն կամիմ ասել զԱՌԱՔԵԼՆՈՍ, ուսուցանէ ինձ զայս անխաբ և հաւատի աստուածաբանութիւն, թէ շնորհն երևի յառաջնուամ անդ և 'ի վերջնումն շնորհի. այս է, 'ի կոչման՝ որ կանխէ զմեզ, և 'ի յամել անդ և 'ի սպառ համբերել՝ որ պսակէ զմեզ, ամենևին ձրիատուր և անխառն երևի բարութիւնն փրկագործ։ Զի որովհետև երկիցս այլափոխիմք, անցանելով նախ 'ի խաւարէ 'ի լոյս, և ապա յաղօտանուազ լուսոյ անտի հաւատոց՝ 'ի կատարեալ լոյն վառաց, և զի կոչումն շնչէ 'ի մեզ զհաւատն, և յարամնայութիւնն ածէ 'ի վառս, հաճեցաւ բարութիւնն աստուածեղէն ցուցանել զանձն 'ի սկիզբն այսց երկուց պայմանաց երևելի իմն և մանաւոր ազդեցութեամբ, որպէս զի խոստովան եղիցուք՝ թէ բովանդակ կեանք քրիստոնէի, և ընդ Ժամանակս ակնկալութեան և ընդ Ժամանակս վայելչութեանն, աքանչելիք իմն են շնորհաց։

Երկոքին այս կարևոր վայրկենիք շնորհաց քանի նշանաւոր եղեն զարմանալեաքն զոր գործեաց Աստուած 'ի յաւիտենական փրկութիւն Հենրիկէի Անգլեայ։ Առ 'ի պարգևել զսա Եկեղեցւոյ՝ հարկ եղև ասպալել ողջոյն զթագաւորութիւն մի մեծ։ Փառք տան ծննդեան իւրոյ՝ առաւել իմն անձուկ կապանք էին սմա 'ի հերձուածի անդ նախնեացն իւրոց, ասասցուք մանաւանդ՝ յետնոցն 'ինախնիս իւր, զի առաջինքն ամենայն՝ մինչև 'ինախկին Ժամանակն, կարի բարեպաշտօնք և ուղղափառք էին։ Իսկ եթէ աշխարհին օրէնք ընդդէմ զենուորին յաւիտենից փրկութեան սոցա, զաշխարհն ողջոյն գղջեսցէ Աստուած՝ ազատել զսա յօրինեալ անտի։ Այս գինք են ոգւոց յաչս նորա. զերկին և զերկիր սասանէ՝ երկնել զարդարս իւր. և զի ինչ նմա ցանկալի քան զորդեակս յաւիտենական սիրոյն իւրոյ, քան զանբաժին անդամն Որդւոյն իւրոյ սիրելւոյ, զամենայն ինչ յաչսն դնէ՝ միայն զի փրկեսցէ զնոսա։

Օրինորդս մեր մինչ չև ծնեալ՝ հալածի, այն ինչ եկեալ յաշխարհ՝ անտէրունչ լքանի, 'ի գալ անդ 'ի լոյս՝ խլի 'ի բարեպաշտութենէ ուղղահաւատ մօր, անդստին 'ի խանձարրոց գերի գնայ 'ի ձեռս անհաշտ թշնամեաց տան իւրոյ. և որ առաւել ողբալին էր, 'ի ձեռս թշնամեաց Եկեղեցւոյ. ուստի և նախ՝ մեծաշուք ծննդեամբն, և ապա՝ ողորմելի գերութեամբն՝ պատարաստեալ 'ի մոլորութիւն աղանդաստար խոտորութեան այլանդակաց։ Բայց կնիքն Աստուծոյ էր 'ի վերայ նորա, և կարէր ասել ընդ մարգարէին. «Հայր իմ և մայր իմ թողին զիս, և տէր ընկալաւ զիս [1]» ընդ թեւովք իւրովք. անդստին 'ի ծննդենէ խմբել լքեալ ամայի յամենայն երկրէ՝ «ընկեցայ երբև 'ի գիրկս հայրենի խնամոց իւրոց, և յորովայնէ մօր իմոյ ինքն յայտնեցաւ իմ Աստուած [2]»։

1 Սաղմ. ԻԷ, 10։
2 Սաղմ. ԻԸ, 11։

Դշխոյ մայրն յայս հաւատարիմ պահապան յանձն ա-
բար զաւանդն պատուական. և ոչ խաբեցաւ 'ի յոյս իւր.
յետ ամաց երկուց՝ դէպք ելին անակնկալ և սքանչելա-
խառն՝ ազատեցոյց զօրիորդս 'ի ձեռաց ապստամբացն:
ընդդէմ մրրկաց ովկիանեան անցնդոց, և բռնադունից քան
զայնս՝ երկրածուփ ամպրոպաց, առեալ զսա Աստուծոյ 'ի
թեւս իւր՝ որպէս արծուի զձագս իւր՝ ինքնին եբեր 'ի թա-
գաւորութիւն այսր. ինքնին եդ զսա 'ի գոգ մօր իւրոյ դշ-
խոյի, նա մանաւանդ 'ի ծոց ընդհանրական Եկեղեցւոյ.
անդ ուսաւ սա զօրէնս Ճշմարիտ աստուածպաշտութեան,
ոչ այնչափ հրահանգօքն յորս կրթէր, որչափ կենդանի
օրինակօք մեծի և աստուածասէր դշխոյին: Նորա բարե-
գութ առատութեանցն նախանձաւոր եղև. ողորմութիւնք
իւր՝ միշտ յորդառատ, զերան մանաւանդ 'ի Ճշմարտահա-
ւատն Անգլիոյ, որոց պաշտպան եկաց հաւատարիմ: Ար-
ժանաւոր դուստր սրբոյն Եդուարդայ և սրբոյն Լուդուի-
կոսի, 'ի բոլոր սրտէ ալիդ կալաւ զհաւատս երկուց այսո-
ցիկ մեծաց թագաւորացն:

Եւ ո՞ բաւական իցէ յայտնաբանել զեռանդնասէր նա-
խանձ նորա 'ի հաստատել անդրէն զնոյն հաւատս 'ի թա-
գաւորութեան Անգլիոյ, ուր դեռ ևս կան և պահին յիշա-
տակք իւր պատուականք բազում: Գիտեմք՝ զի չէր զան-
դիտելոց դնել զանձն և զգլուխ փոխանակ բարեպաշտու-
թեան խորհրդոցն. և երկինք յափշտակեցի՞ն զնա 'ի մէնք:
Աստուած, զ'ինչ արդեօք պատրաստէ աստանօր տեսչու-
թիւնդ յաւիտենական. ներիցես ինձ արդեօք, ով Տէր,
հայել ահիւ և դողութեամբ 'ի սուրբ և յահեղ խորհուրդս
քո: Զի՞ իցեն տակաւին ժամանակք կշտամբութեան կա-
տարեալ. կայցե՞ն տակաւին առաջի աչացդ մեղքն՝ յոր
տակս Ճշմարտութիւնք քո սուրբ և ամբիծ՝ տեղի ետուն
յերեսաց Ժանտաբեր ախտից, և չկցե՞ն տակաւին ըստ ար-
ժանի պատուհասեալ զայն՝ կուրութեամբ առաւել քան
զդարու միոյ: Նովի՞ն արդեօք և զՀենրիկէս առնուս 'ի մէնք

գատաստանաւ՝ որ համառօտեաց զաւուրս դշխոյին Մա-
բիամու (Դ) և զթագաւորութիւն իւր զբարենշանն Եկե-
ղեցւոյ. կամ թէ միա՞յն յաղթանակեալ կամիցիս. և բառ-
նալով 'ի մէնք զատարութիւնն՝ յորս սիրտք մեր յու-
սային, պահէ՞ս արդեօք 'ի նկատեալ ժամանակն յաւիտե-
նից ընտրութեանդ՝ թաքուն դարձս անգլիական տանն և
աշխարհին: Որ զինչ և իցէ, ով մեծդ Աստուած, ընկալ
այսօր զերջանիկ երախայրիսս յանձին բամբշանս. իցէ՞ թէ
տուն ողջոյն և արքայութիւն՝ օրինակի հաւատոց սորա
ընթանայր զհետ:

Արքայն մեծ՝ որ առաքինութեամբ բազմաւ ընդ զնախ-
նեացն գահ, և զօր հանապազ գովութիւնս տայ մատու-
ցանել աստուածական ձեռինն՝ որ սքանչելեօք ելն տրն-
կեաց զնա 'ի նմա, ոչ խոտան արասցէ զնախանձ մեր, եթէ
ցանկամք առաջի Աստուծոյ՝ նմա և ժողովրդոց իւրոց լի-
նել իբրև զմեզ. Խնդրէի Աստուծոյ՝ ոչ միայն զքեզ, այլ՝ և զա-
մենեսեան լինել այսպիսի, որպէս և ես եմ[1]: Այս իցէ վասն ար-
քայից է, և երանելին Պաւղոս 'ի կապանս անդ յորս էր՝
նախ զառաջինն ըղձացաւ զայն վասն արքային Ագրիպպայ.
բայց Պաւղոս 'ի բաց տանէր 'ինմանէ զկապանսն իւր. Բայ
'ի կապանաց ապրէ, ասէ. իսկ մեք՝ ցանկամք մանաւանդ, զի
յոյժ ելն ազատն 'ի հաւատոյս իւր Անգլիա՝ և կարի ան-
սանձն 'ի խորհուրդս սրտին, կապեսցի իբրև զմեզ երանելի
կապանօքս, որ արդեւլուն զմարդկային ամբարտաւանու-
թիւն՝ մի օգտեալ մոլորել 'ի միտս իւր, զերեալ զնա յիշխա-
նութիւն Հոգւոյն սրբոյ և Եկեղեցւոյ:

Ճառեալ ձեզ զառաջին արքասիս քրիստոսեան շնորհ-
ացն 'ի տիկնոջս մերում, մնայ ինձ, տեարք, 'ի խոկ ձեզ
արկանել զվերջինն՝ որ զբնաւն է պակեալոց: Այսու վեր-
ջին շնորհօք փոխէ մահ զբնութիւն իւր առ քրիստոնեայսն,
որ փոխանակ զի թուէր կապտել զմեզ յամենայնէ, սկը-

1 Գործ. ԻԶ, 29:

սանի ըստ Առաքելոյն զգեցուցանել զմեզ, և հաւատալ մեզ յաւիտեան զժառանգութիւն ստոյգ բարեացն։ Ցորքան բանտարգել կամք 'ի մահկանացու յայս կայեանս, փոփոխմանց ներքոյ անկեալ դնիմք. վասն զի, եթէ շնորհէք ինձ ասել, օրէնք են այս՝ երկրին յորում բնակեմքս. և չիք ինչ մեր բարի, և ոչ 'ի կարգի շնորհաց, զոր չկարիցեմք կորուսանել 'ի վայրկեան ժամանակի բնակաւոր անհաստատութեամբ ըղձից. իսկ երբև վախճան առնիցի համարելոյ վասն մեր զժամս, և չափելոյ զկեանս մեր աւուրքք և տարեաք, եկեալ յայնժամ յանցաւոր երևմանց և 'ի չքոսի անրջոց, ժամանեմք 'ի թագաւորութիւն Ճշմարտութեան՝ ազատացեալք յօրինաց փոփոխմանց։ Վասն որոյ ոչ ևս այնուհետև 'ի վանգի կան ոգիքս, ոչ խորհուրդքս յողդողդեալ դեղեին. մահն, նա մանաւանդ 'ի սպառ համբերութեան շնորհ՝ զօրանայ հաստատել զնոսա. և զոր օրինակ կտակն քրիստոսեան, որով տայ մեզ զանձն իւր, ըստ իրաւանց կտակաց և վարդապետութեան Առաքելոյն՝ հաստատեալ կայ մահուամբ ատուածային կտակադրիս, նոյնպէս երջանիկ կտակն՝ որով և մեք ընծայեմք Փրկչին զանձինս՝ մահուամբ հաւատացելոյն անդարձ և անփոփոխ լինի։

Ապա ուրեմն, տեսարք, եթէ դարձեալ միւսանգամ ցուցից ձեզ զՏիկինս 'ի տաղնապի դիրկ ընդ խառն ոգորեալ ընդ մահուն, մի ինչ երկչէցիք զնմանէ. Թէպէտ և անազորոյն յոյժ Թուեսցի ձեզ մահ, ոչ յայլ ինչ 'ի մէջ գայցէ նա զայս նուազ, բայց 'ի բովանդակել զշնորհացն գործ, և ինքեալ 'ի Տիկնոջս զնորհուրդ իւրոյ յաւիտենական հրաւիրանին։ Տեսցուք արդ զվերջին գուսպար կռուոյս. բայց անդրէն վերստին զնդեսցուք զանձինս. մի վատութիւն ընդ հզօր նահատակութիւնս խառնել, և մի արատսուրաս անարգել զգեղեցիկ յաղթութիւնն։ Կամիցիք գիտել զզօրութիւն շնորհին՝ որ ետ յաղթանակել Տիկնոջս. հայեցարուք քանիսն զարհուրագին եղև մահն։ Եպա զի

առաւել դամս գտանէ 'ի Տիկնոջ՝ որում առաջի կայ այն չափ բաղում ինչ կորուսանել. որչափ ամս յափշտակելոց է յառաջ հասանէ անտի. քանի ուրախութիւնս հատանէ 'ի բախտէ անտի, քանիսն փառս 'ի վաստակոց անտի բառնայ։ Թող զի և գոյր ինչ նմա առաւել երագ և առաւել անողորմ հասանել. համագունդ դառնութ տալ է ամենայն զօրութեանց իւրոց և զամենայն արհաւիրս իւր 'ի մի վայր դումարել՝ յաւելուլն զյեղակարծ յարձակումն 'ի վերայ սայրասուր ցաւոցն, որպէս և առնէին իսկ։

Բայց Թէպէտ և առանց սպառնալոյ և անտգդ անկանելոյ համայն 'ի վերայ յառաջնմէ անտի նուազէն, սակայն պատրաստ գտանէ զբամբիշնս։ Շնորհն առաւել ևս ժիր և աղդող, պահ պատանէ արկեալ է զնովաւ. ոչ փառք և ոչ մանկութիւն լեցին արժանի հեծութեան. զիրք ինն ասահման ընդ մեղն իւր՝ չտայ ինչ տեղի այլոց ստրջանաց։ Խնդրէ զնաչն՝ յորոյ վերայ տեսեալ էր զի մեռաւ Թագուհին (Ե) սկեսուր իւր, որպէս Թէ անգուստ ժողովել զզօրութիւն պնդութեան և բարեպաշտութեան, զոր հոգին այն՝ Ճշմարիտ քրիստոսասէր՝ տպաւորեալ էր 'ի նմա ընդ վերջին հառաչանացն։ Ի տեսիլ մեծի նշանին՝ մի 'ի Տիկնոջէ ասսի ունիցիք ինչ ակն Ճարտարաբան և մեծասքանչ խօսից. ամենայն մեծութիւն ատատնօր՝ է սուրբ պարզութիւնն։ Աղաղակէ. «Ո՛վ Աստուած իմ, ընդէր ոչ յամենայն ժամ 'ի քեզ եդի զյոյս իմ»։ Տառապի, քաջալերի, խոստովան լինի խոնարհութեամբ և կարեվէր սրտի ցաւովք, Թէ յայսմ օրէ ևեթ սկսանիմ Ճանաչել զԱստուած. չհամարեալ Ճանաչել զնա և 'ի խուն ինչ ակնարկելն յերեսս աշխարհի։

Քանիսն 'ի վեր երևեցաւ սա մեզ քան զվատասիրս քրիստոնեայն՝ որ կարծեն Ճեպել զմահ 'ի պատրաստելն առ խոստովանութիւն, որ առ հարկի ևեթ ընդունին զսրբութեան խորհուրդն, արժանիք արդարև 'ի գատաստան անձանց ընդունելոյ զայս խորհուրդ ատատուածպաշտու-

թեան, զոր յակամայ կամս ևեթ ընդունին։ Տիկինս՝ զքա-
հանայսն քան զբժիշկս յառաջագոյն ձայնէ, ինքնին խնդրէ
զնորհուրդս Եկեղեցւոյ, զապաշխարութիւն՝ զղջմամբ,
զհաղորդութիւն՝ երկիւղիւ և հաւատով վստահութեամբ,
զսուրբ օծումն մահացու հիւանդաց՝ փութով բարեպաշ-
տութեան։ Փոխանակ քաջնելոյ՝ կամի ուշիւ զխոստութեամբ
ընդունել. միա դնէ ընթերցուածոց օրինացն, առաքեալ-
կան աղօթիցն, որ աստուածայնով լիսն թոչեալ ուսեալ
յուսացանեն զցաւոցն սաստկութիւն, և որ հաւատոնն լուսի-
ցէ, — տեսեալ եմ բազում անգամ, — տան նոա մոռանալ
զմահ, նոցա ուշ եդեալ զհետ կրթի, ընդ նոսին հաւասա-
րի. տեսանի հանդարտիկ մատուցեալ զմարմին իւր յիւղն
սրբութեան, կամ մանաւանդ յարիւնն Յիսուսի՝ որ յոր-
դաբուխ ծորէ 'ի պատուական հիւթոյ անտի։

Մի՛ համարիցեք՝ թէ չարաչար և անհանդուրժելի ցաւքն
փոքր մի ինչ խռովեալ էցեն զհոգի իւր զմեծ։ Վա՜հ, ոչ ևս
կամիմ զարմանալ շատ ընդ քաջս և աշխարհակալս. ծա-
նոյց ինձ Տիկինս զՃշմարտութիւն այսր բանի Իմաստնոյն.
«Լաւ է այր երկայնամիտ՝ քան զհզօր, և որ իշխէ սրտին՝
քան որ առնուցու զքաղաք հզօր [1]»։ Ո՛րչափ տիրեաց սա
սրտի իւրում, որով հանդարտութեամբ կատարեաց զամե-
նայն զպարտս իւր։ Աղէ ածէք զմտաւ զոր առ Աբքայեղ-
բայրն ասաց. որպիսի՛ զօրութիւն, ո՛վ գորովալիր գթոցն։
Ո՛վ բանք՝ յայտ յանդիման բղխեալք 'ի զեղմանէ լսու-
թեան սրտի՝ որ գեր 'ի վերոյ ամենայնի տեսանէ զինքն.
բանք՝ զոր մահն անդ առաջակայ, և Աստուած առաւել
ևս առաջակայ, սուրբ արարին. անխարդախ արդասիք հո-
գւոյ՝ որոյ զերկնից խիղբս արկեալ վակժոյժ լեալ, չպարտի
ինչ այլ երկրի՝ բայց միայն զՃշմարտութիւն, կեցցիք կեց-
ջիք յաւիտեան կենդանիք 'ի յիշատակս մարդկան, և ա-
ռաւել կեցջիք յաւէժ 'ի սրտի մեծի իշխանին (զ)։ Տեսեալ

1 Առակ. ԺԶ, 32. փոքու իւիք աննմանութեամբ։

Տիկնոջս զհոսանս արտասուաց նորա, ոչ ևս ունի ժոյժ.
անպարտելի յայլում ամենայնի, ստիպի տեղն տալ աս-
տանօր. աղաչէ զԱբքայեղբայրն 'ի բաց մեկնիլ, զի այլ ևս
ինչ չկամի կրել խանդաղատանս, բայց միայն առ խաչեալն
Աստուած՝ առ ինքն բազկատարած։

Զի՞նչ տեսաք մեք յայնժամ. զի՞նչ լուաք։ Հպատակէր
արարչական հրամանացն նուիրեր նմա զկիրս չարչարանաց
իւրոց 'ի քաւութիւն մեղացն, բարձրաձայն գաւանէր զուղ-
ղափառ հաւատսն և զմեռելոցն յարութիւն՝ զաղնուական
միսիթարութիւնն հաւատացելոց 'ի կէտ մահուան. յորդո-
րէր զփոյթ այնոցիկ՝ զորս կոչէաքն էր 'ի քաջալերել զինքն,
և ոչ կամեր թէ վայրիկ մի դադարեսցեն 'ի խօսելոյ առ ինքն
զքրիստոսակրօն Ճշմարտութիւնսն. տենչացաւ բիւրեցս
ընկղմել յարիւն Գառնին. նոր լեզու՝ զոր ուսուցանէր
նմա ընորհն։ Ոչ նշմարէաք 'ի նմա կերպարանս խաբեպա-
տիր հնարից, և ոչ յոյզս ինչ ոգւոյ խռովելոյ՝ որովք ոք
տնձամբ զանձն խաբիցէ. ամենայն ինչ անապակ, ամենայն
ինչ Ճշգրտեալ, ամենայն ինչ խաղաղական, ամենայն 'ի խո-
նարհ հոգւոյ բղխեր և յայրերէ սրբեցելոյ աստուածեղէն
Հոգւոյն։

Յայսմ սահմանի, տեարք, զի՞նչ այլ մնայր մեզ խն-
դրել յԱստուծոյ վասն բամբշանս, բայց զի հաստատեսցէ
զնա 'ի բարւոջն, և պահեսցէ 'ի նմա զպարգևս շնորհաց
իւրոց։ Եւ Աստուած մեծն՝ լսեր մեզ. այլ բազում ան-
գամ 'ի լսելն մեզ, ասէ սուրբն Աւգոստինոս, պատրէ յա-
ջողապէս զմեր խնամողութիւնս։ Հաստատեցաւ բամբիշնն
'ի բարին 'ի վեր քան զմիտս մեր։ Քանզի Աստուծոյ չէին
կամք այլ ևս խառնել 'ի պատրանս աշխարհի զայնպիսի
միտս անկեղծիկ բարեպաշտութեան, արար զասացեալն
Իմաստնոյն. «Տագնապեցաւ» ասէ. արդարև իսկ որպիսի՛
հարձեալ, յինն ժամս վՀարեցաւ գործն. «տագնապեցաւ[1]

1 Իմաստ. Դ, 14։

հանել զնա 'ի միջոյ չարեաց»։ Աւադիկ, ասէ մեծն Ամբրոսիոս սուրբ, աւադիկ մահուն սքանչելիք 'ի քրիստոսասէրսն։ Ոչ զկեանսն վախճանէ, այլ զմեղսն ևեթ [1] և զբնանդան յոր կան։

Ողբացաք մեք, զի մահն՝ ոսերիմ արդեանցն զորս աւեաէր մեզ բամբիշնս, 'ի ծաղկի անդ էառ զնոսա յաւարի, զի եղծ ընչեաց, որպէս բանիչ կարդ է ասել, ընդ նովին իսկ գրչաւ նկարչին զպատկերն, որ անկարծելի փութոյ սընդութեամբ յառաջադէմ խաղայր 'ի կատարումն, որոյ նախագիծ ստուերագիրն միայն այնքան մեծութիւն 'ի դէմս բերէր։ փոխեսցուք այժմ զլեզուս, մի՛ ևս ասասցուք՝ թէ յանկարծ կասեցոյց մահ զընթացս չքնաղագեղ կենաց աշխարհիս, և զպատմութեանն դեղեցկաձիգ հենլոյ։ գոգցուք, թէ զքաւ արար ահագին վտանգից՝ որոց է խուժել 'ի հոգի քրիստոսասիրսն։ Եւ թողեալ առ տեղեաւս զանթիւ փորձութիւնսն՝ որ պատերազմին անդադար ընդ մարդկային տկարութեան, որմ՛ վտանգի ոչ պատահէր տիկինս 'ինոյն ինքն 'ի փառն իւրում։ Փա՛ռք։ և զի՞նչ այլ կայցէ քրիստոնեի առաւել եղեռնաւոր և մահացու, որ հրապոյրք առաւել ինասակար, որ ծուխ բաւականագոյն 'ի ցնորակոծ բանդագուշել զկզօրագոյն խելասատակս։

Հայեցարուք մտաք 'ի բամբիշնս, նկարեցէք 'ի ձեզ զոգին զայն, որ զեղեալ ծաւալեալ ընդ ամենայն արտաքոյս նորա՝ այնպէս իմն կայտառ և աշխոյժ առոգէր զնորս գեղոյն 'ի նմա։ Ոգի էր ամենայն, բարութիւն ամենայն։ Քաղցր առ ամենեսին՝ հանդերձ շքով գիտէր մեծարել զմանս՝ առանց զայլս արտմեցուցանելոյ։ և թէպէտ պատուեալ լինէին երախտիք, հիքութիւն ոչ տեսանէր զինքն արհամարհեալ։ Յորժամ ումեք բանք ինչ լինէին ընդ նմա, մուռացեալ թուէր զկարգ իւր։ զի մուաւորութեամբն ևեթ յարգեսցի։ չլինէր յայտ գոգցես բնաւ՝ թէ ընդ այնպիսում

1 Ճառ. զբարեաց մահու։

բարձրապատիւ անձին ոք խոսիցի, այլ՛ 'ի խորս սրտին միայն իմանայր ոք՝ զի ցանկալի էր ինքեան հարիւրապատիկ դարձուցանել 'ի նա զմեծութիւնն, զոր նա այնպէս մարդասիրաբար մերկանայր։

Հաւատարիմ՝ 'ի խոստմունս, անկարօղ՝ 'ի մեղմեխանս, անենդ առ բարեկամս, լուսաւորութեամբ մտացն և ուղղութեամբ՝ յապահովս առնէր զնոսա 'ի սնոտի կասկածանաց, և չթողոյր նոցա զանգէտ լինել՝ բայց եթէ 'ի յանցմանց իւրեանց։ Ցոյժ շնորհակալու առ երախտս, սիրէր կանխել իւրով բարութեամբն հատանել զպատճառս սանդաստակաց։ զդայուն յառնուլ զաղդ նոցին յօժարակոյթ 'ի ներել։ Զի՞նչ զառատութենէն ասացից։ ոչ միայն զուարթամիտ տայր, այլ և մեծանձնութեամբ ինն, որ և զարհամարհութիւն պարգևին յայտ առնէր, և միանգամայն զյարգանս անձինն պարգևառուի։ էր զի քաղցրախորժ բանիւք, էր զի և լուութեամբ ևս, շուք յաւելոյր 'ի տուրսն իւր։ Եւ զայս արուեստս հաճոյակատար շնորհատարութեան՝ զոր յոյժ վայելչապէս վարեալ էր 'ի կենդանութեան, զնոյն 'ի գործ արկ, դիտեմ ես, մինչև 'ի ծոց մահուն։

Այդչափ մեծասքանչ և սիրուն հանդամանքն՝ ո՛ւմ հնար էր չզարմանալ ընդ նա։ իսկ անուամբն իւրով մեծաւ և զօրութեամբ՝ ո՞վ ոք յարիլ 'ինա ոչ ցանկանայր։ Ո՞չ ապաքէն էր նմա յինքն յանկուցանել զամենայն սիրաս։ զայն ինչ ասեմ՝ զոր մնայ շահել այնոցիկ՝ որոց զարմ և բախտ զամենայն ինչ թուին պարգևեալ։ Եւ եթէ գերակայ բարձրութիւնն՝ սոսկալի վախից դարաւանդ իցէ քրիստոնէից, չկցէ՞ ինձ օրէն, տեսլը, ասել զնմանէ հզօր բանիւ կորովագունին 'ի պատմագրօղս, «Թէ դահավէժ հոսելոց էր 'ի փառս [1]»։ զի ո՞վ ոք ուրեք քան զնա յարարածոց յանկագոյն գտաւ պաշտօն առնուլ յաշխարհէ։ Բայց նոքին իսկ՝ զորս երբև ուրուականս պաշտէ աշխարհ, քանի՞

1 Ինոյն փառն դարահոս անկանէր։ Տակիտոս։ Յագրիկոլայս։

փառաքուշ փորձութեանց չկայցեն 'ի վանդի։ Փառքն պահէ արդարև զնոսա 'ի տկարութեանց ինչ, բայց փառքն պահիցէ՞ն զնոսա և 'ի փառաց անտի։ Ո՞չ ապաքէն անձամբ զանձինս պաշտիցեն նոքա 'ի ծածուկ, ո՞չ պաշտօն առնուլ ցանկանայցեն։ ո՞ր երկիւղ չիցէ նոցա յանձնասիրութենէ։ և տկարութիւն մարդկային զի՞նչ զանայցէ այնմ՝ որում զամենայն ինչ շնորհէ աշխարհ։ ո՞չ ապաքէն անդ է ուսանել՝ փառասիրութեան, մեծութեան, քաղաքավարութեան ծառայեցուցանել զառաքինութիւն և զկրօնս և զանուն Աստուծոյ։ Համեստութիւն՝ յոր կերպարանի աշխարհ՝ ոչ եթէ հեղձուցեալ խափան լինի մտաւորութեանն խլրտմանց, այլ 'ի թաքուցանել եւեթ զնոսա սպաս մատուցանէ։ և որչափ զարտաքոյսն յարդարեալ պատսպարէ, նոյնչափ ևս վտարանդի տայ զսիրտն նուրբ և վանդաւոր տխորժութեանց մտոտկապատիր փառաւորութեան։ ոչ զոք այնուհետև բաց յանձնէն համարի ինչ, և 'ի խորս սրբոյն ասէ։ «Ես եմ, և չիք ոք իմ ընկեր [1]» 'ի վերայ երկրի։

Ի դմին յայդմ պայմանի, տեսցք, չիցէ՞ ինչ վանդ կեանքս, և մահն չիցէ՞ ինչ շնորհ։ Քանիցն ահափեռք չիցեն յերեսաց ախոյից, ուր բարեմասնութիւնք իսկ այսպէս վանդաւորք են։ Արդ, ո՞չ ապաքէն բարերարութիւն Արարչին իցէ կարձել ընդ աւուրց տիկնոջս զտխորձութիւնսն։ խլել զնա 'ի փառաց անտի իւրոց, մինչ չև անչափ յաճախութեան փառացն՝ զհամեստութիւնն արկեալ 'ի փորձանս։ Զի՞ փոյթ իցէ կենացն կարձութիւն։ որ գամ մի սպառելն է, չմտրթի նմա երկար լինել։ Թէպէտ և ոչ 'ի հաշիւ ինչ համարոյ արկանիցեմք զմտնրաքնին խոստովանութիւնսն, զյաճախ ջերմեռանդն խօսսն, զուժգին մտադիւր պարապմունսն 'ի բարեպաշտութիւն առ յետին ժամանակք կենացն, սակաւ ժամքն սրբութեամբ անցուցեալք 'ի հանդիսի ծանր փորձութեանց և 'ի սրբամաքուր

1 Եսայ. Խ., 10։

խղճս քրիստոսանուէրս, սոքա եւեթ ընուն զտեղի կատարուն հասակի տկոց։ Սուղ եղև ժամանակն, վկայեմ և ես, բայց շնորհին աղգումն՝ զօրաւոր, բայց հաւատարմութիւն հոգւոյն՝ կատարեալ։

Զգործ ինչ մեծ՝ բովանդակ 'ի փոքրս ամփոփել, ծայրագոյն արուեստի են արդասիք։ և Շնորհք՝ Ճարտարն այն դերագոյն՝ հեշտանայ երբեմն 'ի մի օր բովանդակել զկատարելութիւն երկայնաժամանակեան կենաց։ Գիտեմ զի չհաձի Աստուած՝ ակն ունել ումեք այսպիսի սքանչելեաց։ այլ եթէ անմիտ յանդգնութիւն մարդկան զեղծիցի ինչ նորա բարութեամբքն, ոչ այնիւ կարձի բաղուել նորա, ոչ ձեռն իւր տկարանայ։ Վստահ եմ վասն Տիկնոջս յողորմութիւնն՝ զոր 'ի սերա սրտէ և խոնարհութեամբ կարդայր։ Թուի յայն սակս պահեալ Աստուծոյ զմիտս նորա զգաստ և լուրջ մինչև 'ի շունչն վերջին, զի 'ի տև յերկարեսցէ ըղվկայութիւնս իւրոց հաւատոցն։

Սիրեաց նա 'ի մահու անդ զՔրիստն Յիսուս։ բաղուկք իւր Թուլացան քան եռանդն՝ 'ի գիրկս արկանել զնաչիւն։ տեսի ես՝ զի ձեռնն Թալացեալ խնդրեր տակաւին յանկանելն նոր զօրութիւն՝ առ 'ի մածուցանել 'ի շրթունս իւր զերկութեան մերոյ երանաւէտ նշան։ և չիցէ՞ այս մեռանել 'ի գիրկս և 'ի համբոյր ողջունի Տերունւոյն։ Ո՛հ, կարեմք աւարտել զսուրբ պատարագս աստուածապաշտ յուսով 'ի հանգիստ տիկնոջս։ Յիսուս՝ յոր նայն յուսացաւ, զորոյ կրեաց զնաչն 'ի մարմնի անողորմ ցաւովք, շնորհեսցէ նմա և զարիւն իւր՝ որով ներկեալն է բովանդակ, Թրմեալ զանգեալ բովանդակ հաղորդութեամբ խորհրդոց իւրոց և իւրոց չարչարանացն կցորդութեամբ։

Այլ յաղօթեն վասն նորա, քրիստոնեայք, խորհեսցուք զանձանց։ Զի՞ կամք մնամք դառնալ 'ի չարեաց, ո՞ր խստասրտութիւն կայցէ իբրև զմերս, եթէ արկած մի այսպիսի նորացոյց, որում արժան էր հարկանել անցանել մինչև 'ի խորս ոգւոց, ոչ ինչ այլ աղդիցէ՝ բայց վայրկեանս

ինչ և ևեթ պակուցանել զմեզ։ Ունիցիմք ինչ ակն յարու-
ցանելոյ Արարչին զմեռեալս 'ի խրատել զմեզ։ Զի՞նչ հարկ
մեռելոց դալ այսրէն, և ոչ եկանել ուստեք 'ի շիրմէն։ որ
այսօրս 'ի դամբան մտանէ՝ բաւական լիցի մեզ 'ի դար-
ձումն։ Զի եթէ դիտիցեմք Ճանաչել զանձինս, խոստովան
եղիցուք, քրիստոնեայք, թէ Ճշմարտութիւնք յաւիտե-
նիցն կենաց հաստատուն են անշուշտ. զաղտաղտուն են
ամենայն որ զինչ և ընդդէմ դնիցեմք նոցա. յախտաւորու-
թիւնէ է, ոչ 'ի բանաւորութենէ՝ զի ժպրհիմք մարանչել
ընդ նոսա։

Եթէ է ինչ տակաւին որ երկնաւոր և փրկական Ճշ-
մարտութեանցն խափան լինիցի չթագաւորել 'ի վերայ մեր,
այն է՝ զի աշխարհ գեթեալ է զմեզ, կախարդեն զգայու-
թիւնք, և մօտաւորքս յափշտակեալ վարեն ընդ քարշ։
Իցէ՞ և այլ ինն տեսիլ պիտոյ, 'ի փարատել զպատրանս ըզ-
գայութեանց և այսր կենաց և զաշխարհի։ Մինթէ զմի՞ր աս-
տուածեղէն Խնամոցն՝ առաւել ինն մերձ և սատակի 'ի դէմս
ածել մեզ զունայնութիւն մարդկեղէն իրաց. և յետ այս-
պիսի աղդոյ խրատու, եթէ տակաւին կարծրանան սիրտք
մեր, զի՞նչ այլ միոյ նմա, բայց միայն զմեզ ինքեանս ա-
ռանց ողորմութեան հարկանել։ Կանխեսցուք աղէ քան
զմահասատ հարուածն, և մի՛ հանապազ սքանչելեսց ակն
կալցուք 'ի շնորհէն։ Զի՞նչ ասելի ամենիշնան զօրու-
թեանն՝ քան զայն զի կամիցի ոք օրինակօք զնա բռնադա-
տել, և զպարգևս իւր և զշնորհսն՝ նմա օրէնս սահմանել։

Իսկ արդ զի՞նչ արդեւլուցու զմեզ, քրիստոնեայք, ընդ-
ունել անյապաղ զաղդեցութիւնս իւր։ Զի՞նչ. միթէ այն-
պէս ուժգին կախարդիցէ զգայութիւն, մինչև չկարել մեզ
բնաւ զգոյշ և պատրաստ լինել. մարդկօրէն մեծութեանցն
պաշտօնեայք՝ միթէ ուրմն լինիցին ընդ բախտ իւրեանց,
յորժամ տեսանիցեն զիառս իւրեանց յական թօթափել
անցեալ յանուանս իւրեանց, զպատիւսն՝ 'ի շիրխս, զինչսն՝
առ ապաշնորհս, և զբարձն՝ թերևս առ նախանձոտս։ Զի

եթէ աներկմիտ եմք, թէ գայցէ օր մի վերջին՝ յորում ստի-
պիցէ զմեզ մահ խոստովան լինել զամենայն յանցանս մեր,
զի՞ է ոչ աստէն և աստ արհամարհել խմաստութեամբ՝
զոր յաւուր միում կարևոր հարկ հասանիցէ արհամար-
հել ակամայ։ Եւ զի՞նչ կուրութիւն է մերս, որ յամենայն
ժամ 'ի կէտ վախճանիս դիմեալք, և մեռեալք մանաւանդ
քան կենդանիք, յետին շնչոյս սպասիցեմք միոյս 'ի մեզ բե-
բեալ, զոր խոկումն ևեթ մահուն պարտ էր թեալդիր մեզ
լինել 'ի բնաւ իսկ վայրկեանս կենաց մերոց։ Ո՞ն առեալ
արդ սիրիզբն արարէք այսօր խոտել զաշխարհակարդ բա-
բիս. և քանիցս անգամ դատանիցիք 'ի վերաւէտ վայրսն, 'ի
պերճապայծառ ապարանսն՝ որոց շողիւնս ինն փայլատա-
կանց ընծայէր տիկինս, զորս խնդրեն դեռ ևս աչք ձեր,
քանիցս և հայեցեալ 'ի մեծ բարձն՝ զոր ընոյր նա գեղեց-
կապէս՝ տեսանիցէք զպակասումն նորա անտի, ապէ՞ ածէ՞ք
ընդ միտս՝ զի փառքն այն, սքանչելիք յաչս ձեր, վանդ
էին նմա 'ի կենցաղումս, և 'ի միւս կեանսն՝ պատճառք ե-
ղեն սատակապահանջ հարցափորձի, յորում ոչինչ բաւա-
կան գտաւ փոփոդել զնա, այլ միայն յօժարակամ հպա-
տակութիւն իւր հրամանաց Արարչին, և ապաշխարու-
թեանն սրբարար խոնարհութիւն։

ՎԱԽՃԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԻ ՏԻԿՆՈՋ ԻՇԽԱՆԻՆ ՕՐԼԻՆԱՆՑ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Թիւ (Ա.) Այս ճառ խօսեալ է 'ի Սուրբ Դիոնեսիոս 'ի 21 աւգոստոսի 1670 ամին, առաջի մեծի իշխանին Քոնտէի։

(Բ) Իմա յեկեղեցւոջ 'ի տաճարի Տեառն, ոչ 'ինմին վայրի. զի ճառ դշխոյին խօսեալ է յեկեղեցւոջ կուսաստանի սրբոյն Մարիամու, իսկ այս 'ի սուրբ Դիոնեսիոս։

(Գ) Սկեսուր նորա, մայր Լուդուիկոսի ԺԴ, արքայի, և եղբօր նորա Փիլիպպոսի՝ իշխանին Օռլէանայ, որում 'ի կին էած զօրիորդս այս. իսկ արքային ածեալ էր զՄարիա Թերեզա՝ դուստր Փիլիպպոսի չորրորդի արքայի Սպանիոյ. և զի ինքն քոյր էր սորա, լինի հօրաքոյր նուագ իւրոյ։ Ցայտ եղև թէ ընդէր կոչի և սպանիական, որ սովորաբար աւստրիականն կոչի յառաջնոյ Փիլիպպոսէ, որ էր հաւ հաւուն իւրոյ և գլուխ աւստրիական տանն, և հայր Կարոլոսի Ե, կայսեր Գերմանիոյ և արքայի Սպանիոյ։

(Դ) Մարիամու Մեդիկեան, հանդոյ Լուդուիկեայ ԺԴ, յորոյ 'ի խնամապետութեանն բազում շնորհք և նպաստք գործեցան ուղղափառութեան։

(Ե) Անն աւստրիական կամ սպանիական, մայր առն իւրոյ, որպէս ասացաք 'ի 3։

(Զ) Արքայեղբօրն, առ ամուսնոյ իւրոյ։

ՃԱՌ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ (Ա)

ՄԱՐԻԱՄՈՒ-ԹԵՐԵԶԵԱՅ ԱՒՍՏՐԻԱԿԱՆ

ԴՍՏԵՐ ԱՐՔԱՅԻՆ ՍՊԱՆԻՈՅ

ԴՇԽՈՅԻ ԳԱԼԼԻՈՅ ԵՒ ՆԱՒԱՐԱՅԻ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Մարիամ-Թերեզա Աւստրիոյ՝ էր մի միայն պատուղ ամուսնութեան Փիլիպպոսի չորրորդի արքայի Սպանիոյ ընդ Եղիսաբեթի Գալլիոյ՝ առաջնոյ կնոջ իւրում, ծնեալ 'ի 1658։ Գալլիա և Սպանիա պարտասեալք 'ի պատերազմաց, դրաւական հաշտութեան եղին 'ի միջի զօրիորդս զայս, և պսակեցին զնա ընդ Լուդուիկոսի ԺԴ, յամի 1660։ Յիշատակագիրք և պատմութիւնք ժամանակին միաբան 'ի գովութիւն առնուն զդշխոյս, առ որ և թագաւորն ինքնին՝ այր իւր՝ բազում մեծարանս և կամահաճութիւն ետոյց միշտ. սակայն և 'ի վերայ այսց արտաքնայարդար ցուցակութեանց և նշանակաց յարգի և սիրոյ առնն իւրոյ, համարեալ նորա զանձն արժանի բովանդակ ժառանգելոյ զսիրտ նորուն, 'ի խոր խոցեալ լինէր յոչ սակաւ դրժանաց իւրոց, առաւել ևս վշտատես եղեալ՝ զի ստիպէր թագուցանել զարհամարհանս իւր և զցաւս։ Տրտմութիւնքս այսոքիկ անշուշտ, հանդերձ նախաբարոյ խրատուք դաստիարակութեան իւրոյ, ազդեցին 'ի նա միտս մերկանալոյ յաշխարհէ և 'ի հաճոյից նորա, և ընչեցին զհոգի խիստ և ջերմեռանդն աստուածպաշտութեան։ Ամենայն գործք կրօնասիրութեան, ամենայն պատուէրք և ամենայն բարեպաշտիկ

կրթանք հրամանաց իւրոց կամ խրատուց՝ եղեն նորա սիրելիը պա-
բակամունք հանապազորդք։ Իբրև աբբայ յայտ արար պատերազմ 'ի
վերայ Հոլանդիոյ՝ յամի 1672, և կազմեցաւ 'ի չու արշաւանին, զԳԸՀ-
խոյն եցոյց տեղապահ իշխանութեան իւրոյ՝ Վարիչ ընա անուա-
նեալ. որ թէպէտ և սակաւատև, սակայն յայտնի արար զճարտա-
րութիւն դշխոյիս 'ի յանձնանձանս գործոց պետութեանն, և զիրա-
ւունս վստահութեան աբբային 'ի նա։

Ի վեցեցունց զաւակացն Լուդուիկոսի ԺԴ. որ 'ի ամանէ՝ երեց որ-
դին միայն եկեաց ցետ մօրն զրաւելոյ ժանտ տենդիւ 'ի յուլիսի 30
1683 ամին, 'ի հասակի քառասուն և հինգ ամաց։ Աբբայ Լուդուիկոս
յաղէտս անդ մահուն ասացեալ է. «Աւասիկ 'ի քսան և երիս ամս
կենակցութեան մերոյ՝ այս առաջին վիշտ է զոր ինձ հասուցանէ».
բան՝ որ և զկիրս սրտի իւրոյ յայտ առնէ, և զլաւութիւնս տիկնոջն
կորուսեալոյ։

«Զի ամբիծք են առաջի աթոռոյն Աստուծոյ»։

Յայտ. Յովհ. ԺԴ, 5։ [1]

ՊԵՐՃԱՊԱՏԱՌ ՏԷՐ,

Զինչ հանդէս է զոր Յովհաննէս՝ առաքեալն սուրբ՝ յանդիման առնէ մեզ։ Ցեսանիցն այն մեծ՝ բանայ մեզ զերկինս, և հաւատք մեր նշմարեն անդ «'ի վերայ սրբոյ լերինն Սիոնի», 'ի բարձրածայր գիտակի երանաւէտն Երուսաղեմի, զգառնն բարձող մեղաց աշխարհի, հանդերձ պարակցութեամբ իւրոցն արժանաւորաց։ Սոքա են զորոց գրեալ կայ 'ի գլուխս գրոցն Յայտնութեան. «Սակաւք ոմանք են 'ի սարդիացւոց եկեղեցւոջն՝ հաւատացեալք, ոչ դեռ մի անարատք, որք ոչ աղտեղացուցին զհանդերձս իւրեանց[2]», զզգեստսն պայծառս՝ զոր զգեցոյց նոցա մկըր-

1 Ըստ լատին թարգմանութեան։
2 Յայտ. Գ, 4։

տութիւնն. զգեստք՝ որ ոչ այլ ինչ են, բայց Քրիստոս Յիսուս ըստ Առաքելոյ. «Որք միանգամ 'ի Քրիստոս մկրըտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք[1]»: Սակաւաւորքս այսոքիկ՝ անմեղութեամբ իւրեանց սիրելիք Աստուծոյ, և նշանաւորք ջնջեալ և աղնուական պարգևաքն, գիտացին պահել զպատուական հանդերձն և զշնորհս միրտութեան:

Իսկ զինչ փոխարէնքն եղեն շնաշխարհիկ հաւատարմութեանս: Միա զիք բարբառոյ արդարոյն և սրբոյն. «Երջկն, ասէ, ընդ իս 'ի հանդերձս սպիտակս, զի արժանի են[2]». անմեղութեամբն արժանիք կրելոյ 'ի յաւիտեանսն զհանդերձ անարատ գտանիցն, և ցանգ ընդ իւր շրջելոյ. զի ոչ երբեք մերկացան զայն՝ յետ միանգամ յիւրսն զնոսա դասակից առնելոյ. ոգիք սուրբք և ամբիծք, ոգիք կոյսք, որպէս և կոչէ զնոսա Երանելին Յովհան, յոր միտս և սուրբն Պաւղոս ասէր առ համբրէն հաւատացեալսն կորնթացւոց. «Խօսեցայ զձեզ առն միում, իբրև զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Քրիստոսի[3]»: Ճշմարիտ սրբութիւն հոգւոյ, ատոյգ պարկեշտութիւն քրիստոսանուէր անձին՝ ամաչել ընդ մեղսն է, չունել աչս և սեր՝ բայց առ Յիսուս միայն, և մնքուր պահել միշտ զզգայութիւնսն յապականութենէ աշխարհի:

Յայս անմեղ և անապական երամ դասեալ է դշնոյս. անդուլ սոսկումն իւր 'ի մեղայ՝ արար զնա այդմ պատուի արժանի: Հաւատք որ մինչև յերկինս անցանէն, ցուցանեն զնա մեզ այսօր 'ի դմին երանաշնորհ դասակցութեան: Թուիմ յանդիման նկարել զզգաստութիւնն՝ զնաղաղութիւնն և զանդրօս միտսն՝ զոր տեսանիցք 'ի նմա առաջի սրբոց սեղանոց, որ տայր պատկառել յԱստուծոյ և 'ի նըմանել. յայդ սրբական յօրինուածութիւնս՝ յաւելու Աստուած զերկնաւոր ուրախութեանցն զեղուն: Ոչ փոխակերպեաց զնա մահ, բայց միայն զի անեղծական գեղ զտեղի փոխանակեաց զանկայուն և զմահկանացու գեղեցկութեանն: Լուսափայլ սպիտակութիւն մարմնոյն, անմեղութեան հոգւոյն և ամբծութեանն նշանակ, անց եմուտ գոգցես 'ի նեղքս, ուր տեսանեմք զնա գերազարդեալ աստուածեղէն լուսով: Ընդ գառնին շրջի, զի արժանաւոր իսկ է այնմ: Անկեղծաւոր և աննենգ պարզմտութիւն նորա դասէ զնա 'ի թիւս այնոցիկ՝ զորոց երանելին Յովհան յառաջակարգ բանս բնաբանիս ասէ, թէ «Ի բերան նոցա ոչ գտաւ սուտ», և ոչ մեղմեխանք 'ի գնացս նոցա, որով անարատք երևին առաջի աթոռոյն Աստուծոյ. «Ամբիծք են առաջի աթոռոյն Աստուծոյ»: Արդարև իսկ անբասգիւտ է սա առաջի Աստուծոյ և մարդկան. բամբասանաց չիք գամն գըտանել և ոչ 'ի մասին ինչ ուրեք կենացն՝ 'ի մանկութենէ մինչև 'ի մահ. և այս փառք անաղօտ, այս համբաւ գեղեցիկ՝ է խուսնել իմն անուշից ուրախարար երկնից և երկրի:

Պերճապայծառ Տեր, բաց զաչսդ 'ի մեծս յայս հանդէս: Գոյր ինձ լաւ ևս սրբել զարտասուսդ քո և զզարակից արքայազանցդ և զմեծաշուք ակմբիս, բայց եթէ 'ի գերահրաշ հանդիսի անդ և 'ի փառս յանդիման առնելով ձեզ զմայր ձեր սիրելի և անձկակարօտ: Լուգուիկոս ինքնին, որոյ արութիւն ոչ զօրէ յաղթել երաւացի ցաւոց իւրոց, յայսմ 'ի սոյն տեսութեան առաւել իմն ամաչելիս գտանիցէ զայնս: Բայց որ միայն մխիթարն է լինելոյ ձեզ, Պերճապայծառ Տեր, նոյն լիցի ձեզ և յօրինակ. և հիացեալ ընդ անմահ լուսաւորութիւն համակ անբասերիւր և անբասգիւտ վարուցն, զբնաւ գեղ նորա ածիցէք և զձերովդ:

Դոյզն ինչ է, քրիստոնեայք, գարձեալ ասեմ՝ դոյզն իմն է դատել 'ի մարդիկ զայն անարատութիւն, այլ մանաւանդ դոյզնագիւտ է 'ի մեծամեծսն: «Որ զգեցեալս են զհանդերձս սպիտակս, ասէ Երանելին Յովհան, սոքա են

1 Գաղ. Գ, 27:
2 Յայտ. Գ, 4:
3 Բ. Կորնթ. ԺԱ, 2:

որ դան 'ի վչտաց մեծաց[1]»։ զի 'ի միտ առնուցուք, թէ սպիտակութիւնն այն ատուածեղէն՝ ընդ խաչիւն յօրինեալ յաՃախս, և հաղիւ երբեք 'ինչոյսն հոծեալս փորձութեամբ մարդկօրէն մեծութեանց։

Բայց սակայն Ճշմարիտ է, տեսլիք, զի Աստուծոյ՝ սքանչելիք ինն իւրոց շնորհաց՝ հաՃոյ թուի ընտրել իւր և 'ի թագաւորաց հոգիս սուրբս այսպիսիս։ Այսպիսի գտաւ երանելին Լուդովիկոս միշտ անաղտ և միշտ սուրբ անդրսանին 'ի մանկութենէն, և Մարիամ-Թերեզա դուստր նորին՝ 'ինմանէ կալաւ ղչքնաղ ժառանգութիւնն։

Եկայք, տեսլիք, մտցուք 'ի խորհուրդս ատուածախնամ տեսչութեանն, և սիրասցուք ընդ բարութիւնսն Աստուծոյ՝ որ զեղուն 'ի մեզ և յամենայն ազգս հրաւիրեաւ դշխոյիս։ Ամբարձ զնա Աստուած 'ի ծագս մարդկեղէն մեծութեանց, զի ըսբութիւն և զանխոտոր բարեկարգութիւն վարուց նորա պայծառագոյն ցուցանիցէ և առաւել յօրինակ բարի։ Վասն որոյ կենաք նորա և մահ, սրբութեամբ և շնորհօք երկոքեան պատարուն՝ 'ի խրատ լինին ազգի մարդկան. ոչ գոյր դարուս մերում կատարելագոյն ինչ ընդունել քան զայս, զի ոչ ուրեք յայնքան 'ի ծայրս բարձրութեան՝ այսպիսի ինն նշմարեր սրբութիւն։ Զայս շնաշխարհիկ և հրաշակերտ դրուագեալ յօրինուած առցուք 'ի քէնն յերկոսին մասունս Ճառիս։ Այս աւասիկ է, հակիրճ ասացեալ, զոր Ճառել առեալս է զբարեպաշտաղունեն 'ի բամբէնին, և այս իսկ արժանի համառօտութիւն գովութեան նորա. Զիք ինչ այլ՝ բայց շքեղ յանձին նորա. Զիք ինչ այլ՝ բայց անախեղծ 'ի կեանս նորա։

Ընթացարուք, ժողովուրդք, եկայք տեսանել յառաջին տեղւոջ աշխարհի ղչքնաղագիւտ և զսքանչելափառ գեղ անյողդողդ առաքինութեան։ Ի հարթ հաւասար կեանսն անդ՝ թէ յորում մասին հարկանիցէ զնա մահ՝ չէ ինչ փոյթ

1 Յայտ. է, 13, 14։

դշխոյիս. չերևի 'ինմա մասն տկար՝ ընդ որ յանզգաստս 'ի բուռն անկանիցի. միշտ արթուն, ցանգ յԱստուած և 'ի փրկութիւն իւր խնամոտ, մահ նորա՝ այնպէս յեղակարծ և ահագին յաչս մեր, չէր ինչ նմա վատնգաւոր ամենևին։ Վասն որոյ բարձրութիւն իւր, որպէս 'ի բարձրագէտ վայրէ երևելոյ շուրջ շուրջանակի, ցուցցէ տիեզերաց զմեծ զայս Ճշմարտութիւն, թէ չիք ինչ կայուն և սերտիւ մեծ 'ի մարդիկ քան զնորշել 'ի մեզաց, և զի միայն զգուշութիւն յերեսաց յարձակման մահու՝ անմեղութիւն կենաց է։ Զայս ուսուցանէ մեզ, տեսլիք, 'ի տապանի սատ, նա մանաւանդ 'ի բարձանց երկնից, վեհափառ, բարձրաշուք, հզոր և քրիստոսասէր բամբիշնս Մարիամ-Թերեզա աւազարիական, դուստր արքային Սպանիոյ, դշխոյ Գալլիոյ և Նաւարայի։

Զիք ինձ հարկ ասել ձեզ, թէ Աստուած է որ շնորհէ զմեծատոհմ սերունդս, զմեծավայելուչ հարսանիս, զոր դիս և զթոռունս։ Նա ինքն է որ ասէ յԱբրահամ, «Թագաւորք 'ի քէն ելցեն[1]», և տայ ասել մարգարէին իւրում Դաւթի, թէ «Տէր շինեսցէ քեզ տուն[2]»։ «Աստուած որ արար 'ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան, որպէս ասէ երանելին Պաւղոս, և 'ի հաստատակաց աղբերէ անտի սփռեաց 'ի վերայ երեսաց ամենայն երկրի, ետես և նկատեաց յաւիտենից զդաշինս նոցա և զբաժինս, կարգեալ ժամանակս և սահմանադրութիւնս բնակութեան ժողովրդոց[3]», և այնմ ամենայնի՝ օրինաւոր ընթացս։ Այս Աստուած է որ բարձրացոյց զդշխոյս մեծաշուք ծնողեամբ՝ 'ի մեծաշուք ամուսնութիւն, տեսանել մեզ զնա գերապատիւ քան զամենայն կանայս դարուն, վասն սիրելի և մեծարոյ լինելոյն, և աւաղ, յոյժ վաղագոյն սգալի մեծին 'ի մարդիկ։

1 Ծննդ. ԺԷ, 16։
2 Բ. Թագ. է, 11. ըստ լատին թարգմանութեան։
3 Գործք. ԺԷ, 24, 26։

Արհամարհք յաչս իմ փիլիսոփայքն՝ որ զխորհուրդսն Աստուծոյ 'ի միտս իւրեանց չափելով, առնեն զնա արարիչ տիեզերական ինն աէթ կարգի՝ յորմէ այլն ամենայն ինքնին յառաջ գայցէ ըստ իւրում կարի. որպէս թէ ելցեն և նորա ըստ մեզ վերը 'ի վերոյ և խառն 'ի խուռն տեսութիւնք, և վերին իմաստութիւնն 'ի խորհուրդս իւր ոչ բովանդակիցէ զմասնաւորսն՝ որոց միայն է հաւատի էութիւն: Մի ինչ յերկուասցուք. քրիստոնեայք. Աստուած 'ի յաւիտենից խորհուրդս իւր պատրաստեաց զառաջին ազգատոհմն՝ զնախահարս ազանց, և յամենայն ազգս՝ զսեփական առաքինութիւնս յաջողուածոյ նոցին: Եւ յայնմ իւրաքանչիւր՝ կարգեաց զնոցա առանձին տոհմս, և մանաւանդ զայնոսիկ՝ որ կալցին են 'ի տեսչութիւն ազգացն, և 'ի տոհմս անդ ուրոյն ոչոգի զամենայն մարդ՝ որովք բարձրանալոցն էին, կամ 'ի հաստի կալոց, և կամ կործանելոց:

Ի կարգի անդ խորհրդոցն եհան Աստուած զերկոսին մեծագոյն տունս՝ յորոց ծագելոց էր դշխոյս, զդալիլիականն, և զաւստրիական. յորոց ձեռն կշիռ պահէ զմարդկան իրս. ցոր չափ և ցոր ժամ. ինքն գիտէ և մեք անգիտանամք:

Տեսանի 'ի գիրս սուրբս՝ զի տանցն արքունի հնորհէ Աստուած գրոշմն ինչ սեփականս, որպէս զոր Աստրիքն՝ թէպէտ և թշնամիք խորայելեան թագաւորացն՝ ընծայէին նոցա ասելովն. « Ահաւասիկ դիտեմք զի թագաւորք տանն Խորայելի թագաւորք ողորմութեան են [1] »:

Ոչ 'ի խոյզ և 'ի ենդիր մտից՝ թէ որպիսի՞ ինչ առանձին գրոշմքն էին ընծայեալք տանցն Դալիլիոյ և Աւստրիոյ, և առանց ասելոյ՝ թէ աւստրիականին ահաւորագոյն էին խորհուրդք, և դալիլիականին զօրագոյն էին համարեալ զէնք և քաջութիւն, այժմ՝ զի առանձին էին հնորհիւ գրոշմքդ երկոքին գան ակն յանգիման 'ի մի միաբանութիւն օգտի մերոյ, նշանակեցից միայն զուրախութիւն դշխոյս ընդ այն՝

1 Գ. Թագ. Ի, 31:

զի բաժին ժառանգութեան երկոցուն տանցն՝ յորոց էր՝ հնորհեալ էր յԱստուծոյ զբարեպաշտութիւն. որպէս զի սուրբ եղեալ [1], ուղղիլ իմացարուք, այս ինքն է՝ նուիրեալ 'ի սրբութիւն անդստին 'ի ծննդոցն՝ ըստ վարդապետութեան երանելւոյն Պաւղոսի, ասէր ընդ առաքելոյն. Աստուած՝ զոր ազգատոհմ իմ պաշտեաց, և որում նուիրեալս եմ 'ի հարց անտի իմոց. « Աստուած զոր պաշտեմ 'ի նախնեաց [2] »:

Իսկ եթէ դալ պարտ ելցէ 'ի սեփականութիւնս տանն Աւստրիոյ, զի՞նչ ելցէ տեսանել բարգաւաճ քան զանհատ սերունդս իւր, ուր ընդ պարագայս ամաց չորեքարիւրոց ոչ այլ ինչ երևի՝ բայց թագաւորք և կայսերք, և այնչափ յորդութիւն տանց թագաւորազանց՝ հանդերձ բազում աշխարհօք և արքայութեամբք, որպէս զի և վաղ իսկ ուրեմն կանխաւ գուշակեալ է, թէ ծանրաբեռնելոց ելցէ:

Զի պիտոյ ելցէ ճառել զերիցս քրիստոսագրոյմ գնդէն դալիլիական, որում իւրով ազնուական օրինօքն յանհնարիցն է անկանել ընդ ձեռամբ օտարասերին տոհմի, որ միշտն է ելնեցօղ 'ի դլուխն իւր, որ միայն տեսանի ընդ տիեզերս և ընդ ամենայն յաւիտեանս, յետ եօթնհարիւրեմեան արքայութեանն կանդնելոյ, – թողեալ զոր մեծութիւն բարձու սկզբանն տայ դատանել կամ զմտաւ ածել մանրակերկիտ խուզարկուացն հնութեանց, – որ միայն, ասեմ, յետ այնչափ դարուց տեսանի տակաւին յաստող և 'ի ծաղկի, և միշտ տեր ամենապայծառ թագաւորութեան ընդ արեգականմբ, և առաջի Աստուծոյ, և առաջի մարդկան: Առաջի Աստուծոյ, անայլայլակ ամբծութեամբ հաւատոցն. և առաջի մարդկան, շքով մեծաւ, մինչև կորուսանել զսերութիւնն՝ առանց կորուսանելոյ զփառսն իւր և զաշխարհն:

Այնմ պերճութեան կցորդ եղև թագուհիս, ոչ միայն

1 Որդիքն ձեր . . սուրբ են. Ա. Կոր. Է, 14:
2 Բ. Տիմ. Ա, 3:

'ի կողմանէ Ճոխ և խրոխտ բուրգոնդեան տանն, այլ և դալ-
ենակատն Զապելի՝ մօր իւրոյ՝ արժանաւոր դստեր Հենրի-
կոսի Մեծի, և Սպանիոյ վկայութեամբն՝ ընտրելագունեին
'ի գշխոյս գահուն իւրոյ և առաւել աշխարելոյ. տխուր
նմանութիւն գշխոյին ընդ դստեր իւրում՝ ընդ բամբշանս.
հաղիւ թէ ամաց էր նա քառասուն և երկուց՝ իբրև ելաց
զնա Սպանիա, և 'ի մեր թշուառութիւն՝ կեանք Մարիա-
մու-Թերեզայի ոչ առաւել ինչ երկարաւև դտաւ:

Բայց խմասանոյն՝ այրասրտին և բարեպաշտին Զապե-
լայ փառքն՝ մասամբ իւիք յաղեռիցն Սպանիոյ էին, որոց
գիտեմք զի եգիտ նա դարմանս իւրով նախանձուն, և խոր-
հրդովք որ սրտասնդեցին զաւագանին և զժողովուրդն,
և թէ օրէն ելցէ ասել՝ զինքնին խակ զթագաւորն: Մի ինչ
քրիստոնէացուք, քրիստոնեայք. զի դուստր նորա զԸն-
խոյս, 'ի խաղաղութեան իրաց աշխարհս ոչ այնչափ ած-
խոյժս վառեսցէ 'ի ճառս մեր, և շատ լեցի մեզ ածել ըն-
մտաւ, զի 'ի թշուառութեան ժամանակսն՝ յորոց ամրացոյց
զմեզ Աստուած, էր մեզ դատանել զնոյն օգնութիւն:

Որպիսի խնամով և որպիսի գթովք չէր դաստիարա-
կեալ զնա հօր իւրոյ Փիլիպպոսի Դ: Ոչ իբրև 'ի դուստր
արքայի հայէր 'ի նա աշխարհն սպանիացւոց, այլ իբրև
յաբքայորդի. զի յայն անուն կոչէն անդ զօրիորդն խոս-
տովանեալ ժառանգ այնքան թագաւորութեանց: Դոլին
խորհրդով մերձեցուցին առ նա զամենայն առաքինի և ճար-
տար որեարն Սպանիոյ: Եռես նա զանձն իբրև անդստին
'ի խանձարրոց իւրոց առաքինութեամբ պատեալ. և առա-
ւել երևէին 'ի մատաղ օրիորդին չքնաղ լաւութիւնք՝ քան
զթագան որ մնային նմա: Փիլիպպոս այսպէս սնուցանէ զնա
վասն իւրոյ աշխարհին, Աստուած որ սիրէն զմեզ՝ սահման-
նէ զնա Լուդուիկեայ:

Կացէք, թագաւորք և իշխանք, մի պահանջմամբքդ զա-
ռաջարկութիւն ամուսնութեանն վրդովէք. և որ խռովէն
զայն կամել թուի սերն (բ), 'ի բաց կացցէ: Մարթի սիրոյ

յուզել զսիրա դիւցազանց աշխարհի, մարթի նմա յարու-
ցանել անդ մրրիկս և տալ ծփել ծուփս դողացուցիչս քա-
ղաքավարաց և յուսացուցիչս անմոռաց, բայց են ոգիք վե-
հագոյնք քան զօրէնս նորա, յորս չիք նմա գրգռել միտս
անպատեհս կարգին իւրեանց: Են խորհուրդք հաստա-
տեալք յերկինս, զորս չկարէ նա եղծանել. և դուստրս ար-
քայի, ոչ մեծաշուք տոհմիւն ևեթ, այլ և առաքինու-
թեամբ իւրով և անուամբ՝ է միայն արժանաւոր Լու-
դուիկոսի:

Սա էր կինն հանճարեղ 'ի Տեառնէ պատշաճեալ[1] ըստ
խմասանոյն: Իսկ ընդէր բնաւ 'ի Տեառնէ պատշաճիցի,
ուր ամենայնի Տէր է պարգևօղ. և զի՞նչ առաւել աքանչելիք
կայցեն ասատանօր՝ արժանի առանձին ինն 'ի համար մտա-
նելոյ աստուածեղէն շնորհին: Ա՛ռ 'ի խելամուտ այդմ լի-
նելոյ՝ չպիտի ինչ այլ բայց նկատել զինչ ինչ կարող լցէ
'ի տունս՝ մեղմական զգօնութիւն կնոջ խմասանոյ առ 'ի
պահպանել զնոսա, ծաղկեցուցանել անդ զճշմարիտ խմաս-
տութիւն 'ի բարեպաշտութեան, և խաղաղել զբուռն կա-
րիս՝ զոր սաստիկ դիմակացութիւն զայրացուցանել գիտէ
մանաւանդ:

Կղզի խաղաղական (գ), ուր յանկ ելանելոց են պայ-
քարք երկուց մեծամեծ տէրութեանց՝ յորոց կաս դու 'ի
սահմանակցութեան, կղզի յաւերժ յիշատակաց արժանի՝
երկուց մեծաց հաղարապետացն խորհրդակցութեամբ,
ուր երևեցան ամենայն հնարագիտութիւնք և ամենայն
խորք այլազան քաղաքավարութեանց, ուր մին հարստա-
նայր դանդաղանօքն, և միւսն կորովամտութեամբն սեր-
ճանայր: Օ՛ր մեծափառ, յորում երկու ազգք ահեղք՝
վաղուց թշնամիք և յայնժամ 'ի հաշտ հաւանութիւն ե-
կեալք 'ի ձեռն Մարիամու-Թերեզայի, խաղան 'ի գլուխս
սահմանաց իւրեանց, պարագլուխ զարքայսն ունելով, ոչ

1 Առակ. ԺԹ, 14:

ևս 'ի տալ ընդ միմեանս Ճակատ, այլ 'ի գիրկս ածել մի-
մեանց. յորում Թագաւորքն երկոքին՝ արքունեօքն հան-
դերձ՝ մեծահրաշք, աղնուակերպք և փառաւորք յայլազ-
դի գնացս անդ, եղեն միմեանց և համբրէն տիեզերաց շքե-
ղաշուք տեսարան. ոմանք սրբութեան, ամուսնութիւն եր-
ջանիկ, քօղ հարսանեկան, օրհնութիւն, պատարագ, իցէ՞
թէ ասցի ինձ այսօր խառնել զարարողութիւնս և զհան-
դէսս ձեր ընդ մահազգեաց կացդիս, և զծագ մեծութեան՝
ընդ աւերակս նորին:

Անդ յայնժամ կորոյս Սպանիա՝ զոր մեքն շահէաք,
այժմ կորուսանեմք երկոքեան առ հասարակ, և Մարիամ-
Թերեզա 'ի բնաւ իսկ երկրէ է կորուսեալ: Սպանիա միայն
ողբայր յայնժամ. այժմ՝ զի Գալլիա և Սպանիա խառնեն
զարտասուս իւրեանց, և հեղեալս գնացուցանեն, ո՞ կարաս-
ցէ արդեւոր ընոսա: Իսկ եթէ Սպանիա սգայր զդուստր
արքային իւրոյ՝ զոր տեսանէր ամբարձեալ 'ի բարձրաշուք
գահ տիեզերաց, զի՞նչ լինիցին հեծութիւնք մեր 'ի տեսիլ
դամբանիս՝ ուր ոչ այլ ինչ նշմարեմք ամենեքին առ հասա-
րակ՝ բայց զանհրաժեշտ ոչինչն մարդկեղէն մեծութեանց:

Լուռ լիցուք. ոչ արտասուս կամիմ հոսեցուցանել յա-
ջացդ: Չիմն արկանեմ խրատուցս՝ զոր 'ի սիրտս ձեր կամ
է ինձ գրոշմել. քանզի ունայնութիւն մարդկօրէն իրաց
բազում անգամ Ճառեալ յատենի ասա յայսմիկ, առանց
երիք իմոյ ձայնիս նպաստաւորութեան՝ շատ իսկ ինքնին
երևի 'ի գաւազանն արքունի՝ այսպէս վաղ ընդ փոյթ ան-
կեալ յայնպիսի Թագաւորական ձեռաց, և 'ի բարձրաշուք
մեծվայելչութեան անդ՝ այսպէս արագախամուր թառա-
մելոյ:

Բայց մեծագոյն փառք նորա չև են երևեալ: Դշխոյս
այնչափ պատուովք մեծ՝ մեծանայր օր ըստ օրէ մեծամեծ
արարուածովք արքայի և անպակաս բարգաւաճանօք փա-
ռաց նորա: Ի ներքոյ ձեռին նորա ուսաւ Գալլիա Ճանա-
չել զանձն. գտանէ յինքեան զօրութիւնս՝ զոր դարք յա-

ւաջընթացք գիտէին ոչ. կարդ և կրթութիւն զինուորա-
կան ածեն առաւելուն ընդ բանակաց: Եթէ բաւական առ
ամենայն են գալլիացիք, այնիւ են՝ զի ընդ ամենայն տեղիս
զօրավարէ նոցա Թագաւոր իւրեանց. և գամ մի ընտրեալ
զվայրն զլիաւոր՝ զոր կենդանացուցանելոց է քաջութեամբ
իւրով, ազգեցութեամբ զօրութեան իւրոյ յամենուստ ե-
րևեցուցանել արդիւնս:

Զիք ուրուք երբեք այնչափ անհնարին ուժով պատե-
րազմեալ. քանզի արհամարհեալ նորա զտարևորական ժա-
մանակսն, և ոչ պաշտպանութեան անգամ անձանց տեղի
եթող թշնամեացն: Զօրականքն՝ խնայութեամբ յանձան-
ձեալք և առ հարկի արձակեալք 'ի վանդ, քաջայոյս խրա-
խուսեալ ընթանան ընդ գրոշուք նորա. ոչ գեռ խափան
լինի նոցա, և ոչ ամրոց զարհուրեցուցանէ: Յայտ իմն այն-
պէս է, թէ շանթահար առնէ մանաւանդ զքաղաքսն Լու-
դուիկոս, քան թէ պատանէշ պաշարումն ածէ զնոքօք, և
բաց է ամենայն առաջի զօրութեան նորա:

Քաղաքականութեան հմտութք ձեռնթափ են 'ի գուշա-
կելոյ զմիտս նորա: Ի խաղալ նորա՝ ամենայն առ հասարակ
սպառնալիս յինքն նկարէ. Ճանապարհ հանդարտընթաց՝
յանկարծ ահաւոր իմն արշաւան լինի թշնամեացն: Կանա՝
մինչև յամրութիւն նորա ուշ արարեալ՝ անկանի. երկայն
շրջանօք գայ անդր Լուդուիկոս. զչխոյս՝ որ ընդ նմա է 'ի
խոր ձմերայնին, 'ի հեշտութիւն ուղեկցութեան իւրոյ՝ յա-
ւելու և զգաղանի գործակցութեանն 'ի խորհուրդս մտաց
նորա:

Ի խնամոց այսքանոյ մեծի Թագաւորի՝ Գալլիա ողջոյն
դոգցես մի եթէ ամրոց է, որ ցուցանէ յամենուստ Ճակատ
մի զարհուրելի: Պատսպարեալ յամենայն կուսէ՝ բաւա-
կան է պահել անկասկած խաղաղութիւն 'ի ծոցի իւրում,
նա և տանել ևս զպատերազմ ուր ուրեք և հարկն իցէ, և
'ի մնոյ և 'ի հեռուստ հարկանել միով զօրութեամբ: Թըշ-
նամիք մեր Ճարտար գիտեն խոստովանել զայդ, և գաշնա-

ւորք մեր 'ի յոյժ իսկ հեռաստանէ առին զաղդ բազկին Լու-
դուիկեայ՝ քանի ուժընդակ է յօգնականութիւն:

Ցառաջ քան զնա, Գալլիա՝ գրեթէ առանց նաւաց՝ 'ի
նանիր ընդ երկուս ծովս կարկառեալ կայր. իսկ այժմ յա-
րեգ կուսէ մինչև 'ի մուտս ծածկեալ երևին յաղթական
տորմիղքս, և գալլական արութիւն ընդ բնաւս տարեալ
ածէ զահ և զերկիւղ անուամբն Լուդուիկոսի: Խոնարհեա-
ցիս դու, կամ անկցես 'ի ներքոյ այսր յաղթողի, Ճեղայիր,
մեծացեալդ աւարաք քրիստոնէից: Աստիր յագահութեան
սրտի քոյ, Ունիմ զծով ընդ օրինօքս նուաճեալ, և աղքա-
առ և ապուռ իմ են: Ցուսացեալ էիր 'ի թեղեւութիւն
նաւացդ, այլ 'ի պարիսպս քո ըմբռնեսցիս երբև հաւ մի
յափշտակիչ որոնեալ 'ի պարեխս իւր, և 'ի բունին՝ ուր
զկապուան բաժանէ ձագուց իւրոց: Այժմէն դարձուցա-
նես զգերիսդ. խորտակեաց Լուդուիկ զերկաթն որով-
տագնապիր զկպատակս իւր՝ զծնեալսն յաղատութիւն
ընդ մեծափառ իւրով տերութեամբն: Տունք քո քարա-
կոյտ եւեթ դերբկաց են, 'ի դաղանեղէն մոլութեանդ՝ ընդ
անձին ոգորիս, և չգիտես իւ յագեցուցանել զապիկար
կողուցսդ: Սակայն տեսցուք մեք զվախճան հուդկահարու-
թեանցդ, արդէն նաւուղեղք հիացեալ աղաղակեն. «Ո՞վ
էր երբև զմուր որ լուեաց դադարեաց 'ի մէջ ծովուն [1]». և
զինուքն Լուդուիկեայ յանքոյթ յապահովս կացցէ նա-
ւարկութիւն:

Սպառեցաւ Ճարտարախօսութիւն 'ի գովեստ խմաս-
տութեան օրինաց իւրոց, և կարգի մտից դանձուն իւրոյ.
զի՞նչ ոչ Ճառեցաւ զսնդութենէ իւրմէ, առ որ տեսանեմք՝
զի տեղի տայ և մենամարտութեան անդամ 'ի վսեր եկե-
ղեցոյն մոլեգնութիւն: Անաչառ արդարութիւն Լուդուի-
կեայ՝ երախտագործ յօժարութեամբքն հանդերձ՝ սիրե-
լի առնէ Գալլեայ զիշխանութիւնն, ընդ որով տաւաղեալ

1 Եղեկ. ԻԷ, 32:

բարեբախտասէս՝ խաղաղ կայ և յաղթող: Որ կամին ոք
լսել՝ որպէս գահերէց բազմի բանն 'ի խորհուրդս արքայիս,
ունկն ևեթ մատուսցէ 'ի հաճել նորա ցուցանել զկրա-
ւունսն: Էր ինձ ատանօր վկայ կոչել զնմանսուն պաշտօ-
նեայս այլոց արքունեաց, որ այնպէս յաղթահարիչ զնա
գտանեն 'ի բանսն, որպէս ահաւոր 'ի զէնսն: Սքնուակա-
նութիւն խօսիցն՝ յիմաստից սրտին բղխէ, և Ճշգրիտ բանք
բերանոյն՝ պատկեր են արդարութեան խորհրդոց նորա:
Ի խօսել նորա ուժգնութեամբ՝ քաղցրութիւն ինն զար-
մանալի մուտ գործէ նմա 'ի սիրտս, և յաւելու՝ չգիտեմ
զիարդ՝ այլ ինն շուք փառաւորութեան 'ի մեծ վայելչու-
թիւն անդր, զոր և մեղմախառն յօրինէ:

Մի մոռացօնք մեզ եղիցին ուրախութիւն սրտի գըշ-
խոյիս: Լուդուիկոս պատուար է կրօնից. զահաւոր զէնսն
ընդ ծով և ընդ ցամաք վարէ 'ի սպաս պաշտաման կրօնիցն
սրբութեան: Այլ ածցուք զմտաւ, զի ոչ այլով իւիք կանգ-
նէ նա զայն արտաքոյ ընդ հանուրս, բայց զի թագաւորե-
ցուցանէ զայն 'ի ներքոյ և 'ի սրտի իւրում: Անդ խորտակէ
նա ահաւորագոյն թշնամիս՝ քան զոր այնչափ տերութիւնք
նախանձաբեկք ընդ փառս նորա, և Եւրոպէ համօրէն,
կարօղ լցեն վառել ընդդէմ նորա: Բուն թշնամիք մեր՝ 'ի
ներքս 'ի մեզ են, և քան ընդ այլս՝ ընդ սոսին տայ պատե-
բազմ Լուդուիկոս: Տեսանէք յամենայն կողմանց զտա-
ճարս հերձուածոյն տապալեալ. զոր առ ոմն կործանէ՝
հաճոյագոյն է պատարագ, և գործ քրիստոնէին է աւերել
քակել զսխտս՝ որ զսիրտս մեր 'ի մեհեան կուռց դարձու-
ցանեն:

Զի՞նչ օգուտ էր Լուդուիկեայ հանել ընդ ամենայն
ազգս և ազինս զփառս իւր: Ոչինչ է նմա լինել այր մի՝ ընդ
որ զարմացին մարդիկ. նա ցանկայ լինել ընդ Դաւթի
«այր ըստ սրտին Աստուծոյ»: Նմին իրի օրհնէ զնա Ա-
ստուած: Խոստովան լինի ողջոյն ազգ մարդկան թէ չիք ինչ
մեծ քան զոր նայն գործէ, բայց միայն եթէ կամք իցեն

մեծագոյն եւ համարել զոր ինչ ոչն կամեցաւ գործել, եւ զսահմանս՝ զոր եդ իշխանութեան իւրում: Պագ ուրեմն երկիր, ով մեծդ Թադաւոր, այնմ՝ որ տայ քեզ Թագաւորել, յաղթել, և 'ի յաղթութեան անդ՝ հակառակ առ 'ի նմանէ ընչեալ խրոխտութեանն՝ պարգեւէ քեզ միտս զգաստականս: Ո՛ տայր թէ բանայր քրիստոնէութիւն զաչսն, և ճանաչէր զվերէժխնդիրն առաքեալ նմա յԱստուծոյ: Մինչ դեռ, ով աղէտ, ով ամօթ, ով արդար պատուհաս մեղայ մերոյ. մինչ դեռ, ասեմ, աղարտ վարեալ է այն յանհաւատից միսելոց մինչեւ յաղխ նորա, զի յամէ յուշ ածել զօգնութիւնս Կրեատայ, և զբրն երևելի զԽաապայ՝ յորում վերստին Լուդովիկ 'ի միտ արկ անհաւատից զհին համբաւ զնուազն գայլնակատաց՝ զմահագեկոյցն բռնաւորութեան իւրեանց, և անլուր քաջութեամբք պատնէշ եկաց Աւստրիոյ՝ որում եղեալն էր 'ի սոսկումն:

Բացէք արդ զաչսդ, քրիստոնեայք, հայեցարուք 'ի դիւցազնն, զորմէ կարեմք ասել՝ որպէս Սուրբն Պաւլինոս զմեծէն Թէոդոսէ, Թէ տեսանեմք 'ի Լուդովիկ «ոչ Թագաւոր զոր, այլ զծառայ Յիսուսի Քրիստոսի, և զկնան զոր որ գեր 'ի վերոյ ամբառնայ մարդկան՝ հաւատովքն մանաւանդ քան Թագաւն [1]»:

Այսպիսւոյ դիւցազնն, տեարք, առանձինն ինն օրինակաւ կցորդ լինելոց էր փառաց Մարիամ-Թերեզա, զի ոչ շատ համարեալ հաղորդ այնմ լինել իբրև գահակից, ոչ ինչ կասեցուցանէր յօգնականութենէ մշտամառնչ խնդրուածացն:

Մինչդեռ Թագաւորս այս մեծ՝ փառաւոր առնէր զնա քան զամենայն Թագուհիս, դու, պերճապայծառ տէր, առնէիր զնա փառաւոր քան զամենայն մարս: Քոյին մեծարանքդ սիրոփեցին զնա ընդ կորուստ այլոց զաւակացն. դու անդրէն դարձուցեր զնոսա առ նա. եառեա զանձն ծընեալ վերստին 'ի մանուկ իշխանորդիդ՝ որ քո և մեր է զբաւարձութիւն, և եգիտ դուստր մի իւր արժանի 'ի շքեղաշուք բամբիշանն, որ իւրով չքնաղ պարծանօքն և յիրաւանց պատակին սրբոյ՝ մի սիրտ է ընդ քեզ: Եթէ մեք ընդ երևելն սքանչացաք ընդ նա, զդատաստան մեր հաստատեաց արքայ. և այժմ՝ յահամայս ըղձից իւրոց՝ եղեալ նա գլխաւոր զարդ արքունեացն՝ որոյ սիւն է արքայն մեծ, մխիթարութիւն է համօրէն Գալլիոյ:

Արդ դշնոյս մեր երջանկազարմ 'ի տահմէն՝ որ զբարեպաշտութիւն և զփառս գրեր նմին 'ի ժառանգութիւն, իւրով սուրբ սնդեամբն, ամուսնութեամբ, շքով և սիրով մեծի արքային, վաստակովք և յարգանօք զաւակացն, և ամենայն ժողովրդոյ պատուասիրութեամբ, չտեսաներ ինչ յերկրի՝ որ չիցէ 'ի խնարհ քան զինքն: Ամբարձ այժմ, ո Տէր, և զմիտս իմ և զբարբառս, զի բաւական գտայց յանդիման առնել մեծաշուք կաճառեալ ատենիս զանզուգական գեղ հոգւոյն յոր բնակեցեր միշտ, որ ոչ երբեք արբամեցոյց զՀոգիդ քո սուրբ [1], որ չիորոյս բնաւ զճաշակ երկնաւոր պարգևացն [2]. որպէս զի սկսանիցիմք եղկելի մեզաւորքս հոսել հեղեղս արտասուաց 'ի վերայ անձանց մերոց, և հիացեալք ընդ մաքրափայլ գեղ անմեղութեան՝ մի երբեք լքանիցիմք ողբալ զանկանել մեր 'ինմանէ:

Ապաքէն, քրիստոնեայք, յորժամ տեսանեմք յաւետարանին զկորուսեալ ոչխարն [3] քան զհօտն ողջոյն մեծարեալ 'ի քաջէ հովուէն, յորժամ ընթեռնումք զերջանիկ դարձ անառակին գտելոյ, և զցնծութիւն գորովագութ հօրն՝ որ զտուն բոլոր ուրախս առնէ, սակայնք ինն զա-

1 Ի Թէոդոս՝ ոչ այնչափ զինքնակալ որ, քան Թէ Քրիստոսի ծառայ քարոզէի, .. և ոչ արքայութեամբ, այլ հաւատովք իշխեցեալ: Պաւլ, եպ:

1 Եփես. Գ, 30:
2 Եբր. Զ, 4:
3 Ղուկ. ԺԵ, 4, 20:

պաշխարութիւն քան զանմեղութիւն իսկ նախամեծար համարել, և զզգաստացեալ անառակն առաւել ևս շնորհաց հասեալ քան զերեցն՝ զոչն երբեք սարտուցեալ 'ի հայրենի տանէն: Եւ սակայն երեց է նա, և բանք երկու ասացեալ առ նա 'ի հօրէն՝ տան նմա 'ի միտ առնուլ թէ չիք նորա կորուսեալ զպարծանսն. « Որդեակ, ասէ, դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է [1] »: Այս բան, տեսարք, ոչ Հաւի յատեանս. զի անգրժելի այն հաւատարմութիւն չգտանի 'ի բարս. սակայն լուսաբանեացուք զայն, քանզի մեծս առաջարկութիւն անդր առեալ տանի զմեզ, և յոյժ իմն նման է այն բնաբանիս մերում:

Գեղեցիկ իմն վարդապետութիւն սրբոյն Թովմայի խելամուտ առնէ զմեզ այնմ, և միաբանէ զամենայն: Սէր մեծ ցուցանէ Աստուած առ արդարն միշտ հաւատարիմ, և ևս առաւել առ ապաշաւեալ մեղաւորն, բայց այլ և այլ օրինակաւ: Մին յաւէտ շնորհնկալ թուիցի, եթէ յոր ինչ էն հայիցիմք, և միւսն՝ եթէ յորմէ ելն գնիցեմք միտ: Արդարոյն՝ պարգև մեծ պահէ Աստուած, զմեղաւորն հանէ 'ի չարէ մեծէ. արդար առաւելեալ երևեսցի. եթէ վարձք իւր կշռեսցին. և մեղաւոր սիրելագոյն, եթէ անարժանութիւն իւր 'ի համար մատնիցէ: Հայրն ինքնին անառակին յայտ առնէ զայդ. « Որդեակ, դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է ». զայդ՝ որում զմեծագոյն շնորհն պահպանէ՝ ասէ. « այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր՝ և եկեաց [2] ». զայս զնմանէ ասէ, զոր 'ի խորոց չարեացն անդնդոց կորեաց:

Այսպէս յանկարծակի զուարթանան սիրաք անակնկալ շնորհիւ օդոյն պայծառութեան ձմերանի, որ յետ անձրևայուզից եկեալ զուարճացուցանէ միանգամայն զերկիր. սակայն ոչինչ ընդհատ առաւել համարիմք զանաղօտ պարզութիւն քաղցրախառն յեղանակին: Եւ եթէ իցէ մեզ օրէն՝ մարդկեղէնս մոռք յայտնաբանել զմասսս Փրկչին, առաւել իմն խրախ լինի և խայտայ 'ի վերայ մեղաւորաց դարձելոց առ նա, որոյ են նոր ստացուածք. բայց անուշակ ևս մտերմութիւն պահէ առ արդարսն՝ առ հին և յաւէժական բարեկամսն: Քանզի եթէ զանառակէն խօսելով ասէ, տացի նմա պատմուճանն առաջինն [1], բայց չասէ, դու հանապազ ընդ իս ես. կամ որպէս երկրորդէ զայն երանելին Յովհան 'ի Յայտնութեանն. « սոքա զկնի երթան գառինն, ... և անբիծք են առաջի աթոռոյն Աստուծոյ »:

Իսկ զնաւոր պահիցի անարատութիւն 'ի տեղւոջ ասա փորձութեանց, և 'ի պատրանս մեծութեանց աշխարհի, զայն 'ի դշխոյսս ուսանիցիք. յայնցանէ է սա, զորոց որդին Աստուծոյ բարբառեցաւ 'ի Յայտնութեան անդ. « Որ յաղթէ՝ արարից զնա սիւն տաճարի Աստուծոյ իմոյ [2] ». եղիցի նորա զարդ, եղիցի նորա նեցուկ օրինակաւն, բարձր եղիցի և հաստատուն: Ահա պատկեր ինչ նմանութեան դշխոյսս: Արտաքս այլ մի ևս ելցէ 'ի տաճարէ անտի: Իբրև զսիւն անշարժ՝ անխախտուտ կացցի բնակութիւն 'ի տան Տեառն, և մի իւիք ինչ մեզոք հատցի անտի: Արարից զնա՝ ասէ Յիսուս Քրիստոս, և այս գործ է իմոյ շնորհացս: Այլ զնաւոր հաստատեսցէ զսիւնս զայս: Լուարուք, աւասիկ է խորհուրդն. « Գրեցից 'ի վերայ նորա », յաւելու Փրկիչն. կանգնեցից զսիւնն, բայց և գրոշմեցից 'ի նմա արձանագիր յիշատակաց արժանի: Աղէ զի՞նչ գրեսցես, ով Տէր: Երիս ևեթ անուանս, լնեալ վերնագրին սուղ և շքեղ. « Գրեցից, ասէ, 'ի վերայ նորա զանուն Աստուծոյ իմոյ, և զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ՝ զնորն Երուսաղէմի.. և զանուն

1 Անդ, 31:
2 Անդ, 32:

1 Անդ, 22:
2 Յայտ. Գ, 12:

իմ նոր [1]»։ Այս անուանք, որպէս յայտ յաջորդն առնիցէ, նշանակին զկենդանի հաւատն 'ի սրտի, զարտաքին գործս բարեպաշտութեան ըստ սրբութեան օրինաց եկեղեցւոյ, զնորհրդոյ սրբոյ ստէպ կալ. երբայրի հնարք պահպանելոյ զանմեղութիւն, և համառօտութիւն կենաց սրբոյ դշխոյիս։ Զայս տեսանիցէք զրոշմեալ 'ի սեանն, և ընթեռնուցուք յարձանագրի անդ զպատճառս հաստատութեանն։

Եւ նախ Գրեցից, ասէ, զանուն Աստուծոյ իմոյ՝ տպաւորեալ 'ենմա զհաւատս կենդանիս։ Սովին հաւատովք, տեառքդ, 'ի խոր քանդակի անուն Աստուծոյ 'ի սիրտս մեր։ Հիմն հաստատութեանն ընդ որ սխրանամքս՝ կենդանի հաւատք են. զի ՈՒստ ուսանէք իցեն յողդողդութիւնք մեր՝ եթէ ոչ 'ի դանդաչումն հաւատոցս. քանզի հիմնս այս դեղեկոտ է, երկնչիմք շնեալ 'ի վերայ նորա, և 'ի չաւիղս առաքինութեան երեր և տատան ոտիւք ընթանամք։ Հաւատոց միայն է պնդեալ զզարգիտալուն ոգիս. զի միտ դիք զինչ-պիսի շնորհս ընծայէ նմին երանելին Պաւղոս. Հաւատք, ասէ, յուսացեալոց իրաց հաստատութիւն [2]. հիմն ամուր, և նեցուկ անխախտուս։ Իսկ ի՞մ իմիք. յաշխարհի երևելոցն։ Զի՞արդ իցէ տալ սերտութիւն, կամ՝ ըստ երանելւոյն Պաւղոսի ասել, հաստատութիւն և իրան՝ ցնդելի ստուերի։ Այսպա հաւատք խարխսխ են, բայց իրաց յուսացեալոց։ Եւ զինչ էս. Ցանգիմանութիւն՝ որոց ոչն երևին. կատարեալ հաւանութիւն անեղութիւնն։ Ի հաւատն պարսխ լինել հաւանութիւն մտաց։ Այդ, ասիցէք, 'ի մեզ չիք, զիտեմ ըզվանեէն. վասն զի փոխանակ խնդրելոյ զայն 'ի պարգևողէն Աստուծոյ, երկնչիք ուշել զայն. նմին իրի ամենայն ինչ կործան անկանի 'ի վարս ձեր, վասն որոյ երագասուր ըզգայութիւնքդ դիւրաւ յաւիշատակն զվարանեալ և զանկայուն միտդ։ Եւ զինչ հաւանութիւնն իցէ ասացեալ

1 Յայտ. Գ, 12։
2 Եբր. ԺԱ, 1։

Այսաքեալց, բայց եթէ՝ որպէս ասէն այլուր, հնազանդութիւն մտաց 'ի սպասաւ դերելոյ [1] ընդ իշխանութեամբ աստուածեղէն բանին։

Հայեցարուք 'ի բարեպաշտ դշխոյս առաջի սեղանոցն սրբութեան, տեսէք որպէս պակուցեալ կայ յերեսացն Աստուծոյ. ոչ եթէ իւրայովքն բաղմութեամբքն Ճանաչէ, այլ զգուշութեամբն և պատկառոտ հանդարտութեամբ՝ մինչև զաչսն անդամ 'ի վեր չամբառնալ։ Գայ մերձի խորհուրդն երկրպագելի. ո՜հ, հարիւրապետին հաւատք՝ ընդ որ և Փրկիչն ենքենն զարմացաւ, չէր առաւել կենդանի, և ոչ առաւելագոյն խոնարհութեամբ բարբառեցաւ զՏէր չեմն բաւական [2]։ Տեսէք զնարդ բախե զանմեղ կուրծսն, ՝ի՞բ ըստգտանէ զանձն յաղագս փոքուցնոյ իսկ յանցանաց, որպէս խոնարհէ զշքեղաշուք գլուխն՝ որոյ առաջի խոնարհին տիեզերք. երկիր՝ սկիզբն իւր և գերեզման՝ չէ ըստ արժանի խոնարհ՝ ընդունել զնիզն. ցանկայ չիք լինել առաջի մեծվայելչութեան թագաւորին թագաւորաց։ Կենդանի հաւատովք դրօշն Աստուած 'ի խորս սրտին զՆասայայ ասացածն, «Երթայք մտէք ընդ վիմաք, և թաքերուք յերկրի յերեսաց ահի Տեառն և 'ի փառաց զօրութեան նորա [3]»։

Մի՞նչ զարմասջիք այսուհետև ընդ այնչափ խոնարհութիւն նորա 'ի գահոյս անդ իւրում։ Ո՛վ տեսել աքանչելի որ 'ի հիացումն կրթէ զերկինս և զերկիր. տեսանիցէք դշխոյ՝ ըստ դաւթեան օրինակի՝ պատերազմեալ յամենուստ ընդ մեծութեան իւրում և ընդ հպարտութեանն նորին. տեսանիցէք 'ի բանս արքային մեծի զկենդանագիր դշխոյիս, և 'ի միտ առջիք զամենայն խորհուրդս սրտի իւրոյ. «Տէր, ասէ, ոչ բարձրացաւ սիրտ իմ [4]», ահա մարտ ընդ սկիզբն ամբարտաւանութեան. «Եւ ոչ զբօսան աչք իմ»,

1 Բ. Կոր. Ժ. 5։
2 Մատթ. Ը, 8։
3 Եսայ. Բ, 10։
4 Սաղմ. ՃԼ, 1։

աւադիկ զսփառութիւն և պերճանք սանձակոծեալ։ Ո՛հ, Տէր. չեք լեալ յիս այն արհամարհութիւն՝ որ չտայ ակն. արկել 'ի կարի գեռնաքարշս մահկանացուաց, և տայ ամբարտաւան ոգւոյն բարբառել. «Ես եմ, և չեք ոք իմ ընկեր [1]»։ Քանի՞ թշնամի էր արհամարհող աչաց դշխոյս բարեպաշտ, և յայնպիսում դերակայ բարձրութեան՝ ո՞ հետեւ երթեք 'ի թագուհիս յայս զդոյզն ինչ վնասութեան միտս, կամ զարհամարհող կերպարանս։

Յաւելու ասել Դաւիթ. «Ոչ գնացի ես ընդ մեծամեծս, և ոչ ընդ այնոսիկ՝ զոք սքանչելի էին քան զիս»։ Հարկանեմ ասա զանչափութիւնն՝ յոր սողոսկին ինքնին մեծազօր իշխանութիւնք։ Ամբարտաւանութիւն՝ որ հանապազ վերանայ [2], յետ ձկտելոյ առ որ հաստատուն ինչ կայ 'ի փառս մարդկան կամ դժուարափուշ, յանհեղեղս կրթէ զցանկութիւն իւր, և անկանի յախտուն 'ի խորհուրդս անմտութեան, իբրև զգոռող թագաւորն, — արժանի պատկեր ապստամբ հրեշտակին, — յորժամ ասէր 'ի սրտի իւրում. «Ելից յերկինս, 'ի վերոյ քան զաստեղս երկնից արկից զաթոռ իմ,.. եղէց նմանող բարձրելոյն [3]»։ Ոչ կործանիմ, ասէ Դաւիթ, յոճիրս այսպիսիս և ահա հպարտութիւն քամահեալ 'ի մոլորութիւնս իւր։ Իսկ յետ այսպէս նկուն առնելոյ զնա յամենայն կողմանց ընդ որս թուէին կամել վերանալ, տապաստ արկանէ զնա Դաւիթ բանիւքս այսոքիւք [4]. Եթէ, ասէ, ոչ խոնարհեցայ, այլ հպարտացուցի արդեօք զանձն իմ, կամ ըստ թարգմանելոյ սրբոյն Հերոնիմեայ, Եթէ ոչ լռեցուցի զանձն իմ, եթէ ոչ կարկեցի զփաղաքշող խորհուրդս՝ որ դան անդադար փքացուցանել զսիրտս մեր։ Եւ ապա այսպէս կնքէ զգեղեցիկ

1 Եսայ. Խէ, 8։
2 Ամբարտաւանութիւն ասելեաց քոց վերասցի հանապազ. Սաղմ. ՀԳ, 23։
3 Եսայ. ԺԴ. 13։
4 Սաղմ. ճԼ, 2։

սաղմոսս զայս. Եղև անձն իմ, ասէ, որպէս մանուկ հատուցեալ 'ի ստենէ մօր իւրոյ. անձամբ զանձն սարտուցի յանուշեալ մարդկեղենն փառաց՝ որ չէին ինձ բաւական 'ի մնունդ, առ 'ի ջամբել անձին իմոյ հաստատուն կերակուր։ Այսպէս հոգին վեհ տիրէ պերճացելոյ մեծութեան, և տեղի ուրեք չթողու նմա այնուհետև։ Զիք բնաւ տուեալ Դաւթի չքնաղ քան զայս պատերազմ։ Ոչ, եղբարք իմ, ոչ փոքրացիք խորտակեալք, ոչ արքք պատառեալք 'ի ձեռս նորա, ոչ ինչ են առ պարտութեամբ մեծամտութեան իւրոյ. իսկ զոր 'ի հանդիսի անցուցանեմք զսուրբ դշխոյս, հաւասարեաց նմա 'ի փառս չքնաղ յաղթանակին։

Սակայն գիտաց սա երևել աշխարհի ամենայն շքով մեծութեան իւրոյ։ Ոչ 'ի նանիր ինչ ընկալան թագաւորք, որպէս և ոչ արեգակն, զճաճանչն պատկեալ զիւրեամբք. կարևոր պիտոյ է այն ազգի մարդկան. և 'ի հանդիսս և 'ի զարդ տիեզերաց՝ պարտին պահպանել զմեծվայելչութիւն՝ որ նշոյլ նմին ևեթ է աստուածայնոյն։ Դիւրին իսկ էր դշխոյս աղքեցուցանել զբնիկ մեծութիւն իւր, ծնեալ յարքունեաս՝ ուր պերճութիւն՝ երևել սիրէ ամենայն յօրինուածով, և 'ի հօրէ՝ որ գիտաց պահել շնորհք, որպէս և սեփական իմն նախանձու, որ ինչ միանգամ օրէնքն պատուոյ և արքունեաց վայելչութիւնքն կոչին 'ի Սպանիա, սակայն սա առաւել սիրէր համ դնել Հոխութեանն, և շքացուցանել զայն առաջի Աստուծոյ՝ քան փայլակնացուցանել յաչս մարդկան։ Վասն որոյ տեսանէաք զսա ընթացեալ առ սուրբ սեղանն, անդ ճաչակել ընդ Դաւթի ըզհանդիսատ խոնարհութեան. խորասուզեալ յիւրական աղօթանոցին՝ ուր հակառակ ամբոխից արքունեացն՝ զԵղիայեան գտանէր նա զԿարմէլոս, զՅովանոս անապատն, և զլեառնն յաճախ վկայ ակնջալուր հեծութեանցն Յիսուսի։

Ուսայ 'ի սրբոյն Աւգոստինոսէ, զի «Ոգի մտադիւր՝ անձամբ անձին կազմէ իւր միայնութիւն»։ Այլ մի խաբեսցուք, եղբարք իմ. գիտել պարտ է գտանել ժամն ճշմա-

բիա միայնաւորութեան, եթէ կամք իցէն պահել զզօրութիւնս հոգւոյն։ Այսպէս է զարմանալ ընդ անվրդով հաւատարմութիւն դշխոյիս առ Աստուած. ոչ զբօսանք, ոչ աշխատութիւնք Ճանապարհաց, և ոչ այլ ինչ զբաղումն, չտային նմա կորուսանել զսահմանեալ ժամս խոկմանց իւրոց և աղօթից։ Գոյր ինչ նմա կալ 'ի տեւ կրթութեանցս, եթէ չէր Ճաշակեալ զթաքուն մանանայն՝ զծանուցեալն միայն որում զսուրբ քաղցրութիւն նորա առնուցու [1]։ Անդ ասէր նա ընդ Դաւթի. Եգիտ աղախին քո, Տէր, զբերան իւր, կալ առ քեզ յաղօթս զաղօթս զայսոսիկ. «Եգիտ ծառայ քո զսիրտ իւր [2]»։

Յո՞ գնայք դուք, սիրեալք մեր։ Զի՞նչ. և 'ի ժամ անդամ աղօթից զցնորեալ միտգ թափառական թողուք ասատանդեալ. խորհուրդք փառասիրութեան ձերոյ և առաջի Աստուծոյ դառնան գան առ ձեզ, նա և խնդրուածք ես պաղատանացդ լինին։ Որով առ մարդիկ խօսիք մոլեգնութեամբ զձերոց ցանկութեանցդ, նովին մատչիք բարբանջել և առաջի աստուածութեան, զի երկինք և երկիր 'ի շահ անձանց ձերոց արբանեկեսցեն. որով փառասիրութիւն ձեր՝ զոր չկարացանել անկ էր աղօթից՝ բորբոքի անդէն, հուր օտար յայնմանէ՝ զորոյ զվառումն խմանայր Դաւիթ 'ի խորհուրդս իւր [3]։ Ո՛վ, ո՜ տայր ձեզ մանաւանդ ասել ընդ արքային մեծի այնմ, և ընդ աստուածասէր դշխոյն՝ զոր պատուեմք. Ո՜ Տէր, եգիտ ծառայ քո զսիրտ իւր։ Դարձուցի զփախատականն զայն, և աւասիկ առաջի քո ամենեքին։

Հրեշտակ սուրբ [4], որ ոսոիկանդ կայիր աղօթից սուրբ թագուհւոյս, և մատուցանէիր զվնդրուկն զայն 'ի վերոյ քան զամպս՝ ծխել 'ի սեղանն երևեալ երանելւոյն Յովհան-

1 Յայտ. Բ, 17։
2 Բ. Թագ. Է, 27։
3 Սաղմ. ԼԸ, 4։
4 Յայտ. Ը, 3։

նու յերկինս, աղէ պատմեա մեզ զհաւանդն սրտին՝ ասատուածեղէն սիրոյն վերաւորելոյ. երևեցո մեզ զյորդահոսանս արտասուացն զոր հեղոյր դշխոյս առաջի Աբարչին 'ի վերայ մեղաց իւրոց։ Իսկ զիարդ. իցէ՞ն և յանբիծ ոգիսն ողբք և աղաղակարշանք ապաշխարութեան։ Այս անշուշտ. քանզի և գրեալ իսկ է, թէ չիք ինչ անարատ 'ի վերայ երկրի, և զի թէ ասիցէ ոք մեզս ինչ չունել՝ զանձն իւր խաբէ [1]։ Այլ այն թեթև մեղք են. թեթևք առ այլով, և ես վկայեմ, թեթևք ըստ ինքեան. իսկ դշխոյս՝ այնպիսի ինչ ոչ Ճանաչէ։ Զնոյն կրէ 'ի սրտին ամենայն հոգի անմեղ. և դոյզն իսկ ինչ շամանդաղ՝ նշմարի 'ի պատմուճանս իւր՝ որ չև են աղտեղեալ, և լուսաւոր սպիտակութիւն նոցա նշաւակէ զամենայն արատ։ Յայժ գիտունս գտանեմ ես ատանոր զքրիստոնեայս։ Քրիստոնեայդ, կարի ինն տեղեակ ես դու խորանաց ներելի և մահուշափ մեղաց։ Եւ զի՞նչ. հասարակ անուն մեղաց չիցէ բաւական ատելի առնել քեզ զերկոսեան։ Գիտիցես՝ զի թեթևն թուեցեալ մեղք 'ի ծանր փոխին յաՃախութեամբն յերեսաց դառնաբեր սերմանց զոր 'ի միտսն արկանեն։ Զայս ուսուցանեն միաբան ամենայն վարդապետք սուրբք՝ ընդ սրբոյն Աւգոստինոսի և Գրիգորի։ Գիտիցես՝ զի որ 'ի բնէ ներելի լինելոց էին մեղք, 'ի մահուշափ փոխին սատակութեամբ յօժարութեանն։ Անմեղ իսկ հեշտութիւնք յայն փոխին՝ ըստ վարդապետութեան սրբոց, և նոքին եւեթ անչափ սխորժիւքն դատապարտեցին զյոգի մեծատունն։ Իսկ ո՞ այն որ գիտիցէ ըզչափ ըմբռութեանն՝ յորում ազդիցէ 'ի նոսա թոյնն մահաբեր. և ո՞չ ապաքէն յայն միտս ես է զի աղաղակէ Դաւիթ. «Զյանցուածս իւր ո՞վ կարէ առնուլ 'ի միտ [2]»։

Աստեամ ես այսուհետև զքո մնոսի գիտութիւնդ և զիցսն նրբութիւնդ, յանդուգն հոգի, որ աներկիւղ վը-

1 Յոբ. ԺԵ, 14։ Ա. Յովհ. Ա, 8։
2 Սաղմ. ԺԸ, 15։

Ճիռ հատանես. Այս մեղք զոր գործեմն անխիղճ՝ ներելի է: Անձն ստուգիւ անարատ՝ չէ այդչափ գիտաւոր: Գիտէ և զշնոյս հասարակաբար՝ թէ են ինչ մեղք ներելիք, զի հաւատք ուսուցանեն. բայց չուսուցանեն հաւատք թէ ի-ցեն և իւրքն: Երկու ինչ յանդիման ձեզ արասցեն զչափ բարձրութեան առաքինութեան իւրոյ: Գիտակ եմք, քրիս-տոնեայք, և ոչ թէ գոլութիւն սուտ մատուցանեմք առա-ջի խորանացս սրբութեան. բազում անգամ իւր խակ ին-քեան նոցին երանելի պարզմտութեամբ սրբոցն բոլորե-ցուն ասացեալ, թէ չիմանամ զիարդ մարթիցի գործել կա-մաւ մի ևՌԹ մեղս՝ թէպէտ և կարի թեթև: Ապա չասէր նա թէ ներելի է, այլ մեղք է, և դարձեալ զաղջանայր սիրա իւր անմեղ: Իսկ զի տկարութիւն մարդկային սիալոտ է 'ի մեղս ինչ, չասէր նա երբեք, թեթև իմն է, այլ դարձեալ՝ թէ մեղք է. յայնժամ 'ի միա առեալ զիւրսն, եթէ ձախո-ղանք ինչ անձին՝ տանն և աշխարհին հասանէր, անձին ևՌԹ գնէր մեղս:

Այլ զինչ այն ձախողանք, ասիցէք, 'ի մեծութեան յայնմ և յաւէտաղուարճ բարեկենդանութեան: Համա-րիցք ուրեմն՝ թէ նեղութիւնք և վիշք անհնարինք չդարա-նիցին ընդ ծիրանեօք, կամ թէ արքայութիւն՝ համօրէն ա-մենայն չարեաց լցէ դարման, ուտին քաղցրացուցիչ, և թոմլիչք նոցին հմայք: Փոխանակ զի վերին խնամոյն հանձա-րով, որ բարձրագունի ևս վիճակաց տալ գիտէ զհակամէտ կշռնն, մեծութիւնն այն՝ 'ի հեռուստ իբրև դերաբուն ինչ մեզ զարմանալի, դոյզն ինչ աղդէ՝ յորժամ անդէն 'ի նմին ոք լցէ ծնեալ, կամ 'ի յորդութեան անդ ընկղմի, և նմին հակառակ ծնանի 'ի փառսն նոր իմն զգայութիւն դառնու-թեանց, որոց այնչափ իմն դժնդակ են խայթք՝ որչափ ան-պատրաստ ոք 'ի կիրսն դառնիցի:

Ապաքէն ոչ յոյժ 'ի վերայ հասանեն մարդիկ այսմ ո-զորմ քնքշանաց առաքինի ոգւոցն. առ անզգայս ունին ըզ-նոսա, այնու զի ոչ միայն լսել գիտեն, այլ և զոհել զծա-

ծուկ տառապանս իւրեանց: Բայց երկնաւորն հայր սիրէ ակնարկել 'ի գաղտնիս անդ, և որպէս գիտէ պատրաստել նոցա զնաչն, ըստ այնմ կշռէ նմին և զիոխարէնսն: Համա-րիցքիք զշնոյս անխռով կացեալ 'ի գերահաչակ ճակատա-մարտսն՝ որ կուռ զմիմեանց կնի այնքան զրոյցս սքանչելիս տային մեզ: Ոչ, տեսարք. հանապազ 'ի դողման կայր, զի զկեանսն զայն պատուական՝ յոր կախեալ կայր իւրն՝ տե-սանէր կամակար համարձակ եդեալ 'ի վտանգ:

Տեսէք զարհաւիրսն. Ճառեցին ձեզ զկորստեանցն և զմահուանէ սիրատենդ զաւակացն, ամենեքեան զսիրա նորա կեղեքեցին: Այլ առաջի աչաց նկարեացուք զմանուկ արքայորդին, զոր Շնորհք ինքնին Թուէին ձեռակերտեալ, – ներեցէք ինձ զբանքս, – համարիմ տեսանել տակաւին զծաղիկն զայն անկեալ: Յայնժամ ես՝ արկածինչարի հրեշ-տակ գուժաբեր, վկայ գոյ, ակամատես արքային և զըշ-խոյիս, միոյն սայրասուր ցաւոց սրտին, և միւսոյն աղիո-զորմ կականմանցն: Եւ յայլ և այլ կերպարանս տեսի կրս-կիծ անպայման. բայց տեսի ևս յերկոսին կողմանն զնոյն յաղթօղ հաւատս. տեսի պատարագ ընդունելի զնոնարհ հոգւոյն ընդ ատուածեղէն ձեռամբն, և երկուս զոհս ար-քայական՝ որ միաբան 'ի միասին զենուին զսիրաս իւրեանց:

Տացի՞ ինձ այժմիկ արկանել զաչս յահագին սպառնա-լիս երկնից սրամտելոյ, յորժամ ընդ երկար ժամանակ թուեցաւ թէ հարկանել կամիցի և զարքայորդիս զայս, զնանդաղատելի ակնկալութիւն մեր: Ներեցէք ինձ, տեարք, ներեցէք ինձ, եթէ զարհաւիրս ձեր նորոգեմ. հարկ իսկ է, և կարեմ ասել, բուռն առնել ինձ և անձին իմոյ, զի չիք ինձ այլազգ ինչ ցուցանել զարիութիւն դշխոյիս՝ բայց այ-սու կրկնիս միայն: Տեսաք մեք յայնժամ 'ի բամբչանս ընդ մայրենի տաղնապն զհաւատն քրիստոնէի. տեսաք զԱբ-րահամ՝ ոմն պատրաստ 'ի զենուլ զԱհակ, և զկերպարանս իմն Մարիամու 'ի նուիրելն զիւրն Յիսուս: Մի՞ ինչ զանդ-տեսցուք ասել զայդ. զի Աստուած մարդ եղև առ 'ի ժո-

զովել զնոսա օրինակս ըստ ամենայն կարգի։ Դշխոյս մեծա-
հաւատ ոչ ինչ նուազ առաջի դնէ իւր կաղապար քան զՄ-
արիամ։ գարձուցանէ նմա Աստուած զորդին իւր միա-
մօր՝ զնուիրեալն նմին 'ի բեկեալ՝ բայց 'ի խոնարհ և հպա-
տակ սրտէ, և կամի զի նմա միայնոյ խոստովանեսցուք միւս-
անգամ զշնորհս զայս մեծ։

Ոչ խաբիմք, քրիստոնեայք, եթէ զամենայն ինչ աղօ-
թից ընծայեսցուք. որ զայն թեւադիրն լնէի Աստուած,
զանազ ինչ այնմ չկարէ. «Ոչ թէ, ասէ Դաւիթ, 'ի բա-
զում զօրս իւր ապրեսցի թագաւոր, և ոչ սկայ 'ի բազում
զօրութեան իւրում[1]»։ Եւ ոչ հանճարեղ խորհրդոց գրելի
ինչ են յաջողութիւնք. «Բազում խորհուրդք են, ասէ
Իմաստուն, 'ի սրտի առն»։ Ծաներունք զամբոխումն և
զվարան մարդկեղէն խորհրդոց. «Բայց, 'ի վերայ ածէ,
խորհուրդ Աստուծոյ յաւիտեան մնայ[2]»։ և 'ի քնին մտա-
նել մարդկան, կամք իւր միայն կատարին։ Ահաւասիկ, ամե-
նակալ՝ որ յորժամ կամի «քաղէ զոգիս իշխանաց[3]», թո-
ղու և զայն 'ինոսա ըստ իւրում կամացն 'ի մեծ ևս ամօթ
նոցին, և «լցմբռնել զնոսա 'ի խորագիտութեան իւրեանց[4]»։
«Զի ոչ է մարդոյ իմաստութիւն, ոչ արութիւն և ոչ խոր-
հուրդ առ Աստուած[5]»։

Մակարեանքն քաջ էին, և սակայն գրեալ է, թէ ա-
ռաւել քան զինուքն՝ աղօթիւք խնդրուածոց տային Ճա-
կատս[6], վստահացեալք յօրինակն Մովսիսի՝ զի ձեռք առ
Աստուած ամբարձեալք՝ քան զհարկանելեսցն առաւել
փլուզանեն զառաջն։ Իբրև ամենայն ինչ առապէր առ ոտս
Լուդուիկեայ, և հասեալ համարեցաք զաւուրս սքանչե-

1 Սաղմ. ԼԳ, 16։
2 Առակ. ԺԹ, 21.
3 Սաղմ. ՀԵ, 13։
4 Յոբ. Ե, 13։ Ա. Կորնթ. Գ, 19։
5 Առակ. ԻԱ, 30։
6 Բ. Մակ. ԺԵ, 25։

լեաց տեսանել, յորս պարիսպք անկանէին 'ի ձայն փողոց,
Ժողովուրդք ամենայն առ դշխոյս գարձուցանէին զաչսն, և
'ի տաճարն իւրմէ հատեալ անկեալ համարէին զիպյլա-
տակունսն սատակիչս քաղաքաց քաղաքաց։

Զի եթէ աղօթից շնորհն Աստուած զանցաւոր յաջո-
ղուածս, քանիսն առաւել պարգևեսցէ նոցա զՇնմարիտ
բարին, զառաքինութիւնս ասեմ։ Այս բնաւոր արդասիք
են ոգւոյ՝ աղօթիւք միացելոյ ընդ Աստուած. աղօթք որ
ընդունին մեզ զայնս՝ ուսուցանեն և գործել զնոյնս, ոչ
միայն իբրև զկարևոր ինչ, այլ և իբրև առեալս «'ի Հօրէն
լուսոյ՝ ուստի ելջանեն առ մեզ ամենայն պարգևք կատա-
րեալք[1]»։ և անդ իսկ է լուսն կատարելութեան, զի խո-
նարհութեանն է հիմն։

Այսպէս Մարիամ-Թերեզա աղօթիւք յանկոյց յանձն
իւր զամենայն առաքինութիւնս։ Անդասին 'ի մատաղ տիոցն,
'ի յոյզս անդ աղմկեալ արքունեացն 'ի ժամանակին, նա
եղև մխիթար և միայն ապաւէն հիւանդոտ ծերութեան
հօր իւրոյ արքայի։ Սկեսուրն իւր թագուհին, ընդ հակա-
ռակս այդր տեսչի անուան, եգիտ 'ինմա ոչ մեծարանս և
եթէ առ ինքն, այլ և գութ գորովոյ, զոր ոչ ժամանակ,
ոչ հեռաւորութիւն չկարացին շքջել. ուստի յողբս հա-
մակի նա յանչափս, և ոչ կամի ընդունել մխիթարութիւն։
Զոր սրտ, զոր մեծարանս, զոր հպատակութիւն չկալաւ
նա առ արքայ. միշտ զգաստ առ այս մեծ թագաւոր, միշտ
փառաց նորա նախանձաւոր, միայն մտադիր օգտի տերու-
թեան իւրոյ, անխոնջ 'ի ճանապարհս, և երանելի՝ միայն
եթէ ընդ նմա գտանիցի. հուսկ վերջին, կէն մի՝ յորում
երանելին Պաւղոս ունէր տեսանել զԵկեղեցի զՔրիստոսիս
եկեալ և յարեալ 'ի կամս նորա յաւէժակայ հաճու-
թեամբ[2]»։

1 Յակ. Ա, 17։
2 Եփես. Ե, 24։

Եթէ իշխէաք հարցանել զմեծ արքայորդիս՝ որ բաղում բարեպաշտութեամբ հատուցանէ ասա նմա զվերջին պարսսն, թէ որպիսի մայր կորոյս, հեծեծանօքն տայր մեզ պատասխանի. և ես 'ի դիմաց նորա ասացից ձեզ զոր ինքս թեամբ տեսի, և երկրորդեմ զարմացմամբ, թէ անպատում գուութք Մարիամու-Թերեզայի շարժէին առ հասարակ 'ի շնչել 'ինա զհաւատս, զաստուածպաշտութիւն, զերկիւղն Աստուծոյ, զանխզելի կապ ընդ արքայի, զդրով գթոց առ տառապեալս, զանայլայլակ հանապազորդութիւն յամենայն պարսս պատշաճից, և զոր ինչ միանգամ դրուատեմքս 'ի վարս արքայորդւոյս:

Խօսեցայց ինչ և զբարեբարութենէ դշխոյիս, զորոյ բաղում անգամ առեալ են զփորձ պաշտօնեայք նորուն. և հնչեցուցից առաջի սրբութեան սեղանոցս զգեր և զկառաջ թախանձալից տան իւրոյ: Եւ դուք, աղքատք Յիսուսի, յորոց ոչ էաս միայն չժուժայր նա լսել զսպառել դանձուց իւրոց, դուք նախ կամաւոր աղքատքդ, ողջակէզք Յիսուսի, կրօնաւորք, կուսանք սրբանուէրք, մաքրափայլ ոգիք՝ զորս ոչ արժէր աշխարհս, և դուք տնանկք՝ յոր անուն և կոչիցիք, տնանկք ծանօթք, տնանկք ամաչեցեալք, ցաւոտք, հաշմք, խեղանդամք, «Նշխարեալ մեացորդք մարդոց» ըստ սրբոյ Նաղիանզացւոյն Գրիգորի [1]. զի զընչխոյս մեծարէր 'ի ձեզ զամենայն Նշանակս խաչին Յիսուսի. դուք արդ՝ որոց հասանէր նա յօգնութիւն ուրախութեամբ, որոց երթայրն 'ի տես 'ի փոյթ սրբութեան, որոց 'ի սպասու կայր հաւատովք, երանի զանձն համարեալ մերկանալ 'ի մուրացածոյ մեծութենէն, և երկրպագել՝ 'ինուաստութեան անդ ձերում՝ փառաւոր աղքատութեանն Քրիստոսի. զոր արդեօք սիրալի դողութիւն քարողելիք դուք հեծութեամբք ձերովք 'ի պատիւ փառաց դշխոյիս, եթէ էր ինձ համարձակութիւն մուծանել զձեզ 'ի վեհափառ

1 Ճառ ԺԶ:

պայս տաճան: — Ընկալ, հայր Աբրահամ, 'ի գոգ քո զժառանգաւորս զայս քոյին հաւատոցդ, զսպասաւորս աղքատաց իբրև զքեզզ, և զարժանի գտանելոյ 'ի նոսա ոչ էս զհրեշտակս, այլ զինքնին խակ զՔրիստոս Յիսուս: — Զի՞նչ էս ասացից, լուարուք զամենայն 'ի մի բան. դուստր, կին, մայր, տանտիկին, թագուհի, որպիսի ինչ սիրաք մեր կարէին սահմանել. և առաւել քան զայդ ամենայն քրիստոնեայ, կատարեաց նա զամենայն զպարտս իւր առանց մեծամտութեան, և խոնարհ եղև ոչ միայն յամենայն 'ի բարձրութեան իւրում, այլ և 'ի բնաւ խակ առաքինութիւնսն:

Մեկնեցից կարճառօտիւք և զմիւս անուանսն երկոսին զոր տեսանեմք գրեալ 'ի խորհրդաւոր սեանն Յայտնութեան և 'ի սրտի դշխոյիս: Անուամբ սրբոյ քաղաքին Աստուծոյ՝ Նորոյն Երուսաղէմի, քաջ խակ խելամուտ էք, տեարք, զի իմանալի է եկեղեցին ուղղափառ. քաղաք սուրբ՝ որոյ ամենայն քարինք իւր կենդանի են [1], Քրիստոս Յիսուս՝ հիմն, ընդ որում և ինքանէ յերկնից՝ զի 'ինամ հաստատեալ է իբրև 'ի գլուխ, յորմէ ամենայն անդամքն առնուն կենդանութիւն. քաղաք տարածեալ ընդ ամենայն երկիր, և բարձրացեալ մինչև յերկինս՝ անդ դասաւորել զքաղաքացիս իւր: Յանուն եւեթ եկեղեցւոյ՝ հաւատք դշխոյիս զուարթանայր բովանդակ: Բայց հարազատ դուստր եկեղեցւոյ՝ ոչ շատացեալ ողջագուրել զսրբութեան նորա վարդապետութիւն՝ սիրէ և զոբենապահութիւն կարգաց պաշտամանց նորա, զորս կարևոր մատն համարի արտաքին գործոց բարեպաշտութեան:

Եկեղեցի ուսեալ յԱստուծոյ և խրատեալ առաքելոցքն սրբոցք՝ այնպէս կարգաւորեաց զտարին, զի ընդ վարուց՝ խորհրդոց՝ քարոզութեան և վարդապետութեանն Քրիստոսի՝ անդ գտանի և Ճշմարիտ պտուղ այդր ամենայ-

1 Ա. Պետր. Բ, 4, 5: Յայտ. Գ, 12:

նի 'ի սխալի առաքինութիւնս ծառայից իւրոց և 'ի սրբոցն օրինակս, և համայն ասել՝ խորհրդական իմն հակիրճ գրեալ խաւորութիւն հնոյ և նորոյ կտակին և ողջոյն եկեղեցւոյ պատմութեանն: Նովաւ ամենայն ժամանակք տարւոյն շայեկան են քրիստոսասիրաց, ամենայն ինչ լի է Յիսուսիւ՝ որ համակ աքանչելին է ըստ մարդարէին, ոչ յինքեան եւեթ, այլ և 'ի սուրբս իւր [1]: Ի դիմակս դիմակս յայսոսիկ՝ որ յանդին առհասարակ 'ի միութենն սուրբ՝ սակայ պատուիրեալ 'ի Քրիստոսէ, անմեղ և աստուածասէր անձն՝ երկնաւոր քաղցրութեամբքն հանդերձ գտանէ հաստատուն կերակուր և հանապազորդ արծարծումն եռանդեան: Անդ խառնեալ կան ծոմապահք 'ի դէպ ժամանակս, որպէս զի ցանգ փորձութեանց և մեզաց 'ի նեղքոյ անկեալ հոգին՝ պնդեսցի և մաքրեսցի ապաշխարութեամբ: Այս ամենայն բարեպարիշտ օրինապահութիւնք բերեին յանձին զշնոյս զերանելի արդիւնսն զոր խնդրէ և եկեղեցի. յամենայն ծոմս նորոգէր նա զանձն, պատարագէր զանձն յամենայն ծոմս և յամենայն պահացողութիւնս: Ի Սպանիա՝ այլ օրէնք են յայսմ քան զԳալլիոյ. բայց Թագուհիս իսկ և իսկ հպատակեաց. սովորութիւնն ոչինչ կարաց սանանել կարգին, և երկիւղած օրինապահութիւն զշնոյս՝ զվափիկութիւն մտացն խղճի յայտ առնէր:

Ո՞ այլ ոք առաւել յօգուտ արկ զբանն «Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ [2]», յորում ուսուցանէ մեզ Քրիստոս զգեղեցիկ օրէնսն ընթանալոյ 'ի Ճանապարհս Աստուծոյ ընդ առանձին առաջնորդութեամբ իւրոց ծառայիցն՝ որ յիւրում եկեղեցւոջ զնա իշխանութիւն վարեն: Հաւք խոստովանութեան դշնոյիս՝ ամենայնի կարօղք էին 'ի վերայ նորա 'ի գործս պաշտաման իւրեանց, և չէր ինչ առաքինութիւն՝ յոր ոչ կրթէր իւրով հնազանդութեամբն: Զոր մեծարանս

1 Եսայ. Թ, 6: Պաղմ. ԿԷ, 36:
2 Ղուկ. Ժ, 16:

չունէր նա առ քահանայապետն մեծ՝ փոխանորդ Յիսուսի Քրիստոսի, և առ ամենայն ուխտ եկեղեցւոյ: Ո՞վ կարիցէ պատմել՝ որչափ հեղեալ իցէ արտասուս 'ի վերայ հերձուածոցն հանապազ երկարելոց, զորոց և ոչ ըստ արժանի հեծութեամբք մարթի հայցել զկատարած: Զայնն անգամ և սաստիկ հերձուածոյ՝ սոսկումն էր դշնոյիս, որպէս և ամենայն անձին բարեպաշտի: Այլ մի ոք պատրեսցի. Աթոռն սուրբ՝ ոչ երբեք մոռացի զԳալլիա, և ոչ Գալլիա հեստեսցէ առ սուրբ Աթոռն: Եւ որք 'ի շահ անձանց՝ ըստ պատուիրանաց խորամանդութեան իւրեանց՝ պատրուակ առեալ զբարեպաշտութիւն, թուին կամել գրգռել զԳահն սուրբ ընդդէմ Թագաւորութեանս՝ առաջին ապաւէնն եղելոյ նմա յամենայն ժամ 'ի վերայ երկրի, խորհել պարտին՝ թէ Գահ մի այնպիսի բարձր՝ որում այնչափ ինչ շնորհեաց Քրիստոս, չառնու յանձն առ 'ի մարդկանէ շողոմս, այլ պատիւ եւեթ ըստ օրինի՝ խորին խոնարհութեամբ հանդերձ. և զի կայ նա 'ի ձգել զաթեղերս յիւր միութիւն, և 'ի նոյն կոչել հուսկ ուրեմն զամենայն հերձուածողս. և զի որ անչափն ինչ է, ոչ միայն յանկուցիչ չէ, այլ և ոչ հաստատուն և տեւական:

Ընդ սուրբ անուանն Աստուծոյ և ընդ անուան սրբոյ քաղաքին՝ նորոյ Երուսաղեմի, տեսանեմ էս, տեարք, 'ի սրտի աստուածասէր դշնոյիս անուն նոր՝ զՔրիկէին: Զի՞նչ է, Տէր, անուն քո նոր, եթէ ոչ զոր յայտն առնես ասելով. «Ես եմ հացն կենաց, և մարմին իմ Ճշմարիտ կերակուր է [1]». և թէ «Առէք կերայք, այս է մարմին իմ [2]»: Այս նոր անուն Կենարարին՝ սրբոյ խորհրդոյ Գոհութեանն է, անուն բարեշնորհ յօրինեալ, որ յերկրպագելի խորհրդեանն ցուցանէ մեզ աղբիւր ողորմութեան, սիրոյ սքանչելիս, յիշատակ և բովանդակութիւն ամենայն շնորհաց,

1 Յովհ. Զ, 48, 56:
2 Մատթ. ԻԶ, 26:

և զԲանն ինքնին գլխովին փոխեալ 'ի շնորհ և 'ի քաղցրութիւն ամենայն հաւատացելոց։ Ի խորհուրդս յայս՝ նոր է ամենայն. նոր ուխտ է այս Փրկչին մերոյ, և անդ սկիզբն առնի ըմպելոյ նորոյ բաժակին՝ [1] որով զմայլեալ է երկնաւորն Երուսաղէմ։ Բայց յարբունն նորին ասա 'ի վայրիս փորձութեան և մեղաց, պարտ է ապաշխարութեամբ պատրաստ լինել։ Աւ երկոսին խորհուրդդ յաճախեր դշխոյս՝ նոր 'ի նորոյ եռանդեամբ։ Ի բուն պայմանի իւրում տեսանէր զանձն խոնարհամիտ թագուհիս, յորժամ առ ոտս քահանայի կայր որպէս մեղապարտ, ակն կալեալ ողորմութեան և դատակնքին Յիսուսի Քրիստոսի։

Բայց խորհուրդն սուրբ՝ էր նորա սէր. հանապազ քաղցեալ երկնաւոր կերակրոյս, և միշտ դողացեալ յընդունելն, թէպէտ և ոչ ըստ ըղձիցն բաւականի հաղորդեալ լիներ, ոչ դադարէր առ խոնարհութեանն և համեստութեան քրթմնջել զյաճախ հաղորդութեանցն հրամայելոց նմա։ Այլ ո՞ կարէր զլանալ անմեղութեան՝ զօրէնսն սուրբ, և զՅիսուս՝ կենդանի և անբիծ հաւատոցն։ Սրբոյն Աւգոստինոսի պատուէր է՝ չափ դնել հաղորդութեան սուրբ օրինացն՝ յորժամ եթէ 'ի յափրութիւն դարձցի։ Իսկ ասա էր տեսանել միշտ եռանդն նոր, և զգեղեցիկ սովորութիւն ջան 'ի գործ առնելոյ հաղորդութեամբն լաւագունի պատրաստութեան 'ի հաղորդութիւն՝ եթէ զլի և լի գոհացողութիւն վասն հաղորդն լինելոյն։

Սովին գեղեցիկ կրթութեամբք եհաս դշխոյս 'ի կէս իւր վերջին՝ անկարօտ լեալ այլոց ինն պատրաստութեան ունելոյ առ երթն այն ահագին բաց 'ի սուրբ կենացն. և մարդիկ, միշտ յանդգունք 'ի դատել զայլս, առանց ինքեանց և 'ի թագաւորս, զի 'ի դատաստանս մեր՝ յանձինս եթէ անիրաւեմք, մարդիկ, ասեմ, յամենայն կարգէ՝ բարեգործք և այլք՝ տեսին զդշխոյս այնպիսեաւ ինն շատպ

1 Անդ, 28, 29։

տագնապաւ յափշտակեալ յանկարծակի յաստոջ անդ հասակին, և ոչ խռովեցան ընդ փրկութիւն նորա։ Ուստա՛ր ոչ այսուհետև, քրիստոնեայք, մանաւանդ որ չմարթեքդ ընդեղանել 'ի խոկումն մահու, մինչև արհամարհեսջիք որում յաղթեացն Յիսուս, կամ թէ սիրիցէք ևս՝ որ վախճանն առնէ մեղացս և 'ի Ճշմարիտ կեանսն մուծանէ, ուսարուք այլ ինն ազգ կապտել զնա 'ի զինուցն, և կալցուք յանձին զգեղեցիկ օրէնսն՝ որով անաշխատ 'ի կռուելոյ ընդ մահու՝ ոչ խիք կարօտեսցի ոք, բայց միայն դուն գործելոյ սուրբ առնել զկեանս իւր։

Գայ՛ցիս յաւուրս մեր երկուս եռես թագուհիս՝ բարեպաշտութեամբ քան տոհմիւն միացեալս, որոց մահն, նոյնպէս պատուական առաջի Աստուծոյ, թէպէտ և այլով և այլով հանգամանաւք, 'ի չքնաղ շինութիւն եղև համբէն Եկեղեցւոյ։ Իմանայք քաջ զի բանքս հային Աննա (Բ) աւասրիական և 'ի դուստր եղբօր նորա, նա մանաւանդ իւր, 'ի սիրելի, 'ի Մարիամ-Թերեզա. Աննա՝ յանցեալ հասակի, և Մարիամ-Թերեզա՝ յաստիս անդ, բայց երկոքին՝ յայնպիսում առողջ բնութեան՝ մինչև խոստանալ մեզ թուէին զբախտ վայելից նոցին ընդ դար մի ողջոյն, արտաքոյ ամենայն ակնկալութեան բարձան 'ի մէնք, մին երկար հիւանդութեամբ, միւսն յեղակարծ հարուածով։ Աննայն 'ի հեռուստ զգաստ եղեալ՝ անողորմ և անբժշկական սաստիւ, եռես զի մեղմաքայլ գալով դայր մահն, և նմա միշտ ահագին երևեցելով կերպարանօքն. Մարիամ-Թերեզա՝ ընդ հարկանել ցաւոցն անդէն և յափշտակեալ, կենդանի և ամբողջ գտանի 'ի բուռն մահուն առանց խակ գոգցես յակն զայն արկանելոյ։

Ի մահաղեկոյց յայն ազգումն՝ մեծահաւատն Աննա ժողովէ զամենայն զօրութիւնս իւր պատրաստեալս երկար կրթանօք բարեպաշտութեան, և հայի անխռով յամենայն քայլափոխս մահուն. խոնարհեալ ընդ ձեռամբն Աստուծոյ՝ շնորհ ունի նմա զայնմ ազգեցութենէ, յաճա-

խէ զողորմութիւնն՝ միշտ զեղուն, յաւելու 'ի մշտաբոր-
բոք եռանդն իւր հոգևոր, կրկին և կրկին խնամով մաքրի
'ի ցանգ ճշգապահանչ քննութիւն մասին խղճի. որպիսի
յորդորմամբ հաւատոց և սիրոյ ակն յանդիման մեր ընկա-
լաւնա զթոչակն սուրբ: Մարիամու-Թերեզայի ոչ այլ ինչ
պիտոյ եղև 'ի գործս յայսոսիկ քան զընդելական եռանդն
իւր՝ առանց պէտս ինչ մահուն ունելոյ՝ յարծարծանել
զաստուածպաշտութիւն իւր, ինքնին շատ խիստ վառեր հա-
նապազ բարեպաշտութիւն նորա, և 'ի զօրութեան անդ
իւրում անդադար յաճումն թեւակոխեր:

Զինչ ասասցուք, քրիստոնեայք, զերկոցունց գշխ-
յիցս: Մինոլն ուստոյ մեզ Աստուած՝ որպէս յօգուտ վա-
րել իցէ զժամանակ, խակ միւսն եցոյց՝ զի կեանք Ճշմարիտ
քրիստոսասէր չունի ինչ այնմ պէտս: Քանզի իմ իմիք մը-
նամք, քրիստոնեայք: Քրիստոնէի չէ արժան յայնժամ
միայն գուպարած գնել ընդդէմ մահու, յորժամ 'ի վերայ
գայցէ առնուլ սանել զնա: Քրիստոնեայ մշտաջան 'ի մարտ
պատերազմի ախտից իւրոց՝ հանապազօր մեռանի ընդ ա-
ռաքելոյն [1]: Քրիստոնեայ՝ չէ երբէք կենդանի յերկրի, զի
յամենայն ժամ 'ի մեռելութիւն կրթի, և է մեռուցումն՝
Ճաշակ իմն և ուսումն և սիրգբն մահուան: Իցեմք կենդա-
նի, քրիստոնեայք, իցեմք ինչ կենդանի: Ամբս զորս հա-
մարեմք, և ուր զամենայն զոր 'ի համար արկանեմք՝ ոչ ևս
մեր ինչ է, իցեն ինչ կեանք, և իցէ հնար չիմանալ զոր
կորուսանեմքս անդադար ընդ տարեացն: Հանգիստ քնոյ
և կերակուր ոչ ապաքէն անզոր դարմանք իցեն հանա-
պազորդ հիւանդութեան որ մաշէ զմեզ. և զոր վերջինն
անուանեմք՝ զինչ այլ իցէ ուղիղ տեսութեամբ, քան թէ
կրկնումն և յետին արկած ախտին, զոր 'ի ծնել բերեմք
յաշխարհ:

Ո՞ր առողջութիւն ծածկէր 'ի մէնջ զմահն որջայեալ 'ի

[1] Ա. Կոր. ԺԵ, 31:

ծոցի դշխոյիս. որպէս զհետ սպառնալեացն արագ եհաս
հարուածն. և ամենայն փառաւորութեամբն որ զնուրև բո-
լորեալ կայր՝ ուր արդեօք գտանէր դշխոյս մեծ, եթէ չէր
այնպէս 'ի պատրաստի: Յանկարծելուեաց գայ ժամանէ
վայրկեանն օրհասական, յորում չունի ինչ նմա երկիր՝
բայց միայն արտասուս: Զինչ կարեն այնչափ բազմու-
թիւն ժիրաժիր պաշտօնեից որ շուրջ զմահճաքն: Ինքն իսկ
արքայ զինչ կարող էր. նա ինքն, տեարք, այն որ ամենայն
զօրութեամբն և արութեամբ՝ ցաւոցն չհանդուրժէր: Ա-
մենայն որ զնովաւ ինչ պար առնու՝ տագնապէ զնա. Ար-
քայեղբայր և Բամբիշն՝ եկեալք նմին 'ի ցաւակցութիւն,
ցաւոքք իւրեանց յորդեին զնուրան: Եւ դու, արքայորդիք,
զինչ կարէիր՝ բայց հեկեկանօքդ զսիրտ նորա խոցել. շատ
խիստ վիրաւոր էր այն գորովալիր յիշատակաւ սիրոյն, զոր
և յետ քսան և երից ամաց անցելոց՝ գտանէր նա միշտ նոյն-
պէս կենդանի:

Հեծեմք ընդ նա, արտասուեմք զնա. աւադիկ զոր կարէ
երկիր այնքան գգուեցելոյ բամբշանն. աւադիկ զոր ունիմքս
տալ նմա, ողբք և աշխարանք անօգուտ: Սխալեմ. են մեր
և պաղատանք աղերսալիք, է մեր և պատարագս սուրբ,
սփոփումն վշտացս, քաւութիւն անդիտութեանցս և մե-
ղանացս մեացուածոց: Այլ խորհեցուք՝ զի պատարագս
անբաւազօր, յորում բովանդակ է խաչն Յիսուսի, պա-
տարագս այս՝ անպիտան լիներ դշխոյիս, եթէ ընտիր վա-
ղուքն չէր լեալ շնորհի սորին արժանի հասանելոյ մինչև
առ ինքն. թէ ոչ, ասէ Աւգոստինոս սուրբն, զինչ ազգիցէ
պատարագս այս. դիւր և ոչ մի առ մեռեալս, կենդանեաց
սփոփութիւն դուշնաքեայ: Վասն որոյ՝ փրկութիւն հա-
մակ զաստի կենացս կախի, որոյ հաստատ խուճապական
փախուստ խաբէ զմեզ միշտ. «դամ որպէս գող», ասէ
Յիսուս [1]: Եւ արար որպէս ասացն. եկն առնուլ յանկար-

[1] Յայտ. Գ, 3:

ծակի զդշխոյս՝ մինչդեռ քաջառողջն զնա կարծէաք, մինչ-
դեռ երանիկ երջանիկ զանձն տեսանէր։ Բայց օրինակ զայս
գործէ նա. փորձանս այնչափ դատնէ նա զմեզ, և այնպի-
սի ժանտութիւն 'ի մեզ հեշտալոս, զի և զանմեղանջ-
կանսն անգամ վրդովել գայ յընտրեալս իւր։ Այլ գայ,
ասէ իսկ ինքն, իբրև զգող, միշտ յանկարծահաս և անաղ-
դելի 'ի գնացս իւր. ինքնին իսկ յամենայն 'ի գիրսն իւրում
ընդ այս պանծայ։

Որպէս գոլ. ասիցէք. օրինակ անվայելուչ։ Զէ՞ ինչ
վայթ թէ նմա անպատեհ իցէ, եթէ միայն զարհուրեցուս-
ցէ զմեզ, և զարհուրանօքս փրկեսցէ։ Սոսկասցուք այսու-
հետև, քրիստոնեայք. յամենայն ժամ դողասցուք առաջի
նորա. զի ո՞ կարիցէ խուսել 'ի փայլատակել նորա, կամ
հասանել կալ 'ի վերայ՝ 'ի թաքչել նորա։ «Ուտէին, ըմ-
պէին, ասէ, գնէին, վաճառէին, անկէին, շինէին, կանայս
առնէին և արանց լինէին յաւուրսն Նոյեայ և յաւուրսն Լով-
տայ [1]», և յանկարծ եկն սատակումն կորոյս զնոսա։ Ու-
տէին, ըմպէին, հարսանիս առնէին, գործք անմեղանջ-
կանք. իսկ զի՞նչ լինիցի՝ յորժամ զանառակ ցանկութիւնս
կատարելով մեր, զքէն վրիժուցս և զծածուկ խանդանս
յագեցուցանելով, մթերելով յարկեղս մեր զգանձս անօ-
րէնութեան, առանց երբեք խորելոյ ընդ մեր ինչ և ընդ
այլոց, պատրեալք 'ի հաճոյիցս, 'ի խաղուցս, յառողջու-
թենէս, յերիտասարդութենէս, 'ի գործոցս յաջողուածոյ,
'ի սուտակասպասաց՝ ընդ որս թուելի իցեն թերևս և ան-
հաւատ առաջնորդք առ 'ի մէնջ ընտրեալք 'ի զեղծուցանել
զմեզ, հուսկ ուրեմն մերով սատապտիր ապաշխարու-
թեամբքս՝ որոց չէք ինչ 'ի վարս մեր գործեալ փոփոխումն,
այսպէս երթեալ հասանիցեմք յանկարծակի յօրն մեր 'ի
վերջին։ Յերկինս ելցէ վաճառ, «Վախճան հասեալ է,
հասեալ է վախճան,.. ահաւասիկ հասեալ է 'ի վերայ քս

1 Ղուկ. ԺԷ, 26, 27, 28։

վախճան [1]». ամենայն ինչ վախճանեսցի այժմ վասն քո։
«Համառօտս հատ՝ կինքեա [2]»։ Հարէ՛ք զփայտադ անպտուղ
որ յոչինչ է պիտանացու՝ բայց 'ի հուր. «Հատէ՛ք զծառդ
և քշտեցէ՛ք զոստս դորա, թօթափեցէ՛ք զտերև դորա և
զպտուղ դորա ցրուեցէ՛ք [3]»։ Ի մի հարուածս կորիցէ ամե-
նայն որ ինչ ընդ իւրն իցէ։ Յայնժամ յարիցեն արհաւիրք
անհնարին և կրճել ատամանց, սկիզբն այնոցիկ՝ որ 'ի գլ-
ժոխս լինելոց են։

Ո՜հ եղբարք իմ, մի կացցուք մնասցուք սոսկալի հա-
ւուածոյն. սուրն որ խղեաց զաւուրս դշխոյիս՝ տակաւին
բարձրացեալ է 'ի վերայ գլխոց մերոց. մեղք մեր յեսա-
նեալ են զսայր նորա մահազին։ «Սուր 'ի ձեռին իմում,
ասէ Տէր Աստուած մեր, սրեալ է և ջինջ. սրեալ է 'ի հար-
կանելոյ, ողորկ և ջինջ 'ի շողալ [4]»։ Տիեզերքս համօրէն սե-
սանեն զշողիւն փայլատականց նորա։ Ո՛վ սուր Տեառն,
զի՞նչ է հարուածն զոր գործեցեր. պակուցեալ կայ ընդ
այն՝ ամենայն երկիր։ Այլ զի՞նչ մեզ շահ 'ի պակուցիչ փայ-
լականէ անտի, եթէ ոչ կանխեսցուք զդուշանալ 'ի սատա-
կող հարուածոյն։

Աճապարեսցո՛ւք, քրիստոնեայք, ապաշխարութեամբ.
ո՞ յայս տեսիլ ոչ սասանեսցի։ Այլ առօրեայ խռովու-
թեանցս զի՞նչ լինիցին արդիւնք։ Վերջին խստասրտու-
թիւն։ Զի առ ատեպ ատեպ 'ի նանիր յուզմանց, անընդոստ
ամենևին այնուհետև լինիցիմք։ Զգայցե՞ք ինչ մեք ապե-
տիցն Հունդարաց և Աւստրիոյ յաւեր մատնելոց։ Բնա-
կիչք նոցին 'ի սուր սուսերի մաշեալք, և այն՝ երջանկա-
գոյնք իսկ 'ի նոցանէ. դերութիւն առեալ ածէ և այլ ևս
չարիս ոգւոց և մարմնոց. տառապեալ բնակքն այնոքիկ
չլցէ՞ն քրիստոսակրօնք և ուղղադաւանք, եղբա՞ք մեր և

1 Եզեկ. Է, 2, 3։
2 Անդ, 23. ըստ լատին թարգմ։
3 Դան. Դ, 11։
4 Եզեկ. ԻԱ, 9, 10։

անդամք յանդամոց մերոց, միոյ եկեղեցւոյ մանկունք և 'ի նոյն սեղան հացիւն կենաց սնեալք։ Զնու Աստուած զբան իւր. «Դատաստանն 'ի տանէ իւրմէ առնու սկիզբն [1]». և մնացեալքն 'ի տանն ոչ դողան։

Խոնարհեցարուք, ո՛ քրիստոնեայք, արարէք ապաշխարութիւն, արտասուօքդ ցածուցէք զԱստուած։ Լուարուք աստուածասէր դշխոյիս՝ որ քան զամենայն քարոզիչս զոչաւորագոյն բարբառի. լուարուք նմա՝ Թագաւորք, լուարուք նմա՝ Ժողովուրդք, լուր նմին՝ պերճապայծառ տէր, առաւել քան զայլս ամենեսին։ Բերանով խմով ասէ նա ցքեզ, և ձայնիւս՝ որ քեզ ծանօթն է, թէ մեծութիւն՝ էրսաղ է, ուրախութիւնն՝ վրէպ, մանկութիւն՝ ծաղիկ դիւրաթափ, և առողջութիւն՝ անուն պատիր։ Այսուհետև զանկսրուստ բարիսն լերուք Ժողովել, ուստի դիք զգօնութեան բանից երանելւոյն Գրիգորի Նազիանզու առ Թագաւորս և առ տունն արքունի. «Պատկառեցէք, ասէր, 'ի ծիրանեացդ, ակն ածէք յաստուածատուր իշխանութենէդ, և մի՛ յայլ ինչ՝ բայց 'ի բարիս արկէք զայն 'ի գործ։ Ծանիք զաւանդն 'ի ձեզ հաւատացեալ, և զոր Աստուած 'ի ձեզ կատարէ զնորհուրդն մեծ. զվերինսն՝ անձին եւթ սեփականէ, զներքինսս՝ ընդ ձեզ բարժանի. եղերուք յաստուածս Ժողովրդոյդ որ ընդ ձերով ձեռամբ, նմանօղ եղեալք աստուածեղէն բարերարութեանն և առատութեան [2]»։ Զայս խնդրեն 'ի քէն, պերճապայծառ տէր, ամենայն Ժողովրդոյ ձեղք, անդուլ դողութիւնք և ամենայն աչք զՀետ քո կրթեալք։ Ընդ Սողոմոնի հայցեա յԱստուծոյ զնմաստութիւն [3] առնել զքեզ արժանի սիրոյ Ժողովրդոյդ և աթոռոյ հարց քոց. և 'ի միտ ածելդ զպարտս քո, մի՛ ապախտ առնիցես խորհել յոր ինչ հարկեցուցանեն զքեզ անմահական արարուածք Լուդուիկեայ Մեծի, և անզուգական բարեպաշտութիւն Մարիամու-Թերեզեայ։

1 Ա. Պետր. Դ, 17։
2 Ճառ Ի։
3 Իմաստ. Թ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Թիւ (Ա) Խօսեալ 'ի Սուրբ Դիոնեսիոս, յառաջնում աւուր սեպտեմբերի 1683 ամին, առաջի պերճափառ ժառանգ որդւոյ արքային։

(Բ) Որով հարեալ էր Լուդուիկ 'ի Մարիամ Մանչինի քեռորդի Մազարենի մեծ հազարապետի Դրանն արքայի. բայց ապա իմաստութեամբ տեղի ետ, և Մազարէն 'ի սպառնալեաց թագուհւոյ մերն զիջոյց զայտու

ՃԱՌ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ (Ա.)

ԱՆՆԱՅԻ ԿՈՆԶԱԿԱԳԼԵԻԵԱՆ

ԻՇԽԱՆԱԿՆՈՋ ՊԱԼԱՏՈՒՆԻՈՅ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Անննա Կոնզակեան՝ էր երկրորդ յերից դստերացն Կարոլոսի Կոնզակագլուեան, առաջնոյն յայդ անուն, Սեպհին Նըվէռայ, Ռեդէլի, Մանտոայ և Մոնֆէրրատայ. ծնեալ՝ ի 1616։ Եբէցն՝ ի դստերս անդ՝ Մարիամ-Լուիզ՝ եղև թագուհի Լեհաց. իսկ Անննա և կրտսեր քոյր նորա՝ Բենեդիկտէ՝ պարտ բաշխի տուեալք մեծութեան երիցուն՝ որոշեցան՝ ի կրօնաւորական կեանս, և՝ ի մատաղութեան անդ տիս՝ ընկեցան՝ ի վանս։ Անննա մնաւ՝ ի Փարմուդիէ մենաստանին՝ որ՝ ի վիճակին Մելդացւոց. փոյթ և ջան յօժարեցուցանելոյ զնա յախորժակս և՝ ի սովորոյթս վանիցն՝ ուծացոյց զնա անտի։ Ի 1637 մահուամբ հօրն եղեալ յաստուածիւն և յիշխանութիւն իրաւանց իւրոց՝ երևեցաւ յարքունիս Գալլիոյ, և յետ սակաւ միոյ ամուսնացաւ ընդ իշխանին Եդուարդայ՝ միոյ յերեքտասան զաւակացն Փրետերիկեայ Ե, սեպհին Պաւիերայ, պալատունի Կոմսին Հռենոսի, որք եղեն նմա յԵլիսաբեթէ՝ ի դստերէ Յակոբայ Ա, արքայի Անգլիոյ։ Եդուարդ իշխան Պաւիերայ՝ յարկաւս տան իւրոյ՝ ապաւինեալ էր՝ ի Գալլիա. բողոքական նորադանդ գտեալ՝ հրաժարեաց՝ ի հերձուածոյն առ՝ ի պսակիլ ընդ բամբշանս Անննայի, և ծնան նմա որդիք չորք. յորոց դուստր մի՝ եղև՝ ի կին Հենրիկոսի-Յուլիոյ, իշխանին Անկիեանի, որ եկաց ապա մեծ իշխան Գոնտէի։

Պատերազմունք ապստամբաց ժամանակին՝ պատճառս եւուն նմա ցուցանել զճարտարութիւն իւր ի գործ արքունի և զյաջողութիւն ի շահել զսիրտս. այսմ վկայ դան ամենայն յիշատակարանք ժամանակին։ Պինդ կալեալ զկողմ Դշխոյի մօրն Լուդուիկեայ՝ խնամակալ տեսչի տերութեանն, բազում անգամ բանագնաց եղև ի պէտս արքունեացն, մինչեւ յոչ սակաւ խորամանգութիւնս հնարագիտութեան մինչև ի 1660, յորում յաչաց եղեալ՝ ստիպեցաւ ի կարդինալ պաշտօնէին Մազարենէ հրաժեշտ տալ ի վերակացութենէ տան դշխոյին, յոր ինքն իսկ Մազարէն կարգեալ էր զնա։ Զամս երիս մեկնեցաւ յարքունեացն ի գիւղ ուրեք, և անդ խնամատ երկիւղածութեամբ պարապեցաւ ի հատուցումն պարտաւորացն։ Ի պարծանս մեծանձնութեան իւրոյ՝ պատմի նպաստ մեծ արարեալ արծաթոյ դշխոյին Լեհաց քեռն իւրում, որ յերեսաց պատերազմացն Շուեդացի՝ ի նեղ մեծ անկեալ էր. և թէպէտ տրտունջ բազում էր Աննայի ընդ նմա, յօգուտ դշխոյի քեռն իւրոյ ոչ հայեցաւ ի նուազութիւն իւր. և այս գնացք իւր շահեցաւ զամենայն սիրտս։

Ի 1665 այրի մնաց յառնէն, և ազատութեամբն թուի համարձակագոյն տուեալ զանձն յամենայն հաճոյս իւր, մինչև ի հաւատոց անգամ անկանել, և ծաղը համարել զուղղափառ կրօնս, որպէս ինքն իսկ ասէ ի պատմութեան աբանչելի գարձին իւրոյ, զոր գրեաց ի յորդորմանէ Աբբային Ռանսէի՝ անուանի Նորոգողի կարգին Դրաբեանց։ Ջնչանաւոր հանգամանս իրին յիշատակէ Պոսիւէթ ի ճառիս։ Փոխանակ առաջին մոլորութեանց մոտ և սրտի՝ զգեցաւ զկենդանի հաւատս և զապաշխարութիւն խիստ, և երկոտասան ամբ հիւանդութեան և ցաւոց դառնութեան՝ ի կատարումն հատուցին զապաշխարութիւն նորա։ Վախճանեաց զկեանսն ի Փարիզ ի 1684, ամաց վեթասուն և ութից։

«Առի զքեզ ի ծագաց երկրէ, և ի դիտաց նորա կոչեցի զքեզ, ընտրեցի զքեզ և ոչ թողի զքեզ. մի երկնչիր՝ զի ընդ քեզ եմ [1]»։

Աստուած ինձինն բարբառի զայդ։

Մեծապատիւ Տէր,

Ո՛տայր ինձ թէ ի Ժողովն ատտ գտանէին ամենայն հոգիք հեւացեալք յԱստուծոյ, ամենեքեան որ գնեն ի մտի՝ թէ անհնար է յաղթել անձին, և ոչ պինդ կալ արիաբար ի հանդէս ճգանց և ցաւոց, և նոքա ամենեքին որ անյոյս են զգարձէ իւրեանց և զսէրս համբերութենէ. խելամուտ լինէին խօսիւքս՝ զի ամենայն անձն հաւատարիմ առ շնորհսն, առաթուր կոխեալ զքնաւ խոչ և զսուրթ անպարտելի՝ ելանէ վերանայ ի մեծ բարձրութիւն կատարելութեան։ Տիկինս՝ որում զյեռին պարտս հատուցանեմք, յաղօթելն ըստ սովորութեան իւրում զպաշտօնն ատտուա-

[1] Եսայ. ԽԱ, 9, 10. ըստ լատ. թարգմ. դուն ինչ փոխեալ ի մերմէս։

ծային, ընթեռնոյր զնախակարգեալ եսայեան պատգամն։ Զի գեղեցիկ է խոկալ 'ի գիրս սուրբս, և որպէս բարուոք գիտէ Աստուած խօսել անդ, ոչ միայն առ եկեղեցին համօրէն, այլ և առ իւրաքանչիւր հաւատացեալս ըստ սիրոյին։ Ի խոկալ իւրում 'ի բանն յայնոսիկ, – ինքնին իսկ պատմէ 'ի զարմանալի թղթի ուրեք, – 'ի սիրա նորա ազգեաց Աստուած՝ թէ առ նա են ասացեալքն։ Համարեցաւ ձայն ինն քաղցր և հայրական ասել, որ ասէր ցնա. Առի զքեզ 'ի ծագաց երկրէ, 'ի դիտաց նորա, 'ի մոլար Ճանապարհաց յորս 'ի կորուստ գնային՝ մատնեալ 'ի միտս քո, հեռի յերկնային հայրենեացն և յուղիղ Ճանապարհէն որ է Քրիստոս Յիսուս։ Մինչ դեռ 'ի խեռեալ սրտիդ ասէիր, Ոչ կարեմ դերի լինել, արկի զձեռն իմ հզօր 'ի քեզ և ասացի, Եղիցես իմ ազատին, 'ի յաւիտենից ընտրեցի զքեզ, և ոչ ընկեցի զհոգի քո զհպարտ և զամբարտաւան։ Տեսանէք ապաքէն՝ որով բանիւք տայ նմա Աստուած առնուլ 'ի միտ, թէ ուստի ուր հանէ զնա. այլ լուարուք որպէս քաջալերէ զնա 'ի չարաչար փորձանսն յորս արկանէ զհամբերութիւն նորա. Մի երկնչիր 'ի վերանգդ յորս տագնապես, զի ես եմ Աստուած քո՝ որ զօրացուցանեմ զքեզ. մի խաբիր խոտորիր 'ի Ճանապարհէդ յոր ածեմ զքեզ, զի ընդ քեզ եմ, ոչ դադարեցից օգնել քեզ. և Արդարն զոր առաքեմ յաշխարհ, բարեգութ Փրկիչն, քահանայապետն չարչարակից և արդահատող՝ զդուշանայ քեզ աջով իւրով[1]։

Ահաւադիկ, տեսարք, բան մարգարէին սրբոյ Եսայայ ողջ բովանդակ, զորոյ զառաջին եւթ մասն ածի ձեզ նախ 'ի մէջ։ Իցէ՞ ինչ լաւ ևս 'ի հանդիսի անցուցանել ձեզ զկորուհուրդսն Աստուծոյ 'ի վերայ տիկնոջն՝ քան թէ պատգամօքն որովք ինքն վարեցաւ 'ի թարգմանել նմա զծածուկս սքանչելի խորհրդոց իւրոց։ Արդ արիք եկայք, մեղաւորք,

1 Եսայ. ԽԱ, 10։

որպիսի ինչ ոք և իցէք, յոր հեռաւոր կողմանս և ընկեցեալ իցէ զձեզ մրրիկ կարեաց ձերոց, թէ և իցէք յերկիր խաւարին՝ զորմէ պատմէ Գիրն՝ և 'ի ստուերս մահու[1]։ Եթէ է ինչ ձեր գութ ընդ թշուառական ոգիդ, եկայք տեսէք՝ ուստի կորզեաց զԱրարչին զտիկինն Աննա, եկայք տեսէք յո բարձրացոյց զնա Անեղին զի։ Տեսիլ այսպիսի օրինակի 'ի բարձրագոյն տիկնոջ, 'ի տիկնոջ՝ որ քեռորդեակն եղեալ մեծի տիկնոջ կայսեր՝ նովին զոգիս յօդեցաւ ընդ բազում կայսերս, քոյր հզօր դշխոյի, արքայորդւոյ ամուսին, մայր երկուց մեծամեծ բամբասանց, որոց մին զարդ է 'ի հոյակապ տանս Պաղլեոյ, և միւսն՝ զարմանալի եղեալ 'ի մեծաղօր տանն Պրոնովկիայ. հուսկ ապա 'ի տիկնոջ՝ որոյ անցանեն պարծանք քան զտոհմն իւր, թէ պէտ և 'ի հօրէն և յայնքան թագաւորաց սերեալ՝ յանձն իւր միաւորեալ իցէ ընդ արեան Կոնզակայ և Կլեւի և ընդ Պալեոլոգացն, զԼորենայ և զՊաղլեոյ 'ի բազում կողմանց. յորժամ 'ի պարծանս յայսոսիկ յաւելու Աստուած նոյնչափ և անուն, և ընտրէ զմեծապայծառ ոք այսպիսի՝ ցուցանել 'ինմա զողորմութիւն իւր զյաւիտենից, ոչ այլ ինչ կէտ եդեալ ունի 'ի մտի՝ բայց խրատել զտիեզերս։

Դուք ուրեմն՝ զորս ժողովէ նա 'ի տեղիս յայս սուրբ, և մանաւանդ դուք, մեղաւորք, որոց բազում երկայնմտութեամբ սպասէ դարձին, մի խոստացուցանէք զտիրոս ձեր, մի համարիցիք թէ ներեալ իցէ ձեզ՝ ընդվայրախոյզ եւեթ ականջս ածել մատուցանել այսր 'ի Ճառս։ Ամենայն սնոտի բաղդաղոյզք՝ որով ծածկէք զանապաշխարութիւն ձեր՝ բառնայցեն 'ի ձէնջ. տիկինս այս՝ կամ ըստ յաչս ձեր ծագեսցէ, կամ իբրև հրահոսանս 'ի դլուխս ձեր թափեսցէ զԱստուծոյ վրէժսն։ Բանք իմ՝ որոց դատաւորս կարծէք թերևս զձեզ, դատեսցին զձեզ յաւուրն յետնում. բեռն

1 Աղդ. Թ, 2։

ինն այլ եղեցի սա ձեզ՝ ըստ մարգարէաճառ պատգամացն[1] և եթէ ոչ առաւել քրիստոնեայք էլանիցէք ասի, եթէ առաւել մեղաւորք:

Արդ յուսով մեծաւ սկիզբն արասցուք աստուածեղէն գործոյս: Ուսցուք նախ քան զամենայն՝ մի՛ շլանալ՝ ի բաղդէն, որ չինու բնաւ զսիրտ մարդոյ, և մի՛ ի պատուոց՝ որ ոչ՝ ի լաւութիւն ինչ հանեն զնա, և ոչ յառաքինութեանց անտի որովք լի են գԺոխք, որ զմեղն և զանզգուութիւն մնուցանեն, և խափան լինին փրկական ահին զարհուրելոյ մեղաւորի յանձնէ իւրմէ: Առաւել ևս խորամուխ լիցուք՝ ի Ճանապարհս վերին տեսչութեանն, և մի՛ ինչ զանդիտեսցուք յանդիման առնել զտիկինս՝ ի պէսպէս կարգս վարուցն: Նոքա երկիցեն մերկանալ զնորշս ոգւոցն սրբոց՝ որ անգէտքն իցեն զօրութեան աջոյ Բարձրելոյն, ոչ միայն առ՝ ի փառս իւր դարձուցանել զբիծսն զայն, այլ և՝ ի կատարելութիւն ընտրելոց իւրոց: Իսկ մեզ, եղբարք, գիտակացս՝ թէ զի եղեն երանելոյն Պետրոսի ուրացութիւնքն, սրբոյն Պաւղոսի՝ հալածանքն որովք լլկեաց զեկեղեցի, Աւգուստինոսի սրբոյ՝ մոլորութիւնք իւր, սրբոցն ամենեցուն ապաշխարելոց՝ յանցանք իւրեանց, մի՛ ինչ խէթ անկցի՝ ի նոյն կարգ դասել զտիկինս զայս, և զհետ անցանել մինչև յանհաւատութիւն անդր՝ յոր անկեալն էր: Անտի տեսանիցեմք զնա յարուցեալ ի փառաց և զօրութեամբ, և ընդ նմին օրհնեսցուք զբաղուսին որ կանգնեաց զնա: Երանի՛ մեզ, եթէ գնացքն Աստուծոյ ընդ նմա՝ զարհուրեսցուցէ զմեզ յարդարութենէն թող և լիք լինելոյ՝ ի մեզ ինքեանս, և տացէ փափաքել ապրեցուցիչ ողորմութեանն: Զայս խնդրէ՝ ի ձենջ բարձրաշուք և հզօր բամբիշնս Աննա Կոնզակագլեւեան, տիկին Մանուսայ և Մոնիբերրատայ, և կին պալատունի կոմսին Հռենոսի:

1 Զաք. ԺԲ, 1. «Մեթերք հայ բեռն բանի Տեառն՝ ի վերայ Իսրայելի». ըստ լատին թարգմանութեան:

Ոչ ուրեք աւելի ինն խնամով մշակեցաւ տունկ, և ոչ վաղագոյն պտակաղարդ եռես զանձն ծաղկաք և պտղովք քան զտիկինս Աննա: Ի Ճիղմ հասակին որբացաւ՝ ի բարեպաշտուհի մօրէն՝ ի Լորենեան Կատարինեայ: Հայր նորա Կարոլոս Սեպուհ Նըվէռայ՝ և ապա Մանուսայ, եգիտ զայլ ոք նմին արժանի, զմեծարգոյ մայրն Փրանկիսկէ Շատրեան, զբարեաց և սուրբ յիշատակաց արժանաւոր մայր վանիցն Փարմուդիէի, զոր կարեմք ասել նորոգիչ կարգի Բենեդիկտոսի, և միանձնական կենաց լուսաւոր: Յառանձնոցի անդ սրբուհւոյն Փարեայ, որ որչափ գեղեցկագիր տեղեաւն որոշեալ զատեալ է՝ ի կցորդութենէ աշխարհի, նոյնչափ հեռի է և՝ ի Ճանապարհաց կենցաղոյս, ՝ի սուրբ լերին անդ ընտրելոյ Յաստուծոյ անդուստ՝ ի վերուստ՝ ի հազար ամաց հետէ, ուր հարսունք Յիսուսի վերստին կենդանացուցանէին զգեղ աւուրցն առաջնոց, ուր անծանօթ էին ուրախութիւնք երկրի, ուր հեռք անդամ չերևէին աշխարհակարգ մարդկան, հետաքրքրաց և վայրապարաց, անդ ընդ ձեռամբ սրբոյ մօրն՝ որ գիտէր կամն Ջամբեալ մանկանց և հաց հաստնոց, առաջին քայլափոխք տիկնոջն Անննայի յաջող ընթանային: Աստուածպաշտութեան խորհուրդք յայտնեցան նմա, գիրք աստուածաշունչք ընտանեցան նմա: Ուսուցեալ էին նմա զատին բարբառ, զի էր լեզու եկեղեցւոյ, և պաշտօնն աստուածային՝ բերկրութիւն էր նմա: Սիրէր զամենայն ինչ զկրօնաւորական կենցաղ, զնստամբերութիւնսն անդամ և զնստարհութիւնս, և զամս երկոտասան զոր՝ ի մենարանին եհան, այնչափ էր երևեալն՝ ի նմա համեստութիւն և խմաստութիւն, մինչ չգիտեալ՝ առ ինչ առաւել յանկագոյն իցէ, ՝ի հրամայել թէ՝ ի հնազանդել: Բայց խոհական մայրպետն, բաւական զնա համարեալ՝ ի պահպանութիւն նորոյ նորոգմանն իւրոյ, ՝ի վերակացութիւն զնա պատրաստէր, և համարէին իսկ զնա ընդ բամբշանին՝ որոց կացեալ էր յառաջնորդութիւն հոչակաւոր մենաստանին, և ահա աղ-

դատոհմ նորա առ յոյժ վաղվաղուկ փութոյն յարդիւնս ածելոյ զբարեյորդոր դիտաւորութիւնն, տապալեցին զայն։

Ներբեսցի՛ մեզ արդեօք ասել. օրիորդն Մարիամ հոգւով աշխարհի լցեալ յայնժամ, կարծէր ըստ սովորութեան մեծամեծ տոհմաց՝ թէ քոյրք իւր կրսերքք զոհ պարտիցին լինել աւագամեծար խորհրդոյն։ Ո՞ ոչ դիտէ յո՛ տարեալ հանին զոյս իւր՝ գոյզնագիւտ արժանիք և գեղ իւր չքնաղ, շնորհ՝ միշտ խաբեպատիր։ Սակայն 'ի հաստատահաստատ տոհմն ոչ ապաքէն վայրապտանումն ինն համարեալ են բաժանմունք ժառանգութեանց, որով անձամբ յանձինս եղծանին. այնչափ յար և կից է ընդ նոսա ոչնչութիւն։ Կրսերագոյնն յերեսին քորն՝ օրիորդն Բենեդիկտէ՝ առաջին զոհ եղև շահից ազգատոհմին. արարին զնա մայր վանացն, մինչդեռ 'ի մատաղ հասակի անդ ոչինչ գիտէր յորոց առնէրն. և պատիւ պաշտամանն մեծի՝ իբրև խաղալիկ ինն եղև 'ի ձեռին իւրում։

Այսպիսի ինն սահմանեալ էր վիճակ և օրիորդին Աննայի. զոյր նմա հրաժարել յաղատութենէն, եթէ թողայուցեալ էր նմա զայնր զփորձ առնուլ. պարտ էր առաջնորդել նմա 'ի բարին, և ոչ դարահոս արկանել անդր։ Այդ աւադիկ տապալեաց զամենայն խորհուրդս Փարմուդիէի։ Այբոնէ թուեցաւ ունել կերպարանս աւելի ինն ազատականս. և օրիորդն Բենեդիկտէ ընծայէր անդ քեռ իւրում առանձնոց զուարճալի։ Ո՛վ սքանչելեաց երկնաւոր շնորհին։ Մանկամարդ մայրպետն, թեպէտ և կոչումն իւր ոչ յոյժ օրինաւոր, եղև առաքինութեան ընտիր օրինակ. քաղցր կենակցութիւն իւր տնկեաց անդրէն 'ի սիրտ օրիորդն Աննայի զոր անժամ թախանձանք հալածեալ էին անտի. վերստին մատուցանէր զուռնին Աստուծոյ՝ կոչողին զնա բազում յորդորմամբք 'ի կրօնաւորական կեանս. և տուն ապաւինին՝ զոր ընտրեաց 'ի պահել զաղատութիւն իւր՝ դատ վարմ անմեղ յլմբռնել զնա։ Երկեր յերկոսին օրիորդն նոյն ազնուականութիւն մտաց, նոյն բարեշնորհ-

հութիւն, և եթէ ներբէք ինձ ասել, նոյն ողբանք 'ի խօսս, 'ի ներքոյ իղձք նոյն, արտաքոյ շնորհք նոյն. և բնաւ ուրեք չերևեցան քոքք այսպիսի քաղցր և հզօր հանդուցիւք զօգեալք. և յանխզելի կապանս անդ երանելի լիներ կեանք նոցին, և օրիորդն Աննա ոչ այլ իմիք փափաքէր՝ բայց լինել խնարհ հաւատաւոր քեռն՝ ընդ որոյ առաքինութիւնն զարմանայր։

Ի ժամանակին հայր նոցա Սեպուհն Մանտուայ վախճանեցաւ. պէտք գործոց կոչեցին զնոսա յապարանսն, օրիորդն Բենեդիկտէ՝ որոյ յերկինս էր բաժին ժառանգութեան՝ գիպող դատեալ եղև 'ի միաբանել զայլ և այլ շահս տոհմին։ Սակայն, ո՛վ հարուած տխրալի Աննայի օրիորդին. մայրպետն սրբակրօն 'ի գեղեցիկ վաստակն անդ և 'ի ծաղկի հասակին յաստեացս եկ։ Զիք հարկ ասել ո՛րչափ 'ի խորխոցեցաւ գորովալիր սիրտ օրիորդին Աննայի 'ի մահուանէ անտի. բայց ոչ այն եղև վերք նորա մեծագոյն։ Իշխան եղեալ իւրոյ ցանկութեանցն՝ ետես զաշխարհ, և տեսաւ 'ի նմանէ. զդատ եղև անդէն՝ զի հաճոյ էր նմա, և գիտէք իսկ զթոյնն սուր որ ընդմտանէ այսու խորհրդովք 'ի սիրտ մանկական. մուռացօնք եղեն գեղեցիկ դիտաւորութիւնք։ Մինչդեռ զարմ այնպիսի, այնչափ ստացուածք, այնքան շնորհք անձինն զոչոտեին զաչս համօրէն Եւրոպէի, Եդուարդ իշխան Պաւիերայ, որդի կայսրընտրին Փրեսերիկոսի Ե, պալատունի կոմսին Հռենոսի և արքային Պոյեմիոյ, իշխան դեռահասակ՝ որոյ յաւուրս արկածից տան իւրոյ 'ի Գալլիա էր ապաստանեալ, այնմ դատաւ արժանի։

Քան զամենայն մեծութիւն առաւել ընտրեաց զառաքինութիւնս իշխանին այնորիկ, և զազնուական ազգախառնութիւնն՝ յորում յամենայն կողմանց թագաւորք ևեթ երևէին։ Օրիորդն Աննա յորդորէ զնա յայնժամ 'ի հրահանգս հաւատոց, և նա ծանեաւ վաղվաղակի զնոտորութիւնսն յոր զառածեալ էին զինքն յեռինք 'ի հարս իւր, օգտեալք յառաջին հաւատոցն. գուշակութիւն յաջող՝

տանն պալատունի։ Այսմ զհետ եկն և դարձ քեռն նորա օրիորդին Լուիզայ, որոյ առաքինութիւնք հնչեցուցանեն ընդ հանուր եկեղեցիս զփառս սրբոյ մենաստանին Մոպիւիսոնի. և երանական երախայրիք այնպիսի օրհնութիւնս ի՛ջուցին ի՛ տունն պալատունի, զի հուսկ ուրեմն տեսանեմք զնա ուղղափառ ի՛ գլուխն իւր։ Մեծի այսր իրաց ըստիպեալն բարեպատեհ եղև ամուսնութիւն օրիորդին Անայի։ Այլ աւաղ, զամենայն զոր սիրէր սա՝ սակաւ ժամանակեան էր լինելոց։ Իշխանն՝ ամուսին նորա՝ առաւ ի՛ նմանէ, և եթող նմա երիս օրիորդս, որոց երկուքն կենդանիք՝ ողբան տակաւին զպատուականագոյնն ի՛ մարս, և չգտանեն ինչ մխիթարութիւն՝ բայց միայն ի՛ յիշատակ առաքինութեանց իւրոց։

Զև ևս է ժամ արկանելոյ ձեզ զնոցանէ Հառս։ Տիկինն պալատունի ի՛ կարի վանդաւոր սահման կենացն կայ։ Քանի՞ տակաւս տեսանէ աշխարհ յայրեաց անտի՝ զորոց խօսի երանելին Պաւղոս, թէ «Հշմարտիւ այրիքն և մենացեալք[1]», երթան, որպէս բանից կարդ է ասել, թաղին ի դերեզմանս արանց իւրեանց, անդ ընդ սիրեցեալ ամիւնսն թաղեն զամենայն սէր մարդկեղէն, և լքեալք թողեալք յերկրի՝ «Յատուած յուսան, և կանխեն յաղօթս և ի խնդրուածս զցայգ և զցերեկ»։ Այդ աւադիկ է պայման քրիստոնեայ այրոյ ըստ պատուիրանաց երանելոյն Պաւղոսի, պայման մոռացեալ ի միջի մերում, ուր ոչ ևս մենակեցութեան կարգ համարեալ է այրութիւն, զի անծանօթ իսկ բանքն են, այլ գոգցես կարդ իմն ցանկալի, յորում խղեալ զամենայն սամեռէս, զանձն ևեթ մնայ հաճել, առանց ինչ զմտաւ ածելոյ զսոսկալի գատակնիք Պաւղոսի երանելւոյ. «Գիրդ՝ հեշտակեաց այրին», միա գիք զի ոչ ասէ, այրին որ ի՛ մեզս անցուցանէ զկեանսն, այլ գիրդ այրին՝ հեշտակեացն՝ կենդանւոյն մեռեալ է. քանզի

1 Ա. Տիմոթ. Ե, 5, և այլն։

ի՛ մոռացօնս դարձուցեալ զսուգն մշանջենաւոր և զպայման մենութեան՝ որ զօրավիգն է և փառք իւրում վիճակին, հեզու զանձն յաշխարհի ուրախութիւնս։

Ապա քանիսն արտասուել արժան իցէ իբրև մեռեալս զմանկամարդ և զուարթերես այրին՝ զորս աշխարհ առ երանիկս ունի. մանաւանդ յորժամ ծանուցեալ զՅիսուս Քրիստոս, և շնորհացն իւրոց հաղորդ լեալ, և ծագեալ լոյսն ատուածեղէն, և լուսատեսիլ աչք արկանիցէ ոք զանձն՝ ի Հանապարհս աշխարհի, զի՞նչ լինիցի հոգւոյն այնմիկ՝ որ յայնքան բարձուէ կործանիցի, որ դարձեալ խայտառակիցէ զՅիսուս Քրիստոս, և այն՝ յետ միանգամ ի Հաշակս նորա վայելելոյ, ամենայն հրէական թշնամանաք, և վերստին ի խաչ զնա հանիցէ։ Ճանաչէք զեղբս երանելոյն Պաւղոսի։ Կատարեա արդ, մեծդ Առաքեալ, և ասա մեզ, զինչ ակն ունել իցէ յայսպիսի թշուառական գլորմանէ. «Անհնար է, ասէ, այնմ հոգւոյ՝ միւսանգամ նորոգեալ յապաշխարութիւն[1]»։

Անհնա՞ր. ով, որպիսի՞ բան. թէպէտ ասել կամիցի, տեարք, թէ դարձ հոգւոյն այնոցիկ երբեմն շնորհադիւտից՝ անցանէ զանցանէ զամենայն չափովք սովորական պարգևաց, և պահանջէ իմն գոգցես զվերջին Հիգն ատուածեղէն զօրութեանն, թէպէտ անհնարութիւն պաւղոսեան բանին նշանակել կամիցի՝ թէ չէք այլ ևս դարձ յառաջին քաղցրութիւնսն՝ զոր Հաշակեաց հոգին անմեղ, եթէ գիտութեամբ կամակար մտաք ապախտ զայնս իցէ արարեալ, մինչև չկարել գտանել զնորհսն առանց դժուարակոխ Հանապարհաց և դառնաշատ տաժանութեանց։ Որ զինչ և իցէ ի՛ դոցունց, քրիստոնեայք, երկոքին ևս Հշմարտեցան ի՛ վերայ տիկնոջս. առ ի՛ սպառ ընկղմելոյ զնա ի՛ սէր աշխարհի՝ պիտոյ էր յետին թշուառութիւնն։ Եւ ո՞ր այն իցէ. արքունեացս սիրելութիւն։ Սիրեն միշտ արքունիքս

1 Եբր. Զ, 4, և այլն։

լծակցել ընդ գործս զզուարճութիւն։ Զարմանալի իմն խառնուածով՝ չկամ ինչ քան զնա զգօն և զուարթ միանգամայն։ Այլ մուա 'ի ներքս, ամենայն ուրեք գտանես շահասիրութիւնս գաղտագողս, նուրբ նախանձուկս՝ որ պատճառս տան սաստիկ զգայութեան, և 'ի հրատապ փառասիրութեան՝ հոգոց և տխուր ընդունայն ծանրութեան. ընդ զուարթերես կերպարանօք ծածկեալ կայ ամենայն, մինչև ասել թէ ոչ յայլ ինչ մտաբերիցեն անդ քան եթէ 'ի զբօսանաց և գործոց արքունի. չտեսին ինչ երբեք արքունիքս առաւել քան զնա յանկուցիչ. և թող զկորովամտութիւն նորա և զանբաւ ծննդականութիւն հնարագիտութեանցն, ամենայն ինչ խոնարհէր անկանէր առաջի զանխուլ թովչութեան խօսից նորա։

Զինչ տեսանեմ 'ի ժամանակին. որպէսի խառվութիւն, զինչպիսի ահաւոր տեսիլ առաջի լինի ինձ ասասանօր։ Մինչեհեծան տերութիւնս 'ի հիմանց սասանեալ, պատերազմ առանին, արտաքուստ մարտք, հրդեհ ներքոյ և արտաքոյ, ամենուստ դարմանք՝ առաւել քան զբարին վտանգաւորքք, իշխանազունք (Բ) մեծաւ վտանգաւ 'ի դիպահոլ, և ազատեալք առաւելագոյն վտանգաւ. իշխանն՝ (Դ) դիւցազն համարեալ իւրում դարուն, անպիտան արարեալ իւրում հայրենի աշխարհին՝ որոյ ամուր ազատինի կացեալն էր, և ապա չգիտեմ որպէս յանկամայ կամս իւր, ընդդէմ նորա 'ի զէն վառեալ. մեծ հազարապետն (Դ) արքունի՝ հալածական, և կարևոր եղեալ՝ ոչ 'ի պէտս միայն պաշտամանցն, այլ և ձախողանօքն յոր շաղեալն էր իշխանութիւնն արքունի։ Զինչ ասացից. էր արդեօք այս 'ի մտրկաց անտի զորս կարօտի երբեմն երկին թոթափել յանձնէ, և խոր խաղաղութեան աւուրցս կարապետել արդեօք պարտէին այսպիսի փոթորիկք, կամ թէ վերջին բռնութիւն էր այն՝ խազմարար ազատութեան, որ տեղի տալոց էր այնուհետև օրինաւոր իշխանութեանն, կամ որպէս թէ երկունք ինչ

էին Գալլիոյ՝ մերձ 'ի ծնանել զզարմանազան թագաւորութիւնն Լուդովիկեայ։ Ոչ, ոչ. Ատուած ինքնին կամէր ցուցանել, թէ ինքն սպանանէ և ինքն յարուցանէ, իջուցանէ մինչև 'ի դժոխս և հանէ [1], դղրդէ զերկիր և խորտակէ զնա, և յական թօթափել բժշկէ զամենայն ջախջախանս նորա [2]։

Անդ պայծառացոյց տիկինս զհաւատարմութիւն իւր, և երևեցոյց զամենայն առատութիւն մտացն։ Ոչինչ յանծանօթից բարբառիմ։ Մինչ հաւատարիմ առ տերութիւնն և առ մեծ դշխոյն Աննա աւստրիական (Ե), հանդերձ գաղտնեօք բամբչանս՝ հաս կալաւ նա և զծածուկս ամենայն երկպառակ կողմանցն. այնպէս սրամիտ էր, այնչափ յանկուցիչ 'ի մտերմութիւն, այնքան ընդաբոյս էր նմա շահել զսիրաս։ Ցայտ ասեր ցդլխաւորս հակառակ կողմանցն՝ մինչև ցոր վայր մարթելի էր նմա զկնքանել ընդ նոսա և առնուլ ինչ յանձն, և առ անխաբս և աննենգս ունէին զնա։ Բայց բոյս բարուց սերտագոյն 'ի նմա՝ էր համոզել միաբանել զհակարաշ օգտութիւնս, և գեր 'ի վերոյ եղեալ գտանել զթաքուն հանգոյցն՝ և որպէս թէ զկապն՝ ընդ որ մարթ է միաւորել զնոսա։

Իսկ զինչ օգնեցին նմա ճարտարանքս այս չքնաղ. զինչ օգնեաց գիւտ ընտանի մտերմութեան արքունեացն, պահպանելն զերկիցս վտարանդի զմեծ նորա հազարապետն՝ յերեսաց իւրոյ իսկ չարաբաստութեանն, յերեսաց զարհուրանաց անձին իւրոյ, յերեսաց ժանտութեան թշնամեացն, և և յերեսաց բարեկամացն երկիւղելոց կամ նենգողաց։ Զինչ ինչ ոչ աւետեցաւ նմա 'ի կարիս իւր. իսկ զինչ կենցաւ պտուղ, բայց միայն ընդ փորձ անցանել փսնաբութեան մեծամեծ քաղաքավարացն, յեղյեղուկ կամաց նոցին կամ խաբեպատիր խօսիցն, այլափոխ

[1] Ա. Թագ. Բ, 6։
[2] Սաղմ. ԾԹ, 4։

կերպարանաց Ժամանակին, զբօսուցիչ խոստմանցն, պատրանաց բարեկամութեանց աշխարհի՝ որ ընդ ամայն և ընդ շահից սահեալ անցեալ դնան, անդնդախոր խաւարի սրոյ մարդոյն՝ որ չգիտէ բնաւ զոր կամիցին, և բաղում անգամ զոր կամին իսկ՝ չգիտէ հաւաստեաւ, և նմին իսկ ինքեան՝ որպէս և այլոց՝ թաքուն է և խաբուն:

Ո՛վ յաւիտենից թագաւոր անվախճան, որ միայն ուն նիս զանմահութիւն, տես աւադիկ զոր նախապատիւ քեզ առնեն, աւադիկ որ շլացուցանեն զմեծ անուանեալ ոգիսն: Ի միջի անդ ողորմ մոլորութեանց՝ էին էին տիկնոջս պալատուոյ առաքինութիւնք զարմանալիք յաչս աշխարհի, որ և ոգւոյ մոլորելոյ տան զարմանալ ընդ անձն իւր. ան յողդողդ 'ի բարեկամութիւնսն, և անկարօղ 'ի գրժեալ՝ մարդկօրէն պարտուց պատշաճից: Զայսր զամ էառ .քոյր նորա դշխոյն, 'ի Ժամանակի զի սիրաք իւրեանց հեռացեալ մեկուսի էին 'ի միմեանց:

Յառնէ 'ի Շուշաս նոր ոմն աշխարհակալ (Զ), անդ տեսանի միւս ոմն Կիւստաւ, ոչ ինչ ընդհատ խրոխտ և ոչ պակաս ինչ յանդուգն կամ պատերազմող .քան զայն՝ (Է) որոյ անուն դեռ ևս գոլացուցանեմ զԳերմանիա: Ի յանզգաստուց ըմբռնեալ և վտարանդեալ Լեհս՝ եկն եկ երևեցաւ Կարոլոս Կիւստաւ, իբրև առիւծ որ զորսն 'ի Ճիրանսն ունիցի՝ կազմ և պատրաստ 'ի պատառել զայն: Զինչ եղև ահաւոր այրուձին արշաւեալ 'ի Թշնամի անդր զորէն արագութեան արծուոյ. ուր խցեն գոռ մարտիկքն. ուռուցքն զինուց հուչակեալք, և աղեղուցքն որ ոչ երբեք տեսան ընդ վայր լարեալք. չեն երիվարքն թեթևք, և ոչ արք երագունք, բայց 'ի փախչել յերեսաց յաղթողին:

Ինդմին Ժամանակի աղարտ վարի Լեհաստան աշխարհ 'ի ստամբակ Թագաւորն, յուխտագրուժ Մոսկովէն, և ևս առաւել 'ի Թաթարք անտի՝ զոր յօգնութիւն կոչէ 'ի յուսահատութեան իւրում: Յարիւն և յապաժոյժ լուղն ամենայն, և վիրաւորք 'ի վերայ դիականց անկանին. չեք ուրեք ապաւէն թաքստի դշխոյին, թողու լքանէ զարքայութիւնն. յետ արիական՝ բայց անօգուտ ջանից՝ ստիպի թագաւորն զհետ նորին ելանել: Փախստեայ անկեալք 'ի Սիլեզիա, անդ կարօտեալք 'ի կարևոր պիտոյից, չենայ ինչ այլ նոցա, բայց տեսանել՝ ընդ որ կոյս տապալեցի ծառն մեծ [1] յայնչափ ճեռաց տատանեալ, և յայնչափ հարուածոց կոշկոռեալ առ արմին, կամ ո՛ յափշտակիցէ զոստս նորա զգրուեալս:

Աստուծոյ այլ ինչ էր պատրաստեալ նմա. կարևոր էր Լեհաստան Եկեղեցւոյ իւրում, և վրէժինդիր զոր յարուցանելոց էր նմա: Ողորմութեամբ հայի 'ի նա, աչ նորա հոգոյ ընկրկէ զՇուէան անսատեալն 'ի մանչել անդ իւրում. զվրէժ իւր հանէ 'ի գլխոց Դանեաց, որոց յանկարծ աթաւ արշաւան յինքն դարձոյց զնա, և ահա 'ի տագնապի իսկ զնոսա կացուցանէ: Բայց տերութիւնն կայսերական և Հոլանդիա շարժին ընդդէմ աշխարհակալին՝ որ գերութիւն սպառնայր բոլորուն Հիւսիսի: Մինչդեռ գումարտակ առնէ նա զորաց վերստին, և 'ի նոր նախճիրս մտաբերէ, որոտայ Տէր 'ի բարձր բարձանց երկնից, և զարհուրեցուցիչ սպարապետն անկանի 'ի գեղեցիկ աւուրս կենաց իւրոց, և Լեհաստան աղատի:

Այլ սկզբնալոյս նշոյլ յուսոյն՝ ծայրս 'ի պալատունի բամբշանէ ասսի արձակէ. ամաչեցեալ ընդ առաքել իւր տան ևեթ բիւր դահեկան առ թագաւորն և առ թագուհին Լեհաց, աճապարել գեթ առաքէ զայն չաւատալի փութոյ պնդութեամբ: Զինչ առաւել զարմանք եղեն. 'ի կարի դէպ ժամանել օգնութեանն, թէ յայնպիսի ճեռաց՝ յորմէ չէր ինչ ակնկալութիւն, եթէ՝ զի առանց 'ի չքմեղկիս ինչ լինելոյ ընեղութենէ հանդամանաց իրաց իւրոց՝ յամենայնէ զրկեաց զանձն տիկնոջ առ սիրելոյ զքոյրն որ չսիրէր իսկ զնա: Քորքն երկոքին մի սիրտ եղեն այնուհետև. զբշ-

1 Դան. Դ, 11, 20։ Եզեկ. ԼԱ, 12։

խոյն՝ արդարև դշխոյ երևեցաւ բարերարութեամբ և առատութեամբ՝ որոյ ընդ ամենայն երկիր հնչեաց համբաւն, և տիկինն՝ 'ի մեծարանս անդր շքեղ և մեծաշնորհ քեռն երիցու՝ յաւել անսպառ գոհացողութիւնս:

Զի՞նչ ասցէ, տեսցէ, կուրութիւն քրիստոսակրօն անձին, և ո՞ կարիցէ այնմ հատուս լինել. զի առ մարդիկ չգիտէ ինչ զլանալ, իսկ առ Աստուած՝ չերկնչի 'ի զլանալոյ. որպէս այն թէ պաշտօնն աստուածեղէն չեցէ ինչ 'ի համարի պարտուց: Դուք արդ տեղեակքդ պատմեցէք մեզ զինաւ մեծամեծ առաքինութիւնս տիկնոջս, ցուցէք մեզ՝ եթէ կարէք՝ զամենայն շնորհս անուշակ ճարտարաբանութեանն որ այնպիսի չքնաղ և անպաճոյճ յեղանակօք անցանէր մտանէր 'ի սիրտս: Դուք թէ ազատաբարոյ էր, առատամիտ, շնորհակալու, հաւատարիմ 'ի խոստմունս, արդարոչինչ այլ առնէք՝ քան պատմել զայն ինչ, որ կապէր զնա 'ի սէր անձին իւրոյ: Ի բովանդակ պատմութեանդ յայդմ՝ ոչ ինչ այլ նշմարեմ ես բայց զանառակ աւետարանին [1], որ առնուլ կամի զիւրն բաժին, որ անձամբն կամի վայելել և հայրենատուր ընչիւքն, որ ըստ կարին՝ կարի յոյժ հեռագոյն մեկնեալ գնայ 'ի տանէ հօրն, «յաշխարհ հեռի», ուր վատնէ զանդին գանձն, և պարզաբար ասացեալ՝ տայ աշխարհի զոր ինչ Աստուծոյ կամք էին ունել:

Յորժամ հաճէր տիկինս զաշխարհ և զանձն ևս իւր, չէր ինչ երջանիկ, ունայնութիւն մարդկեղէն իրաց ազդ լինէր 'ի սրտին: Ոչ էր երջանիկ, ոչ ընդ տենչալոյն իւրոյ գովութեան աշխարհի՝ և զթագաւորին ևս ունելով, և ոչ 'ի սիրելութիւն Փիլիպպոսի վայելելով և 'ի մաքրմութիւն՝ և 'ի բամբասանցն երկոցունց, որ ընդ նմա երկրորդ լուսաւորք երևեցան աբքունեացն մի ըստ միոջէ. Փիլիպպոսի ասեմ մեծ թագաւորին, զոր ոչ ազդ իւր, ոչ քաջութիւն և ոչ յաղթութիւնն ինքնին՝ ընծայեալ նմա բնաւին շա-

1 Ղուկ. ԺԵ. 12, 13:

հիւք իւրովք, ոչ զօրեն փքացուցանել. և երկուց բամբասանցն մեծուհեաց, զորոց չէ հնար յիշատակել զմին առանց կսկծանաց, և ոչ զմիւսն ճանաչել առանց զարմանալոյ: Այլ թերևս անքննելի յապահովութիւն տան տիկնոջս կատարեսցէ զերջանկութիւն իւր: Ոչ, չէր նա երջանիկ, ոչ առ իւրն ունելով զօրիորդն Աննա՝ զդուստր իւր սիրելի՝ զզուարճութիւն սրտին, և ոչ հաստատելով զնա 'ի տան՝ ուր ամենայն ինչ մեծ է:

Զի՞ պիտոյ է պարզագոյնս բարբառել. անուանել և եթէ զանուն Լուգովիկեայ Պուրպոնեան՝ մեծի իշխանին Գոնտէի, և Հենրիկոսի Յուլեայ Պուրպոնեան՝ իշխանին Անկիէնի, զամենայն է ասել: Եթէ սուղ ինչ ևս յերկարեր 'ի կեանս, տեսանէր զմեծամեծ տուրս շնորհացն, և զառաջինն (Ը) 'ի մահկանացուս՝, առ գութ խանդաղանացն ընդ նա՝ (Թ) ընդ որ յետ նորա առաւել հիանայ աշխարհ, արժանաւոր պատուովք աւագութեանց երախտահատոյց նմա եղեալ ախորժաբար: Այսմ կայր մնայր նմա ակն ուղղել յամենանութենէ անտի օրիորդին Աննայի: Իսկ Բենեդիկտ օրիորդին (Ժ) հարսանիք՝ ոչ ինչ պակաս բարեբաստիկ դատաւ, ամուսնաւորեալ ընդ Յովհաննու Փրեսերիկոսի իշխանին Պրունսվիկայ և Հանովրի, հզօր արքայի՝ որ ընդ քաջութեան ընծորդեալ էր և զդիտութիւն, զուզզապատառ հաւասս ընդ առաքինութիւնս տան իւրոյ, և 'ի պատարուն բերկրութիւն տիկնոջս մերոյ՝ զնեքնակալութեանն կամակատարութիւն ընդ շահս օգտին Գաղլիոյ: Ամենայն ինչ մեծ էր յազգատոհմի իւրում. իսկ օրիորդին Մարեմայ՝ դատեր իւրոյ՝ չմնայր այլ խմիք փափաքել յերկրի, բայց երկարագոյն կենաց:

Իսկ 'ի վերայ այսչափ փառաւորութեան՝ եթէ և խաղաղութեան և քաղցրութեան ինչ պէաք էին, դառնէր յիշխանն անդ 'ի մեծ հաւատս այսմ որ պատուէ զՏանդիսարանս զայս, մեծամեծ առաքինութեամբքն հանդերձ և զայնս՝ որ բաւական լինէին հաճել զվարկութիւն սրտի

իւրոյ. և 'ի տիկնոջ անդ իշխանին՝ 'ի դասեր իւրում սիրելոջ՝ բնութիւն մի այնպիսի, որպիսի պիտէր սրտի՝ իւրումն նմանուց, և միտս իմն և հանճար՝ որ առանց ճաճանչել կամելոյ՝ ինքնին ցոլանայր, և առաքինութիւն՝ որ 'ի կարճոյ գրաւելոյ էր զաշխարհն մեծարանս, և իբրև ըզլոյս պայծառ՝ փեռեկել յանկարծակի սաստիկ փայլատակմբք զամս մի գեղեցիկ, բայց մթին: Այս գեղեցկանսիկ ազգախառնութիւն զոդէր զնա անխզելի և անձուկ կապանօք ընդ մեծ իշխանին՝ որ յամենայն ժամ քան զբնաւս յափշտակեալ էր զմիտս նորա. իշխան՝ զարմանալի 'ի խաղաղութեան և 'ի պատերազմի, յորում միտ եղեալ տիզերաց՝ չգտանէն այլ ևս ինչ կարօտելի, և հիացեալ կան ընդ տեսիլ ամենայն առաքինի հանդիսից 'ի միում միայնում՝ առն:

Զինչ ևս պիտէր, և զինչ պակասէր յերջանկութիւն տիկնոջն: Աստուած, զոր ծանուցեալն էր, և ընդ նմա ամենայն ինչ: Տուեալ էր նմա մի անգամ զսիրտ իւր. էր կնաւոր քաղցրութիւնքն զոր ճաշակեալ էր ընդ Թեոդիք սրբուհւոյն Փարեայ՝ դարձեալ եկեալ էին 'ի միտս նորա: Մենացեալ 'ի գեղջ, մեկուսացեալ յաշխարհէ, զերիս ամս 'ի գլուխ՝ պարապեցաւ 'ի կարդի դնել յօրինել զնիզ մըտացն և զիրս իւր: Հարիւր բիւր դահեկանաց զոր ժողովեաց յիշխանութենէ Ռեթիլուայի՝ յանձնեցին զգործս նորա բարիս, և առաջինն եղև հատուցանել անվրէպ ճշդրտութեամբ զպարտիսն, առանց համարձակելոյ յիրաւախոհութիւնս ճարտարաբար պանծուցեալս, որ յանձն ոչ այլ ինչ են՝ քան թէ անիրաւութիւն խաբեայ կերպարանօք անուանն գեղերեսեալ:

Իսկ արդ այս ինչ զոր 'ի վաղուց խոստանամ ձեզ դարձն երանական: Ոչ, տեսլիք. ոչ տեսնիք և զայս ևս նրուագ, բայց ողբալի ևս օգտուն: Ոչ վերնախնամ տեսչութեանն խորհուրդք և ոչ տիկնոջս վիճակ ներկին ինչ նմա բաժանել սակաւիկ մի զսիրտ իւր. այնպիսի հոգի չառնաւ

յանձն զայն բաժինս. հարկ էր կամ բնաւ որոշել յաշխարհէ, կամ ամենեին նովաւ պատանդիլ: Անդր զնա կոչեցին գործք. բարեպաշտութիւն իւր ցուցեցաւ դարձեալ միւսանգամ. էառ զհանդէս տերունական բանին, զի չէ վայրապար ասացեալ, Լինի յեպին մարդոյն այնորիկ վերոպին անիկելոյ, լոր գան պատասխին [1]: Դողացէք անձինք 'ի զեղջ և 'ի հաշտութիւն եկեալք, որ այդպէս ստէպ յուրասա լինիք 'ի շնորհաց ապաշխարութեան. դողացէք, զի ամենայն գլորումն նորանոր անդունդս փորէ ընդ ոտիւք ձերովք, դողացէք ևս յահագին օրինակէ տիկնոջս պալատունոյ:

Յայս նուագ Հոգին սուրբ սրամտեալ 'ի բաց մեկնի, Թանձրանայ խաւարն, և հաւատք շինանին: Սուրբ ոմն հայր վանաց (ԺԱ.), որոյ գիտութիւն իւր և վարք զարդ են դարուս, հիացեալ ընդ զարմանալի և կատարեալ դարձ տիկնոջս մերոյ, պատուիրեաց նմա 'ի գրի զայն հարկանել 'ի շինութիւն եկեղեցւոյ. և սկիզբն առնէ նա պատմութեանն խոստովան լինելով զմոլորութիւն իւր: Դու Տէր, որոյ անբաւ բարութիւն չետ մարդկան զօրագոյն ինչ 'ի ջնջել զմեղս իւրեանց՝ բայց միայն զշնորհս խոստովան լինելոյ զայնս, ընկալ զխոնարհ խոստովանութիւն աղախնոյ քոյ. և յիշատակաւ այսր պատարագի, եթէ մնայ ինչ 'ի նմա 'ի քաւել յետ այնպիսի երկար ապաշխարութեան, լսելի արա նմա այսօր զողորմութիւնս քո:

Եւ արդ խոստովան լինի, քրիստոնեայք, այնպէս կորուսեալ իւր զհաւատոցն լոյս, զի 'ի խօսել ուրուք սերտիւ զխորհրդոյ աստուածպաշտութեան, հաղիւ արգելոյր զարհամարհոտ ծաղրն՝ յոր շարժեն անձինք միամիտք որ կան և հաւատան անհնարաւորաց: Եւ յաւելու, թէ «սքանչելիք սքանչելեաց լինէր առ իս՝ ածել զնս աներկեան 'ի քրիստոսապաշտ դաւանութիւն»: Զինչ ինչ չտայր առ 'ի սքանչելեացն այնմիկ գամագիտ լինելոյ. այլ չէ էր հա-

[1] Ղուկ. ԺԱ., 26:

սեալ Ժամն նկատեալ յաստուածախնամ տեսչութենէն. Ժամանակ էր տալոյ զնա 'ի ձեռս անձին իւրոյ, զի լաւ ևս 'ի միտ առցէ ապա զաքանչելազօր յաղթանակ շնորհացն:

Վասն որոյ յանհաւանութեան անդ իւրում հեծէր հառաչէր՝ զի ապիկարն էր 'ի յաղթութիւն: Փոքր մի՝ և 'ի ծաղր ևս հատանէր, որ է յետին մոլորութիւն և գոգ ամբարհաւաճութեան յաղթանակ, և մտանէր 'ի համար այնոցիկ՝ զորոց ասէ խնամտուն. Այլանողաց առ կռան կան դատաստանք. Պոքրոպէն անխրոպէդ պանդանդ [1]: Աւաղելի կուրութիւն: Գործ մի գործեաց Աստուած 'ի միջի մերում, որ մեկին զատ յայլ ամենայն պատճառէ և ինքնին ևեթ մնացեալ, ընդ զամենայն Ժամանակ և զտեղի, և ածէ ընդ ամենայն երկիր զօրութեամբ բազկի իւրոյ զդրոշմ իշխանութեանն. զՅիսուսէ Քրիստոսէ ասեմ և զկեղեցւոյ իւրոյ: Յեկեղեցւոջն այսմիկ կարգեաց իշխանութիւն՝ միայն բաւական 'ի նեկուն առնել զամբարտաւանութիւն և կանգնել զպարզմտութիւն, և միապէս ըմբռն խնամտոյց և տգիտաց՝ երկոցունց զնոյն պատկառանս արկանել:

Այսմ իշխանութեան հեստեալ կան ստամբակք արհամարհոտ իմն երեսօք. այլ զի՞նչ տեսին այն հնազանդիկ հանձարք, զի՞նչ տեսին առաւել քան զայլս: Քանի՞ սրխմարութիւն է 'ի նոսա, և զնմրդ գիւրին էր զնոսա ապ 'ի բերան առնել, եթէ առ անկարութեան և հպարտութեան իւրեանց՝ չերկնչէին յուսանել: Մի թէ կարծիցէ՞ն՝ քաջիկ ևս նշմարել զենդրականն, այնու զի 'ի պարտութիւն մատնին յերեսաց նոցա՝ և զի տեսեալ այլոց՝ և առ ոչինչ դրեալ են: Զկիր ինչ նշմարեալ նոցա, չիմանան և ոչինչ. չունին և ոչ որով հասատատիցեն զոչնչութիւնն՝ յոր յուսացեալ են յեռ ասի կենացս, և այն իսկ թշուառական բաժին չէ նոցա հաւասի: Ոչ գիտեն՝ թէ Աստուծոյ մարդասիրի՝ հանդիպիցեն արդեօք, եթէ ոխերմի: Եթէ հան-

1 Առակ, ԺԹ, 29:

գիտամէտ գնիցեն զնա առ չարութիւն և առ լաւութիւն, որպիսի՞ ուրուական. իսկ եթէ ոչ անարժան համարի գաւել զիւր արարածն, զոր և բաւական իսկ արար ընտրութեան բարւոյ և չարի, ո՞ ասասցէ ցնոսա՝ զինչ յաչս նորա հաճոյ իցէ կամ մեղանչական կամ հաշտարար:

Ուստի՞ առին նոքա գուշակել՝ թէ որ ինչ և խորհիցի ոք զառաջին էէն՝ չէ ինչ փոյթ և խոր. և ամենայն կրօնք երևեալք յերկրի՝ առ հասարակ բարի են առաջի նորա: Քանզի են 'ի նոսա սուտք, նմա՞ն իցէ ասել՝ թէ չկիր և ոչ մի ձշմարիտ, կամ թէ անհնար է ճանաչել զատոյգ բարեկամն վասն շուրջ պաշարելոյ խաբեբայից: Մի՞թէ ամենայն մոլորեալք անկեղծիկք իցեն. իցէ՞ ինչ անհնարին մարդոյ անձամբ զանձն խաբել ըստ իւրում սովորութեան: Այլ ոչ ոչ՞ տանջանաց չիցեն արժանի խոչք և խուռք՝ զորս ըստ իւրում մտացն հաճոյից արդել արկանիցէ ընդդէմ վճիռ լուսաւորութեան: Ո՞ւր ուսան՝ թէ պատիժ և վարձ վասն մարդկօրէն գատաստանաց միայն են, և ոչ դոյ Աստուած արդարութիւն, որոյ աղօտ իմն կայծակն ևեթ է փայլեալն 'ի մեզ: Իսկ եթէ է արդարութիւն տիրական՝ ուստի և անհրաժեշտ, աստուածեղէն՝ վասն որոյ և անսահման, ո՞ պատմեսցէ մեզ թէ չգործիցէ բնաւ ըստ իւրում բնութեանն, և թէ անսահման արդարութիւնն ոչ 'ի գործ ուրեք արկանիցէ անվախճան և յաւիտենական տանջանս:

Իսկ արդ ո՞ւր գտանիցին ամպարիշտք, և ո՞ր երաշխաւորութիւն կայցէ նոցա յերեսաց վրիժուցն յաւիտենից՝ որ սպառնացեալ կան նոցա: Առ չգիւա լաւագոյն ապաստանի՝ երթիցէ՞ն արդեօք ընկղմել յանդունդս անաստուածութեան, և յուսացցէ՞ն հանգիստ 'ի կատաղութենէ՝ որ չգտանէ գրեթէ բնաւ իսկ տեղի 'ի միտս: Ո՞ լուծանիցէ նոցա զտարակուսանսդ, քանզի յայդ անուն կամին նոքա կոչել զայնս: Բանն իւրեանց զոր առաջնորդ ունին, ոչ այլ ինչ յանդիման առնէ մտաց նոցա՝ բայց կարծիս միայն և վարանս. անպատեհութիւնք՝ յորս անկանին ուրանալով 'ի

հաւատոցն, առաւել անհեղեղ գտանին քան զՃշմարտութիւնն՝ որոց բարձրութիւն շտուցանէ զնոսա. և առ չկամել հաւատալ անհաս խորհրդոց, զհետ կրթին մի ըստ միոջէ գամ քան զգամ անհասանելի մտքրութեանց։

Արդ զինչ հուսկ ուրեմն լցէ, տեարք, զինչ լցէ եղկելի անհաւատութիւն նոցա, քան թէ մտքրութիւն անվախճան, ժպրհութիւն յանդգնեալ յամենայն, կամաւոր տպշութիւն, և հակիրճ՝ ամբարտաւանութիւն ապատամբ 'ի գարմանոյ, որ այն ինքն է հետող օրինաւոր իշխանութեան։ Մի համարիք թէ անժուժութեամբ զգայութեանցն միայն ընդ քարշ վարիցի մարդ. անժուժկալութիւն մտաց ոչ ինչ ընդհատ հրապուրօղ է. ունի իւր իբրև զմիւսն գաղտուկ հեշտութիւնս, և յարգելուլն՝ զայրանայ։ Հպարան այն կարծէ ամբառնալ 'ի վեր քան զամենայն՝ նա և քան զանձն ևս, յորժամ բարձրանայցէ ըստ կարծեացն 'ի վեր քան զկրօնսն զոր պաշտեաց մինչև ցայն վայր. զանձն 'ի նոցա իմն կարդի դնէ՝ որ 'ի պատրանաց զերծեալքն իցեն. անգոսնէ 'ի սրտի իւրում զտկար միտս՝ որ զհետ միայն երթալ գիտեն այլոց՝ առանց ինչ յանձնէ հանձարելոյ, և ընդ անձն ևեթ հաճեալ, անձամբ անձին աստուածանայ։

Յայս վիճ անդնդասոյզ կորնչելոց էր տիկինն պալատունի։ Յանկարծ նա ապաքէն սրտի մաթք կալ 'ի վերայ Ճշմարտութեան. բայց ո՞ւր է Ճշմարտութիւն առանց հաւատոց՝ որ նմա անհնարին թուէր, եթէ ոչ սքանչելեաւք իւրք արնկեսցէ զայն 'ի նմա Աստուած։ Զինչ օգուտ նմա 'ի պահելոյն զաստուածութեանն ծանօթութիւն. և միաք անգամ կարի անառակեալք՝ զայնր գիտութիւն ջնկեհնուն 'ի բաց, զի մի զանկ յայանի կուրութիւն՝ անձանց մեղ դնիցեն։ Աստուած ոք 'ի քմաց ստեղծեալ, համբերող՝ անզգայ՝ ըստ հաճոյս կարեացս, չէ ինչ ծանրատաղուկ. անձամբ անձին ազատութիւն առեալ խորհելոյ ըստ կամս՝ ընչել կարծեցուցանէ շունչ իմն նոր. թուխք վայելել յանձինս մեր և յիրս, և 'ի ցնորական իրաւունս անդ տեր լինելոյ չզլա-

նալ ինչ անձին, կարծեմք 'ի բոին ունել զամենայն բարիս, և կանխաւ իսկ ըմբռնեմք զայն։

Յայսմ պայմանի, քրիստոնեայք, ուր հաւատք ինքնին կորուսեալ են, այս է՝ հիմն քանդեալ, զինչ մնայր տիկնոջս մերում. զինչ մնայր հոգւոյ անկելոյ՝ ապդար գտատատանաւն Աստուծոյ՝ յամենայն շնորհաց, և ոչ իւրք կցորդ եղելոյ ընդ Յիսուսի Քրիստոսի, զինչ մնայր, քրիստոնեայք, բայց զոր սուրբն ասէ Աւգոստինոս. Մնայր մեզ Բարեաւորութիւն և մեզ ողորմութիւն [1]։ Այս մնայր գաղտնի ակնարկութիւն գթալոյ Խնամոցն աստուածեղենաց՝ որ կոչել զնա կամէին 'ի ծագաց երկրէ. և աւասիկ ազգումն առաջին։ Ունկնդիր լերուք, տեարք. սքանչելի իմն 'ի նմա երևի նըշան։ Երազ իմն զարմանալի էր այն, յորոց Աստուած ինքնին առաքէ 'ի ձեռն հրեշտակաց, այնպէս յայտնատեսիլ և անշամանդաղ, յորում և երկնաւոր իմն չգիտեմ զինչ երևեալ։

Թուեցաւ նմա, – նա ինքնին իսկ է որ պատմէ սրբոյ վանահօրն, լուարուք աղէ, և զդոյշ լերուք մանաւանդ չսկսել քամահանօք զկարգ աստուածեղէն ազգեցութեանցն և զընտրեալն զոՀ, – թուեցաւ նմա, ասեմ, թէ «'ի գնալն միայնուկ ընդ անտառ մի, գտանէ անդ զկոյր ոմն 'ի փոքրիկ խղկան։ Մատուցեալ հարցանէ. Ի ծնէ՞ իցէ կոյր, թէ 'ի պատահարէ իմաքէ. եւ պատասխանի թէ 'ի ծնէ եմ։ — Ուրեմն ոչ գիտես, ասէ ինքն, զինչ է լոյն գեղեցիկ և քաղցր, և զինչ արեգակն պայծառ և չքնաղ։ — Իմ չիք բնաւ, ասէ նա, վայելեալ յայդ գեղեցիկ արարած, և չմարթեմ նկարել յիս զկերպարանս իրիդ. սակայն, ասէ, հաւատամ թէ սքանչելի է գեղով։ Յայնժամ երևեցաւ կոյրն փոխեալ զՃայնն և զգէմն, և իշխանական զբարբառն ողորակեալ, Իմ օրինակս, ասէ, ուսուցէք քեզ՝ թէ են են իրք գերաբուռնք և զարմանալիք՝ անտեսանելիք աչաց, սակայն ոչինչ

1 Մեկն. Սաղմ. Ը։

ընդհատ Հշմարիտք և ցանկալիք, թէ և անհատք և աներ-
կեւոյթք »։

Վասն զի ստուգիւ զրկեալ են անհաւատք 'ի զգայու-
թենէ միոջէ իբրև զկոյրն. և զայն՝ Աստուած պարգևէ՝ ըստ
երանելոյն Յովհաննու. « Եւ մեզ միտս՝ զի ծանիցուք
զՀշմարիտն, և եմք 'ի Հշմարտի որդւոյ նորա [1] »։ Ի միտ առ-
տիկինս, և անդէն 'ի խորհրդական երազն անդ՝ « զառակ
գեղեցիկ օրինակի կուրին դարձոյց 'ի Հշմարտութիւնս հա-
ւատոց և հանդերձելոյ կենացն »։ Նորա իսկ բանք են զոր
ածեմն 'ի մէջ։ Աստուած անկարօտն ժամանակի և երկայն
մանուածոյ խօսիլ առ 'ի յայտնելոյ զմիտս իւր, եթէ նոյն
հետայն զաչս նորա։ Յայնժամ նա յանկարծադ լուսով
« այնպէս եգիտ զանձն լուսաւորեալ, — նոյն ինքն է դար-
ձեալ որ խօսի առ ձեզ, — և այնպէս ցնծացեալ խնդութեամբ
ընդ գիւտ երկայնժամանակեայ խնդրելոյն, մինչև գիրկս
արկ կուրին, որոյ բանք գեղեցկագոյն իմն ծագէին 'ի նա
լոյս քան զայն յորմէ թափուր էր ինքն։ « Եւ սփռեցաւ,
ասէ, 'ի սիրտ իմ անուշակ ուրախութիւն և հաւատք աղ-
դևոր, զոր չիք բան բաւական 'ի պատմել »։

Ի լսել կայք, քրիստոնեայք, թէ զինչ լինիցի արթնու-
թիւն այսպիսի քաղցր և զարմանալի քնոյ. լուարուք և
խոստովան եղերուք՝ թէ Հշմարիտ տեսիլ աստուածային
էր երազն այն։ « Զարթեայ, ասէ, յետ այնորիկ, և գտայ
որպէս էիս 'ի սքանչելի անուրջս անդ, այս ինքն չաւատալի
փոփոխեալ »։ Աքանչելիքն որում սպասէր՝ կատարեալ
էին. որ անհնարին զհաւատսն համարէր, աւասիկ հաւա-
տայ։ Յանկարծածին լուսով լուսաւորէ զնա Աստուած և
հիսարաշ իմն տեսլեամբ։ Ամենայն զնորին զօրութեան ըզ-
հետ երթայ 'ի նմա։ « Յարեայ, ասէ, շտապաւ, ամենայն
գործքս խառն էին ուրախութեամբ և անսովոր ժրու-
թեամբ »։ Տեսանէք իսկ, զի նորանշան ածխոյժք որ զշար-

1 Ա. Յովհ. Ե, 20։

մանս նորա վառէին, երևին և 'ի բանս իւր։ « Զոր ինչ ըն-
թեռնուի զաստուածպաշտութենէ, շարժէին զիս մինչև
յարտասուս. 'ի պատարագի այլակերպ իմն գտանէի զիս
քան զսովորականն իմ »։ Վասն զի առաւել քան զբնաւան
անհաւատալն թուէր նմա խորհուրդն այն. « իսկ յայնժամ,
ասէ, թուէի զգալ զհաւաստի առաջակայութիւն Տեառն
մերոյ, գոգցես իմն որպէս զի զերևելիս ոք զգայցէ և զան-
երկբայսն »։ Վասն որոյ 'ի խոր խաւարէ անց վաղվաղակի
'ի լոյս պայծառ, մտացն մէջ փարատեցաւ. նշան զարմա-
նալի հանդոյն այնմ՝ յորում յական Թովթափել կեղևեաց
ընկէց Յիսուս յաչաց անտի դարձելոյն Սաւղոսի՝ իբրու
զթեփս ինչ ծեփեալս զնոքաւք [1]։ Արդ առ յեղակարծ փո-
փոխումդ ո՞ չ գոչեսցէ, Մասն Աստուծոյ է այս [2]։

Որ զհետն գայ՝ չտայ երկմտել, և շնորհին գործ 'ի զը-
տուլսն Հանաչի։ Յետ այնր երջանիկ ժամու՝ հաւատք
տիկնոջս կացին անսասան, և զգալն բերկրութիւն հաւա-
տալոյն իւրոյ՝ յերկարեցաւ 'ի նմա առ ժամանակ մի։ Բայց
առ երկնածորան քաղցրութեամբքն արգարութիւնն աս-
տուածային զիւր կարգ կալաւ. տիկինն խոնարհ ոչ օրէն
համարեցաւ իւր՝ մատչել անդէն առ խորհուրդս սրբու-
թեան. ամիսք երեք 'ի գլուխ՝ ծախեցան յարտասուախառն
քնութիւն ամացն իւրոց անցելոց 'ի պատարանս, և 'ի պա-
տրաստութիւն խոստովանութեան։ Ի մերձենալ ցանկալի
աւուրն յորում ակն ունէր կատարել զայն, անկաւ 'ի
թալուկ, որ եհատ 'ինմանէ զգայն՝ զթնդումն սրտին և ըզ-
շունչ։ Իսկ իբրև զանձամբ եղև յերկար և յօտար թալա-
նալոյն, գժնդակ ևս ախտիւ ջերաւ. և յետ արհաւրաց
մահուն՝ կրեաց զամենայն սոսկումն գժոխոց. վայելուչ
արդասիք խորհրդոց եկեղեցւոյ, որք 'ի տալ և 'ի յապա-
զել՝ ազդեն 'ի հոգին զԱստուծոյ ողորմութիւնն, կամ զվրի-

1 Գործ. Թ, 18։
2 Եկեց. Ը, 19։

ժուցն իւրոց սատկութիւն։ Հայր խոստովանութեան իւրոյ կոչեցեալ 'ի նմանէ՝ գտանէ զնա վկաւեալ՝ անզօր 'ի մտադիւրութիւն, և հաղիւ բաւական 'ի յօդել ձայնս ինչ կցկտուրս։ ուստի և հարկեցաւ յաստղել առ վաղիւ զնոս տովանութիւնն։

Բայց նմա արժան է պատմել ձեզ զգիշերն զայն՝ զոր անցոյց յանկալութեան։ Ո՞վ գիտէ թէ տեսչութիւնն աստուածային չիցէ ածեալ այսր զմոլորեալ ոք հոգի, զի շարժեսցի 'ի պատմութենէ ասսի յայսմանէ։ «Անմարթ է, ասէ, առանց ընդ փորձ անցանելոյ 'ի միտ առնուլ զանհնարին վիշտս հոգւոյս։ ժամ 'ի ժամէ խիթայի 'ի կրկնելոյ նշաղմանս, որ է մահուս և կորստեանս։ Վկայեին ինձ միաք իմ, թէ անարժան եմ ողորմութեան՝ զորով այնչափ ժամանակս անփոյթ արարի։ և 'ի սրտի խմուտ ասէի առ Աստուած, թէ չէք ինչ իմ աղերս արկանել առաջի արդարութեան իրաւանց իւրոց։ այլ հուսկ ապա ուրեմն, ով անտանելի կրիցս, բնաւ ոչ տեսանիցեմ զինքն, ընդ թշնամիս իւր լինիցիմ յաւիտեան անկեալ 'ի սիրոյ նորա, նմա յաւիտեան յաչաց ելեալ։ Զայս անձկութիւն խանդաղատելով կրէի, և որպէս ինձ թուի, – նորին ինքեան բանք են, – կրեի զայն որիշ ամենեւին յայլոց տանջանաց գեհենին»։ Աւադիկ, քոզք իմ սիրելիք (ԺԲ), ծանօթ ձեզ է, աւադիկ սեան և սերտ սէր զոր ինքն Աստուած սիրէ 'ի սիրտս՝ ամենայն գրգանօքն հանդերձ և ամենայն սուրգութեամբն։ աւադիկ ահն որ փոխէ զսիրտս։ ոչ երկիւղ ծառայական՝ ահաբեկ յերեսաց անհամբոյր տեառն, այլ երկիւղ սրբասէր հարսին՝ որ կասկածէ անկանել 'ի սիրելոյն։ Այս խմսաք աղուսակիք խառն ընդ արտասուս և ընդ երկիւղ՝ զայրացուցանէին մինչև 'ի սպառ զցաւս նորա, և չէր որ 'ի վերայ կայր պատճառին, և զտաղնապն 'ի ջերմանէն համարէին որով տառապէրն։

Ի թշուառութեան անդ, մինչդեռ անարդեալ խոտան համարէր զանձն, և գրեթէ անցոյս 'ի փրկութենէ, Աստուած՝ որ որպէս կամի և որպիսի օրինակօք՝ այնպէս ծանուցանէ զշնորհութիւնս իւր, ոչ գագարեաց յուսուցանելոյ զնա իբրև զՅովսէփ և զՍաղոմոն, և 'ի թմբրութեան անդ՝ որ 'ի նեղութենէ ոգւոյն անկաւ 'ի վերայ, արկ 'ի միտս նորա զառակս զայս զՀանդոյն աւետարանականին։ Տեսանէ երևեալ զոր ոչն անարժան գտեցաւ Յիսուս տալ մեզ յօրինակ գթոց իւրոց[1], հաւ մի մայր եղեալ ժրագլուխ զձագուքն որոց առաջնորդէր։ յորոց և մին անջատեալ 'ի նոցանէ, տեսանէ հիւանդս մեր զնա կուր եղեալ շան միում՝ քաղցելոյ։ Ընթացեալ կորզէ 'ի նմանէ զանմեղ անասնիկն։ ձայն ելն այլուստ նոյնժամայն աղաղակէ առ նա՝ թէ պարտ է դարձուցանել զայն առ յափշտակիչն, որոյ ցածնուցու գազանութիւն՝ 'ի տալն 'ի գուրս զորսն նորա։ «Ոչ, ասէ, ոչ երբեք տաց զնա»։ Զարթեաւ նա առժամայն, և պատշաճութիւն առակի օրինակին երևելոյ՝ խակ և խակ զօդեցաւ 'ի մտի իւրում, որպէս եթէ ասէր ոք։ «Եթէ գու՝ որ չարդ ես, չառնուս յանձն տալ 'ի գուրս զփոքրիկ անասնիկն զոր թափեցեր, զի՞ է զի հաւատաս՝ թէ անբաւ բարին Աստուած մատնեսցէ զքեզ զիւրն՝ զփրկեալդ միանգամ 'ի ձեռաց նորա։ Ապէ յուսա և խրախուսեա[2]»։

Ընդ բանին հանդարտեաց և նա և ցնծացաւ անսպառմելի, «որպէս եթէ հրեշտակի ուրուք ուսուցեալ էր նմա, – և այս ևս նորա բանք են, – թէ ոչ երբեք ընդ վայր հարցէ զնա[3] Աստուած»։ Այսպէս գագարեաց խակ և խակ մոլեգնութիւն մրրկացն և ալեաց 'ի ձայն սաստիցն Յիսուսի, որ և ոչ ինչ սակաւ սքանչելիս եցոյց 'ի հոգի տապալեալս մերոյ սրբոյ, զի յերկեղուկս անդ խղճի մատցն տաղնապելոյ և 'ի վիշտս անդ դժոխոց[4], աղբեցոյց 'ինա յանկար-

1 Մատթ. ԻԳ, 37։
2 Աղդ. Է, 11։
3 Մարկ. Դ, 39։ Ղուկ. Ը, 24։
4 Սաղմ. ԺԷ, 6։

ծոյն կենդանի յուսով՝ ընդ մեղայն թողութեան՝ և զնա-
ղաղութիւնն որ 'ի վերս է քան զամենայն միտս [1]։ Յայնժամ
խնդութիւն երկնաւոր կալաւ զամենայն զգայունսն, «և
ցնծացան ոսկերքն տառապեալք [2]»։

Յիշեա, քահանայապետ սուրբ, յորժամ կալցես 'ի
ձեռաց զպատարագն սուրբ զբարձող մեղայ աշխարհի, յի-
շեա մի՛ մոռանար զսքանչելիս զայս հնորհաց։ և դուք, քա-
հանայք սուրբք, մատեք։ և դուք՝ դատեալք պարկեշտաժո-
ղովք, և դուք՝ քրիստոնեայք։ ասէ ով մեղաւորք՝ մատեք
և դուք։ առ հասարակ միաբանական ձայնիւ սկիզբն արաս-
ցուք երգոյն փրկութեան, և մի՛ ընեսցուք յեղյեղուկս ար-
կանել ընդ Դաւթի։ «Զի բարի է Տէր, զի յաւիտեան է
ողորմ նորա [3]»։

Զէ արժան ապախտ զայսպիսի հնորհօք առնել, և ոչ
յանհոգս ինչ ընդունել զնոսա։ Տիկինս պա՛տուական յա-
կան քթթել փոխեցաւ բոլորովին։ պաճոյճ և ոչ մի՛ բաց
'ի պարզութենէ։ զարդ՝ և ոչ ինչ, բայց պարկեշտութիւն
ևեթ։ զայս նուագ ևս երևի աշխարհի, բայց 'ի ցուցանել
նմա զանձն ուրացեալ յաւնայնութեանց նորա։ Զի զինչ
այն մոլորութիւն ի՛սկ կնոջ քրիստոնէի և ապաշխարողի
ևս՝ ընդ պաճուճանս հանել զայն ինչ, որ չէ իմիք արժանի՝
բայց արհամարհութեան իւրում, նկարել և պճնել ըզ-
կուռս աշխարհի, իբրև բռնի և բիւր անպատեհ և անշահ
հնարիւք պահպանել զմոյնս որ ցնդին ժամանակաւ։ Ան-
երկիւղ 'ի խօսից մարդկան, առանց որպէս երբեմն խուճա-
պելոյ 'ի սին ցնորից ոգւոց տկարաց՝ յորոց մեծամեծք ա-
ռաւել զարհուրին քան զայլս, տիկինս պա՛տուական եղ
երևեցաւ յաղքունեան այլ յայլմէ ամենեքին, և 'ի բնաւ
զբօսանաց ետ հրաժեշտ, 'ի բոլոր խաղուց՝ ևս և յանմե-

1 Փիլիպ. Դ, 7։
2 Սաղմ. Ծ, 10։
3 Անդ, ճԼԵ, 1։

զաց, հպատակեալ անաչառ օրինաց քրիստոսակրօն ա-
պաշխարութեան, և զսպել միայն միտ եդեալ և պատժել
զերբեմն անսանձ անսահման ազատութիւնն։

Երկոտասան ամք համբերութեան 'ի դժուարին հան-
դէս՝ ամբարձին զնա 'ի մեծ չափս սրբութեան։ Օրէնք զոր
յառաջնմէ օրէ եդ անձին՝ կացին մնացին անխախտելի։
տուն իւր համօրէն եմուտ ընդ նոքօք, ոչ այլ ինչ էր անդ՝
բայց 'ի միոյ հոգևոր կրթութենէ անցանել յայլ։ ոչ երբեք
աղօթիցն ժամ փոփոխեցաւ կամ հատաւ ընդ մէջ, և ոչ 'ի
պատճառս ինչ խօթութեանց։ Գիտեր զի 'ի սուրբ ընտա-
նութեան անդ՝ խնդիր այն է, խոնարհել ընդ ձեռամբն Ա-
տուծոյ, և առնուլ մանաւանդ քան տալ։ կամ թէ ասել
առաւել, ըստ քրիստոսաւանդ պատուիրանին՝ հանապա-
զորդեան էին [1] աղօթք նորա՝ ըստ չափոյ պիտոյիցն։ Աւե-
տարանին ընթերցուածք և այլոց գրոց սրբոց՝ հանդերձէին
զկիւթն։ եթէ ձեռագործն խափանել ինչ զայն թուէր,
այլով ինն օրինակաւ յամենայր 'ինմին։ Ձեռագործական
վաստակօքն փարատէր զձանձրութիւն, չվատներ զժամա-
նակն, զկեղծութեանն քաջալերեր վհատութիւն, և զվնա-
սակար բանդագուշանս դատարկութեան։

Մատչն դիւր գործէր, մինչդեռ ձեռք 'ի ճարտարու-
թիւն զբաղեալք՝ պարապէին յարուեստակերտուածս բա-
րեպաշտական խորհրդոց, որ կամ աղքատաց էին ձորձք,
կամ զարդք սատուածային սեղանոց։ Փոխանակ մրմնջող
աշխարհական ուրախութեանց՝ սաղմոսք էին։ Ուր չէին
ինչ պէտք խօսից՝ լուռ կայր տիկինս իմաստուն։ ընդունայ-
նութիւն և բամբասանք՝ հիմն ամենայն խօսակցութեանց
աշխարհի՝ խէթ 'ի միտսն արկանէին յամենայն խօսից, և
ոչինչ քան զմիայնութիւն երևէր նմա քաղցր, և ոչ ան-
քոյթ։ Ի խօսել իւրում զԱստուծոյ՝ ախորժակաց սրտին
յորոց բղխէին բանքն՝ հաւասարէր զկենակիցս իւր, և աղ-

1 Դուկ. ԺԸ, 1։

նուական ասացուածք՝ 'ի Ճառս կամ 'ի գիրս իւր նկատեալք՝ Եւանեղին 'ի վսեմական տեսութենէ անտի աստուածայնոցն։ Հաւատք իւր՝ որպէս միամիտ, նոյն և կենդանի էր։ 'ի հրաշակաւոր խնդիրսն՝ որ զնաղղութիւն աւուրցս պէսպէս վրդովեցին, համարձակաձայն խոստովան լինէր՝ թէ չմնայ ինչ իւր առնել, բայց հնազանդ լինել Եկեղեցւոյ։

Եթէ էր Նորա՝ հարցն իւրոց՝ Նվէռեան խշխանացն բախտ, զանցուցանէր արդեօք զբարեպաշտօն մեծագործութեամբ նոցա, թէպէտ և հարիւր տաճարք հոյակապք զփառս նոցա մինչև յերկինս ամբառնան, «և եկեղեցիք սրբոց քարոզեն զողորմութիւնս նոցա [1]»։ Հայր Նորա խշխանն մեծ՝ հաստատեալ էր յերկրի իւրում հասս՝ յամուսնացուցանել ամի ամի աղջկունս վաթսուն, նուէր Ճոխ, գեղեցիկ պարգև։ գուստր Նորա և տիկինս ամուսնաւորէր ամ՝ըստ ամէ զորս և կարէր, ոչ ըստ արժան բաւականին պատուէր համարեալ զառատութիւնս հարց իւրոց՝ եթէ ոչ 'ինմանութիւն նոցին կրթեսցի։ Զէ հնար ժոյժ ունել յարատասուց 'ի տեսանելն զլեղումն սրտի Նորա 'ի գութս պառաւանց զորս դարմանէր։ աչք նորա քնքուշք՝ գրգանս համարեցան զնորշմեալ երեսն, զկարկամ կորացեալ անդամն ընդ ամացն ծանրութեամբ։

Լուարուք աղէ զոր ինքն գրէ առ հաւատարիմ պաշտօնեայ ողորմութեանց իւրոց, և 'ինմին բանի ուսարուք զՀաշակ առնուլ զքրիստոնէական պարզմութեան և գթութեան։ «Խրախ եմ, ասէ, զի իրք բարի պառաւանցս այդպէս յառաջադէմ են։ 'ի գլուխս տարցուք փութով՝ յանուն Տեառն մերոյ։ հանցուք վաղվաղակի զկիրն զայն բարի 'ի մերոյ անտի ուր կայ, և դիցուք 'ի մի 'ի խշտեկացն»։ Որպիսի՞ նորոգատուր իմն զուարթութիւն փոխանակէ զայն՝ զոր աշխարհս ազգէ։ Ցաւելու նա 'ի բանս իւր։ «Ո՛ դիտէ տացէ ինձ Աստուած առողջութիւն՝ երթալ սպաս տանել

1 Սիրաք։ ԼԱ. 11. ըստ լատին թարգմանութեանն։

ինոջն այնմիկ անդամալուծի։ արարից զայն զէթ խնամովքս, եթէ կար զօրութեան իմոյ պակասեցէ, և զվիշտս իմ ընդ նորայսն խառնեալ, համարձակագոյն մատուցից զայն Աստուծոյ։ Գրեա ինձ որ ինչ պակաս ինչ է 'ի կարասիս և 'ի կերակուր տառապեալ կանանցն, առ սակաւ սակաւ աբասցուք նոցա գիւրութիւն»։

Քաղցր է ինձ երկրորդել զամենայն բանսն, թէ և 'ի տաղտուկ փափուկ լսելեաց։ գլեն նոքա զմեծապանծ Ճառս, և կամիմ մի ևս խօսել՝ բայց միայն զլեղուն զայն։ Ցանսովոր կարօտութիւնս՝ 'ինոր ջանս թեւակոխեր ողորմութիւն նորա։ Կարաձմեռն ամացս յետնոց՝ 'ի սպառ մերկացոյց զնա յամենայն աւելորդացն, ամենայն ինչ աղքատացաւ 'ի տան և յանձին իւրում։ խնդագին տեսանէր զսպառել մնացուածոց աշխարհական պերճանացն, և ողորմածութիւն ուսուցանէր նմա հատանել այլ ևս ինչ ինչ յանձնէն զոր ամենայն։ Այս իսկ է Ճշմարիտ շնորհ ողորմութեան, 'ի սփոփելն զկարիս աղքատաց՝ նուազ առնել 'ի մէնջ զպէտս պէտս, զպիտոյս ասեմ ամենայնս՝ զդիւաս փափկասիրութեան։ որպէս թէ բնութիւն ինքնին չեցէ ոչ սակաւ նեղեալ յայցից։

Զի կայք մնայք, քրիստոնեայք, առ 'ի գտանալ առ Աստուած, և զմի հատանեք զայս փրկութեան ձերոյ։ Տեսանեք աւադիկ յոր ծագ կատարման հասանէ հոգի ապաշխարօղ՝ եթէ հաւատարիմ առ շնորհսն գտանիցի։ մի երկնչիք՝ մի 'ի հիւանդութենէ, մի 'ի տաղտկութեանց, մի 'ի փոքձութենէ և մի 'ի վշտաց դժնէից։ Աւադիկ անձն ըզգայուն և գիրգ, որ լսել անգամ չկարէր զանուանս ախտից, չարչարեցաւ երկոտասան ամ 'ի բուն, և գրեթէ անընդհատ, ցաւս դժնդակս կամ հիւանդութիւնս՝ որ զմարմին և զոգին հիւծեալ ցամաքէին։ և սակայն ընդ ամենայն ժամանակին ընդ այն՝ և յանկարծ տանջանս անդ վերջին հիւանդութեանն, յորում ցաւքն սասակացան մինչև յոյժ, ոչ զայլ ինչ ապաշաւեաց յանձին, բայց զի մի անգամ եթէ

մեղմագոյն մահու էր ցանկացեալ. նա և զըղձումն զայն զիրքբ՝ նոյնհետայն կարձեաց ասելով ընդ Յիսուսի զաղօթս մեծի խորհրդոյ պարտիզին. այսպէս անուանէր նա զաղօթս տէրունական տաղնապին. «Հայր իմ, ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին [1]»: Յաւք իւր չեռուն նմա զտենչալին իւր վիճիթարութիւն կատարելոյ զաւաչին դիտաւորութիւնն և վախճանելոյ զաւուրս իւր ընդ կանոնաւ և սքեմաւ սրբբուհւոյն Փարեայ: Սիրտ իւր նուիրեալ, կամ մանաւանդ անդրէն հատուցեալ, մենատանին այնմ՝ ուր զերախայրիս շնորհացն Ճաշակեալ էր, յայտ արար զիփափաք իւր, և կամք իւր պատարագ կատարեալ դատաւ յաչս Աստուծոյ:

Հոգւոյ այնպիսւոյ հզօր զօրավիգն լիներ՝ ի լրումն աստիճանի գործս մեծամեծս՝ ի պաշտօն Աստուածութեանն. բայց ընդ այլ շաւիղ առաջնորդեալ լինէր նա, ընդ այն՝ որ առաւել՝ ի խաչ հանէ, որ չթողացուցեալ արիական հոգւոյ ձեռն՝ ի գործ ինչ առնել, ունի զնա Ճնշեալ և չքայեալ ընդ խիստ օրինաց համբերութեան վերայ: Այլ փարեալ կամեցեալ էր Աստուծոյ պահել նմա զանուշակ Ճաշակ բարեպաշտութեան՝ զարծարծեալն՝ ի սրտին՝ ի սկզբան ապաշնարութեանն. այլ ոչ. ամենայն ինչ առաւ՝ ինմանէ. անհանգիստ նեղեալ յանտանելի տանջանաց: «Ո՛վ տէր, ասէր երանելին Յոբ, դարձեալ կրկնեալ սատակես զիս [2]»: Քանզի լուռ լեալ զայլոց չարչարանացն՝ խէթ սաստիկ հանապազ կայր՝ ի խորս սրտին՝ Աստուծոյ յաչաց ելանելոյ:

Տեսանէր, ասի՝ զարդարութիւնն սուրբ, որոյ առաջի տաղնապին հրեշտակք ցուցանեալ զանբծութիւն իւրեանց. տեսանէր զնա զի յաւէժաբաց աչքն նկատէ զամենայն գնացս նորա, համարէ զամենայն քայլափոխս մեղաւորի և զամենայն մեղս նորա կնքեալ պահէ՝ յանգիմանել նմա յաւուրն յետնում. «Կնքեցեր զանօրէնութիւնս իմ՝ ի քսակի [1]»: Ասնսի՝ Ճանաչէր զապականութիւն սրտի մարդոյ, խելթայլ, ասէ, զամենայն գործոցս. «Գիտեմ, ասէ, զի անարատ զիս ոչ թողուցուս [2]»: Զի՞նչ է զոր նշմարեմս. մեղս, մեղս ամենայն ուրեք. և աղաղակէր՝ ի տուէ և՝ ի գիշերի. «Ո՛վ տէր, զի՞ ոչ բառնաս զմեղս իմ [3]», և ոչ հատանես գամ մի զիշուառայեղց աւուրքս, յորս մեղանչել միայն է առ քեզ, զի մի՛ ասիցի՝ թէ «Հակառակ եցեմ ես բանի Սրբոյն [4]»: Այս էին բուն պատճառք աղէտից նորա. և որ սաստիկ ինչ՝ ի բանն երևեալ՝ երկիւղածութիւն ևեթ է խղճի մտացն՝ յանձնէ խակ զարհուրելոյ, կամ յորդութիւն սիրոյ՝ որ անհաճոյն լինել խիթայցէ:

Այսպիսի ինչ կրեաց և տիկինս պաշատունի. ոչ տանջանք երկիւղած մտացն խղճի: Թուէր նմա տեսանել յամենայն՝ ի գործս իւր զանձնասիրութիւն յառաքինութիւն կերպարանեալ. ըստ սրատեսութեանն էին և տանջանք իւր. այսպէս խոնարհէր զնա Աստուած՝ որովք ամբարտաւանութիւնն յօրացեալ սոնքանայ, և զպատճառս ախտին՝ նմա՝ ի դեղ յարդարէր: Ո՞ կարէ պատմել զսոսկումն որով մատչէր՝ ի խրախուսնս սրբոյ սեղանոյն. այլ զվստահութիւնն պահէր անկորուստ: «Արդ ուրեմն, ասէ գրելով առ սուրբ քահանայն՝ շնորհեալ նմա յԱստուծոյ՝ ի սփոփել զնա՝ ի վիշտս իւր, արդ ուրեմն ժամանեցի առ կոչունսն աստուածեղէն: «Յարուցեալ էր իմ առաւօտուց՝ հասանել կանխաւ՝ ի դրունս Տեառն. բայց նա միայն գիտէ որով պատերազմաց Ճգնութեամբ»: Առաւօտին պահ անցանէր յայս գժնդակ մրցանս: «Բայց ապա, յաւելու ասել, ամենայն անկածութեամբս իբրև ընդ քարշ սողեցայ առ ոտս Տեառն մերոյ, և ծանեայ՝ զի որովհետև ամենայն ինչ յիս

1 Ղուկ. ԻԲ, 42:
2 Յոբ, ժ, 16:

1 Անդ, ԺԴ, 17:
2 Անդ, Թ, 28:
3 Անդ, Ի, 21:
4 Անդ, Զ, 10:

աստուածեղէն բարութեանն զօրութեամբ գործեցաւ, հարկ էր ինձ ընդունել ևս զօրութեամբ իւիք և զայս վերջին ծագ բարեաց»: Յայտնէր նմա Աստուած 'ի վիշտս նորա՝ զծածուկ կարգ արդարութեան իւրոյ առ ապախտաւոր շնորհակորոյսս ապաշխարութեան: «Ոչ արժան՝ ոչ պատշաճ, ասէր, փախստական ծառայից, զորս պարտ է երթալ առնուլ բռնի և բերել իբրև յակամայս նոցին, գալ բազմել 'ի խնջոյս ընդ որդիս և ընդ բարեկամս. շատ է թէ ներեսցի նոցա գալ քաղել 'ի գեանոյ զանկեալ փշոյնս սեղանոյ տերանցն»:

Մի՛ ինչ զարմանայք, քրիստոնեայք, եթէ ապիկարս ես ատենախօս՝ չառնեմ ինչ այլ՝ բայց երկրորդել զբանս տիկնոջն. քանզի առնում 'ի նոսա զհամ թաքուցեալ մանանային, և զճաշակ աստուածեղէն տաւիցն, որոց խելամուտ առնէին զնա վիշտք իւր և խմացուածք սրտին: Վա՜յ ինձ, եթէ յատենի աստ յայսմիկ զանձն իմ ախորժիցեմ խնդրել քան զձեր փրկութիւն, և եթէ ոչ նախամեծար ընտրիցեմ քան զհաճոյական ձեզ գիւտս իմ, զփորձ բանից տիկնոջս պատշաճելոց 'ի դարձ ձեր: Զիղջ է ինձ միայն ընդ որս զանցն առնեմ, և չկարեմ լռել զգրեալսն զփորձութեանցն անհաւատութեան: «Հաւատարիմ յոյժ է, ասէր, զի որ յանչափս սիրէ Աստուած՝ ըստ այնմ և զսիրոյն անչափութեան և զզօրութեանն հանդէս ընծայեսցէ. և որ սեփական ինչ ամենակալ զօրութեանն Աստուծոյ է, գեր 'ի վերոյ անցանէ զանցանէ քան զհասումն տկարութեան մտաց մերոց: Զայս ասեմ, ասէ, ցանձն իմ, յորժամ հնարին զձեզ ստանեցուցանել զհաւատս իմ. և յորմէ հետէ հաճեցաւ Աստուած արկանել 'ի սիրտ իմ, – միտ դիք գեղեցիկ բարբառոյս, – թէ սէրն իւր է սկիզբն ամենայն հաւատոց մերոց, այս պատգամ առաւել քան զամենայն մատեանս հաւանեցուցանէ զիս»: Այս իսկ համառօտութիւն է ամենայն դրոց սրբոց և բովանդակ քրիստոսակրօն վարդապետութեան:

Արի՛ եղ, Բանդ յաւիտենական, միածին որդի Աստուծոյ կենդանւոյ, էլ յերանաւէտս ծոցոյ հօրդ և եկ պատմել մարդկան զգաղտնիս՝ զոր 'ի նմանէ տեսանես: Զայդ արար նա, զամս երիս ոչ դադարեաց ասել զծածուկս աստուածեղէն խորհրդոցն[1]. բայց զամենայն զոր ասաց՝ բովանդակէ 'ի մի յայն բան իւրում Աւետարանին. «Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ[2]»: Մի՛ ևս խնդրէք, զի՞նչ միացոյց 'ի Քրիստոս Յիսուս զերկինս և զերկիր, և զնաչն՝ ընդ մեծութիւնս. «այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ»: Մի՛ անհաւատ ինչ լցէ սիրել Աստուծոյ, և բարութեան՝ հաղորդակա՞ն լինել: Յի՞նչ ոչ համարձակէ զարիական ոգիս սէր փառաց, զռամիկ ոգիս՝ սէր ընչից, զամենեսին առհասարակ՝ որ ինչ միանգամ սէր անուն կոչի: Զիք ինչ ծանր, ոչ վանգք, ոչ աշխատութիւնք, ոչ տառապանք. և տես իմ իմիք սքանչելեաց բաւական իցէ մարդ: Իսկ եթէ մարդ, ամենեին տկարութիւն, նկրտի յանհնարինսն, Աստուած՝ 'ի հաճոյս սիրոյն իւրոյ՝ ո՞չինչ նորանշան գործիցէ: Այս փոխանակ ամենայն հաւատեաց՝ ասացուք յամենայն'ի խորհուրդս. «Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ»: Այս ուսումն վարդապետին է, և աշակերտն սիրելի՝ էր այնմ քաջահմուտ:

Կերինթոս ումն անուն հերձուածապետ 'ի ժամանակին՝ ոչ անսայր հաւատալ թէ Աստուած մարդ լինիցի և զոհ 'ի վերայ մեզաւորաց. զի՞նչ ետ նմա պատասխանի Առաքեալն կոյս, մարգարէն նորոց կտակարանաց, արծուին այն, աստուածաբանն ըստ առաւելագանցութեան, ծերունին սուրբ, որոյ չէր ինչ ոյժ 'ի յաստոծ՝ բայց 'ի քարոզել և ասել զսէր և ասել, Սիրեցէք զմիմեանս 'ի Տէր մեր. զի՞նչ ետ պատասխանի հերձուածապետին այնմ. զո՞ր հանգանակ, զի՞նչ

1 Յովհ. Ա., 18:
2 Անդ, Գ., 16:

դաւանութիւն նոր՝ ընդդէմ եդ նորահնար հերձուածոց նորա։ Լուարուք և զարմացարուք. «Մէք հաւատացաք, և ծանեաք զսէրն Աստուծոյ զոր ունի առ մեզ[1]»։ Այս իսկ է բնաւ հաւատք քրիստոնէից, այս սկիզբն և բովանդակութիւն բոլոր դաշինն հաւատոց. անդ եղիտ տիկինս զլուծումն հնոց տարակուսանացն։ Աստուած սիրեաց, այս՝ ասէ է զամենայն։ Եթէ արար, ասէր, այնպիսի մեծամեծս առ 'ի յայտնի առնելոյ զսէր իւր 'ի մարմնաւորութեանն, զի՞նչ ինչ չիցէ արարեալ՝ 'ի կատարումն հանել զայն 'ի խորհրդեանն սրբում, առ 'ի տալ զանձն իւր՝ ոչ հասարակաց միայն բնութեան մարդկան, այլ միում միում իւրաքանչիւր հաւատացելոյ։

Հաւատասցուք ուրեմն ընդ երանելոյն Յովհաննու 'ի սէրն Աստուծոյ. քաղցրասցին մեզ հաւատք, եթէ զայսմ փափուկ մասնէ բուռն 'ի նա արկանիցեմք։ Այլ մի կէս 'ի կէս հաւատասցուք 'ի նա զօրէն հերձուածողաց, յորոց է որ զայս մասն քաղ հանէ, և է որ զայն. ոմն զմարմնազգած անօրէնութեանն խորհուրդ, միւսն զբրոյ զոհութեանն. իւրաքանչիւր զանհաճոյն քմաց իւրոց։ Մինք փանաքիմացք, նա մանաւանդ սիրոք նեղք, և անձուկ ազիք, 'ի հաւատոց և 'ի սիրոյ ոչ ըստ արժանի ընդարձակեալք[2] 'ի տանել բովանդակ զայնութիւն սիրոյն Աստուծոյ։ Իսկ մեք՝ հաւատասցուք անխնայ և անխտիր, և առցուք ողջոյն զդեղն որչափ և դառն իցէ մտացս քմաց։

Առ իմ՞ այնչափ ծանրագին ինչ համարիցին Աստուծոյ նշանք սքանչելեաց։ Զիք այլ նշան՝ բայց մի և եթ զոր ես այսօր պատմեմ աշխարհի։ Ո՛վ երկին, ով երկիր, զարմացարուք յայս նորացոյց սքանչելիս. այն զի 'ի մէջ այնչափ հաւատեաց աստուածային սիրոյն՝ այնչափ անհաւատք դատնիցին և անզգամք։ Մի յաճախեաք զլիւն՝ որ երթայ

1 Ա. Յովհ. Դ, 16։
2 Բ. Կոր. 2, 11-15։

լով երթայ և աճէ զօր հանապազ. մի 'ի դէմս ածէք զեղկելի անհաւանութիւն ձեր, և մի այնու ինչ 'ի չքմեղս լինք։ Են առ Աստուծոյ դարմանք բժշկութեան ձերոյ, մնայ միայն ընդունել զայն մշտամնունչ խնդրուածովք։ Գիտայ նա ըմբռնել զսուրբ տիկինս՝ զորմէ մեր բանքս են՝ որով և կամեցաւ հնարաւորութեամբ. զոն նորա և այլք վասն ձեր մինչև յանհունս, և ձեզ ոչ ինչ է խիթալի՝ բայց յուսահատելդ 'ի բարութեանց նորա։

Յետ սոսկալի չարչարանացն յորս տեսէք զուք զսա, իշխէք տակաւին 'ի բերան առնուլ զվիշտս ձեր. սակայն եթէ երբէք փափաքէր նա սակաւ մի դիւրութեան, տգբատանէր զանձն։ «Սկսանիմ, ասէր, 'ի միտ առնուլ թէ ըզդրախան երկրաւոր խնդրեմ ես ընդ հետս Յիսուսի Քրիստոսի, փոխանակ զձիթենեաց լեառնն և զՊոյզոթայն խնդրելոյ, ընդ որ եմուտ նա 'ի փառսն իւր»։ Տեսէք զոր ուսոյց նմա խոկալն զտիւ և զգիշեր յաւետարանն սուրբ, և սնանելն բանիւն կենաց։ Նոյն ետ նմա բարբառել և ըզարմանալին զայն, թէ «ընտրեմ կեալ և մեռանել առանց իրիք միխիթարութեան, քան արտաքոյ Աստուծոյ խնդրել զայն»։ Զիմաստս զայս տարաւ նա մինչև 'ի վերջին տագնապ մահուն. և մինչ մերձ էր աւանդել զհոգին, լու եղև զի ասէր մեռելաշունչ ձայնիւ. «Գնամ տեսանել զինչ ապրացէ ընդ իս Աստուած. այլ յուսամ յողորմութիւնս նորա»։ Այս վստահութեան քաջայոյս բարբառ՝ առ տարաւ զհոգի իւր սուրբ՝ յօթեւանս արդարոց։

Զկայ առցուք ասա, քրիստոնեայք. և դու, Տէր, կարկեցո զանարժան պաշտօնեայս՝ որ չլատեմ զքո բանդ. խօսեաց 'ի սիրտս, քարոզդ անեղեալթ, և տուր իւրաքանչիւր առ անձն իւր խօսել։ Խօսեցարուք, եղբարք իմ, խօսեցարուք. ոչ առ այլ ինչ կամ ես ասասնոր, բայց յօժանդակել մտաց ձերոց։ Գայցէ ժամն այն յեռին, մերձենայ, հուսկ եմք, աւասիկ եկն։ Պարտ է ասել ընդ Անանայի Կոնզակեանն. Ոչ ևս է տիկին, ոչ պալատուն. անուանքն մե-

ծամեծք որով յապուշ միտս կրթիմք՝ ոչ եւս գոն։ Պարտ է ասել ընդ նմա. Գնամ ես, յափշտակեալ վարիմ անճառելի բանուութեամբ. փախչի ամենայն, ամենայն պակասէ, անհետ լինի ամենայն յաչացս։ Ոչ ինչ այլ մնայ մարդոյ՝ բայց ոչինչն և մեղք. կալուած բովանդակ՝ ոչինչն, ստացուած բոլոր՝ մեղքն. այլն ամենայն՝ զոր ունել կարծէր ոք, փախչի, հանդոյն ջրոյ սառուցելոյ՝ որոյ հալն անարդ պաղպաղակն 'ի ձեռս ունողին և ապտերէ զնոսա։

Այլ աւասիկ որ զսիրտս սառնացուսցէ, որ կարկեսցէ 'ի սպառ զձայն, որ սարսափիւն զամենայն ոսկերօք ածիցէ. «Գնամ տեսանել զինչ ընդ իս գործեսցէ Աստուած». 'ի քթթել մի ական՝ եղէց 'ի նորա ձեռան՝ զորոց գողութեամբ գրէ երանելին Պաւղոս. «Մի խաբիք, Աստուած ոչ արհամարհի [1]». և դարձեալ, «Ահ մեծ է անկանել 'ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ [2]». 'ի ձեռան՝ ուր ամենայն ինչ ազդումն է, ամենայն ինչ կենդանութիւն. ոչինչ ակարանայ, ոչինչ դադարէ, ոչինչ թուլանայ երբեք։ Երթամ տեսանել, օգնականն ինձ լինիցին ձեռքն ամենակալ, թէ սատակապահանք. 'ի պարգևս նոցա եղէց յաւիտեան, թէ ընդ դանիւ։ Այս է՝ զոր պարտ է ասել հարկաւ ընդ տիկնոջս. այլ՝ էջք և մեզ յաւելուլ անխառով մնայ խղճիս, «Յուսամ յողորմութիւն նորա»։ Զի զինչ գործեալ էջք մեր 'ի հաշտ առնել զայն ընդ մեզ. երբ լուիցուք «ձայնին բարբառոյ յանապատի, թէ Պատրաստ արարէք զճանապարհս Տեառն [3]»։ Եւ որպէս։ Ապաշխարութեամբ։

Բայց էջք ինչ մեզ շատ՝ ապաշխարութիւն առ դուրս մահու սկսեալ, անփորձ, անպտուղ ամենեին. ապաշխարութիւն անկատար, ապաշխարութիւն անվաւեր, երկեայ՝ թէ այնպէս ինչ կամիք, ապիկար, առանց մտադիւրութեան,

1 Գաղ. Զ, 7։
2 Եբր. Ժ, 31։
3 Ղուկ. Գ, 4, 8։

անպարապ 'ի գործման թերութեանցն։ Եւ չկցէ այս բաւական 'ի սոսկումն մինչև յուղիղ ոսկերաց։ Այլ զորմէ բանքս են, ահ եղբարք իմ, նորա ամենայն առաքինագործ հանգիսք ժողովին 'ի մի յայն բան վերջին, 'ի վերջին գործ կենացն. հաւատք, քաջալերութիւն ապաստան լինել յԱստուած, երկիւղ դատաստանաց նորա, և սերտ սէր մտերմական՝ որ միայն ջնջէ զամենայն մեղս։ Վասն որոյ ոչինչ զարմանամ, զի հովիւն սուրբ՝ առընթերակաց նմին 'ի յեղեն խօթութեանն, որ և զշունչս վախճանին ամփոփեաց, այնքան առաքինութեանցն եղեալ խեղամուռ՝ տարաւ զայս մինչև 'ի բեմն սուրբ, և չկարաց լռել 'ի չհուչակելոյ 'ի ժողովս հաւատացելոց։

Ո՛վ դար՝ 'ինանիր նրբախնդիր, որում կամք են իրաւամբք մեղանչել, ուր տկարութիւն՝ հնարի զօրութիւն առնուլ յառածից աշխարհի, ուր այնչափ անչափ հոգիք անզգամք՝ հանգիստ խնդրեն 'ի նաւաբեկութեան հաւատոց, և ոչ գուն 'ի վերայ անձանց գործեն՝ բայց եթէ 'ի յաղթել, փոխանակ կարեաց իւրեանց, խայթից մտացն խղճի. ահաւասիկ տիկինս պալատուն տուաւ քեզ նշան իմն սքանչելի. Եղիծին նշանք ա արուեսպք 'ի վերայ գոնն Իսրայելի [1], Տեսցես գուն զնա զի յաւուրն յետնում, որպէս սպառնացայ քեզ, յամօթ արասցէ զանզգջութիւն քո և զնոտի բազբաղայսդ։ Տեսցես գուն զնա խառնեալ յերամս սրբոցս այսոցիկ օրինաւորաց, և 'ի համբերն երանելեացն բանակս. և ո՞ ժուժկալեսցէ ահաւոր աղաղակն նոցա։

Իսկ զինչ լինիցի, յորժամ ինքն խսկ Յիսուս Քրիստոս երևեսցի Թշուառականացն. յորժամ հայեսցին յոր խոցեցինն [2], որպէս ասէ մարգարէն. զորոյ զվերքն պատառեցին. և յորժամ ահագին բարբառով ասասցէ առ նոսա. Ընդէր կեղեքէք զիս հայհոյութեամբք ձերովք. ազգ ամ-

1 Եսայ. Ը, 18։
2 Զաք. ԺԲ, 10։ Յովհ. ԺԹ, 37։

պարիշտ. ԶԻՍ ՎԻՐԱՒՈՐԷԻ՝ ապէ համօրէն[1]: Կամ թէ չառնէիք զայդ բանիւք, էր վասն առնէիք գործովք. կամ զմի դանդաչէցէք 'ի Ճանապարհս իմ յողդողդ գնացիւք, որպէս թէ յերկեայս ինչ էր բանն իմ: Ապէ անհաւատ, Ճանաչէք զիս այժմ. իցէմ ձեր թագաւոր, իցէմ դատաւոր ձեր, Աստուած իցէմ ձեր. ուստիք ձերով պատուհասիւքդ:

Անդ սկիզբն տացեն յաւիտենական արտասուք, անդ կրճու�ատամանց անվախճան[2]: Յամօթ մատնել ամբարտաւանից, դուք հաւատացէք՝ որ դողայքդ 'ի բանից նորա[3], յորում կողման ակմբիս և կայցէք, անծանօթք մարդկան և ծանօթք Աստուծոյ, սկսանիջիք բարձրացուցանել զգլուխս ձեր[4]: Եթէ յառաջի եղեալ օրինակաց շարժեալ՝ կակղացուսջիք զսիրտս ձեր, եթէ օրհնեաց Աստուած զվաստակս՝ որովք երկնեմն ծնանել զձեզ 'ի Յիսուս Քրիստոս, և եթէ յոյժ անարժան պաշտօնեայս խորհրդոց իւրոց՝ չնչեմ այնմ խափան եղեալ, օրհնեսջիք զաստուածային բարութիւնն՝ որ ած զձեզ 'ի հանդէս յուղարկաւորութեան տիկնոջս բարեպաշտի, ուր դոջիք թերևս զսկիզբն Ճշմարիտ կենաց:

Եւ դու, իշխանդ, որ այնչափ պատուեցեր զնա մինչդեռ յաշխարհի էր, որ բարեսէր թարգման զոյզն ևս ըղձանաց իւրոց՝ ցանկորդեալ կաս 'ի պաշտպանութիւն և 'ի խնամս ամենայն սիրելեաց իւրոց, որ և բաղում փութով և շքեղութեամբ տաս նմա զվերջին ցոյցս բարեպաշտութեան. դու բամբինդ, որ հեծես յոգւոց եղանես 'ի հաստուցանելդ զայս նմա թախծալից պարտս, և ակն կալար տեսանել զնա կրկին կենդանացեալ 'ի Ճառիս, զի՞նչ ասացից քեզ 'ի մխիթարութիւն: Ի՞ւ գաղարեցուցից, Տիկին,

1 Մաղաք. Գ, 9. ըստ լատին թարգմանութեան:
2 Մատթ. Ը, 12:
3 Եսայ. ԿԶ, 2, 5:
4 Ղուկ. ԻԱ, 28:

զվտակս արտասուացդ՝ զոր ոչ ժամանակ սպառեաց, և ոչ այնչափ իրաւացն պատճառք խնդութեան ցամաքեցին: Աստ ծանիր զաշխարհ, ծանիր զչարիսն՝ առաւել Ճշմարիտս միշտ քան զբարիսն, որով և զցաւսն՝ սաստիկ ևս և խորամուտ քան զուրախութիւնսն: Անցին զքեզ ժամքն երջանիկք՝ յորս վայելէիր զթոռք անզուգական մօր. կորեաւ անսպառ աղբիւրն իմաստութեան խորհրդոց, գնացին մխիթարութիւնքն՝ որ գաղտնի թովչութեամբ իւրք սփոփէին զցաւս՝ որ ոչ պակասեն 'ի կեանս մարդկան. բայց պատուականագոյնն կայ մնայ քեզ, յոյսն ժամանելոյ առ նա յաւուրն յաւիտենից, և զարգիս 'ի վերայ երկրի՝ յիշատակ խրատուց նորա, առաքինութեանցն նկարագիր և վարուցն օրինակք:

ՎԱԽՃԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԻ ԱՆՆԱՅԻ ԿՈՆԶԱԿԵԱՆ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Թիւ (Ա) խօսեալ առաջի մեծի Սեպհին, տիկնոջ նորա և Սեպհին Պուրպոնի, յեկեղեցւոջ Կարմելական հաւատաւորաց արուարձանին Սուրբ Յակոբայ, յինն Աւգոստոսի 1685 ամի։

(Բ) Գոնտէ, Գոնթի և Լինկլվիլ։

(Գ) Գոնտէ։

(Դ) Մազարէն։

(Ե) Մայր Լուդուիկեայ որ առ կրսերութեամբ որդւոյն խնամակալ վարիչ էր պետութեանն։

(Զ) Կարոլոս Կիւստաւ տանտերորդ, հաւ՝ անուանի երկոտասաներորդին։

(Է) Կիւստաւ Ատոլֆ, անուանեալ Մեծն Կիւստաւ։

(Ը) Զլուդուիկոս արքայ ԺԴ։

(Թ) Ընդ մեծ իշխանն Գոնտէի, որ յիրաւի երկրորդ զարմանալին էր յետ արքային 'ի ժամանակին։

(Ժ) Միւսոյ դատերն Տիկնոջս Անայի։

(ԺԱ) Տէր Ռանսէ, հռչակաւոր աբբան Դրաբբեանց, որպէս կանխեցաք ասացաք 'ի նախագրութեան։

(ԺԲ) Կարմելական կուսանքն, յորոց 'ի Սուրբ Յակոբ արուարձանի եկեղեցւոջն խօսեալ է ճառս։

ՃԱՌ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ (Ա)

ՄԻՔԱՅԵԼԻ ԼԸԹԵԼԼԵԱՆ

ԱՏԵՆԱԴՊՐԻ ԳԱԼԼԻՈՅ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Մէքայել Լըթելլեան, որդի Մէքայելի տեառն Շաւիլեայ՝ որ մերձ ՝ի Մեւդան, և խորհրդականի ատենին հարկաց, ծնաւ ՝ի 1605, և փուլթով եմուտ ՝ի կարգ դատաստանական։ Ընկալաւ զպաշտօն խորհրդականի ՝ի մեծ ատեանն, մինչդեռ տակաւին քսան և մոյ ամաց էր, և նշանաւոր գտաւ յոյժ յուղղութեան և ՝ի ջանս վաստակոց։ Ի 1631 ելեալ ՝ի գործոյ ամոսի՝ անց ՝ի գործակալութիւն առաջին բողբոյ ատենի արքային. ՝ի 1639 ընտրեցաւ աղէրսապետ, և ՝ի դառնալ տարւոյն՝ անուանեցաւ ոսոլիան Բիէմոնդեան բանակին։ Ի միջոցի երկուց յետին աւագութեանցս՝ մեծ հազարապետն Կարդինալ Մազարէն ընտրեալ էր զնա յընկերութիւն Սեկիէ ատենադպրին առաքելոյ ՝ի Նորմանդիա ՝ի նուաճել զապստամբս դաւառին։ Էր ՝ի ձեռս ատենադպրին զօր ծանր. Լըթելլեան և նա յաջողեցան ճարտարութեամբ չունել ինչ այնմ պէտս։ Այլ Մազարէն թելադիր եղև արքայի կարգել զնա խորհրդեան գալիր տերութեան, որ տեղի դատարկ էր ՝ի կամաւոր հրաժարմանէ Տէնոայէմի. և յայնմ ՝ետէ սկսաւ Լըթելլեան ՝ի գործ մտանել պաշտամանն այնորիկ, բայց զանունն յետ մահու նախնոյն ընկալաւ։

Առաւել ՝ի խնամակալութեան Աւստրիական Անայի և ՝ի կրտսերութեան Լուդովիկեայ ԺԴ, երևեցոյց զնախանձ իւր ՝ի վերայ արքայական իշխանութեան, և միանգամայն զհաստատութիւն իւր և զնմանութիւն ՝ի դժուարին հանգամանս ժամանակին։ Գործակից մեծ եղև ՝ի դաշնն Ռիւելեան, որ հաստել թուեցաւ նախ զխաղաղու-

թիւն. և 'ի վերոյմիտեան որ ընդ գարշապարս դաշնն 'ի վերայ եկին՝ թագուհին խնամակալ և Մազարէն 'ի նա վստահացան։

Ի 1651, իբրև ստիպեցաւ Մազարէն տեղի տալ յերեսաց մրրկին և մեկնել յաբբունեացն, պարտ վարկաւ Լըթեղլեան ևս զնոյն առնել. բայց ընդ հուսպ վերսին կոչեցաւ, ևս և յառաջագոյն քան զնա. և իբրև դարձեալ հարկեցաւնա թողուլ լքանել զաբբունին, այլ և յաշխարհէ տերութեան ևս ելանել, բովանդակ բեռն պաշտամանն եկն անկաւ 'ի վերայ Լըթեղլեան Մխիթարի, որ զինդ եկաց առ խնամակալ դշխոյին և մանուկ Աբբային։

Իբրև հուսկ ուրեմն եմուտ Աբբայ 'ի Փարիզ, և Մազարէն դարձ արար յաբբունին մեծագոյն իշխանութեամբ, Լըթեղլեան 'ի վարձ ծառայութեանցն կարգեցաւ 'ի պաշտօն գանձապետութեան աբբայի. և 'ի 1654 ընկալաւ վասն որդւոյ իւրոյ Լուվոա մարզպետի՝ զերաւունս յաջորդելոյ զինքն 'ի պաշտօն խորհրդեան դպրի տերութեան, որ յայնժամ մեծ ինն ընորհ էր այն իրաւունք։ Յորժամ 'ի 1659 եկ զնաց Մազարէն խօսել 'ի հաշտութիւն ընդ Սպանիոյ, և զդուստր արքային զՄարիամ Թերեզա 'ի կնութիւն Լուդուվիկեայ արքայի, ետեղ առ Աբբայի զԼըթեղլեանն 'ի դրել զհրովարտակն և զհրահանգս որոց ակն ունէր յաբբունեաց անտի. և ինքն առ նա առաքէր զզրոյցս խորհրդակցութեանց իւրոց ընդ պաշտօնէին Սպանիոյ։

Մազարենի մեռեալ 'ի 1661, և Լուդուվիկ ԺԴ. անցեալ 'ի գլուխ դործոց արքունի, ոչ դադարեաց 'ի մտերմութենէն ընդ Լըթեղլեանն՝ որ վարեաց զպաշտօն խորհրդեան դպրի տերութեանն մինչև 'ի 1666, յորում ամի առ հրաման աւանդել զդործն զայն և զանուն՝ յորդին իւր 'ի Մարզպետն Լուվոա. բայց պատիւ պաշտամանն մնաց տակաւին 'ի նմա, վասն որոյ և ոչ պակասեաց բնաւ 'ի խորհրդարանէն։ Իսկ 'ի 1677 յաւել Աբբայ ցուցանել առնա զմտերմութիւն իւր և զմեծարանսն, ամբարձեալ զնա յետ վախճանին Տալիկոի 'ի պատիւ Աստեղագրի և Կնքապետի տերութեան, մինչդեռ էր ամաց եօթանասուն և չորից։ Ի մեծի աւագութեան բարձին, յընդարձակութեան անդ և 'ի խառն մեծաթիւ համարոյ գործոց՝ բազում եցոյց կորովութիւն մտաց, և ժրութիւն և փոյթ բազում։ Կնքեաց զկնեանն 'ի պաշտաման իւրում, 'ի 1685 ամի առ ընթեր ունելով զոս ինքն զՊոսիւեթ, քրիստոսակրօն արութեամբ ոգւոյ և զօրութեամբ դլխոյ։ Նախանձաւոր եղև միշտ կրօնից աստուածպաշտութեան և օգտի եկեղեցւոյ՝ ըստ արդարակորով մտացն խղճի. և նոյն այր՝ որ միամտեաց ընդ ազդային ժողովոյ եկեղեցւոյն իւրեանց 'ի վէճն Հռովմայ վասն եկեղեցական հասից, և 'ի ինդիր դալլիական ազատութեանց՝ զորոց և զչարեսին դլուխն յօրինեաց ընդ Պոսիւեթայ, նոյն ինքն ոչ սակաւ հաղորդ և թելադիր եղև Աբբայի 'ի հրովարտակ հռչակաւոր հերքման նորաշանդից՝ խափանմամբ Նանդեան Հրամանի Հենրիկոսի ջորրորդի։

«Սկիզբն զօրութեան ստացիր զիմաստութիւն, ստացիր զՀանճար. շուրջ փակեա զնովաւ, և բարձրացուսցէ զքեզ»։

Առակ. Դ, 7, 8։

ԳԵՐԱՊԱՏՈՒՄ ՏԵԱՐՔ,

Ի գովելն զայրն անհամեմատ՝ զորոյ ժողովս պայծառ կատարէ զյուզարկութիւն, և զառաքինութիւնսն մեծարէ, զինքն իսկ գովելոյ զիմաստութիւն. և զիմաստութիւն զոր գովելոյս եմ 'ի ճառիս՝ ոչ այն ինչ է՝ որ բարձր առնէ զմարդիկ և մեծացուցանէ զտունս, և ոչ որ վարէ զտերութիւնս, օրինագրէ զխաղաղութիւն և զպատերազմ, օրէնս հնարի և բաշխէ պարգևս։ Զի թէպէտ և պաշտօնեայս այս մեծ՝ յաստուածախնամ տեսչութենէն ընտրեալ դահերէց առեալոց խմասանագունին քան զամենայն թագաւորս, արժանաւոր դասու անօթ խորհրդոց՝ հանճարեղ 'ի բնաւս և բևեռելոց յԵբրայեցի, թէպէտ և խմաստութիւն՝ յետ առաջնորդելոյ նմա 'ի մանկութենէ՝ յառաջեցուցեալ իցէ զնա 'ի մեծամեծ պատիւս և 'ի կատար մարդիօրէն երջանկութեանց, վախճան նորա եցոյց մեզ, զի ոչ վասն այնց շահից

լսեր նա խրատուց նորին։ Զոր տեսաքն զի անհոգ եղիք՝ չէր ինչ նորա սիրելի։

Ծանեաւ նա զխմաստութիւն՝ զոր աշխարհ ոչ ճանաչէ, զխմաստութիւն ինչեալ 'ի վերուստ՝ առ 'ի հօրէն լուսոյ [1], որ առաջնորդէ մարդկան 'ի շաւիղս արդարութեան, որոյ յառաջատեսութիւն ձգի 'ի դարս դարուց ապառնեաց, և 'ի միտս իւր կրէ զյաւիտեանսն ամենայն։ Յանեղծ և յանտես գեղ նորա պակշռեալ՝ խնդրեաց զնա խանդակաթ ըստ Իմաստնոյն պատգամի։ «Իմաստութիւն, ասէ Սաղոմոն, բարձրացուցէ զքեզ». բայց այս փառք անհաս են մարդկեղէն մտաց։ Եւ քանզի իմաստուն և հզօր պաշտօնեայս զհետ այնմ փառաց տենչանայր, զնա ընտրեաց քան զայն՝ զոր պար առեալ զնուրև տեսանէր 'ի վերայ երկրի. վասն որոյ և ջափաւորութիւն իւր՝ գեր 'ի վերոյ քան ըզբաներսն կացոյց զնա միշտ։ Անխոտորելն 'ի մարդկային մեծութեանց, որպէս երևի իսկ ինքն առանց ինչ նաղանաց, նոյն և առանց ուրուք մախանաց տեսանի։

Եւ նկատեմք 'ի վարս նորա զերեսին նկարագիրս Ճշմարիտ իմաստութեան. զի առանց ջանալոյ ամբարձեալ յառաջագոյս պատիւս՝ եկեաց համեստ որպէս մեծ. զի 'ի կարևոր պաշտամունսն, թէ իբրև ատենադպիր երևեալ և հաւատարիմ 'ի մեծ հոգաբարձութիւն իրաւանց արդարութեան, կամ յայլ ինչ գործս երկար պաշտամանն նկատեալ, վեհագոյն քան զանձին շահս, յօգուտ աշխարհին միայն դէտակն կալաւ. և զի հուսկ ուրեմն յերանաւէտ ծերութեան, պատրաստ յաւանդել ընդ մեծի հոգւոյն զաւանդն սուրբ զիշխանութեան՝ զհաւատացեալն արժանապէս 'ի խնամս նորա, եռեսս անցեալ ընդ կենացն զամենայն մեծութիւն իւր՝ առանց բնաւ ինչ իրիք հեծութեան. այնչափ յանմատոյց 'ի մահուանէ 'ի բարձունս եդեալ էր զսիրտ իւր և զյոյս։ Վասն որոյ՝ ըստ երաշխաւորելոյ Իմաստնոյն՝ երևի մեզ «յանմահական փառս», այնու զի օրինաց Ճշմարիտ իմաստութեանն անսաց, և հպատակեցոյց պարկեշտութեան զպերճալի շուք մարդկեղէն մեծութեանց, զառանձին շահ՝ սիրոյ հասարակաց բարւոյն, և զկեանս իսկ՝ փափաքանաց յաւիտենական բարեացն։ Զայս ժառանգեաց փառս՝ բարձրապատիւ և հզօր տէրն Միքայէլ Լըթելլեան, ասպետ և ատենադպիր տերութեան Գալլիոյ։

Մեծ Կարդինալն Ռիշլիեւ 'ի վերջ հասեալ շքեղ պաշտամանն՝ վախճաներ ընդ նմին և զլի զարմանալեօք կեանսն։ Ընդ անյողդողդ և յառաջատես առաջնորդութեամբ իւրով՝ գադարեր ահն աւտարական զօրութեան, և Գալլիա Ճողոպրեալ յառանին պատերազմաց՝ սկիզբն առնէր նախահաւակ լինելոյ եւրոպական գործոց, մանաւանդ միտ եդեալ զդաստ կալին յիտալականսն, և թող զայլ ևս իրաւունս, Լուդովիկ ԺԳ. մեծաշուք և բարեյաղթ յիշատակաց արժանի, պարտէր պաշտպանել տիկնոջ իշխանին Սաբաւդիոյ քեռն իւրում, և որդւոց նորա։ Յուլիոս Մազարէն, որոյ մեծ լինելոց էր անուն 'ի պատմութեան մեր ում, անցեալ ընդ պէսպէս գործավարութիւնս աշխարհամուտ դրանն Հռովմայ, անձնատուր լեալ էր Գալլիոյ. և հանճարով իւրով և կցորդութեամբք՝ յաջող գտեալ 'ի վարել զմիտս իւրոյ ազգին, յայնպիսի բարեդէպ ընթացս ածեալ էր զսորհուրդս Ռիշլիեւ Կարդինալին, մինչև մեծն այն հաղարապետ պարտ անձին վարկաւ ամբառնալ զնա 'ի պատիւ հռովմէական ծիրանեաց։ Սովին եցոյց իմն Գալլիոյ զայջորդ իւր. և Մազարէն կարդինալ՝ յառաջէր ծածկաբար 'ի բարձն առաջին։

Միքայէլ Լըթելլեան դեռ ևս աղերսապետ 'ի ժամանակին, ոստիկան ատենից արդարութեան կայր 'ի Բիլեմոնդ. Մազարէն՝ 'ի սոսկալ երթևեկս գործոցն 'ի Տաւրինոն, ցընծացաւ 'ի գտանել անդ այր մի այսպիսի կարող և աջողակ 'ի գործս. զի հրամանք արքունեացն սոսկեին զդեսպանն

1 Յակ. Գ, 15. Ա, 17։

խորհել զամենայն ընդ ոտիկանին, զոր վերին Խնամքն ասային յայս գոյն աշակերտութիւն գործոց տէրութեան։ Այսպիսում սուրբ հանձարոյ չպիտէր ինչ այլ, բայց բանալ միայն զմուտն 'ի մուծանել զնա 'ի խորս անդր գաղտնեաց քաղաքավարութեան։ Այլ միաք իւր պարկեշտասէր՝ ոչ ընկղմէր 'ի ծովածաւալ խորհուրդս անդ՝ և ըստ օրինակի հարց իւրոց՝ ամփոփեալ 'ի համեստ պարապմունս դատաստանաց, և ոչ ասին անգամ արկանէր 'ի փառաւոր ինչ՝ բայց և վանդաւոր պաշտամունս արքունեացն։ Ոչ եթէ չգտաւ միշտ 'ի վեր քան զամենայն սպասաւորութիւնս իւր. անդստին յառոյգ երիտասարդութենէ իւրմէ ամենայն ինչ հարթէր առաջի հանձարեղ մտացն, որ որչափ հանգարտ էր և զգօն, նոյնչափ և խորազգաց և լուսաւոր։ Յորդորմամբ բարեկամացն՝ յիմաստախորհուրդ կանձառէ ատենին մեծի, ուր դեռևս կենդանի կայ համբաւ իւր, անցեալ էր 'ի գործակալութիւն ատենի արքային։

Յիշէ տակաւին քաղաքս այս մեծ, զի եռեսս զնա յերիտասարդութեան անդ՝ ամենայն դատաւորական լուսութեամբք հակառակ ամբարձեալ, ոչ միայն դաւաճանութեանց և կուսակցութեանց՝ որ թիւրեն զուղղութիւն իրաւանց, հակառակ և կանխակալութեանց՝ որ զլոյս նոցա խաւարեն, այլ և կամակոր և անընդեղական ճանապարհաց՝ յորս ընդ անշարժութեանն կորուսանեն և զբուն իշխանութիւն դատաստանաց։ Տեսան 'ինմա ամենայն իսկ միաք և առածք սուն դատաւորի՝ որ ընդ օրէնսն բևեռեալ, չտանի յատեան զմտածութիւնս իւր, և ոչ ողբութիւն կամ խստութիւն ըստ կամս, այլ կամի զ օրէնք տիրեսցեն, և ոչ մարդիկ. այսպիսի միտս ունէր զդատաւորութենէ։ Սովին հոգւով վարեցաւ և յատենի խորհրդեան, ուր իշխանութիւն արքային 'ի գործ առեալ անարգել կարողութեամբ՝ թուի բանալ ասպարէս համարձակագոյն առաջի արդարութեան. և միշտ անդեղյեղուկ յանձնէ, զնոյն օրէնս կալաւ անդ այնուհետև, զոր և հատատեաց ապա՝ իբրև այնմ գլուխ կարգեցաւ։

Անշուշտ, տեսրք, զարգարութեան սէր կարեմ ասել վասահաբար իբրև ընդ զգենամիտ դատաւորիս ծնեալ և ընդ նմին զարգացեալ 'ի մանկութենէ. և զերջանիկ ծնունդն զայն՝ պարկեշտութիւն իւր կանգնեաց զնիւրև պատնէշ ընդդէմ գոլութեանցն ընծայելոց անպատաւութեան իւրում. և սէր իւր առ արդարութիւն՝ ոչ թուեցաւ նմա արժանի առաքինութեան անուան. զի գոգցես իմն, ասէր, յարեան իմում կրեմ զայն։ Բայց Աստուծոյ յառաջագոյն սահմանեալ զնա լինել օրինակ արդարութեան 'ի գեղեցիկ թագաւորութեանս, և յառաջնում բարձի մեծի այսր տերութեան, 'ի պաշտօն դատաւորութեան յոր հրաւիրեալն էր՝ էտ նմա հայել իբրև յառանձին իմն օձառ պարգևեալ նմա 'ի կատարել զգործ փրկութեան իւրոյ։

Զայս խորհուրդ սուրբ՝ ունէր ցանգ 'ի սրտի, և զայս գեղեցիկ բարբառ հանապազ 'ի բերան իւրում. և այնիւ տայր իմանալ՝ քանիսն ստուգիւ քաղցրացեալ էր նմա քրիստոսերէն բարեպաշտութիւն։ Զայսր կրթութիւն հաստատեալ երանելոյն Պաւղոսի, ոչ յառանձին ինչ գործս կամայականս, հպատակել իւրաքանչիւրն նոցին օրինաց քան ասասուածայնոցն, այլ սուրբ առնել զանձն յիւրում վնճակին, «խրատանիցեր ոչ յոր կոչեցաւ [1]»։ Իսկ եթէ ըստ մեծի առաքելոյս՝ և յանարդագոյն սպասաւորութեան գոյ գտանել զարբութիւն, և ստրուկ ևս ոք ելանէ 'ի կատարելութիւն 'ի ծառայութեան անդ տեառն մահկանացուի, եթէ պահեսցէ միայն զասասուածահրաման կարգն, ապա յոր կատարումն չունկցի նկրտել հոգի քրիստոսասէր 'ի մեծի և սուրբ պաշտման արդարութեան, ուր զի «ոչ մարդկան իրք գասին, այլ Տեառն [2]»։

Բացէք զաչդ, քրիստոնեայք, հայեցարուք 'ի մեծաշուք ատեանս՝ ուր զպատգամն ասայ արդարութիւն. տե-

[1] Ա. Կոր. Է, 20։
[2] Բ. Մնաց. ԺԹ, 6։

ամենիցէ՛ք անդ ընդ Դաւթի «զաստուածս երկրի, որ ապաքէն իբրև զմարդիկ մեռանին[1]», բայց որպէս զաստուածս պարտին դատաստան առնել, անեղկիւղ, անախտ, առանց ինչ անձին շահու, Աստուածն աստուածոց նոցին պարտելոյս, որպէս երգէ Թագաւորն այն մեծ՝ բարձրաբարբառ՝ի սաղմոսի անդ յաստուածայնում. «Աստուած եկաց, ասէ, ՝ի ժողովս աստուածոց, և ՝ի միջի նոցա դատէր ընդսա[2]»: Ո՛վ դատաւորք, զինչ այդ մեծվայելչութիւն ակամբից ձերոց, որպիսի դահագլուխ Ժողովդ. այլ և որպիսի խուզարկու դատաստանաց ձերոց: Առաջի ահաւոր աչաց նորին՝ դատաւորն մեր խմաստուն միապէս ունին դնէր մեծատան և աղքատի, սուրբ և անդեղեւուն յիրաւարարութեան, որպէս զի առանց աչս արձակելոյ՝ի բարձր բարձս՝ որոց հանուր աշխարհ արժանի զնա դատէր, բարձրութիւն իւր զայն համարէր, որպէս և հոգ խնամոյ, կատարեալ լինել՝ի վերնակին իւրում:

Ոչ, ոչ, մի՛ համարիցէք թէ արդարութիւն ընակիցէ երբեք՝ի հոգիս՝ուր տիրէ փառամոլութիւն. ամենայն հոգի անհանգիստ և իշխանասէր՝ ոչ տանի կարգս ինչ կրօնից: Փառասիրութեան գիւտք են ինքնասէր մարթանքն, որովք դատաւոր խորամանգ նման գերեզմանի բուելոյ՝ զերևոյթս ևեթ արդարութեան պահէ: Լուռ լիցուք զապականութեանցն՝ զորս ամենի է ըստգտանել յանձին. խօսեսցուք զվատութենէ կամ զհամարձակութենէ քմաղարդ արդարութեան՝ որ անկարգ և անօրէն շրջի ըստ կամս բարեկամի հզօրի. խօսեսցուք զուստահաստատութենէ, որ չկամի երբեք ոչ՝ի վեր հանել զհաղբան, և ոչ՝ի դերև՝ զյառաջադէմն չարարութեամբ դատաստանի:

Զինչ զվանդաւոր ճարտարութենէն ասացից՝ որ տայ արդարութեան խօսել պատգամս, որպէս երբեմն դիւաց,

1 Սաղմ. ՁԱ, 6, 7:
2 Անդ, 1:

Երկիրսոս և խաբեբայս. զինչ ասացից զգժուարութեանցն յարուցելոց՝ի լրումն իրացն, յորժամ անհնար լինի ժրխատել զարդարութիւն ակն յայտնի իրաւանց: «Ցրուեցան օրէնք, ըստ մարդարէական բարբառոյն, և իրաւունք՝ի գլուխս ոչ ելանեն[1]»: Յորժամ դատաւոր մեծանալ կամիցի, և զանաչառ և զանողոք սպասաւորութիւն արդարութեան՝՝ի հլուականութիւն դրան մարդկանն փոխիցէ, նաւաբեկ լինի՝ի ժայռս յայսոսիկ: Ի դատաստանս իւր թերակատար ևեթ տեսանի արդարութիւն, նման՝ ոչ երկեայց ասել՝ արդարութեան Պիղատոսի. արդարութիւն՝ որ կարծիս տայ զօրաւոր լինել զդէմ ունելով դոյզն պատերազմաց, թերևս ամբոխս աղաղակի զայրացելոյ ժողովրդեան. բայց յորժամ խառն՝՝ի խուռն և յանդէպս իսկ՝՝ի մէջ արկցի անուն Կայսեր, անկեալ կորնչի նոյնհետայն: Զի՞ իսկ զԿայսերն ասեմ՝ անուն. ոգիքն այն՝ անձնամատան հոմանիք փառամոլութեան՝ ոչ այնչափ մեծագնի վաճառեն զանձինս. ամենայն որ խօսի և որ մերձենայ՝ որպէս զնոսա կամ զանգիտեցուցանէ, և արդարութիւն՝՝ի բաց կայ՝՝ի նոցանէն: Իսկ՝՝ի սիրտ Միքայելի Լըթելլեան չենեցաւ տաճար ինն յաւիտենական և անապականացու. վասն զի աղատացեալ յիշխանասիրութեան մրցանաց՝ տեսանէ զանձն ամբարձեալ՝՝ի բարձս մեծամեծս, ոչ առ՝՝ի յիւրմէ ինչ ջանիկ, այլ մեղմախառն վարդիչ օդով աջողակ հողմոյ, կամ մանաւանդ՝ որպէս դեպք իրացն արարին յայտ՝ առանձինն ընտրութեամբ վերին Խնամոյն:

Կարդինալն Ռիշլիեւ մեռեալ էր՝ ոչ՝՝ի մեծ ինչ կսկիծ տեառնն իւրոյ, որ երկեաւ՝ կարի ինն շատ առ՝՝ի նմանէ երախտագիտ լինելոյ: Անցեալ տեսչութիւնն առեալ եղեւ. ուստի և յամենայն պաշտօնէից՝ Կարդինալն Մազարէն կարևոր և պիտանի, նա միայն կալաւ անուն հաստատուն. և խորհրդեան դպրատեան տէրութեան՝ կարդեալն՝՝ի հրա-

1 Ամոս. Ա, 4:

մանատարութիւն պատերազմի, տհաճեալ ընդ փոխարինման անհամեմատս ակնկալութեան իւրում, կամ պարեալ յառաջք քաղցրութենէ հանդստեան՝ զոր յառանձնութեան կարծեաց գտանել, կամ 'ի միտսն ակնկալութեամբ հայեցեալ 'ի յոյս վերստին կոչման իւրոյ առաւելագոյն օգտիւ առ կարևոր պիտոյից գործոցն, կամ 'ի ծուլս չգիտեմ էր իրիք անձկութեանց՝ զորոց մարդիկ չիմանան զպատճառսն և ոչ իսկ ինքեանք, եդ 'ի մտի յանկարծ թողուլ զպաշտօնն զայն զմեծ։

Հասեալ էր ժամանակ դատաւորիս մերոյ՝ յանդիման երևելոց արքային և հայրենեաց իւրոց. երախտիք իւր, մինչ նա՝ և ոչ ընդ միտ ինչ ածէր, եռուն խնդրել զնա 'ի Տաւրինն։ Կարգնալն Մազարէն, որպէս տեսջիք, առաւել բարեբախտ ընդ գլուտ նորա քան զոր կարծեացն յայնժամ, յուշ արար արքային զբարեհաճոյ վաստակս տանն, և վաղահուպ վայրկեան անակնկալ ինչ դէպ ժամու՝ ոչ միայն չէտ պարապ յորդորմանց, այլ և ոչ ըղձից իսկ արքային տեղի։ Լուդուիկ ԺԳ. հատոյց երկնից զհոգի իւր զարգար և զբարեպաշտ, և այնպէս թուեցաւ թէ պաշտօնեայս մեր պահիցի որդւոյ իւրում արքայի. այս հրաման էր Ցեսչուլթեանն, և տեսանեմ ինն ասանօր որ ինչ ընթեռնուէքն Յեսայի [1]։ Ի վերուստ հատաւ եւ դատաստանն, և ասացաւ առ Սոմնաս պաշտօնեայ գլխաւոր. «Հանից զքեզ 'ի տեղւոյէդ և ընկեցից 'ի պաշտամանէդ։ Յայնժամ կոչեցից զծառայ իմ զԵլիակիմ, և զգեցուցից նմա զպատուհանդ քո»։ Բայց մեծ ևս պատիւ պատրաստեալ կայ նմա. եկեսցէ ժամանակ՝ զի անտեսութեամբ արդարութեան «եղեցի նա հայր բնակչացդ Երուսաղէմի և տանն Յուդայ. և զվանսն տանն Դաւթի, — այս է զթագաւորեալ տանն, — տայ նմա... բայցէ՝ և ոչ ոք ելցէ որ փակիցէ, և փակիցէ՝ և ոչ ոք ելցէ որ բանայցէ»։ կալցի զմեծ հաղարապետութիւն արդարութեան և շնորհաց։

1 ԻԲ, 15-24։

Ի փառաւոր պաշտամունս անդ եցոյց պաշտօնեայս մեր այս համօրէն Գալլիոյ՝ զի քառանամեայ համբաւութիւն իւր՝ արդիւնք ելին կատարեալ խմաստութեան։ Ի չափաւոր բանս՝ այնպէս դողացեալ թաքչի փառասիրութիւն, մինչև հաղիւ հաղ զանձն ճանաչել. իսկ իրրև յանկարծ վերացեալ ոք տեսանէ զինքն 'ի բարձս երևելիս, և չգիտեմ զինչ շինչէ 'ի սիրտս, թէ առաւել արժանաւոր է ոք մեծի պատուոյն որ ինքնեին հասանիցէ, ելանէ մարդ յանձնէն. և թէ ներէք ինձ զսրբոյ Ոսկեբերանին ասել ձեզ զմիտսն, առ ոսմիկս մեծի ճգանց գործ է մերժել զպայծառ գեղն զայն՝ զմատուցեալն ինքնին առ նոսա. իսկ պաշտօնեայս մեր խմաստուն չէտ զանձն 'ի յափշտակութիւն նմա։ Եւ նախ սիվ ոք քան զնա երևեցաւ կարող 'ի պէտս մեծամեծս, ո զմարդիկ և զժամանակս լաւագոյն ճանաչէր, ո քան զսա հեռատես և ո անվրիպագոյն հնարս ընձեռեր 'ի զգուշութիւն անպատահից զմեծամեծ գործովք պատերազ։ Իսկ յայնմ 'ի մեծ կարողութեան և 'ի չքնաղ անուան՝ ո երբեք նշմարեաց յերեսս նորա դէմս արհամարհոտս, կամ խուն ինչ անոսի պարծանս 'ի բանս նորա։ Միշտ ազատադէմ 'ի զրոյցս, միշտ զգօն 'ի գործս, և միշտ՝ որչափ ազգոյ և յանկուցիչ՝ նոյնչափ և համեստ 'ի խօսս. պերճանայր 'ի վերայ մտաց ճոխութեամբ ինն՝ զոր իրաւունքն միայն նօթձէին նմա։ Ի տան և 'ի դնացսն, անարատ վարուքն հանդերձ՝ երևէր ևս հեռի 'ի ծայրից, ամենևին խմաստութեան 'ի չափու։

Եթէ գիտաց բառնալ զբեռն գործոց արքունի, գիտաց և թողուլ, և մտանել յառաջին հանգիստ իւր։ Իրրև ծածուկ հնարիւք դաւաճանութեամբ խախտեցաւ 'ի պատուոյն, զամիսս բազում խաղաղացեալ եռես զնա Շաւիլ յաղմուկս անդ բովանդակ Գալլիոյ։ Ի նանիր կոչեն զնա անդրէն արքունիք, անընդոստ կայ յանդորրաւէտ առանձնութեանն՝ ցորչափ ներեցին իրացն հանդամանք, թէպէտ և չէին ինչ 'ի նմանէ զանխուլ գաղանի նենգութիւնքն

նելթեալք ընդդէմ իւր 'ի հեռաւորութեան անդ իւրում. և ոչինչ ընդհատ մեծ երևեցաւ յանդգնութեան քան 'ի ժուժկալելն բազմավանգ դղորդից։ Սակայն 'ի մեծի խաղաղութեան տէրութեանն՝ իբրև շնորհեցաւ նմա սթափել 'ի գործոց պաշտամանն 'ի վերայ ուսոց որդւոյն, զոր ոչ երբեք մատուցանէր արքայի՝ եթէ չտեսանէր զնա բաւական 'ի բարւոք ծառայութիւն, ապա ծանուցեալ և՝ զի նոր դպրապետն տէրութեան՝ անփոփոխ և աննահանջ պինդ ունելոյ էր զխորհուրդս և զհրամանն կատարելոյ զտեառնն հանճարեղի յարուեստ պատերազմի. ոչ գործոյն առաջարկութիւնք զանցանէին ինչ զկարողութեամբն և ոչ անհուն հոգք կատարմանն 'ի վեր ինչ էին քան զարթնութիւն նորա. ամենայն ինչ կազմ և պատրաստ էր 'ի նկատեալ տեղեան. թշնամւոյն յամենայն 'ի քաղաքս իւր սպառնալիք 'ի վերայ կային. զոլքն քաջակորովք և քաջակիրթք՝ ոչ խիք մնային բայց վերջին հրամանաց մեծի սպարապետին և յաչաց նորա բոցոյն հատանելոյ. ամենայն ինչ ընդ բազկաւ իւրով տապալն, և տեսանի միահեծան տէր տիեզերաց. յայնժամ նախանձաւոր պաշտօնեայս, յանվթար ասողն մտաց և մարմնոյ, մարթելի անձին համարեցաւ և ներելի զաւելի ինն անուշակ կեանս։ Փորձ իրացն վանդաւոր է առն պաշտօնեի, և հրաժարական կեանք միշտ գրեթէ խաբեաց զոր յուսացուցանէրն յանկիալութիւն հանգստեան։ Սորայս հաստատուն գտաւ. խորհրդարանք յոր մուտ ունէր՝ թողուին նմա գոգցես բնաւ զժամանակ իւր, և յետ խուռն ամբոխից մարդկան և գործոց պատելոց զիւրև, անձամբ զանձն 'ի դատարկութիւն ինն և յամայութիւն էր հատեալ, յոր և գիտաց իսկ կալ տոկալ։

Զժամն իւր անարդելս՝ պարագրեցոյց յընակր ընթերցուածս, և 'ի վեր քան զբնաւ ընթերցուած՝ 'ի ըզգաստական խոկմունս 'ի վերայ սխալմանց կենցաղոյս և սնոտի ձգանց քաղաքավարաց՝ որոց քաջահմուտն էր։ Յաւիտենական ամենայն գնացք նորա նման եղեն գեղեցիկ սիրեալ։ Աւուրքս մեր՝ որոց չէր տեսեալ իշխանութիւն այսպիսի յայր առենադպիր, տեսին 'ի սմա համեստութիւն և

առենականութիւն յաչս իւր երևէր կէտ ինն արժանաւոր սրտի մարդոյ։ Ի մէջ այսց խմաստնախոհ մտածութեանց, և ամիրոփեալ 'ի քաղցր կենակցութիւն բարեկամացն պարկեշտից իբրև զինքն, – զի ընտրեալ գիտէր այսպիսս, և ուսուցանէր նոցա կալ մնալ նոյնպէս 'ի կարևոր և 'ի բարձր գործս 'ինոսա հաւատացեալս, – ըմբոշխնէր սերտ և սեռն հանգիստ 'ի տան հարց իւրոց, զոր առ փոքր փոքր յարգարեալ էր ըստ պատշաճի այնր բախտի իւրոյ, առանց բնաւ անհետ առնելոյ անտի զհին զանպաճոյճ պարզութիւնն, վայելեալ իբրև ծառայ հաւատարիմ 'ի բարեկենդանութիւնս տէրութեանն և 'ի փառս տեառնն իւրոյ։

Բարձ առենադպրի թափուր մնաց, և Գալլիա համբրէն ընտրէր յայն՝ պաշտօնեայ զոր այսպէս նախանձաւոր արդարութեան։ Բայց որպէս Իմաստուն ասէ, «Որչափ բարձր են երկինք, և երկիր խորին, նոյնչափ սիրտ թագաւորի առանց քննելոյ [1]»։ Արքային չէ էր հասեալ ժամ, և հանդարտեալ պաշտօնեայս՝ տեղեակ վանդաւոր խանտաւորութեանց արքունեաց և մտացի ամբախտուն խոհականութեանց արքայից, գիտաց տակաւին համբառնալ զաչս իւր յաստուածեղէն Տեսչութիւնն, որոյ յաւիտենից հրամանք վարեն զամենայն զաստի շարժմունս։ Իբրև յետ երկայն ժամանակաց եռես զանձն ամբարձեալ 'ի բարձն յայն 'ի մեծ, թեպէտ և նոր ինն զգեցաւ այն փառս յանձին սորա՝ ուր ընդ վստահութեան արքային էր միացեալ, ոչ միայն չխաղտեցաւ անտի պարկեշտ պաշտօնեայս, այլ և զայս և՛ եթ ասէր. Աւ 'ի պսակելոյ զերկարութիւն քան զշահեկանութիւն վաստակոցս խմոյ՝ կամեցեալ արքայի շուք դնել շիրմին խմում և տանս զարդ։

Այլ ամենայն գնացք նորա նման եղեն գեղեցիկ սիրեալ։ Աւուրքս մեր՝ որոց չէր տեսեալ իշխանութիւն այսպիսի յայր առենադպիր, տեսին 'ի սմա համեստութիւն և

[1] Աբակ. ԻԵ, 3։

քաղցրութիւն զոյգ պատուոյն և զօրութեանն, մինչդեռ
ինքն հանապազ առ դուրս հասեալ տեսանէր զանձն դա-
տաստանին՝ համարս տալոյ Աստուծոյ զմեծի սպասաւո-
րութեանն։ Սակայ հիւանդութիւնք արկին զնա յաճախ
'ի տագնապ մահու՝ յայնչափ վտանգից լցեալ, եւանէր
միշտ անդուստ առաւել հզօր և առաւել յաստուածային
կամն ապաստան։ Խորհուրդք մահուան ոչ ինչ հատին 'ի
հանդարտութենէ և 'ի քաղցրութենէ ծերութեան նորա.
'ինչին զուարթութեան տեսաւ միայն առաւել զգօն մտա-
խորհ զնարիալանաց իւրոյ հասակին, և զյեսին չփոթից
հասանելոյ տերութեանն, եթէ իշխանութիւն մի այնպի-
սի մեծ՝ 'ի տակաւ ձեռս ուրեք անկանիցի։

Զոր տեսեալն էր 'ի քաղաքն խմաստուն ծերունիս՝ որ
ստուերքիւրեանց ևեթ մնացեալ թուէին, տայր նմա ցանգ
միտ գնել անձին իւրում։ Աստէր բաղում անգամ 'ի սրտի
իւրում, թէ այն ինն աղետագոյն արդասիք էին այսր տակ-
րութեան հասակի՝ զի անտեսանայր աչաց, մինչև յան-
կարծ գտանել զանձն անդնդասոյզ՝ առանց զվտանգաբեր
վայրկեան աննշմարելի մէտ 'ի մէտ սողսկելոյն տեսանելոյ.
և 'ի գորով ողջոյն հայրենի գթոցն առ որդիսն, և 'ի բովան-
դակ երախտահատոյցս նոցին՝ որ միայն էին իւր մխեթա-
րութիւն 'ի կարճատեալ նշխարս մնացուածոյ կենացն, եր-
դումն տայր նոցա վաղվաղակի իրազեկ առնել զինքն, իբրև
տեսանիցեն զուշ իւր զեգեւեալ կամ զմիտսն զատնցեալ.
որպէս զի փոքրու ինն մնացելով զօրութեամբն՝ յապահովի
առնիցէ զաշխարհն և զմտացն խիզճ յերեսաց չարեացն,
որ 'ի հիւանդոտ կենացն 'ի վերայ կային նոցա։ Եւ յոր-
ժամ բովանդակ խակ առ իւր ունէր զմիտսն, զնոյն բանս
բարբառէր, թէ և մարմինն կթոտ՝ չէր ինչ բաւական. զի
զայն արկեալ էր նորա խորհուրդ 'ի միտ՝ անդատին 'ի վեր-
ջին խօթութեան իւրում։ Եւ փոխանակ գործոցն ևս ընդ
իւր ներգեալս՝ 'ի չկաղդուրել ուժոյն, ինքնին պարտ առ-
նէր զանձն՝ թողուլ զՄատանին և 'ի սոսկական կեանսն

գառնալ, զորոյ և ոչ երբեք մոռացեալ էր զՀամն, յանձն
առեալ թաղել անգամ կենդանւոյն, և կեալ թերեւս բա-
ւական՝ առ 'ի յերկար տեսանելոյ զանձն կոխան եղեալ
պաշտամանն հրաժարելոյ։ Այսչափ զեր 'ի վերոյ էր իւրում
բարձրութեանն և ամենայն մարդկեղէն մեծութեանց։

Բայց որ մերոց գովութեանցս արժանաւոր ևս առնէ
զՀամեստութիւն նորա՝ է զօրութիւն հանճարոյն 'ի գործ
ծնեալ, և արութիւնն՝ որով ամս հինգ՝ եդ զգլուխս իւր 'ի
կշիռս քաղաքական մղեգնութեանց։ Եթէ հարկ 'ի վերայ
տեսանեմ ինձ այսօր՝ կենդանագրել զպատկեր ողեռից
մերոց, չլինիմ 'ի չքմեղս առաջի ունկնդրացս, յորս՝ յոր
կողմ և շրջեցից զաչս՝ երևի ինձ հաւատարմութիւն անբաս-
գիւտ, կամ թերեւս սուղ ինն վրիպակ՝ երկայն վաստակօք
խաղալեալ։ Ի թշուառ պատահարս ժամանակին՝ պիտոյ
էր մեծ հաղարապետին (Բ) առն օտարազգւոյ՝ այր մի հան-
ճարակուռ և հանգուռնակ անկասկածելի, որ 'ի ժողովս
մնեալ՝ ծանօթ ելցէ կարգաց պետութեանն, և ազգային
հոգւոյն։ Մինչդեռ մեծանձն և արի զշնոյն խնամակալ՝
ստիպէր ցուցանել զմանուկ արքայն գաւառաց գաւառաց
'ի ցրուել զամբոխս յարուցեալս ատի անտի 'ի նոսա, Փա-
բիզ և միջնաշխարհ արքայութեանն խնդրէին այր մի բա-
ւական յօգուտս վարելոյ զժամն՝ առանց նորոց հրամա-
նաց սպասելոյ և առանց խանգար առնելոյ յօրինուածոյ
տերութեանն։ Նա և մեծ հաղարապետն ինքնին, ստէպ
բացական յարքունեաց, 'ի խառն անդ խորհրդոց, զոր կըն-
ճիռն գործոց՝ անյայտութիւն պատահից և շահք ազգի
ազգիք տային 'ի հանդիսի անցուցանել, մի թէ չէր կարօտ
առն միւսմ հաւատարմի առ խնամակալ դշնոյն. պիտէր
իսկ այր մի, որ առ 'ի չգրգռել զհասարակաց տեսլութիւնն
յայտ յանդիման երևեալ ընդդէմ մեծի հաղարապետին,
գիտիցէ մեծարոյ լինել ամենայն երկպառակ կողմանց, և
պահել զկաց և զմնաց իշխանութեանն։

Այս այր կարիւոր արքայի մանկանն, խնամակալ դշ-

խոյին, տէրութեանն և մեծ հաղարապետին, նա և գաղտամէս նենդագործութեանց՝ առ անյուսութեամբն չձեռպել և դարահոս արկանել զնոսա 'ի վերջին ծաղ ջարեաց, դուք ձեզէն կանխեք, տեսջք, ասել քան զնա՝ թէ այն իսկ է զորմէ խօսիմք: Այսպէս ուրեմն երևեցաւ նա իբրև հանճար մեծ և երևելի. յայնժամ տեսաք մեք զնա մուտցեալ զանձն, և իբրև նաւապետ հմուտ՝ անխուճապ յաղեաց և 'ի մրրկաց՝ և յանձին իսկ վտանգէ, գնայր դէպ ուղիղ որպէս 'ի մի միայն կէտ վտանգաւոր նաւարկութեան, 'ի պահպանութիւն բուն բոլոր մարմնոյ աշխարհին, և 'ի կանգնումն թագաւորական իշխանութեանն: Մինչդեռ արքունիքն նուաստէր զՊօմպէ, և Կասդոն (Դ) թողեալ 'ի Փարիզ՝ ունել զայն 'ի հպատակութեան, 'ի խորհրդոց ջարաց էր վարակեալ, Լըթեէլեանն երևեալ Քուսի՝ յամենի արար զնոսա, և յոտին կացոյց զյաղթութիւն օծելոյ Ցեսուն[1]: Պիտեցաւ ինչ 'ի դերևս առնել մաղել ընդ օդս զնոմանն Սպանիոյ, և 'ի վեր հանել զպատիր հաշտութիւնն մատուցեալ եղեալ առաջի՝ 'ի բորբոքել զապստամբութիւնն 'ի դոյզն ինչ յապաղել իրացն. Լըթեէլեան ետ նախ ընդունել զառաջարկութիւն. ամենիշխան գործակալն մեր էլ զնաց, և մեծ սեպուհն ստիպեալ խոստովան լինել՝ թէ չէր ինչ իւր իշխանութիւն 'ի գործն յայն, ինքնին ծանոյց աղմկեալ Ժողովրդեանն, – եթէ ամբոխ խռովեալ՝ լինիցի ինչ խիք իրագէտ, – թէ ոչ այլ ինչ էր այն ամենայն՝ բայց զմիամտութիւն նոցա խաբել:

Այլ թէ եղև երբեք պիտոյ կանխանկատ զգուշութիւն և արութիւն անմեղկելի, էր 'ի պնդել զպահ պաշարումն երեցունց փառաւոր կալանաւորացն (Դ): Զինչ պատճառք արգելանին նոցա, թէ արդեօք կասկածք ինչ էին, կամ հաւատիք, կամ ընդունայն ահափեռք, կամ արդարև անշուշտ վտանգք, և 'ի լսիրծ վայրին՝ զգուշութիւնք կա-

1 Բ. Թագ. ԺԷ:

թեւորք, ո՞ կարիցէ ասել յետնոց: Որ զինչ և իցէ, հօրեղբայր արքային 'ի հաւան գայ. համարին յապահովս լինել յերեսաց այլոց արքայազանցն, և յանցաւորս կացուցանեն զնոսա՝ առ այնպիսիս ունելով: Բայց ո՞ւր ուրեք իցէ պահել զառիւծունս պատրաստս միշտ 'ի խորտակել զկապանսն, մինչդեռ ամենայն ոք հնարի 'ի բաւին ունել զնոսա՝ յարգելուլ կամ 'ի թողուլ զնոսա ըստ կամս փառասիրութեան իւրոյ կամ վրէժխնդրութեան. Կասդոն՝ որսացեալն 'ի Դրանէ և 'ի բանի արարեալ, մինթէ անմասնոյց ոք էր խաղմարարացն. ո՞չ ահա տեսանեմ զնոսաւ ամբարտաւան ոգիս, որ առ 'ի վարել զիշխանազուտն 'ի պէտս դաղտնածածուկ շահիցն իւրեանց՝ ոչ դադարէին հրապուրել զնա՝ առնուլ զնոսա զբռամբ:

Ո՞ր հարկ, ո՞ր փառք և ո՞ր անուն պարծանաց չէին ներքոյ և արտաքոյ՝ տէր լինել բախտի իշխանին Գոնտէի: Մի ինչ երկիցուք անուանել զնա, զի հարթեցաւ ամենայն առաջի անուան իւրոյ մեծի և անմահական գործոցն: Զնա 'ի ձեռին ունել՝ էր ունել զյաղթութիւն ինքնին, որ ընդ իւրն է յամենայն ճակատամարտս: Բայց յիրաւի էր պատուական աւանդի աշխարհիս կալ մնալ 'ի ձեռս արքային, և նմա իսկ անկ էր պահպանել զազնուական մասն իւրոյ արեանն:

Արդ մինչդեռ պաշտօնեայս մեր այս ջանայր յայս գործ մեծաշուք՝ յոր կախեալ կայր թագաւորութիւնն և աշխարհիս փրկութիւն, նա միայն եկաց արձանացաւ առաջի ոտամբակացն: Նա միայն, նոքա իսկ ինքեանք ասէին, դիտէր ասել և լռել զարժանն. միայն գիտէր զեղուլ և արգելուլ զբանսն, ինքն անհաս, և ամենայնի հասանէր:

Եւ իբրև հանէր զծածուկ խորհուրդս սրտից, ինքն տէր իւրում անձինն՝ ոչինչ ասէր՝ բայց զոր կամէրն. մտանէր անցանէր յամենայն գաղանիս, փեռեկէր քայքայէր զամենայն հնարագրութիւնս, հոլանեալ նշաւակէր զգաղանորոգայթ նենդագործութիւնս և զծածկեալ հաղբս: Ի-

մատուցանն էր՝ զորմէ գրեալ կայ. «Զուր խոր է խորհուրդ սրտի առն, և այր իմաստուն քամէ զնա [1]», և հասանէ 'ի խորան: Նա միայն ժողովէր զբարեբարս և ցաւեր ցրուէր զմիաբանութիւն ստահակաց, զիսորհուրդս նոցա պղտորէր, և 'ի խոտորեալն գնայր ամենեքեան զմնացուածս ինչ ուրեք խորհրդոց բարեաց: Նմա միայնոյ հաւատայր Կասդոն, և նա միայն գիտէր շահել զյաջող և զդէպ ժամս և զբարւոք կամս մեծի այնր իշխանի. «Եկայք խորհեսցուք խորհուրդ 'ի վերայ նորա [2]». միաբանեսցուք առ հասարակ չարահամբաւել զնա, «հարցուք զնա լեզուաւ, և ոչ տացուք լսել զամենայն բանս նորա դեղեցիկս»:

Բայց մեծ ևս եղեռնաւոր գործէին նմա դարանք: Քանիցս անգամ ազդ եղև նմա 'ի ծածուկ՝ թէ կեանք իւր չէ յանկասկածի. և ինքնին ճանաչէր 'ի հերձուածի անդ սիրտս ոմանս խրոխտողս՝ որոց թշուառական ուժգնութիւն և միաք անհնարինք յանդգնին յամենայն, և գիտեն դատել իւրեանց արքանեակս: Բայց կեանք նորա չէր յաչս իւր պատուական, այլ միայն զի հաւատարիմ գացի 'ի պաշտամանն: Գիշեր ինչ նմա լաւագոյն պատարագ մատուցանել Աստուծոյ քան զհոգի մաքուր յանօրէնութեանց ժամանակին, և ինքնանուէր՝ արքային իւրում և հայրենի աշխարհին:

Զօրինակն եցոյց մեզ Յիսուս. Հրեայք ևս այնպիսի ընտիր քաղաքացի գիտէին զնա, մինչև համարել ոչ այլ ինչ ունել բարեխօսութիւն տանել առ նա յաղերս հարիւրապետին, քան ասել առ Կենարարն մեր. «Սիրէ զազգս մեր [3]»: Առաւել ինչ եհիղ Երեմիա արտասուս քան զնա 'ի վերայ աւերակաց հայրենեացն: Զի՞նչ ինչ ոչ արար Փրկիչն դորովագութ կանխել կարձել զքաղաքա-

1 Առակ. Ի, 5:
2 Երեմ. ԺԸ, 18:
3 Ղուկ. Է. 5:

ցեացն աղէտս: Հաւատարիմ առ իշխանն՝ որպէս և առ աշխարհն իւր, ոչինչ զանգիտեաց՝ առ 'ի զզրգռելոյ զնախանձ փարիսեցւոցն՝ պաշտպան կալ իրաւանց Կայսերն [1], և 'ի մեռանելն վասն մեր 'ի Գողգոթա՝ տիեզերաց զոհ, կամեցաւ զն սիրելն յաւետարանիչս իւր ազդ արասցէ՝ թէ մեռանէր մանաւանդ «'ի վերայ ազգին [2]»:

Իսկ եթէ նախանձախնդիր պաշտօնեայս մեր 'ի ճշմարտութեանց ասի չարժեալ՝ եդ զոգի 'ի բան, միթէ երկնչէր ընկենուլ 'ի բաց զբախտ իւր: Զգիտեցեմք թէ հարկ էր սակայ հակառակ կալ յօժարութեանց Կարգինալին՝ իւրում բարերարին: Իբրև քաղաքավար մեծ՝ հանձարեալն այն շնորհագիւտ՝ գիտաց երկիցս զնչանել ժամանակին և հրաժեշտ յարքունեացն տալ. սակայն, հարկ է ասել, կամէր միշտ դարձ անդրէն առնել վաղագոյն: Լ[ը]թելլեան ընդդէմ դառնայր կարձմտութեան նորա՝ մինչև կասկածելի լինելոյ, և աներկիւղ 'ի նախանձորդաց և յերկմտութեանց առն՝ մեծի պաշտօնեի կասկածոտի և տաղտկացեալ 'ի վիճակէն, ընթանայր անվեհեր ուր իրաւունք տերութեանն ակնարկէին նմա: Զոր խրատն տայր՝ գիտաց և առնել. յորժամ հրաժեշտ հաղարապետին մեծի զնոյն հարկ արար և մտերմացն, սա յոյսմ վերադոյն քան զպաշտօնեայն ինքնին 'ի գլխովին, ընդ որոյ զարմանայր սակայն ընդ խորին խորհուրդս, տեսաք մեք զսա մենացեալ 'ի տան իւրում, պահեալ անդէն զնաղտութիւն իւր 'ի վարանս անդ ամբոխիչ խառնաղանձին և բազմածուփ արքունեացն. և յանձն 'ի վերնախնամ Տեսչութիւնն եղեալ, ետես անխռով շուրջ մտմտեալ զամէհի ալիսն:

Եւ զի ցանկայր դարձի պաշտօնէին մեծի՝ իբրև կարևոր տաղաւիսի անուան և իշխանութեան խնամակալ վարչութեանն, և ոչ՝ զոր օրինակ այլք բաղումք՝ 'ի շահ անձին,

1 Մատթ. ԻԲ, 21:
2 Յովհ. ԺԱ, 51:

զոր աշխիճանն յորում կայր՝ տայր նմա գամագիտ լինել այլուստ հայթայթելոյ, ոչ մի ինչ դժնեայ գնացք ընդ իւր՝ վհատեր զնա։ Տայգր (Ե) մի՝ 'ի վերայ ոչ սակաւ երախտեացն՝ դատեալ անինայ, ցուցանէր նմա իմ իմիք կայր ակն ունել. գիտեր, – ոճիր անթողլի յարքունիս, – զի և ընդդէմ իւր լսելի լինէին քսիք, և թերևս այլում ումեք տուեալ լինէր բարձ իւր, եթէ դոյր զայլ ոք հաւատարիմ հանել 'ի նոյն. և սակայն ոչինչ ընդհատ ուղիղ ունէր նա զկշիռն։ Էին որ անոտի փարաւազս տային մեծի պաշտօնէին, էին և ոչք վայրապար երկեղուկս 'ի նա արկանէին, և 'ի յոյժ հոգողութիւն ճեպեալք՝ նախանձայոյզ և պիտանացուս զանձինս ընծայեցուցանէին։ Իսկ Լրթելլեան ցուցանէր նմա զստոյգն, թէպէտ և յաճախ ծանր և տաղտուկ. և ճարտար 'ի թաքուցանել զանձն 'ի գործս նշանաւորս՝ զվասն 'ի պաշտօնեայ անդր կրթէր հանէր, և աներկիւղ ևս յանձն իւր առնոյր զմերժումն հայցուածոց՝ զոր տերութեանն օգուտ հարկ առնէր։ Եւ այնպէս՝ արհամարհեալ իրաւամբք զատելութիւն այնոցիկ, ընդ որոց ժառութիւնն արժան էր մաքառել, յաչս նոցա լինէր մեծարոյ, բաղում անգամ և սերտ բարեկամ և հաւատարիմ։ Զհամբաւատենչ օրինակս իրացդ զուցեսցէ պատմութիւն. ինձ չէն ինչ պէտք 'ի ճառ զայնս արկանել. շատ է ինձ ակնարկել զառաքինութեանցն հանդիպեալ 'ի շահ օգտի խմաստուն լսելեաց. իմ բարբառ չէ հրաւիրեալ 'ի հաճել զքաղաքավարս և զընդվայրախոյզս։

Բայց կարիմ մոռանալ զայրն՝ (Զ) զոր ամենայն ուրեք 'ի պատմութեան աղեսիցս տեսանեմ. զայրն՝ հաւատարիմ առ սոսկանս, ահաւոր առ տերութիւնն. բնութեամբ բարձրանչն՝ զոր չէր մարթ ոչ մեծարդել, ոչ կասկածել, ոչ սիրել և ոչ ատեալ կէս 'ի կէս. ոգի անդեղև, զոր 'ի գղղդել իւրում զտիեզերս՝ տեսաք մեք զնա յանձն իւր տարեալ պատիւս և փառս, զորս հուսկ ուրեմն մերկանալ կամեցաւ՝ իբրև զյոյժ ինչ ծանրագնի սատգեալս, որ-

պէս ինքնին խսկ արիաբար խոստովան եղև 'ի բարձրագէտ տեղւոջն (Է) քրիստոնէութեան, և իբրև զանբաւական ինչ 'ի ընուլ զցանկութիւն սրտի իւրոյ։ Այսչափ խելամուտ եղև մոլորութեան իւրում և ունայնութեան մարդկօրէն մեծութեանց։ Բայց մինչդեռ տակաւին ջղդէր զբաւամբ արկանել զոր յաւուր միում անգոնեղոցն էր, ծածուկ և հնարաւոր զօրութեամբք վեր 'ի վայր եհար զամենայն։ Եւ իբրև նկուն եղեն ամենայն երկպառակութիւնք, թուեցաւ կալ տակաւին ինքն միայն, և տակաւին ինքնին միայն իւրով դժնեայ և անահ հայեցուածովք սպառնալ շնորհագիւտ սիրեցեալսն յաղթականի (Ը)։

Կրօնք դան խառնին 'ի ինամս թշուառութեանց նորա, շարժի քաղաքն թագաւորական, և Հռովմ ևս սպառնայ։ Զի՞նչ ևս. չիցէ՞ մեզ շատ նեղքոյ և արտաքոյ պատերազմ յերեսաց հանուրց աշխարհակարգ իշխանութեանց, և իցէ՞ արժան կրօնից ևս գալ միջամուխ լինել յաղէտս մեր, և գոգցես իմն ընդդէմ հանել մեզ 'ի մոռուստ և 'ի հեռուստ միս ևս Ճոխութիւն սրբանուէր։ Սակայն 'ի խնամոց Լրթելլեան Միքայելի՝ Հռովմ չեգիտ ինչ սոգիւտ դնել Կարդինալ Մազարենի՝ թէ նսեմացուցեալ ելցէ զփայլ ծիրանեայն զգենլոյ, իբր եկեղեցւոյ առին յօրինական կերպարանս։ Այսպէս էառ երկիրն զնաղաղութիւն, կնատեալ իշխանութիւնն՝ յառաջին զօրութեանն տեսանի, Փարիզ և թագաւորութիւնն համբերն անկեղծ և զարմանալի փութոյ սնդութեամբ ճանաչէ զարքայն իւր 'ի վերին Խնամոցն պահպանեալ, և պահեալ առ գործս իւր մեծամեծս։ Եռանդն ընկերութեանց՝ 'ի դառնահամ փորձոյ զգաստացելոց՝ կայ անմեղկելի, կորուսաք պետութեանն լցան, Կարդինալն առնէ հաշտութիւն շահաւէտ։

Ի գերակատար ծագ բարձրութեան փառաց իւրոց՝ ուրախութիւն իւր պղտորի 'ի տխրատեսիլ երևումն մահուն։ Իշխէ աներկիւղ մինչև 'ի մէջ բաղկաց նորա և 'ի մէջ ստուերաց նորին. գոգցես իմն ցուցանել կամեցեալ բոլորումն

Եբրոպէի, թէ սիրելութիւն իւր՝ 'ի բաղում այնչափ կողմանց հարուածեալ՝ այնպէս հաստարմատ կանգաղեալ կայ, մինչ զի ամենայն ոկսրանայ առաջին նորա, նա և մահն անգամ մնասալուտ և յամրաշարժ: Մեռանի սովին սիրազգած մխիթարութեամբ, և տեսանելիք սկիզբն առեալ գեղեցիկ ամայն (թ), ընդ որոց դեբափառ ընթացս չէք և չէք սիրանալ ըստ արժանի:

Իսկ մեծն և բարեպաշտն Անանա Աւսարիական՝ տայր յայնժամ յաւերժական վկայութիւն անշրջելի հաւատարմութեան մերոյ պաշտօնեիս, յորում՝ 'ի յոյզս անդ պէս պէս խռովութեանց՝ չէր և ոչ ոանփոխ մի նշմարեալ կասկածելի: Արքայ՝ որոյ 'ի մանկութենէ տեսեալ էր զնա համակ մտադիր ուշակալ 'ի բարի տէրութեան, և խանդաղաթ զնւրով նուիրական անձամբն եկեալ, առնոյր վստահութիւն 'ի խորհուրդս նորա. և պաշտօնեայն 'ի չափս իւրում կայր, փոյթ կալեալ մանաւանդ 'ի ծածկել զկարևոր ծառայութիւնն՝ զոր անդուլ վաստակէր 'ի պէս աշխարհին՝ զդացուցանելով զորեարն բաւական առ մեծամեծ բարձս, և յանգէաս նոցին առնելով նոցա երախիս 'ի դէպ: Զի զինչ այլ օգտակարագոյն մարթիցէ առնել պաշտօնեայ նախանձաւոր. քանզի որչափ և մեծ ոք լիցէ այր թագաւոր, կիսամամնեայ ճանաչէ զզօրութիւն իւր՝ եթէ անտեղեակ լիցէ մեծամեծ որերոյն, զորս խնամքն աստուածեղէն բողբոջեն յաւուրս իւր յօգնականութիւն նմին:

Մի խօսեացուք զորոց կենդանիս են, որոց առաքինութիւնք, որպէս և գովութիւնք նոցին, չեն ինչ յամրի 'ի յողդողդ պայմանի կենցաղոյս: Բայց կամիմ ասասնօր յիշատակել 'ի պատիւ զիմաստուն՝ զդիտուն և զբարեպաշտն Լամանեան, զոր պաշտօնեայս մեր այս ընծայեցուցանէր հանապազ իբրև զարժանաւոր զբ 'ի խօսել զպատգամս արդարութեան 'ի հրաշափառագոյն ատենի իւրոց դատաստանաց: Հաստակաց նոցա բարեկամն զօդեալ էր զնոսա՝

Արդարութիւն. և այժմ՝ երկոքին ոգիքն բարեպաշտօնք, վառեալք յերկրի նովին ցանկութեամբ թագաւորեցուցանելոյ զօրէնսն, նկատեն 'ի միասին դէմ յանդիման զօրէնսն յաւիտենականս՝ յորոց մերքս բղխեն: Եւ եթէ գոյզն ինչ նշմար մերոյ անզօր խորութեանցս երևիցի նոցա տակաւին 'ի պարզ և 'ի յատակ տեսութեան անդ իւրեանց, նոքա երկիր պագանեն Աստուծոյ իբրև ընաբուն արդարութեան և օրինաց:

«Աւասիկ թագաւոր՝ արդար թագաւորեսցէ, և իշխանք՝ իրաւամբք տիրեսցեն [1]»: Արդարութիւն՝ յարքայէն անցանեն յիշխանս, և յանթառոյն խաղաղ ծաւալի յատեանս դատաւորութեան. և է այս 'ի թագաւորութեան Եզեկիայ՝ օրինակի աւուրցս մերոց: Արքայ նախանձաւոր արդարութեան՝ ընտրէ զոք զվաւոր և ընդհանրական դատաւոր, բաւական 'ի լուսն կամայ խորհրդոյ իւրոյ. անխոնջ պաշտօնեայն բանայ աչս մտադիւրս յամենայն դատարանս. 'ի հրամանաց արքային խրախուսեալ, հաստատէ 'ի նոսա կարգս, հրահանգս, յօրինուածութիւնս և զհոգի արդարութեան: Գիտէ՝ զի թէ հանճար բարձրագոյն ատենական բռնադատի երբեք ուրեք 'ի դէպս անսովորս ընուլ զթերի նախատեսութեան օրինացն, պարտի զգենուլ զոգի նոցա, և չէլանել բնաւ ըստ օրէնսն՝ բայց եթէ ըստ թելադրութեան նոցին իսկ օրինացն: Իբրև յամենուստ խորհուրդ հարցանիցի, տայ հակիրճ՝ բայց վճիռ պատասխանի, զի խմաստութեամբ և շքով, և օրինացն լեզու է 'ի բանս իւր. ընդ ամենայն աշխարհ տէրութեանն համարձակ է ամենեցուն բողոք ունել՝ խրախուսեալ 'ի պաշտպանութիւն արքային. և ոչ երբեք այսպէս լուսաւոր՝ կարեկից և օգնական դատաւ արդարութիւն:

Տեսանէք որպէս դատաւորս զգօն՝ վարէ զողջոյն իսկ լուսութիւն արդարութեան. կամիք տեսանել և զոր առնէն

[1] Եսայ. ԼԲ, 1:

յորում ակմբի անձամբ կայ և ինքնին շարժելոց է զայն։ Ո՛րչափ տրտունջք եղեն երբեմն՝ թէ գործոց չկք ինչ կարգ և ոչ կատարած, թէ զօրութիւն գատիչ վճռելոց՝ գրեթէ անյայտ է ամենեքին, թէ տեսեանն՝ յորում այնպէս զիւրաւ տապալէին այլոցն դատաստանք՝ և ոչ զիւրոցն ինչ առաւել փոյթ տանէր, և հուսկ ուրեմն՝ թէ յանուն արքայի ամենայն ինչ յանյայտութիւն ծածկեալ լինէր, և բաղում այն էր՝ զի անգուստ եղանէր անօրէնութիւն, ուստի արժան էր նմա լինել շանթահար։ Իսկ առ իմաստուն Մի-քայէ՛լիս Լ՚ընթե՛ղլեան՝ զբուն հարազատ ոգաս պաշտաման իւրոյ կատարեաց ատեանն. և զօրութիւն վճռոյ իւրոյ՝ իբրև զհարթ հաւասար ինչ հակառակամէտ՝ արդարակ ուներ զկշիռն ընդ ամենայն թագաւորութիւնն։

Խոտեցան դատաւորք՝ որ յանգուգն վճռովք և հնարաւորութեամբք իւրեանց ահընկէց լինէին. անուանքնոցա զգուշացոյն յարդարեցին զդատաստան։ Յատենի խորհրդոց և 'ի մատանուոջ տէրութեան, խուռն ամբոխ իրաց, գունակք նոցին պէսպէսք և գժուարութիւնք, ոչ երբէք պակուցին զմեծ զայս ատենակալ. չգոյր ինչ առաւել տագնապող և վտանգաւոր քան 'ի ծուղակ զնա ըմբռնել. և անդրստին 'ի մոլոց պաշտաման իւրոյ այս վճիռ անդարձ էլ 'ի շրթանցն. թէ ոՀիր առաւել անեղբելի՝ խաբել իցէ զինքն։ Յո՛ր գեղեցիկ անգոյր և շպարեր անօրէնութիւն, մանր զիներ նա զպատարանն, և անդէն գիտեր ընդ ծաղիօք անդամ նշմարել զկամակոր ընթացս օձին այնորիկ։ Առանց պատժոյ, առանց ինչ խստութեան՝ ընդ ամօթ հարկաներ զանիրաւութիւն՝ զդացուցեալ ևեթ թէ տեղեակ է այնմ. և անմէա օրինապահութեան իւրոյ հանդէս՝ անհրաժեշտ դատապարտութիւն եղև ամենայն խորհրդոց թիւրոց։ Վասն որոյ՝ քան բանիւք և կարգօք, սովին սքանչելի օրինակաւ հաստատեաց յատենի անդ զարբութիւն և զնախանձ արդարութեան, որ 'ի մեծարանս ածէ զժողովուրդն, յապահովէ զբախտ իւրաքանչիւր, զհամաշխարհի կարգն ամրացուցանէ և արքայութեանս փառս հանդերձէ։

Եւ զոր օրինակ անսխալ՝ նոցն և յօժարափոյթ էր արդարութիւն նորա. առանց ինչ հարկ լինելոց յորդորել զնա՝ հեծութիւնք եղկելի դատափետելոցն՝ զորս թուէր նա լսել զսիւ և զդիշեր, ելին նմա յորդորումն կենդանի և հանապազորդ։ Մի ասէք առ նախանձաւոր դատաւորդ. Ա՛յր դու, քան զկար զառանցեալ հասակիդ վստահես. 'ի սրտմտութիւն բրդեք զհամբերողն քան զամենայն մարդիսկ արդ ի՞նչ ոք, ասէր, 'ի բարձ աւադութեան՝ առ 'ի հանդչել և առ 'ի կեալ. չպարարիցի՞ զկեանսն՝ Աստուծոյ և արքայի և աշխարհին։ Սեղմնք սրբութեան, զձեզ ունիմ վկայս՝ զի ոչ այսօր ինչ պատիր կեղծեաքս Ճարտարախօսութեան դնեմ 'ի բերան նորա զաղդոյ բանքս. գիտասցեն յետինք, եթէ անուն այսպիսւոյ հոյակապ պաշտօնեի հասուցանեմ զՃառս իմ մինչև առ նոսա, զի ես ինքնին լուայ բաղում անգամ զերանելի բարբառդ 'ի նմանէ։

Յետ գժուարին հիւանդութեանց յերեսուց ծանր վասակոցն, արծարծեալ կենդանանայր 'ի նմա հրավառ տենչումն յընդելական Ճգումնն մտանելոյ՝ վտանգաւ դարձի նոցին ցաւոց. և թէպէտ խանգաղակաթ 'ի գութս գորովոյ ընտանեացն, 'ի միտս յայս արիականս կրթէր զնոսա։ Վասն զի՝ որպէս ասացաքս, զոգ փրկութեան անձինն համարէր կալ 'ի ծառայութեանն յայնմիկ՝ զոր պահանջէրն յԱստուծոյ 'ի սուրբ սպասաւորութեան իրաւանց և դատաստանի։ Առնէր զայն անձինն հանապազորեայ պաշտօն աստուածային, առաւօտն և երեկոյին պատարագ՝ ըստ Իմաստնոյն պատգամի. «Պարծել զարդարութիւն և խօսել զՃշմարտութիւն՝ հաճոյ է առաջի Տեառն քան զարիւն զոհից [1]»։ Զի՞ր զոհ սրբութեան, ո՞ր խունկ անուշից, ո՞ր աղօթք առաւել հաճոյական՝ քան մուծանել առաջի իւր զդաս այրւոյն, սրբել զարտասուս տնանկին հարստահարելոյ, և կարկել զանօրէնութիւն ընդ ամենայն երկիր։

1 Առակ. ԻԱ, 3։

Ո՛ՀՉԱՓ այս Ճշմարտութիւնք սիրելի էին աստուածասէր պաշտօնեայս. խաղաղական փուբսիչք հարցեւիորձ ատենիցն յայտ առնէին: Ի հասարակաց հանդէսս դատաստանաց, ոմն՝ միշտ տաղնապափոյթ վաղվաղուն՝ ժխոր ածէ մտացդ. այլ ոք՝ անհանգարտ երեսօք և տարակոյս աչօք՝ զսիրտդ կծկէ. այս ոք յանդիման լինի վասն սովորութեան միայն և օրինի վայելչութեան, և զնորհուրդսն այսր անդր զբօսեցուցանէ՝ առանց զցնորեալ միտսն 'ի վերայ բանիցդ կացուցանելոյ. այն ոք՝ առաւել անողորմ, նոցեալ զակամնջն խրովք մտահաճութեամբք, և անբաւական մուտս տալոյ բանից այլոց, զայն ևեթ լսէ՝ զոր 'ի սրտին ունի: Ի դիւրալուր ունկնդրութեան խմաստուն ատենակալսս՝ մտերմական գիմացն իսկ զգնութեամբ հանդարտէր և անձն ոք խաւուեալ. անդ գտանէին «պատասխանիքն ողոք՝ որ դարձուցանեն զսրտմտութիւն[1], և բանքն լաւք զտուրս[2]»:

Հմուտ էր կրկին երեսացն արդարութեան. մին՝ հեշտալուր 'ի սկզբանն, միւսն անաչառ և անողորմ 'ի վերջին առնել իրացն. անդ հաճոյ լինել խնդրէ մարդկան և ուրախ առնել զերկոսին կողմանսն, իսկ ասա՝ ոչ զանգիտէ ոչ 'ի դժգոհելոյ հզօրին և ոչ 'ի տրտմելոյ աղքատին և անաւագի: Մարդասէր դատաւորս խայտայր ընդ քաղցրութեամբն սկսանել, և յամենայն սպասս արդարութեան թուէր մեղայր մի անդամին 'ի բնէ բարեբար ստեղծեալ, և իրաւունք զնա անողոք առնէին. և այսուիկ շահեալ էր զսիրտս: Թագաւորութիւնն համարէն մաղթէր նմա երկայնաւուրս կենաց, անքոյթ ապաւէն անձանց առնէին զնախախնամ յառաջատեսութիւն նորա: Բազմափորձ հմտութիւնք իւր՝ գանձ անսպառ խմաստուն խորհրդոց էին տերութեանն. և արդարութիւն իւր և խորագիտութիւն և յաջողակութիւն 'ի գործս՝ արժանի առնէին զնա մեծարանաց և սիրոյ ամենայն ժողովրդոյ:

1 Առակ. ԺԵ, 1:
2 Սիրաք. ԺԸ, 16:

Ո՛Վ Տէր, դու ըստ Խմաստնոյն բանի հատուցեր զանկն որ տեսանէ և զունկն որ լսէ[1].» արդ դու որ տասդ դատաւորաց զքաղցրահայեաց աչսն և զմտագիւր լսելիսն և զսիրտն մշտաբացիկ առ Ճշմարտութիւն, ունկն դիր մեզ վասն նորա՝ որ ամենայն աշխարհի լինէր ունկնդիր:

Եւ դուք, հանճարեղ թարգմանք օրինաց, հաւատարիմ աւանդապահք թաքնութեանց նոցին և անհաչտ վրէժխնդիրք արհամարհանաց սրբութեան նոցա, ծն երթայք զհետ մեծի օրինակի աւուրցս. տիեզերքք ամենայն 'ի ձեզ են ակնկալուցս: Աղատացեալք 'ի շահից և 'ի կարեաց, առանց աչաց և ձեռաց, հանդոյն երկնաւոր ոգւոցն յերկրի ջոջիք, նա աւանիկ՝ Արարչին պատկերք՝ զենքնատերութեան նորա բերեալ զնմանութիւն, նմին հանդուսակ անկարօտ մարդկան էք և նոցին պատարագաց, իբրև զնա իրաւ առնէք այրոյն և որբոյն, եկն և նժգեհ ոչ 'ի զուր ինչ աղերսեն զձեր օգնութիւն[2], անեղիւանք՝ զի զդատաւորին տիեզերաց վարէք զիշխանութիւն՝ չինայէք յոք 'ի դատատանս ձեր: Իցիւ թէ հանդերձ խմաստութեամբ և հոգւով զօրութեան իւրոյ տացէ ձեզ զերկայնմտութիւնն զայն և զմտագիւրութիւն, և զշնորհութիւն միշտ դիւրամերձ առ իրաւունս, զոր Սաղոմոն խնդրէր 'ի նմանէ առ 'ի դատել զժողովուրդ իւր[3]:

Բայց զոր ասեանս այս, զոր սեղանքս սուրբք, զոր ինչ աւետարանն զոր քարոզեմ, և օրինակ մեծի պաշտօնեին՝ զորոյ զստաբինութիւնսն հուչակ հարկանեմ, հարկ առնէ ինձ պատուիրել քան զամենայն, են ասասուածաւանդ իրաւունք Եկեղեցւոյ. յԵկեղեցւոջ բովանդակեալ կան ամենայն իրաւունք՝ որովք է յուսալ յօգնութիւն արդարութեան: Պարտ է արդարութեան առաւելապէս ձեռն-

1 Առակ. Ի, 12:
2 Բ. Օր. Ժ, 17, 18:
3 Գ. Թագ. Գ, 9:

տու լինել տկարաց, որբոց, հարստանց ընդ վայր հարելոց և պանդխտաց:

Զի՛ հզօր է Եկեղեցի, և զի՛ ահաւոր սուրն՝ զոր որդին Աստուծոյ եւ 'ի ձեռս նորա. բայց սուր հոգևոր է այն, զորոյ ամբարտաւանք և անհաւանք ջառնուն 'ի միտ զերկսայրի բերան նորա [1]: Դուստր է նա Ամենակալին. այլ՝ հայր նորա՝ որ պաշտպանէ զնա 'ի նեղբոյ, բազում անգամ մատնէ զնա 'ի հալածանս. և ըստ օրինակին Յիսուսի ստիպի աղաղակել 'ի տագնապին. «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս [2]»: Փեսայն իւր հզօր է՝ որպէս և գեղեցիկ և կատարեալ՝ քան զամենայն որդիս մարդկան [3]. բայց զբարբառ նորա սիրելի՝ չլուաւ նա, և ոչ 'ի քաջցր և ցանկալի տեսիլ նորա վայելեաց՝ բայց միայն վայրկեան մի և եթ [4]. յանկարծ փախեաւ նա սրամիտ, «և երագ քան զորթս եղանց, և ամբարձաւ 'ի վերայ լերանց բարձանց [5]»: Իբրև զհարսն մենացեալ՝ հեծէ միայն Եկեղեցի, և մնչիւն տատրակի լքելոյ 'ի բերան նորա. պանդխտ է թափառական 'ի վերայ երկրի, ուր գայ ժողովէ զմանկունս Աստուծոյ ընդ թեւովք իւրովք. և աշխարհ ջանացեալ յափշտակել զնոսա՝ ոչ դադարէ ոսոխել նժգեհութեան նորա:

Ցաւագին մայր՝ ունի բազում անգամ տրտունջ լինել զորդւոց իւրոց որ զզուեն զնա, ջառնուն ինչ զկայ 'ի հարբսահարելոյ զարբութեան իրաւունսն. անաւագեալ է զօրութիւն իւր երկնաւոր, ջասեմ թէ 'ի սպառ դատարկացեալ: Ի նմանէ խնդրին քէնք ոմանց 'ի պաշտօնէից իւրոց յանդգնելոց յափշտակել զաշխարհական իրաւունսն. նմին փոխանակ և իշխանութիւնն աշխարհական կամել

1 Յայտ. Ա., 16։ Եբր. Դ., 12։
2 Մատթ. ԻԷ, 46։
3 Սաղմ. ԽԴ, 3։
4 Յովհ. Գ., 29։
5 Երգ. Ը, 14. Բ, 12։

թուեցաւ ծառայ ունել զԵկեղեցի, և զոյժս իւր 'ի Յիսուսէ Քրիստոսէ առնել խնամակարկատ: Երկրաւոր ատեանք՝ բաց յեկեղեցական դատից այլ ինչ ոչ հնչէն. չածի զմտաւ առանձին պարգևն շնորհեալ առաքելական դասուն 'ի դատել զայնս. պարգև երկնաձիր՝ զոր մի անգամ և եթ ընդունիմք 'ի ձեռնադրութենէ, բայց երանելին Պաւղոս հրամայէ արծարծանել զայն, վառել և բորբոքել անդադար 'ի մեզ իբրև զհուր աստուածեղէն, զի անմահ կացցէ զօրութիւն նորա: Այս պարգև միթէ առ ա՞յն և եթ շնորհեցաւ մեզ, զի զբանն Աստուծոյ քարոզեսցուք, կամ զի զոգիս խորհրդովք սրբովք սուրբ արասցուք. ո՞չ ապաքէն և 'ի հրահանգել զեկեղեցիս, կարգել օրէնսդրութիւնս, 'ի պէտս վարել զօրէնսն աստուածազգեցիկս նախնեացն մերոց սրբոց, և ընդ զամենայն պակաս եկեղեցական սպասաւորութեանն:

Երբեմն կարգք և օրէնք և եպիսկոպոսունք և ինքնակալք՝ միաբան 'ի միասին էին արգելուլ զպաշտօնեայս սեղանոյն՝ չերևել առաջի երկրաւոր դատաւորաց՝ և ոչ յաղագս աշխարհական խնդրոց: Մինչնորդս կամէին ունել՝ սուրբս 'ի կցորդութենէ մարդկան, երկնչէին խառնել զնոսա միաստանգամ ընդ աշխարհ՝ յորմէ որոշեալքն էին լինել բաժին Տեառն: Իսկ զարդիս՝ յաղագս եկեղեցական խնդրոց տեսանին եկակոչ ատենաքարոզ եղեալ. այսչափ հզօրացաւ աշխարհ, այսչափ անաւագ և անզօր է եկեղեցի: Սկսանին արդարև ունկնդիր նմա լինել. մեծաշուք ատեանն և զլիաւոր ժողով աւագանւոյն՝ ձեռն կարկառեն առ վերաւոր իշխանութիւն նորա, իրաւանցն աղբերք 'ի յայտ գան, կենդանանան առածք աստուածայինք: Այրքայն նախանձաւոր Եկեղեցւոյ, միշտ պատրաստ 'ի տալ նմա աւելի քան զոր հանել 'ի նմանէ բամբասեն, նա գործէ զերջանիկս զայս փոփոխումն. հանձարեղ և խնամատուն ատենադպիր իւր օժանդակ է կամաց նորա. ընդ տեսչութեամբ պաշտօնեիս նոր ինն մատեան է մեզ օրինաց՝ 'ինպատաստ եպիս-

կոպտութեան. և զօրէն հարցն մերոց պարծեսցուք այսուհետև 'ի միաբանութիւն օրինաց ընդ կարգս Եկեղեցւոյ:

Յառաքել խմաստուն դատաւորիս զեկեղեցական պայքարս յատեանս երկրաւորս, հրամանք իւր հանձարեալք ցուցանեն նոցա զոր ճանապարհ պարտիցին ունել, և զոր ինքն մարթասցի տանել դարման գործոյն: Այսուհետև մենատանն սուրբ՝ պահապան խոնարհութեան և անմեղութեան՝ անմատոյց հաստատեալ կայ. ոչ ևս այսուհետև իշխանութիւնն աշխարհական տայ զոր չուրի, և կարգ հպատակութեան իշխանութեանց եկեղեցւոյ, նմանութիւն երկնաւոր քահանայապետութեանցն և զոդ միութեան մերոյ, պահպանի. այսուհետև ժառանգաւորք եկեղեցւոյ ընդ ամենայն թագաւորութիւնն վայելեն 'ի յառաջնահաս պատիւ իւրեանց. այսուհետև 'ի վերայ զոհի Ուխտից և 'ի վերայ «մեծի խորհրդոյ անբակ միութեան Յիսուսի ընդ Եկեղեցւոյ իւրում[1]», առաւել ինն ողջամիտ են կարծիք առ հմուտ իրաւագէտս և խմաստուն դատաւորս, քան 'ի գիրս մատենագրաց ոմանց՝ որ զանձինս առ եկեղեցականս ունին և առ աստուածաբանս: Մեծ ոմն առաջնորդ՝ (Ց.) գործակից է մեծամեծացս այսոցիկ. Ճարտար և ընդունելի բարեխօս առ հօրն՝ ինքնայորդոր եղելոյ 'ի պաշտպանութիւն Եկեղեցւոյ, զիտէ նա իմ իմիք ակն ունել իցէ յիմաստուն բարեպաշտութենէ մեծի պաշտօնէի, և յայտ առնէ զաստուածային իրաւունսն՝ առանց զկեսարուն զրկելոյ: Յետ այսց սկզբանց չիցէ՞ ինչ մեզ յոյս, թէ նախանձոտք Գալ'ղեայ ոչ ևս բիծ զնովաւ շիեսցեն յաւիտեան՝ զաղատութիւնս եկեղեցւոյն, զորս ընդդէմ նմին զէն առնուն հանապազ:

Աստուածասէր հոգի խմաստնոյն Միքայելի Լըթելլեան, որ յառաջ տարար զգործս զայս զմեծ, ընկալ առաջի խորանացս զսեան և սերտ վկայութիւն հաւատոցդ քոց և

1 Եփես. Ե, 32:

մերոյ հնարհակալութեանս 'ի բերանոյ Եպիսկոպոսի՝ կարի վաղ ստիպելոյ փոխել 'ի պատարագս հանդստեան հոգւոյդ, զորս երբեմն վասն պատուական կենացդ մատուցանէր: Եւ դուք, Եպիսկոպոսք սուրբք, երկնից պատգամաւորք, դատաւորք երկրի, առաքեալք, վարդապետք և սպասաւորք եկեղեցեաց, դուք՝ որ սուրբ առնէք զժողովս զայս 'ի տեսիլ երեսաց ձերոց, և դուք՝ որ սփռեալք ընդ տիեզերս ընդ զհամբաւ եկեղեցասէր պաշտօնատարութեանն, մատուցէք հանապազօր սուրբ պատարագս վասն հոգւոյս բարեպաշտի: Տայցէ Տէր՝ զի բարեկարգութիւնն եկեղեցական հաստատեսցի լի բովանդակ, դարձցի վայելչութիւնն մեծ յատեանս ձեր, իշխանութիւնն 'ի դատաստանդ, պատկառանք և զօրութիւն 'ի դատակնիքդ: Իցէ՛ թէ ստէպ դումարեալք յանուն Յիսուսի Քրիստոսի՝ ունիցիք զնա 'ի միջի ձերում, և տեսանիցէք զգեղեցկութիւն աւուրցն առաջնոց: Ներեսցի ինձ գոնէ ըղձաձայնել առաջի սեղանոցս սրբութեան, հաչել հառաչել տենչանօք նախնի հնութեանցն առաջի կաճառեալ խմաստուն հրապարակիս, և քարոզել զխմաստութիւն յերաստս կատարելոց[1]:

Այլ՝ մի, Տէր, մի՛ լիցին այսոքիկ՝ խղճք ևեթ անարգասաւորք: Զի՞նչ է զոր ոչ ընդունիցիմք 'ի քումմէ բարերարութենէդ, եթէ իբրև զառաջինսն մեր՝ հեշտութիւն սուրբ մեզ առնիցեմք զաստուածեղէն մատեանդ, զլնաւոր գործ՝ զբանիդ քարոզութիւն, և երանութիւն՝ զսրբութիւն ժողովրդեանդ. եթէ սուրբ սիրով կապեալ ընդ հօտս մեր՝ երկիցեմք բաժանել 'ի նոցանէ, եթէ փոյթ ունիցիմք կատարել քահանայս՝ զորս կարող լիցի Լուդուիկ ընտրել յանթոռս մեր, եթէ հայթայթիցեմք նմա հնարս թեթևաբեւնութեան մատցն խղճի 'ի բազմամեղանդ մատնէ ասի պարտուցն, և եթէ անխախուտ օրինաք մերժեսցին յեպիսկոպոսութենէ՝ որք ոչն կամին առաքելական վաստակով

1 Ա. Կորնթ. Բ, 6:

ժամանել յայն։ Սա այսու՝ զնմրդ կարասցուք առանց այսր օգնականութեան և զայսչափ նորագարձ ժողովուրդս մուծանել խառնել յԵկեղեցի Քրիստոսի, և բառնալ անվեհեր զյաւելուած մի մեծ զայդպիսի 'ի բեռն Թիկանցս։ Ո՛հ. եթէ մեք չիցեմք անձանձրոյթ յուսուցանել, 'ի յանդիմանել, 'ի մխիթարել, 'ի կաթն ջամբել տկարաց և հաց ուժեղաց, և հակիրճ՝ 'ի մշակել ընտրատունկս զայսոսիկ, և 'ի քարոզել նորոյ ժողովրդեանս զբանն աստուածային, զոր եղուկ՝ գործի 'ի ձեռս առին ոմանք 'ի Թիւրեալ զնոսա «սպառազէն հզօրն հալածեալ 'ի տանէն՝ դարձցի անդրէն» մոլեգին ևս «եօթամբք այլովք չարագոյն քան զնոսն այսովք, և լինիցի յետինն մեր չար քան զառաջինն [1]»։

Իսկ առժամայս մի՛ լռեսցուք զայս սքանչելիս աւուրց մերոց հանել ընդ ազգս և ընդ աշխարհս, զզոյցս իրացդ աւանդեսցուք յազգս հանդերձելոց։ Օ՛ն առեք բուռն հարեք 'ի գրիչս ձեր սուրբս՝ որ գիրս դնեք զեկեղեցւոյ ժամանակաց. աջողակ գործիք «արագագիր դպրի [2]» և ժրաջան ձեռին, փութասջիք գասել զԼուսաւորիչ ընդ Կոստանդիանոսս և ընդ Թէոդոսս։ Որք կանխեցին քան զձեզ 'ի գեղեցիկ վաստակդ՝ պատմեն «Թէ մինչ չև էին եկեալ ինքնակալք՝ որոց օրէնք չետուն հրաման ժողովոյ հերձուածողաց, միաբան կային աղանդք և յերկար մնային»։ Բայց, յաւելու Սոզոմենոս, յորմէհետ յարոյց Աստուած Թագաւորս քրիստոսասէրս, և արգելին 'ի նոցանէ զժողովսն, օրէնքն չտային Թոյլ հերձուածողաց գումարել հրապարակաւ, և որ սկէր 'ի վերայ նոցա ուխտ եկեղեցւոյն՝ խափան լինէր առանձինն զայն առնելոյ։ Սովին օրինակաւ բաղումք 'ի նոցանէ գային խառնէին 'ի միաբանութիւն, իսկ յեցամիտ կամչոտեալքն մեռանէին առանց Թողլոյ յաջորդս, ոչ կարելով հաղորդել միմեանց զուսումն

1 Ղուկ. ԺԱ, 21, 24։
2 Սաղմ. ԽԴ, 1։

իւրեանց և ոչ ուսուցանել համարձակ [1]»։ Այսպէս կորընչէր հերձուածն և Թոյն նորա ընդ նմա, և հակառակութիւն երեթայր մնանէր 'ի գժոխս՝ ուստի ելեալն էր։ Ահա դիկ, տեսաք, զոր հարքն մեր տեսին զարմանալիս՝ յառաջին դարս եկեղեցւոյ։

Բայց հարցն մերոց չէր տեսեալ իբրև զմեզ, թէ հերձուած մի հնացեալ՝ յանկարծակի խլեցի (ԺԱ), մոլորեալ հօտք դարձցին երամ երամ, և զեկեղեցիս մեր անձուկս յոյժ 'ի ժողովել զնոսա. սուտ հովուացն լքեալ զնոսին՝ առանց հրամանի անգամ մնալոյ, և երանեկի կարծեցեալք արդարանալ յաչս նոցին տարագրութեամբն իւրեանց։ Ամենայն խաղաղութիւն 'ի մեծի անդ խռովութեան. ոչ զերբք հրաշացեալ՝ տեսանելով 'ի նորանշան իրին զհատատուն դրոշմ, որպէս և զչքնաղ հանդէս իշխանութեան, և զպարծանս քաջութեան արքային առաւել քան զիշխանութեանն սատ խոստովանեալ և պատուեալ։

Ի բաղում սքանչելեաց ատի խանդակաթեալ, զեղցուք զսիրտս մեր 'ի վերայ բարեպաշտութեան Լուսաւորչեայ, աղաղակ մինչև յերկինս ամբարձցուք, և ասասցուք առ նորս Կոստանդիանոս, առ նորս Թէոդոս, առ Մարկիանոսս նոր և առ նորս Կարոլոս մեծ, զոր վեց հարիւր երեսուն հարք ասացին երբեմն 'ի ժողովն Քաղկեդոնի. «Դու հաստատութիւն հաւատոյ, դու բնաջինջ բարձումն հերձուածողաց. գործ արժանի քում արքայութեանդ, հնիք նորա սեփական։ Քեզ՝ ոչ ևս է հերձուածութիւն. Աստուծոյ միայն էր սքանչելեացս կարողութիւն։ Արքայ երկնաւոր, պահեա զերկրիս Թագաւոր. այս ուխտք են եկեղեցեաց, այս Եպիսկոպոսաց ուխտք [2]»։

Ահեղագիրս խմաստուն իբրև սա զհրաման յօրինելոյ բարեպաշտ հրովարտակին, վերջին հարուածոյ հերձուա

1 Սոզոմ. գիրք Բ, գլ. ԼԲ։
2 Ժողով Քաղկ. Արձանագիր. 2։

ծողութեանն, հասեալ էր'ի վերայ նշմարանք ախտին որով և զրաւեցաւ 'ի կենաց. բայց պաշտօնեայ որ իբրև զսա նախանձաւոր արդարութեան, չէր արժան նմա մեռանել սրտառուչ ընդ չառնելն իրաւունս ամենեցուն՝ որոց դասք հանդերձեալ 'ի պատրաստի կային: Ուստ 'ի մահազեկեալ տկարութիւնն ընկեցեալ՝ զոր սկսեալն էր կրել, լուաւ, դատեաց, և Ճաշակեաց զհանգիստ մարդոյ արձակելոյ յաջողապէս 'ի մտացն խղճէ. յորմէ ոչ եկեղեցի, ոչ աշխարհ, ոչ արքայն իւր, ոչ հայրենիք, ոչ այս որ կամ այն, ոչ ժողովուրդն, չունէին այլ ինչ պահանջել: Պահեալ էր նմա յԱստուծոյ զկատարումն մեծի գործոյն ասուաւածպաշտութեան, և 'ի կնքել անդ իւրում զեղծումն հոչակաւոր Նանդեան հլսվարտակին, ասաց. Յետ այսր յաղթանակի հաւատոց և գեղեցիկ արձանի բարեպաշտութեան արքայի, չէ ինչ ինձ փոյթ վախճանել զաւուրս իմ: Այս վերջին բան է զոր բարբառեցաւ 'ի գործ պաշտաման իւրոյ. բարբառ արժանաւոր պսակելոյ զայնոսիսի շքեղ սպասաւորութիւն:

Եւ ալդեամբք խակ եկն երևեցաւ մահն. ոչ ևս փորձ փորձի դեղոց ընդդէմ եղեռնաւոր եկիցն. աւուրս տասն 'ի գլուխ՝ նկատէ զնա աներկիւղ երեսօք, խաղաղ, միշտ 'ի նիստ, որպէս և ցաւք իւր հարկ առնէին: Կարծեալ իմն այնպէս էր, որպէս թէ ոք մինչև 'ի կատարած կայցէ առ հանդարտ ունկնդրութեամբ պաշտօնէի, կամ առ անուշակ խօսակցութեամբ հեշտական բարեկամի: Բազում անգամ ինքն միայն ընդ միայն խօսակից լինի ընդ մահուան. ուշ, միտք և բան անյողդողդ, և այնպէս կենդանի ոգւով՝ որպէս մարմնով մերձ 'ի մահ օրհասական, թուի հարցանել զնա, թէ զի՞ է զի անադորոյն զքեզ կարդան: Առաջի աչաց նորա եղև նա հանապազ 'ի տուէ և 'ի գիշերի. զի ոչ ևս այնուհետև Ճանաչէր նա զքուն, և ցրտասառոյց ձեռք ևեթ մահուն կարէին փակել զաչսն: Զեղև երբեք այնպէս ուշակալ. Ի գործ կամ, ասէր, 'ի գործ. զի թուի ինձ լսել

տակաւին 'ի նմանէ զարիական զայն բարբառ. «Ոչ ժամանակ է հանգստեան»: Այս ամենայն յարձակումն մահուն պատրաստ կայ և ակն ունի ժամու ազատութեան իւրոյ:

Մի համարիցիք թէ այս արութիւն ծնանիցի անդէն առաջամայն 'ի ծոցի մահուն. պտուղ է մտածութեանցն զոր տեսէք և պատրաստութեան բոլոր կենացն: Զծածուկս սրտից 'ի վեր հանէ մահ: Դուք, մեծատունք, դուք՝ որ կեայք յուրախութիւնս աշխարհի, եթէ գիտէք՝ քանի՞ գիւրաւ ըմբռնիք 'ի մեծութեանց զորս ժառանգել կարծէք, եթէ գիտէք՝ քանի՞ անզգալի գամք հնարից են նոցա խիզբս արկանել կուռիլ և վակաժոյժ լինել և գոգցես իմն մարմնեխառն տարրանալ 'ի սիրոս ձեր, և թէ քանիսն բուռն և ապականիչ կապանքդ իցեն՝ որոց չզգայք, իմանայիք յայնժամ զշնմարտութիւն բանի Կենարարին. «Վայ ձեզ մեծատանցդ»[1]. և «բառնայիք՝ ըստ երանելւոյն Յակոբայ՝[2] Ճիչ ազի և ողբմ արտասուաց և ձայնս ողբոց՝ 'ի տեսիլ թշուառութեանց ձերոց». այլ չառնուք դուք 'ի միտ զանառակութեան կապանդ. տուփուն իրի տաւեալ ազդեսոր է, զի յոյզք և ծուիքք են 'ի նմա, իսկ 'ի սատցուածին՝ իբրև յանկողնի՝ գտանեմք քուն իմն մահաքուն, և նիրհեմք 'ի սէր երկրաւոր ընչից՝ առանց իրազգաց ողբմելի կալանացս լինելոյ:

Ի սոյնս անկանի, եղբարք իմ, յուսացեալն 'ի մեծութիւնս, ևս և 'ի մեծութիւնս արդար ստացուածոց: Սակայն անչափ սէր ընչիցն զոր չիմանամք 'ի ստանալն, յայտնի լինի՝ ասէ սուրբն Աւգոստինոս՝ 'ի կորնչելն[3]: Անդ լսելի լինի գոյժ չուառական թագաւորի, Ադադայ խոժոռելոյ ընդդէմ մահուն, որ գայ յափշտակել 'ի նմանէ յանկարծակի ընդ կենացն և զմեծութիւն իւր և զփափկութիւնսն.

1 Ղուկ. Զ, 24:
2 Յակ. Ե, 1:
3 Յաղագ. Քաղ. Աստ. Ա, 10:

Եվ ինչպէս դառն իցէ մահ[1]։ Այսպէս ուրեմն գայ դառն մահ խզել միանգամայն զքաղցր կապանս։ Սրտառուչ ազէ-խարշ լինիմք։ 'ի ցաւս վերացն խմանամք օրչափ մածեալ զանգեալ կային անդ մեծութիւնքն, և մեղքն գործեալք առ անչափ կղզիսթ կաթոգի լինելոյն՝ մերկանդամ հոլա-նեալ յերեւան ելանէ։ Որպէս մեղանն սիրելոյ՝ 'ի մէջ առին 'ի խորուսանելն[2]։

Իսկ 'ի հակառակէն, այր՝ որոյ բախտ իւր յերկնուստ պահպանեալ՝ անծանօթ է արկածից, որ աննախանձաբար ամբարձեալ 'ի մեծամեծ պատիւս, երանելի յանձին և 'ի տանն, իբրև տեսանէ զի գնայ կեանքն երջանիկ, օրհնէ ըզ-մահ և տենչայ զհետ յաւիտենից բարեաց, ոչ ապաքէն յայտ առնիցէ՝ թէ չէր եդեալ զսիրտ իւր 'ի գանձս զոր գողանան գողք, և զի իբրև միւս ոմն Աբրահամ չճանաչէ հանգիստ՝ բայց 'ի քաղաքն մնացական[3]։ Որդի (ԺԳ) մի իւր աստուածանուէր՝ կատարելով արիաբար զսլարտս իւր, որպէս և զայլ ամենայն մասունս իւրոյ սպասաւորութեան, երթայ տանի զցաւագին պատգամն առ հայրն գորովագութ և անձկալի։ Պատանէ՝ որում ակնունէր, քրիստոնեայ պատ-բաստեալ առ ամենայն, և սպասեալ այնմ յետնումն պաշ-տաման 'ի նորա բարեպաշտութենէն։

Օծութիւնն վերջին՝ ազդեցեալ 'ինմին բերանոյ առ ի-մաստասէրն քրիստոնեայ, արծարծանէ զաստուածսիրու-թիւն նորա հանդոյն յետին թոշակին։ Սուրբ խնդրուածք 'ի հոգեվարսն՝ զարթուցանեն զհաւատս նորա, հոգին զե-ղու յօրհնութիւնս երկնաւորս, և երկրորդ Դաւիթ ասէր զնա լինել՝ յանձին իւր առակեալ զսաղմոսն իւր աստուա-ծաբուխս։ Ոչ ոք յարդարոյ առաւել ևս յուսով ակն կա-լաւ աստուածապարգև շնորհացն, և ոչ 'ի մեղաւորաց

[1] Ա. Թագ. ԺԵ, 32։
[2] Նայն Ս. Աւգուստ. անդ։
[3] Եբր. ԺԱ, 10։

խնդրեաց զոք երբեք թողութիւն քան զնա խոնարհաբար, կամ անարժան այնմ զանձն համարեցաւ։ Ո՞ տացէ ինձ զգրիչն Յոբայ զերկաթի, քանդակել 'ի պլինձ և 'ի կուռ զբանն զայն ելեալ 'ի բերանոյ իւրմէ 'ի յետին անդ ա-ւուրս, թէ 'ի քառասուն և երկուս ամսն զրս ծառայեցի արքային։ ուրախ եմ զի ոչ երբեք հակառակ մտացս խղճի եառ ինչ նմա խորհուրդ, և ոչ անիրաւութեան իմիք զոր 'ի ձեռս եր արգելուլ՝ համբերի երբեք յայնչափ յերկար սպասաւորութեանս։ Արդարութիւն բաւեալ տեսեալ ան-յեղլի, և իբրև միշտ կոյս և անապական 'ի դէպս դեպս զը-ժուարահամբոյրս, որպիսի՝ ընդհաց չիցեն սքանչելիք։ Յետ այսր վկայութեան խղճի մտաց իւրոց՝ զի՞ ևս պէտք էին նմա մերոց գովեստիցս։

Զարմանայք ընդ հանդարտութիւն նորա. և ո՞ր այն հիւանդութիւն կամ ո՞ր մահ խռովել կարիցէ զայն՝ որ 'ի խորս սրտին կրէ զմեծ զայն խաղաղութիւն։ Իսկ զի՞նչ տե-սանեմ ես 'ի ժամուն յայնմիկ. որդիք առ ցաւսն մորմո-քեալք. զի հաճին նոքա թէ տաց զայս վկայութիւն գթոց գորովոյ իւրեանց, և զայս ևեթ գոլութիւն կարէն առանց դժկամակ ինչ լինելոյ ասել։ Զի՞նչ ևս այլ տեսանեմ. կին մի ժրագլուխ՝ ի ողորմութեամբք և գործովք բարեաց, յակամայ կամն յետնեալ 'ի նմանէ՝ քան զոր կանխէն կարծէր յարաժամ։ Ի զի գնայ նուիրել առաջի սրբոց խո-բանացն զայս սերտ սիրելի և պատուական մատն անձին իւրոյ. է զի գայ մտանէ առ հիւանդն, ոչ առ մեկնութեան, այլ «առ մեռանել ուսանելոյ, ասէ, և շահել յօրինակէ սատի»։

Երջանիկ ծերունին վայելէ մինչև ցվախճան 'ի սէր և 'ի գորով ընտանեացն՝ ուր ոչինչ անարի նկնախոհ տեսա-նէ, այլ 'ի վայելել անդ յերախտահատոյցս նոցա՝ իբրև այլ ոմն Աբրահամ պատարագ մատուցանէ զնոսա. և յա-ղաչէն զնոսա 'ի բաց ելանել, «Կամիմ, ասէ, քեցեալ մոցել զնս և 'ի մանուանց անգամ նշմարանաց մարդկութեան».

Տեսանէ՞ք զքրիստոնեայն որ ՀԵՌՀԵՐԷ զլոհ իւր, որ զվերջին թափէ Ճիգն 'ի խորատակել զքնաւ կապանս մարմնոյ և արեան, և սոսկացեալ հրաժարէ յերկրէ։ Այսպէս 'ի ցաւս անդ և 'ի ՀԵՌԵԼ մահուն մաքրի որպէս 'ի հուր հոգին քրիստոնեայ. այսպէս մերկանայ յերկրէցս և 'ի զգալեաց՝ ևս և յորոց յանմեղ ախորժակսն. այս շնորհք են որ 'ի մահու անդ երևին։

Այլ մի ոք խաբեսցի. յայնժամ լինիցի այդ, յորժամ եթէ ստէպ ոք յայն խոկայցէ, եթէ հարուստ մի ժամանակ յայն պատրաստեսցի գործովք բարութեան. ապա թէ ոչ, բերէ մահ ընդ իւր զանզգայութիւն, կամ զանխուլ ինն անյուսութիւն, կամ յիրաւացի արհաւիրս իւր՝ զկերպարանս ինչ պատիր ապաշաւանաց, և շփոթ ինն՝ բարեպաշտութեան մահաբեր։ Բայց աւասիկ է 'ի կատարման սիրոյն՝ լուսն գործոյն Աստուծոյ։ Յեռ փոքու, 'ի տկարութիւնն անդ, և սայրասուր ցաւովք կարեվէր արի ծերունին, և զթեան ամբարձեալ՝ և խնդրեալ զհամբերութիւն մինչ 'ի սպառ, «Ոչ վախճանի վշտացս, ասէ, ցանկամ, այլ տեսցն Աստուծոյ փափաքեմ»։ Զի՞նչ ասասնօր տեսանեմ, քրիստոնեայք. զՀշմարիտ հաւատս անխոնջ անձանձրոյթ 'ի կրից, – որ այն ինքն է Հշմարիտ նկարագիր քրիստոսասիրի, – և ոչ խմիք 'ի խնդիր լինել, բայց մերկանալոյ զնաւար իւր, և փարատեալ զմառախուղն՝ փոխել 'ի լոյս անստուեր և 'ի յստակ տեսութիւն։ Ո՛վ երջանիկ ժամուն, յորում ելանիցեմք 'ի ստուերաց և յառակաց օրինակաց՝ երթալ տեսանել զՀշմարտութիւնն դէմ յանդիման [1]։

Օ՜ն, եղբարք իմ, եկայք անդր ընթացուք փութոյ պնդութեամբ. գուն դիցուք սրբել զսիրտս մեր, զի Աստուած տեսանիցեմք ըստ աւետարանին խոստմանն. անդ է կէտ Ճանապարհին, անդ վախճան հեծութեանց, անդ լու-

1 Ա. Կոր. ԺԳ, 12։

ծումն երկանց հաւատոյն՝ որ երթայ, որպէս բանից կարգ է ասել, ծնանել զտեսութիւն։ Երջանիկ ժամ, դարձեալ ասեմ. որ ոչն քեզ փափաքէ, չէ քրիստոնեայ։ Իբրև գամ մի ըզձումնս այս երկնաւոր վառեալ է 'ի Հոգւոյն սրբոյ 'ի սիրտ լիահաւատ ծերունւոյն, զի՞նչ այլ մնայ, քրիստոնեայք, բայց երթալ ժառանգել զյանկալին։ Հուսկ ապա յաւանդումն հոգւոյն եկեալ, «Շնորհ ունիմ Աստուծոյ, ասէ, զի տեսանեմ զմարմնոս նուաղեալ առաջի հոգւոյս [1]»։ Շարժեալ 'ի մեծ բարերարութենէ աստի, և հիացեալ ընդ հանապազորդել իւր զգոհութիւնն մինչ 'ի շունչն յետին, սկիզբն արար օրհնութեան ասուածային ողորմութեանցն. Զողորմութիւնս քո, Տէր, յաւիտեան օրհնեցից, ասէ։ Յայս 'ի սոյն բարբառ կատարէ զոգին, և գնայ՝ անդուլ երգակից լինի երկնից զուարթնոցն 'ի նուագն նուիրական։

Խոստովան լերուք արդ, զի յարատևակ համբերութիւն իւր ծնունդ էր սրտի անչատելոյ 'ի սիրոյ աշխարհի, և խնդացեք 'ի Տէր մեր՝ զի 'ի մեծութեան անդ արժանի եղև շնորհի և հաւատոյման աղքատութեան։ Յորժամ մանր միտ եդեալ նկատեմ յաւետարանին զառակ, կամ մանանդ զպատմութիւն ապիրատ մեծատանն, և տեսանեմ զյեղանակ խօսկին Յիսուսի զերջանկաց երկրի, թուի ինձ նախ՝ ոչ մի ինչ թողեալ նոցա յոյս 'ի հանգերձեալ աշխարհին։ Դաղարոս աղքատ և վիրաւոր, փոխի 'ի հրեշտակաց 'ի գոգն Աբրահամու, իսկ մեծատունն՝ երանեակ միշտ 'ի կեանս յոյս, թաղեալ՝ դատանի 'ի դժոխս [2]։ Աւադիկ այլազգունակ փոխարէնք զոր երկոցունցն հատուցանէ Աստուած։

Այլ զի՞նչ ցուցանեմ մեզ որդին Աստուծոյ զպատճառս երացդ։ Մեծատունն, ասէ, ընկալաւ զբարիսն և աղքատն

1 Սաղմ. ՁԸ, 1։
2 Դուկ. ԺԶ, 22։

զարշարանան ատէն 'ի կեանս իւրում. և անսի զինչ։ Լուարուք, մեծատունք, և սոսկացարուք. Եւ արդ, յարէ զինի, մին ասա միսիթարութիւն գտանէ, և միւսն զարժան պատուհասն։ Դատաստան զարհուրելի, ազէտաւոր ժառանգութիւն մեծամեծաց աշխարհի։ Եւ սակայն բացէք զաչսդ. Աբրահամ մեծատունն է որ ժողովէ 'ի գոգ իւր զաղքատն Ղազարոս, և ցուցանէ ձեզ, ով մեծատունք աշխարհի, յոր փառս մարթէք ակն դնել, եթէ հոգւով աղքատք [1] և յընչեցդ անջատեալք՝ կազմ գտանիջիք թողուլ զնոսա իբրև ուղղաւոր ժիր 'ի ջուրեալ գնալ 'ի վրանէ սուղ ինչ գիշերի առ օթ դադարելոյ։

Այս հնարհ, խոստովան լինիմ, սակաւ երևի 'ի նորութիւն կատակի, ուր վիշտք և աղքատութիւն որդւոցն Աստուծոյ՝ յանդիման առնելոց են հանապազ ամենայն եկեղեցւոյն զՅիսուս Քրիստոս 'ի խաչին. սակայն, քրիստոնեայք, յարուցանէ մեզ Աստուած երբեք երբեք օրինակս այսպիսս, 'ի միտ առնուլ մեզ՝ թէ մարթի արհամարհել և ըղխտղանս այժմու մեծութեանց և զի ուսանիցին աղքատք չլինել կամոգի 'ի սէր իրիք՝ զոր մարթի ուրախութեամբ լքանել կամակար։ Պաշտօնեայս այսչափ բարեբախտիկ և միանգամայն այսչափ յերկրէ թօթափեալ, անկեսցէ 'ինոսա զմիտս զայս։ Մերկացաւ մահ զծածուկս իրաց նորա, և Ժողովուրդն՝ խիստ դատաւոր այսպիսի ապրանց Ճոխից և քաջաբաստից, չեռես ինչ քան զչափաւորն. տեսան ստացուածք իւր ինքնին բարգաւաճեալք երկայն սպասաւորութեամբն և զդուշաւոր տնտեսութեամբն. և 'ի գովութիւնս մեծի դատաւորի և խմաստուն պաշտօնեի՝ յաւելուն այժմ և գովեսցք հանճարեղ և արթուն տանուտեառն, ոչ ինչ անպատեհ համարեալ նահապետացն սրբոց։ Արդ ըստ նոցին օրինակի եթող անտրտում զոր անչան ստացեալն էր. բուն բարիք իւր չբարձան 'ի նը-

1 Մատթ. Ե, 3։

մանէ, և արդարութիւն նորա կայ մնայ յաւիտեանս յաւիտենից։ Անսի բղխեցին այն ամենայն ինորհք և առաքինութիւնք՝ զորս վերջին հիւանդութիւն իւր փայլեցոյց։ Ողորմութիւնք իւր ծածկեալք 'ի ծոց աղքատին, պաղատեցան վասն նորա [1], աջ իւր թաքուցանէր զայնս 'ի ձախոյն, և բաց 'ի մտերմաց ոմանց՝ սպասաւորաց կամ կարեւոր վկայից, ներքին խորհրդակիցք իւր անդամ ոչ ինչ գիտացին. բայց Հայրն որ ետես զայն 'ի ծածուկի՝ հատոյց նմա զփոխարէնն [2]։

Մի ևս լայք զնա, ժողովուրդք, և դուք՝ որ 'ի նշուլից աշխարհի շլացեալ՝ զարմանայք ընդ խաղաղական ընթացս երկար և գեղեցիկ կենացն, 'ի վեր ևս ամբարձէք զմիտսդ։ Իսկ զինքդ. ուրթսուն և երեք ամք սահեալք 'ի յաջողութիւնս, թէպէտ և չհատանիցեմք անսի ոչ զտիս տղայութեան՝ յորս ոչ ճանաչէ մարդ զանձն, ոչ զլսօթութիւնս՝ յորս չեն կեանք, և ոչ ոչինչ զժամանակն՝ ընդ որ գոյ միշտ ապաշաւ բաղում, միթէ երևիցին ինչ առաջի յաւիտենականութեան՝ յոր ընթանամք մեծաքայլ։ Յետ կենաց ամաց հարիւր և երեսնից՝ ածեալ Յակոբ առ արքայն եգիպտացւոց, պատմէ նմա զսակաւութիւն աւուրց տաժանաւոր պանդխտութեան իւրոյ, որ չհատանեն յաւուրս հօր իւրոյ Սահակայ և ոչ հաւուն իւրոյ Աբրահամու [3]։ Սակայն ամք աբրահամեան և Սահակայն, որ նուազ ցուցին զՅակոբայն, չերևին ինչ առ կենաւքն Սեմայ, զոր Ադամայն և Նոյին գլեն։ Իսկ եթէ ժամանակ առ ժամանակ, չափ առ չափ և կէտ առ կէտ եղեալ յոչնչ լինի, զինչ լինիցի ժամանակս առ յաւիտենականութեամբ, ուր չիք չափ և ոչ սահման։ Հաշուեսցուք ապա, քրիստոնեայք, իբրև սուղ ինչ, կամ մանա-

1 Սիրաք. ԻԹ, 15.
2 Մատթ. Զ, 3, 4։
3 Ծննդ. Խէ, 9։

ւանդ յոչինչ համարեսցուք զամենայն անցաւորս, զի թէ և անդր քան զբնաւ թիւ ծանօթական յոլովեսցէ ոք զամսն, յայսմանպէս ոչինչ լինիցին 'ի գալ ժամանել օրհասական վախճանին։

Այլ թերևս մերձ ոք 'ի մահ համարեսցի ինչ զբարեհամբաւ կեանսն կամ զցնորսն կելոյ 'ի սոհմին՝ զոր ամրապահ 'ի հատոյզ թողուլ կարծիցէ։ Ո՞վ ոչ տեսանիցէ, եղբարք իմ, քանի անոսի, այլ և քանի կարճառօտ և զաղփաղփուն իցեն այն երկրորդ կեանք, զոր հիքութիւնս մեր տայ մեզ ստեղծանել՝ առ 'ի գողանալոյ իմն զարհաւիրս մահուն։ Ննջեցէք զքունս ձեր, ձոնք երկրի, և կացէք մնացէք 'ի հողս ձեր։ Ո՛հ, եթէ յետ ազգայ ինչ, զինչ ասեմ, եթէ զկնի ամոյ ինչ մահուան ձերոյ՝ դարձջիք անդրէն լինիցիք մարդիկ, անչիշատակ մոռացեալք 'ի մարդկանէ՝ ձեռլիցիք մոռանել անդրէն 'ի գերեզմանս ձեր, զի մի տեսանիցէք զանուն ձեր նսեմացեալ, զչիշատակդ եղծեալ, և զհայթայթանսդ գերևեալ 'ի բարեկամս ձեր, 'ի ձեռասուս, և ևս առաւել 'ի ժառանգս ձեր և 'ի պայազատսդ։ Այ՞ս իցէ պտուղ վաստակոցդ յորս մաշեցայք ընդ արեգակամբ՝ համբարել ձեզ գանձս առելութեան և բարկութեան յաւիտենից յարդար դատաւորութեանն Աստուծոյ։

Ի վերս քան զամենայն, է մահկանացուք, զգաստացայք այսուհետև 'ի մոլորութենէ մտացդ որով յուսայք՝ յետ երկար կենաց քաղցր և հեշտական դատել զմահ։ Ոչ եթէ ամք, այլ երկար պատրաստութիւն տացէ ձեզ վստահութիւն. ապա թէ ոչ՝ ընդ վայր ատասցէ ձեզ խնաստասէրն, թէ յագեալ իցէք աւուրբք և տարեօք, և շատ իսկ տեսեալ շրջանս ժամանակաց և զտիեզերաց շուրջ զձեզ պարագայութիւն. նա մանաւանդ՝ զանձինս ձեր տեսէք շուրջ յածեալ զառանցեալ ընդ աշխարհի։ Ցամն յետին ոչինչ նուազ անտանելի եղիցի, և սովորութիւն կենաց զցանկութիւնն նորին ահեցուսցէ։ Այլ խոկմունք սուրբք, այլ գործք բարեաց, այս ճշմարիտ մեծութիւնք առաքեալք 'ի ձենջ 'ի

հանդերձեալ աշխարհն, սոքա տայցեն ձեզ զօրութիւն, և այսու կաղգուրիցէք զսիրտս ձեր։ Առաքինին Միքայէլ Լըթելլեան եցոյց ձեզ օրինակ. խոստութիւն, հաւատարմութիւն, արդարութիւն, պարկեշտութիւն, արթնութիւն և բարեպաշտութիւն, համօրէն գունդն սուրբ առաքինութեանց, որ սկիզբն իմն զնովաւ, հալածեցին 'ի նմանէ զարհաւիրս, և զոր մահուան նորա արարին չքնաղ՝ յաղթանակ և երանաւէտ քան զամենայն աւուրս կենաց նորա։

ՎԱԽՃԱՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԻ ՄԻՔԱՅԵԼԻ ԼԸԹԵԼԼԵԱՆ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Թիւ (Ա) խօսեալ 'ի ժողովրդական եկեղեցւոջ սրբոյն Գեթուասիոսի՝ ուր թաղեալ է, 'ի 25 Յանուարի 1686, առաջի գերապայծառ տեարց Եպիսկոպոսաց որ անդ էին զգեստաւորեալք:

(Բ) Մաղարենի իտալացւոյ:

(Գ) Եղբայր Լուդուիկեայ ԺԳ, հօր մանուկ արքային Լուդուիկեայ ԺԳ:

(Դ) Թագաւորազանցն Գոնտէի, Գոնթեայ և Լոնկվիլայ, 'ի դիպահօջ եղելոց 'ի Վէնսէն հրամանաւ դշխոյին:

(Ե) Գաբրիէլ Կասանեան տէրն Վիլատէի:

(Զ) Կարդինալն սբ Ռեց (Կոնտի օգնական արքեպիսկոպոսին Փարիզու) ձեռնտու կողման ժողովրդեանն յաղմուկս կրսերութեան արքային Լուդուիկեայ ԺԳ արդեամբք սիրելի ազգին:

(Է) 'ի Հռովմ:

(Ը) Մաղարենի, որ անկեալ և կանգնեցաւ միւսանգամ:

(Թ) Թագաւորութեան Լուդուիկեայ ԺԳ, որ յայնժամ էաւ զգաւազան արքայութեանն, հասեալ 'ի չափ օրինական:

(Ժ) Եկեղեցական՝ որդի սորին Միքայելի:

(ԺԱ) Ազանդն լութերական և կալուինական:

(ԺԲ) Խնամ հրովարտակ Լուդուիկոսի ԺԳ. 'ի հերքումն Նորաղանդից, հակառակ Նանդեան շահեցող հրովարտակին Հենրիկոսի Դ, որ պահպաներ զնոսա յաշխարհին իւրում, և արդ ևս պահին:

(ԺԳ) Որդի նորին ինքեան Միքայելի, քահանայ տիրանուէր, որպէս յիշեցաք վերագոյնդ:

ՀԱՌ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ (Ա)

ԼՈՒԴՈՒԻԿԵԱՅ ՊՈՒՐՊՈՆԵԱՆ

ԻՇԽԱՆԻՆ ԳՈՆՏԷԻ,

ԱՌԱՋԻՆ ԱՐՔԱՅԱԶՆ ԻՇԽԱՆԻ

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Լուդուիկ Պուրպոնեան, որդի Պուրպոնեանն Հենրիկոսի՝ իշխանին Գոնտէի, ծանուցաւ նախ ընդ անուամբ Սեպհի Անկիէնի։ Ծնաւ յամին 1621, յուլի սեպտեմբերի. մնեալ առաջի հօր իւրոյ մեծաւ խնամով, և յանձն արարեալ՝ ի ձեռս խմաստուն և Ճարտար Յիսուսեանց, անդէն և անդ աջողակ երևեցաւ յուսումն, յոր և պարապեալ մնադիւր՝ զտաւ յառաջադէմ։ Զայս մեծարոյ ախորժակ ոչ եթող բնաւ զամենայն աւուրս կենաց իւրոց, և՝ ի պարապելն՝ ի զինուորական վաստակոց՝ եցոյց յամենայն ժամ թէ հեշտութիւնք և կրթութիւնք մտաւորականք չեն անարժան ինչ առն իշխանի և մեծի զօրավարի. բայց և յայտ արար՝ թէ՝ ի մանուկ տիոց իւրոց սիրելի քան զամենայն էին նմա զէնք։ Դեռ ևս ինքնուսամանամայ էր՝ ընտրեաց ինքնակամ՝ մտանել՝ ի զինուորութիւն, և արար անուն՝ ի պաշարման Արրասայ յամի 1640։ Զայնու ժամանակաւ Կարդինալն Ռիշելիեւ փառասիրեալ խառնել զտոհմ իւր յաշխուականութիւն, թէպէտ և յակամայս իմն Սեպհին Անկիէնի՝ յաջողեցաւ տալ նմա ընդունել՝ ի կնութիւն զդուստր եղբօր իւրոյ սպասալարին Պրեզէի։

Մեռաւ Ռիշելիեւ՝ ի 1642, և ցայն վայր Սեպուհն Անկիէնի իբրև ինքնակամ՝ զինուոր ոչ երևեալ էր՝ ի քաջութիւնս. իսկ Մազարէն

կարդինալ յաջորդեալ՝ի մեծ հազարապետութիւնն՝ ընտրեաց զնա զօրագլուխ բանակին Փլանտրիայ՝ի 1643։ Խաղաց գնաց նա՝ի տեղի հրամանատարութեան իւրոյ, և անդ ապա լուաւ զմահ Լուդուիկեայ ԺԳ. և՝ի պահու անդ յայտմիկ օտար ամենեին՝ի խորհրդոյ փառասիրութեան և իւրոյ օգտին՝ի շահ աշխարհին ևեթ հայեցաւ. և՝ի պարծանս փրկութեան Գալլիոյ, ազատել զնա՝ի թշնամեացն։ Հրաշակաւոր և յաւերժ յիշատակաց արժանի պատերազմն Ռոքռոայի՝ պտուղ եղև այնմ առաքինութեան, և զարդարեաց փառօք զԱպուէն, որ՝ի մեծի անդ կռուին եցոյց արութիւն ճշմարիտ և անշփոթութիւն մտաց։ Յառաջընթաց ցայգութեան մեծի այնր ճակատամարտին, հաստատեալ նախ զամենայն կամս խորհրդոցն, և համօրէն պատրաստութեանցն հրաման տուեալ, խոր՝ի քուն եղև յանհոգս, և յանգ ելանել մարտին, ծունր եղեալ անդէն՝ի ճակատուն տեղւոջ, և զնոյն առնել պատուիրեալ բոլոր զօրականին, մատոյց գոհութիւն Աստուծոյ՝ի վերայ մեծի օրհնութեանն զոր օրհնեաց զդէնս իւր։ Անուանի եղև դարձեալ՝ի պայծառ յաղթանակս ամացն 1644, 1645 և 1646, յորս Ճարտարարուեստ երևեցաւ՝ի պահ պատնէշ պաշարումն քաղաքաց՝ որպէս և՝ի յաղթութիւնս պատերազմաց։ Յամի 1646 պայազատեալ զպատիւս և զմեծութիւնս հօր իւրոյ, ժառանգեաց զանուն Իշխանի Գոնտէի, և՝ի 1647 խաղաց գնաց դարձեալ՝ի նոր պշաւանս, և՝ի 1648 յաղթանակ կանգնեաց՝ի վերայ սպանիացւոց յականատոր մարտին Լանսայ։

Ի թշուառութեան ժամանակին յարեաւ՝ի Փարիզ, աղմուկ քաղաքական, որ անդադար խռովեաց զԳալլիա մինչև՝ի 1653։ Յայնժամ Իշխանն Գոնտէի կոչեցաւ վաղվաղակի յարքունիս. և թէպէտ նմին իսկ գոյր արտունչ լինել զվատութենէն, և չէր իսկ թաքուցեալ զդժգոհութիւնս իւր, և ուժգին հրապուրեալ լինէր անցանել՝ի կողմ ապստամբացն՝ որ օր քան զօր ստուարացեալ գունդ լինէին, զառաջինն քաջութեամբ պաշտպան եկաց արքային և խնամակալ դշխոյին՝ յերեսաց ամենայն ընդդիմակցաց։ Ի բազուկ նորա յուսացեալ՝ արքայն և դշխոյն և արքունիքն ամենայն՝ ելին մեկնեցան՝ի Փարիզէ՝ի Սէն-Ժերմէն ան Լէ, և Իշխանն Գոնտէի ութ հազար արամբ պաշարեաց զՓարիզ, և իսկ և իսկ բռնադատեաց զապստամբսն խնդրել հաշտութիւն, որ կնքեցաւ՝ի մարտի ամսեան 1649 ամի։

Բայց իրացն կերպարանք փոխեցան վաղվաղակի. Իշխանն Գոնտէի զառածաւ էլ՝ի բանս եղբօր իւրոյ Իշխանին Գոնթէայ, և քեռն իւրոյ՝ տիկնոջ Սեպհին Լանկվիլայ, որ երկոքին ևս իրաշամարձակք քան զամենեսեան երևէին և ցասուցեալք ընդ Կարդինալին։ Սրբուելիքն իրագէկ լեալ գաղտնի հնարիմացութեանց նոցա, խորհեցաւ անդէն և անդ տակախիլ առնել զդոյս նոցա ուժգին ինն զօրութեամբ, և յութուտասն յանուարի 1650 ամի՝ ետ ձերբակալ առնել և տա-

նել՝ի դղեակն Վենսենի զիշխանն Գոնտէի, զիշխանն Գոնթէայ և զԱպուէն Լանկվիլայ զբեռայր նոցա. որ ապա փոխեցան՝ի Հաւռբարկաս։ Յետ ամսոց երկբուսասանից յորդորեալ՝ի խորհրդոյ քաղաքային աւագանւոյն՝ արձակեաց զնոսա յազատութիւն։ Բայց իշխանն Գոնտէի, որ ըստ զբուցելոյ Պոսիւէթի՝ խոստովան եղև աբքայի ապա ուրեմն՝ թէ Աստուծ մտեալ իմ՝ի բանտ՝ ելի անտի մեղաւոր, սաստիկ ոխակալ եղև՝ի սրտի իւրում՝ ընդ թշնամանն, և չյապաղեաց հանել զայն՝ի վեր։ Ի սեպտեմբերի 1651 ամին գլուխ եկաց ստամբակայն հեստելոց յայտնապէս, և յուխտ մտեալ ընդ արտաքին թշնամիս՝ի կռիւ եկաց ընդ արքային իւրոյ, և Եհաս ցդրունս Փարիզու։ Յետ երկուց կամ երից ամսոց անցանելոյ՝ի մարտս ինչ թեթևաս և անօգուտս, արիւնահեղ ճակատն արուարձանի Սրբոյն Անտոնի, յորում իշխանն Գոնտէի և սպասալարն Թիւրենայ, պատերազմեալքն երբեմն բազում անգամ՝ի վերայ միոյ և նոյնն իրաւանց, այն օր ընդդիմամարտ միմեանց պատահէին և սխոյեանք՝ի քաջութիւն և՝ի մարթչութիւն, վախճան արար աղետակոծ վրդովմանցն։ Ապստամբացն կողմ առ փոքր փոքր վատթարեցաւ. Պազարէն կարդինալ՝ հրաժարեալն երբեմն կանխաւ՝ յանձն առ միւսանգամ մեկնել դնալ յաբբուենացն, և արքայի դարձ արարեալ՝ի Փարիզ՝ի 21 հոկտեմբերի 1652 ամին՝ եհան հրովարտակ թողութեան առհասարակ ամենեցուն յանցուածոց։

Իշխանն Գոնտէի, կարի իմն անմոռաց հաւատարիմ՝ի բան գուշակութեան իւրոյ զոր ցանցանէն՝ի կողմ ստահակացն ասացեալ էր, թէ «Ակամայ հանեմ ես զսուրս, այլ թերևս վերջին դասոյ յարկանել զայն՝ի պատեանսն», հեստեաց մուրհակի թողութեանն, և ել գնաց՝ի Սպանիա, և նոյնհետայն սպարապետ կարգեցաւ ամենայն զօրութեանց թագաւորութեանն։ Սակայն ոչ ինչ նուազ ուխտիւք փափաքէր խաղաղութեան. և ընդ հզօր ամենեաւ իսկ սպանիական թագին՝ չառնոյր յանձն՝ եթէ դալինք նորա ընդ Գալլիոյ՝ի դարձուցանել յինքն զամենայն իրաւունս իւր, յամենացանէն վայրկեան մի զզղջալի խաղաղութիւն։ Եւ հաստատուն յետկարաւ՝ իւրով ձեռնագրաւն կնքելով՝ զամենայն զանձինն շահ և զամենայն պարգևս զոր արքայն Սպանիոյ կամէր տալ նմա, աւանդեաց եդ՝ի կամս հաճոյից և իմաստութեան արքային Գալլիոյ. և Լուդուիկ ԺԴ, խանդակաթեալ ընդ այսպիսի գնացս նորա, յանձն առ հաճեցաւ ընդունել զնա, և զանցեալսն բնաւ մոռացօնս առնել։

Այսպէս դարձ՝ի հայրենիսն արարեալ՝ տեսցուք այսուհետև զնա առաւել քան զառաւել մտադիր՝ի նորանոր ծառայութիւնս մեծամեծս։ Մղեաց ճակատս՝ի Փլանտրիա, ՝ի Հոլանտա, ՝ի Գերմանիա, և ամենայն ուրեք նոր նոր պսակս հաւաքեաց։ Ի մեծասան աւգոստոսի 1674 ամին յաղթեաց մեծահռչակ ճակատամարտին Սընեֆայ. ՝ի

1675 եւ լուծանել զպատնէշ պաշարման Հակընոյ քաղաքի, զոր արկ զնովաւ զօրավարն Մոնթէգուգուլի յետ մահուանն Թիւրենայ: Զկնի այսր պատերազմի՝ ոչ եւս երեւեցաւ 'ի գլուխ բանակաց 'ի պատճառս խօթութեանցն զոր սկսաւ կրել, և յայլ ինչ եւս պատճառս. այլ եկաց յաքբունիսն, բայց ձեռնթափ յամենայն գործոց տէրութեանն: Հուսկ ապա հաշտութիւնն Նիմեկայ եղեալ 'ի 1679, երեր նմա պատեհ խնդրելոյ յաքբայէ հրաման հրաժեշտի առանձնութեան, և չոգաւ նստաւ 'ի Շանթիլլի: Անդ 'ի պերճ առանձնոցին անցոյց զյետին ամս կենացն՝ պարապեալ անզբաղ 'ի խաղաղական ախորժակս, բաշխեալ զժամսն յընթերցմունս, յընկերակցութիւն արանց գիտնոց և իմաստնոց յազգս ազգս հմտութեանց, զորս ժողովէր զկուրեւ, և եւս առաւել 'ի խիստ և յերկիւղած գործս ամենայն հոգեւորական կրթանաց կրօնից, յորոց 'ի խնամս և 'ի փառս նախանձայոյզ երեւէր: Մօտ 'ի հասարակել 1686 ամի, որ վերջին եղեւ կենաց իւրոց, անկաւ 'ի տկարութիւն յոյժ, այլ լուեալ թէ տիկին Սեպհին Պուրպոնի՝ դուստր Լուդուվիկեայ ԺԴ, և կին թոռին իւրոյ, ախտացեալ դնէր 'ի ծաղկէ 'ի փոնթէնպլոյ, անդէն վաղվաղակի յարեաւ գնաց առ նա. և անդ եցոյց առ արքայ նոր իմն նշանակ մտերմութեան և փութոյ, զի խնարհ մեծարանօք ընդդէմ կացեալ՝ արգել զնա 'ի մբռանելոյ 'ի սենեակ բամբշանն ախտացելոյ:

Ինքն անկաւ 'ի մահիճս անդէն 'ի փոնթէնպլոյ. և 'ի ծանրանալ ցաւոցն օր քան զօր, ծանուցեալ զմերձեալ վախճան իւր՝ պատրաստեցաւ յոյն արիւրար և հանդարտութեամբ, յայտ արարեալ զՍենրմեռանդն հաւատս իւր և զաստուածպաշտութիւն, հրաման ետ ամենայն իրաց տան իւրոյ, և յառաջ քան զմեռանելն յաջողեցաւ օգնական լինել 'ի հաշտութիւն արքայի ընդ եղբօրորդւոյն իւրում իշխանին Գոնթեայ աքսորելոյ 'ի Շանթիլլի: Անդատին 'ի դարձէն իւրմէ 'ի Գալլիա՝ ցուցեալ էր անպակաս զՀանդէս հաւատարմութեան և մտերմութեան իւրոյ ընդ արքայի, գրեալ ապա և թուղթ մի 'ի վերջին վայրկեանսն՝ հաւատարմացոյց անդրէն նմա զնոյն միտս իւր և զսիրտ: Մեռաւ 'ի գիրկս որդւոյ և եղբօրորդւոյն, Սեպհին Ակկիէնի և իշխանին Գոնթեայ, 'ի մեռասան դեկտեմբերի 1686 ամին, ամաց վեցտասն և հնգից:

«Տէր ընդ քեզ, հզօր զօրութեամբ.. երթ զօրութեամբդ քով այդուիկ. Տէր ընդ քեզ»:

Դատ. Զ, 12, 14, 16:

Մեծապատիւ Տէր,

Ի բանալ բերանոյս 'ի գովեստ անմահ փառաց Պուրպոնեանն Լուդուվիկեայ՝ Իշխանին Գոնտէի, նոյնչափ խռովեալ առեսանեմ զանձն իմ և 'ի մեծութենէ իրացն, և, եթէ ներեսցի ինձ խոստովան լինել, անշահութենէ իսկ աշխատութեանս: Ո՞ր այն կողմ մարդաբնակ տիեզերաց՝ որոյ չիցէ լուեալ զյաղթանակս Իշխանին Գոնտէի և զզարմանալիս կենաց նորա. ամենայն ուրեք պատմեալ հուչակին. դալ՛՛նացին պանծացեալ նոքօք՝ ոչինչ ուսուցանէ օտարութիւն: Եւ որ զինչ և ճառեցից ես ձեզ այսօր զնմանէ, յետանեալ յամենայնի քան զմիտս ձեր, կայցէ ինձ տակաւին տալ պատասխանի դալանի մեղադրութեանդ զինէն՝ 'ի վայր յոյժ քան զիրացն արդիւնս մնալոյ: Ապիկար ճարտարախօսքս ոչինչ զօրեմք 'ի փառս ոգւոց գերագունից. արդարև Խմաստունն 'ի բանս իւր, թէ «գործք իւր ևեթ գովես-

ցեն զնա [1] »։ Առ անուամբք մեծամեծօք՝ այլ ամենայն դը-
ղուատիք նուաստանան, և անպաճոյճ պարզութիւն ևեթ
հաւատարիմ պատմութեան՝ կարասցէ թերևս կալ առ-
կալ առաջի փառաց Իշխանին Գոնտէի։

Սակայն, մինչև զիարդ զայս հանցէ 'ի լոյս պատմու-
թիւն՝ որ հատուցանելոց է զայն հանդերձեալ յաւիտեան-
ցն, պարտ է ըստ կարի մերում հաճել զընտրհակալու միտս
հասարակաց, և հպատակել հրամանի մեծին 'ի Թագա-
ւորս։ Եւ որ երախտիք չիցեն առ Թագաւորութիւնս յԻշ-
խանէ անտի՝ որ զտունն գալլական փառաւորեաց, ող-
ջոյն զանուն գալլիացի, զդար իւր, և գոգցես զմարդկու-
թիւն առ հասարակ։ Լուդուիկ Մեծն իսկ՝ եկն էլ յայս
իմաստս մտաց. ողբացեալ նախ զայրս զայս զմեծ, և ար-
տասուօքն 'ի միջի անդ բովանդակ արքունեացն տուեալ
նմա զհրաշափառագոյն դովութիւնն զոր մարթէր նմա
ընդունել, ժողովէ աւասիկ 'ի հուչականուն տաճարիս զա-
մենայն փառաւորս արքայութեան իւրոյ՝ առ 'ի զհամաշ-
խարհն պարտս հատուցանել յիշատակի Իշխանիս։ և կա-
մի զի բարբառս իմ անդօր՝ կենդանացուսցէ զայս սգաղգած
տեսիլ, և զամենայն զայս թաղմանական հանդէս։ Օ՛ն ե-
կայք արդ բուռն արասցուք ցաւոցս։

Աստանօր՝ մեծ իմն և արժանավայելուչ այսմ բեմքի՝
յանդիման լինի մտաց. այն ինքն է Աստուած՝ որ առնէ
զդատաւորսմօղս և զաշխարհակալս։ «Դու ես, ասէր առ
Նա Դաւիթ, որ ուսուցեր զձեռս իմ 'ի պատերազմ, և զմա-
տունս իմ 'ի ճակատամարտ [2]»։ Եթէ Նա է որ շնչէ զարու-
թիւն, ապա Նա տայ և զայլ մեծամեծ ձիրս զբնականս և
զդերաբուսս՝ զսրտի և զմտաց։ Ամենայն 'ի ձեռանէ Նորա
'ի հզօրէ դայ. Նա է որ առաքէ յերկնից զաշնուական մտա-
ծութիւնս, զնորհուրդս իմաստութեան և զամենայն հան-

1 Առակ. ԼԱ, 31. ըստ լատին թարգմանութեան։
2 Սաղմ. ՃԽԳ, 1։

ճար բարի. այլ կամի մեզ զիաեալ՝ ընարութիւն առնել 'ի
մէջ պարգևաց զորս Թողու 'ի թշնամիս իւր, և որոց պահէ
ծառայից իւրոց։ Որ որոշէին ընդ բարեկամս իւր և ընդ այլս
ամենեսին, բարեպաշտութիւնն է. մինչ չև զայս պարգև
ընկալեալ յերկնից, այլն ամենայն ոչ միայն չէին ինչ, այլ
և դառնան լինին 'ի կործանումն փերևերտելոցն նոքօք։ Ա-
ռանց այսր անկշիռ պարգևի բարեպաշտութեան՝ զի՞նչ լի-
նէր իշխանն Գոնտէի մեծաւ սրտիւն հանդերձ և մեծաւ
հանճարովն։

Ոչ, եղբարք իմ. եթէ բարեպաշտութեան չէր սրբեալ
զայլ ևս առաքինութիւնսն, ոչ դոքա իշխանքդ սփոփանս
ինչ գտանէին ցաւոցն, ոչ ասատուածամերձ քահանայա-
պետդ ինչ յաղօթս իւր վստահութիւն, և ոչ ես ինչ զորա-
վիգն 'ի գովութիւնս՝ զոր պարտիմ այսքանոյ մեծի առն։
Արդ օրինակաւս այսուիկ կարկեցուսցուք զիտառս մարդ-
կեղէնս. փշրեսցուք զկուռս փառամոլիցն. անկցին կորիցեն
առաջի սրբոյ սեղանոյս։ Հաւաքեսցուք այսօր 'ի մի, – զի
և մարթի իսկ 'ի հոյակապ առնս – զամենայն դեղեցիկ գե-
ղեցիկ հանդամանս վսեմական բնութեան, և 'ի պարծանս
ճշմարտութեան՝ յանդիման կացուսցուք յաշխարհանաղ
Իշխանիս, թէ որ ինչ գիւցազունս կատարէ, որ ինչ զաշ-
խարհի փառս 'ի ծագ բարձրութեան տարեալ հանէ, քա-
ջութիւն, մեծանձնութիւն, բարեբարութիւն՝ ըստ սրտի
մասանց, ժիտոյժք, սուր միտք, պերճութիւն և վեհիմաց
հանճար ըստ մասանց ոգւոյ, պատիր երևոյթք լինէին՝ ե-
թէ բարեպաշտութիւն չգոյր ընդ նոսին, և զի բարեպաշ-
տութիւն է մարդոյ ամենայն ինչ։ Զայս տեսջիք, տեսրք 'ի
յաւերժ յիշատակաց արժանի վարս բարձրապատիւ և մե-
ծազօր Իշխանիս Լուդուիկեայ Պուրպոնեան, իշխանին Գոն-
տէի և առաջին արեանառու Թագաւորմ իշխանի։

Աստուծոյ յայտնեալ է մեզ, թէ Նա միայն առնէ զաշ-
խարհակալս, և ինքն ևեթ վարէ զնոսա 'ի լուսն կամաց
խորհրդոց իւրոց։ Ո՞ այլ ոք արար զԿիւրոս, բայց Ա-

տուած միայն, որ երկերիւր ամաւ յառաջ քան զծնանել նորա կոչեաց զանուն նորին 'ի բանս պատգամացն Եսայայ։ Զես դու տակաւին, ասէր առ նա, «այլ ես տեսանեմ զքեզ, և կոչեցի զքեզ յանուանէ. դու կոչեցիս Կիւրոս։ Ես երթայց առաջի քո 'ի պատերազմ. յերեսաց քոց զլեռնս դաւորս 'ի փախուստ դարձուցից, զդրունս պղնձիս խորտակեցից։ Ես եմ որ ձգեմ զերկինս, և կառուցանեմ զերկիր, և կոչեմ զգոյն իբրև զգոյ [1]»։ այս է՝ ես եմ որ առնեմ զամենայն, և ես՝ որ տեսանեմ 'ի յաւիտենից զամենայն զոր առնեմ։ Ո՞ այլ ոք կարաց կատարել Ալէքսանդր զոք, բայց նոյն ինքն Աստուած, որ 'ի հեռաստանէ և կենդանի օրինակաւք եցոյց զանաստս եռանդն բանութեան նորա մարգարէին իւրում Դանիէլի։ «Տեսանիս, ասէ, զտիեզերական զայդ. որոմ երագութեամբ ամբառնայ յարևմտից վազս ամենայն առեալ, և յերկիր ոչ մերձենայ [2]»։ Ի վազն իւր յոտորաս և 'ի թեթև ընթացս նմանեալ ուժգին և ընդոստ դաշանաց, սաստիկ և բուռն ոստմամբք սուրհայ, և ոչ 'ի սարս և ոչ 'ի վախս ինչ զկայ առնու։ Աւասիկ արքայն Պարսից 'ի բուռն անկեալ կայ նորա. «Ի տեսիլ նորա զայրացաւ, ասէ մարգարէն, եհար զնա, արկ զնա յերկիր և ոտից իւրոց կոխան արար զնա. և ոչ ոք էր որ պահէր զնա 'ի հարուածոց նորա, և թափէր զորան 'ի ձեռաց նորա [3]»։

Ի լուր դանիէլեան բանիցդ՝ զո՞ համարիցիք տեսանել, տեսարք, ընդ օրինակաւդ ընդ այդուիկ. զԱլէքսա՞նդր, թէ զիշխանն Գոնտէի։ Եւ արդ Աստուծոյ էր տուեալ նմա զանընդդիմակաց քաջութիւնն 'ի փրկութիւն Գայլեոյ՝ 'ի կրսերութեան չորեքամեայ մանուկ արքայի։ Թոյլ տուք զարգանալ յառաջ դալ արքային սիրելւոյ երկնից, ամենայն ինչ խոնարհեալ տեղի տացէ առաջի արութեանց քաջութեան նորա։ Որպէս քան զթշնամիս՝ նոյն և իւրոցն

1 Եսայ. Խդ, 1-7։
2 Դան. Ը, 5։
3 Անդ, 6, 7.

դէր 'ի վերոյ՝ դիտացէ նա մերթ 'ի գործ առնուլ զզօրավարս իւր անուանիս, և մերթ զանց զնոքօք առնել. և միակ, ընդ աստուածծեղէն աջոյնն՝ համակ 'ի թիկունս իւր լինելով, կանգնեացցի ամուր պատուար աշխարհին իւրոյ։ Այլ Աստուծոյ ընտրեալ էր 'ի մանկութեան նորին զԱեպուհն Անկիեանի պաշտպան նմին։ Վասն որոյ զնախընծայ աւուրքք թագաւորութեան նորա, 'ի հասակի ամաց քսանեւերկուց, խորհեցաւ Սեպուհն խորհուրդ՝ յոր ծերունեաք փորձք ոչ զօրեցին ժամանել. այլ յաղթութիւն իրաւունս ետ նմա յանդիման Ռոքսանայի։

Թշնամւոյն ապաքէն հաստաբուռն է բանակ, բոլորեալ բովանդակեալ 'ի հինաւուրց գնդացն Վայլոնաց, խոսլացւոց և սպանիացւոց, զորս չէր լեալ հնար փլուզանել մինչև ցայնժամ։ Բայց զի՞նչ արժան էր հաշուել զարութիւնն շնչեալ 'ի մեր զօրականն 'ի հարկէ պնոյից տերութեանն, յանցելոցն պարծանաց, և յարեանառու իշխանէ պատանւոյ՝ որ զյաղթութիւնն յաչսն նկարէր։ Զոտս 'ի բոյս հարեալ՝ նմա մնայ Տէր Փրանկիսկոս Մելլոսեան, և զօրագլուխքն երկոքեան և երկոքին բանակքն անհանգիստ՝ թուէին կամել կալ մնալ յանտառս և 'ի ճախճախուտ վայրս, առ 'ի վճար առնել կռուոյն իւրեանց, որպէս ախոյեանք կրկին 'ի շերտափակ տապարիսի նահատակութեան։

Զի՞նչ ոչ տեսաւ յայնժամ։ Պատանին իշխան՝ երևեցաւ այլ մարդ. յայնմ իրէ մեծէ շարժեալ ոգին իւր վեհ՝ մերկացաւ բովանդակ յայտ յանդիման. արութիւն իւր յորդեալ զեղոյր ընդ հեռս վտանգաց, և լոյս մտաց իւրոց՝ ընդ հրոյ եռանդեանն։ Զգիշերն՝ զոր հարկ էր անցուցանել դէմ յանդիման թշնամեացն, իբրև հսկող զօրավար, հուսկ յետոյ ամենեցուն 'ի քուն եմուտ, այլ ոչ այլ ուրեք առաւել խաղաղ ննջեաց։ Յառաջնմէ անտի ցայգոյ աւուրն ահեղն, և յետ առաջնոյ ճակատուն՝ անխռով կայ, այնպէս 'ի մնակաւոր խրոյմ պայմանին գտանի. և գիտեմք իսկ զն 'ի վաղիւ անդր 'ի ժամանակեալ ժամուն՝ զարթուցանել

հարկ եղև 'ի խոր քնոյ զերկրորդս զայս Ալէքսանդրոս։ Տեսանէ՞ք սրպէս սլանայ 'ի յաղթութիւն կամ 'ի մահ։ Իբրև ընդ կարգս ռազմի Ճակատուն տարաւ զեռանդն իւրոյ հոգւոյն՝ անդէն վաղվաղակի, զոգ 'ինմին ժամու, տեսաւ զի վանէր վկանդէր զաջակողմ թևին թշնամեաց, զօրացուցանէր զմերն զնախատեալ. ժողովէր պնդակազմ զդալ՚ի՚նացին մերձ 'ի պարտութիւն, փախստեայ տանէր զյաղթական սպանիացին, արկանէր ահ ընդ ամենայն, և փայլակնացայտ աչքն պակուցանէր զփախուցեալսն 'ի ձեռաց իւրոց։

Մ'նայր սոսկալի հետևակազօր սպանիական բանակին, որոյ թանձրախուռն ստուար դումարտակք, 'ի նմանութիւն աշտարակաց, բայց աշտարակաց՝ որ գիտիցեն խրատակարկատ առնել զնոսա իւրեանց, կային անսասան 'ի միջի անդ ամենեցուն բեկելոցն, և հուր տեղային յամենայն կողմանց։ Երիցս դուն գործեաց յաղթող պատանին խորտակել զաներկիւղ ռազմիկսն, վանեցաւ երիցս 'ի քաջակորով Կոմսէն Փոնթենեան, զոր կառչեթաց տեսանէին, և ամենայն տկարութեամբքն հանդերձ՝ յայտ իմն զայն արարեալ, զի ոչի պատերազմատորձ՝ տէր է մարմնոյն յոր ընչէ. հարկ է սակայն հուսկ ուրեմն տալ տեղի։ Ի զուր ընդ անտառս այրուձիոն իւրով նորով՝ Ճեպէ տագնապաւ զարշաւան իւր Պէգ՝ գալ անկանել 'ի վերայ զօրուն մերոյ պարտասելոյ. կանխեաց յառաջեաց զնովաւ իշխանն, գունդքն փլուզեալք պաղատին դթութիւն. բայց Սեպհին Անկիեանի քան զմարան ահագին լինելոց է յաղթութիւնն։ Իբրև աչալուրջ երեսօք խաղայր գնայր ընդունել զնոստուն որերոյն այնորիկ քաջն, սոքա միշտ 'ի խեթի զգուշութեան՝ կասկածեալ նոր իմն յեղակարծ յարձակումն, ահագին իմն հրձգութեամբ զմերսն 'ի մոլեգնութիւն դարձուցանեն, և այլ ոչինչ տեսանի՝ բայց նախճիրք կոտորածի. արեան Ճաղպախիք որ արբեցուցանեն զզօրականն, մինչև մեծի իշխանին չհանդուրժեալ տեսանել զառիւծունն զայնոսիկ խողխողեալս իբրև ոչխարս վատասիրտս,

ցածոյց զբորբոքեալ սիրտսն, և 'ի հեշտութիւն յաղթութեանն յաւել և զներելոց թողութեանն։

Զի՞նչ հիացումն կալաւ յայնժամ զհինաւուրց զօրականն և զարիական սպայս նոցին, իբրև տեսին թէ չէք նոցա փրկութիւն բայց միայն 'ի դիրկս յաղթողին, որմ՚ակամբ հայեին յիշխանն պատանի՝ զորոյ զպերճ Ճոխութիւնն պանծացուցանէր յաղթանակ, և գեղնորատեսիլ փայլեր 'ի նմա գթութիւն։ Ապրեցուցանէր նա մտադիր և զկենս քաջի կոմսին Փոնթենեան. բայց գտաւ նա անկեալ ընդ հազարաւորս վիրաւորաց, զորոց սպայ տակաւին զկորուստն Սպանիա։ Զգիտէր նա՝ թէ իշխանն որ վանեաց զնորա զայնչափ հինաւուրց գումարտակսն 'ի կռուին Ռոքռոայ, զմնացեալսն սպառելոց էր 'ի դաշտսն Լանսայ։ Այսպէս առաջին յաղթութիւնն՝ այլոց բազմաց եղև առհաւատչեայ։ Կրկնեաց ծուռը Իշխանն, և անդ 'ի Ճակատուն տեղւոջ մատոյց Աստուծոյն զօրութեանց զփառսն զոր առաքէր նա առ նա. անդ ոտնեցաւ Ռոքռոայի փրկութիւն, և ահագին սպառնալեաց թշնամւոյն՝ գարձ ամենեթալից 'ի գլուխ նորին, հաստատութիւն վարչութեան խնամակալին, հանդիսատ Գալ՚լեոյ, և այսպիսի յաջող հըմայիւք սկիզբն արքայութեանն՝ որում հասեալ էր լինել այսչափ հրաշակերտ։ Գոհութեանցն սկզբնատպար եղև բանակն, Գալ՚լիա համօրէն զկնի կցեցին. ամբառնային մինչև յերկինս զառաջնաձաշակ փորձ հանդիսի Սեպհին Անկիենի։ Շատ իմն էր այս 'ի շքեղաղարդել զայլ իմն կեանս քան զնորայն, իսկ նմա՝ առաջին քայլ է այս ոտին ընթացեալ։

Անդստին յառաջնմէ պատերազմէն, իբրև առաւ Թիոնվիլ՝ արժանի պարգև յաղթանակին Ռոքռոայ, համարեցաւ սպարապետ ահաւոր 'ի պաշարմունս և 'ի Ճակատս մարտից։ Այլ 'ի յաղթող պատանի իշխանի՝ ահա և այլ ինչ, որ ոչինչ պակաս գեղեցիկ է քան զյաղթութիւն։ Արքունիքն՝ որ պատրաստէր նմա զարժանապատիւ կայեան ցընծալից գովութեանց, զարմացաւ ընդ օրինակ ընդունելոյ

նորա զայնս։ Թնամակալ դշխոյն վկայեաց նմա՝ թէ հաճ և գոհ է արքայ ընդ ծառայութիւնս քո. 'ի բերան առն թագաւորի՝ արժանի հատուցումն է այս վաստակոց իւրոց։ Եթէ իշխէին այլք դրուատել զնա, մերժէր զգովութիւնն իբրև զնաս, և անընդեալ յողբանս՝ 'ի ստուերէն անդամ խրտչէր. այսպիսի երկիւղածութիւն էր, նա մանաւանդ այսպիսի ստուգութիւն իշխանիս։ Ուստի և առած 'ի բերան ունէր, – լուարուք, այս առած է՝ որ կատարէ արս հոյակապս, – թէ 'ի գործս մեծամեծս՝ պարտ է միայն միտ առնել բարւոք գործելոյ, և թողուլ զի փառքն զհետ եկեսցեն առաքինութեան։ Զայս տպաւորեր յայլս, այսմ պատկառ կայր և ինքն։ Վասն որոյ՝ մնափառութիւն չգտանէր մուտ առ նա. ամենայն 'ի Ճշմարիտն և 'ի մեծն դէտային ունէր։ Սմին իրի փառս անձին զծառայութիւն արքայի վարկանէր և զտէրութեանն երջանկութիւն. այն կայր 'ի խորս սրտին, այն էին նորա առաջին՝ և կարևոր ցանկալի յօժարութիւնք։ Արքունիքն չկալաւ զնա առ իւր, թէպէտ և սիրալի յաչս իւր էր այրն. արժան էր ամենայն ուրեք, և 'ի Գերմանիա որպէս 'ի Փլանտրիա, ցուցանել զաներկիւղ վերամարտիկ պահապանն՝ զոր Աստուած պարգևէր մեզ։

Օ՜ն ակնկառոյց լեալ յառեցէք այսր զաչսդ. ահաւոր ազգն ինն պատրաստի ինչ քան 'ի Ռոքռոա ընդդէմ Իշխանիս. և 'ի փորձ հանդիպի քաջութեան առաքինութեան նորա՝ հանդերձի պատերազմ սպասել թափել զամենայն հնարս իւր և զամենայն զօրութիւն։ Զինչ այս իցէ որ աջացս լինի յանդիման. չեն մարդիկ եթէ դումարտ խրմբեալք 'ի պատերազմ, այլ լերինք անմատոյցք, այլ խոխոմք և վախք ասի, և անսի անտառ անանցանելի, որոյ յատակ իւր ճահիճ, և յեռուստ կուսէ վտակք ջուրց, պատնէշք նշանակերաք. ընդ ամենայն տեղիս ամուրք բարձրացեալք, և մայրիք հարեալք ընկեցեալք յանցս սոսկալի ճանապարհաց, և 'ի միջն անդ Մէռսի իւրովք ախոյա-

նայարձակ նահատակքն պաւիերացւովք՝ փքացելովք ընդ այնքան յաջողութիւնսն և ընդ առումն Փրիպուրկայ. Մէռսի՝ զոր ոչ ոք ետես ընկրկեալ 'ի մարտս, Մէռսի՝ զոր իշխանն Գոնտէի և արքունն Թիւռէն՝ ոչ երբեք ըմբռնեցին յանզգաստս 'ի ղեղծի օրինաց մարտի, և զվկայութիւնս զայս մեծ՝ ետուն նմա, թէ չիք նորա բնաւ կորուսեալ և ոչ վայրկեան մի օգտամատոյց, և միշտ կանխեալ կալեալ զառաջս ուշոյ նպատակի իւրեանց, որպէս թէ անդէն իսկ 'ի խորհուրդս նոցա դտեալ։

Արդ ասասնօր զաւուրս ուրթ, և 'ի չորս այլ և այլ ճակատս, որ ինչ մարթի է կրել և գործել 'ի պատերազմի՝ 'ի վեր երևեցաւ։ Զօրք մեր՝ վատթարեալ թուին յընդդիմամարտութենէ թշնամեաց և յահագին խոժոռութենէ վայրացն, և առ ժամս ինչ գոգ իբրև լքեալ ետես զանձն Իշխանն։ Այլ իբրև զմիւս ոմն Մակաբէ, «բաղուկ իւր ոչ եթող զնա, և սիրտ իւր արի՝ սրամտեալ ընդ այնքան վտանգս՝ եկն եհաս յօգնականութիւն իւր [1]»։ Իբրև այն ինչ տեսաւ նա միջամուխս արշաւեալ նախ հեծելոս ընդդէմ դժուարամատոյց բարձունսն, եռանդն իւր ձգեաց տարաւ անդէն զամենայն զկնի իւր։ Տեսանէ Մէռսի զկորուստ իւր առ դուրս. ընտիր ընտիրք գնդից նորա կան բեկեալ, զմնացորդս բանակին ապրեցուցանէ գիշէր։ Բայց յաւելցին 'ի վերայ և սաստիկ անձրևաց հոսանք, զի լցցի մեզ ամենայն արութեամբ և արուեստիւ՝ միանգամայն ընդ բոլոր բնութեան մղել մարտ։ Թէպէտ և պարծանս ինչ կալցի թշնամին ճարտար և քաջայանդուգն, թէպէտ և յահաւոր լեառն ուրեք պատնէշ ածեալ վերստին պատսպարեսցի, յամենուստ հալածեալ՝ թողցէ յաւար Սեպհին Անկիենի ոչ միայն զբամբաձիգ անօթս իւր պատերազմական և զաղխս իւր, այլ և զկողմանս Հռենոսի։

Տեսէք զնարդ զոզդի ամենայն. Փիլիպպուրկ՝ յաւուրս տան յոգիս աղաստան կայ, թէպէտ և ձմեռն 'ի վերայ

1 Եսայ, կգ, 5։

կայցէ։ Փիլիպպուրկ՝ որ երկայն ժամանակօք գերի կալաւ զՀաենոս ընդ մերով օրինօք, և զորոյ մեծն Թագաւորաց այսպիսի փառաւք կանգնեաց զանկումն։ Վրոմս, Սփիռ, Մայանս, Լանտոյ, այլ ևս քսան քաղաք անուանի՝ բանան զդրունսն։ Մէռսի ոչ բաւէ պահպանել զնոսա, և ոչ ևս երևի առաջի յաղթողին իւրոյ։ Եւ այս չէ շատ։ անկանելոց է առ ոտս Նորա՝ զոհ արժանի քաջութեան իւրումն։ տեսցէ Նորտլենկ զանկումն Նորա, անդ իրաւասցի՝ զի և 'ի Գերմանիա որպէս 'ի Փլանտրիա չիք կալ առաջի գալ։ լնացուց։ և այս ամենայն պարծանք սմին ինքեան իշխանիս խոստովանեսցին։ Աստուած՝ պահապանն Գալլիոյ և արքայի՝ զոր պահեալ է 'ի գործս իւր մեծամեծս, զայս այսպէս տայ հրաման։

Սովին հրամանաւ ամենայն ինչ անդերկուանալի թուէր ընդ առաջնորդութեամբ Սեպհին Անկիլենի։ և զի մի՛ զօրս ցերեկ սպառեցից անցանել միայն ընդ այլ ևս Նորա գործս քաջութեան, դուք ինքնին գիտէք, զի 'ի մէջ այնչափ ամուր ամուր քաղաքաց ընդ որս կռուեցաւ՝ մի ևեթ գտաւ ելծեալ 'ի ձեռաց իւրոց, այլ և այն իսկ պայծառացոյց ըզփառս իշխանիս։ Եւրոպէ, հիացեալ ընդ ասաուածախառն եռանդնութեան որով վառեալ էր 'ի մարտս, յապուշ միտս հարաւ՝ զի նորա տէր էր, և 'ի տիս ամաց քսան և վեցից՝ կարօղ 'ի խնայել զզօրս իւր և 'ի մղել յառաջ 'ի վանդս, 'ի տեղի տալ բախտին և ըստ միտս իւր 'ի վար զայն արկանել։ Տեսաք մեք զնա ընդ այլ ամենայն տեղիս՝ իբրև զմի ոք 'ի Նորանշան արանց, որ զամենայն խոչ և զնուութ ընդ աթուր հարկանեն։ Արագութիւն մրցութեան Նորա՝ չտայր պարապ արկանել նմին կրձիսն։ որ այն ինքն է աշխարհակալացն դրոշմ։ Դաւիթ՝ մեծն այն նահատակ 'ի մարտս՝ յողբալն զմահ երկոցուն քաջաց զօրավարացն այն ինչ կորուսելոց, զայս ետ նոցա գովութիւն։ «Թէ թեւագոյնք քան զարծուիս՝ զօրացան առաւել քան զառիւծունս [1]»։

1 Բ. Թագ. Ա, 23։

Այս նկարագիր է Իշխանին զոր սգամք։ յաշխարհս հեռաւորս յական թօթափել երևի իբրև զիայլակն։ 'ի նմին ժամու տեսանի յամենայն Ճակատս, յամենայն բանակեալս ընդդրացն Ճամբարաց։ Յորժամ զբաղեալ 'ի միում կողմանն՝ յղէ լրտեսել զմիւսն, ժիր պաշտօնեայն՝ պատգամատար հրամանացն՝ երթեալ սքանչանայ, զի նա կանխեալ աՃապարեալ է քան զինքն, և զամենայն ինչ գտանէ խրախուսեալ յերեսաց իշխանին։ 'ի մի գործ պատերազմին թուի ինքն բազմապատիկ եղեալ, ոչ սուր, ոչ հուր խափան լինին նմա։ Ոչ կարօտի զինել զգլուխն զայն զոր արկանէ յամենայն վտանգս։ Աստուած է նմա զէն ամուր անվանելի քան զբնաւ։ Թուին կորուսանել հարուածք զբանուութիւն իւրեանց առ նովաւ, և թողուլ միայն 'ի նմա նշանակս զիւրոյ արութեանն և զերկնիցն հովանաւորութեան։ Մի ասէք ցնա՝ թէ խնայելի է 'ի կեանս առաջնոյ արքայազն արեանաւուռ իշխանի, 'ի յոյժ կարևոր տէրութեանս։ պատասխանի տայ, թէ արքայազն իշխան արեանաւուռ՝ որում անդամին 'ի զարմէ անալ իւրմէ առաւել փոյթ լինելոց է զփառաց արքային և Թագին, պարտի քան զայլսն ամենեսին 'ի սէտս աշխարհին զանձն 'ի մահ նուիրել 'ի շուք պայծառութեան նորին։

Յետ տալոյ թշնամեաց ամն բազումս առնուլ զՃաշակ անվանելի զօրութեան արքային, եթէ պէտք ինչ եղեն գուն 'ի գործ դնելոյ առանին 'ի պահել զայն՝ ասացից զամենայն 'ի մի բան։ Մեծարոյ արար զդշխոյն խնամակալ։ Եւ զի հարկ է խօսել միանգամ զիրացն զորոց յաւիտեան լռել կամի, մինչև 'ի բանտարգել կալանան, և ոչ ընդ միտ անդամ ածեալ էր նորա, թէ ելցէ բնաւ համարձակել յայսրատ ինչ ընդդէմ տէրութեան։ և 'ի մեծի անդ պատուին՝ եթէ ցանկայր ինչ շնորհաց, առաւել ևս արժանի լինել ցանկայր։ Այս իսկ տայր նմա ասել։ – մարթի ինձ ասանօր առաջի սրբոց խորանացս կրկնել զբանսն զորս իմ իսկ լուեալ է 'ի բերանոյ նորա, քանզի զնորս սրտի նորա

յայտ 'ի վերը հանեն, – արդ յորժամ բանք անկանէին զո-
ղորմ բանտարգելութենէն, ասէր, թէ անյանց քան զա-
մենեսին մոի անգր, և ելի յանցաւոր քան զնշաւս։ «Ե-
ղուկ, ածէր թափէր նա, իմ շունչ և կեանք՝ ծառայու-
թիւն արքային էր և տէրութեան բարգաւաճանք»։ Էր
'ի բանս նորա տեսանել զանկեղծ ապաշաւ ընդ ցայն վայր
մղել արկանել անբախտութեան իւրոյ զնքն։ Բայց ա-
ռանց արդարացուցանել նկրտելոյ՝ զոր նա ինքն համար-
ձակաձայն դատապարտ արար, առ չխօսելոյ բնաւ զայն-
մանէ՝ ասացուք, թէ զոր օրինակ 'ի մշանջենաւոր փառան՝
սրբոց ապաշխարելոցն յանցանք, ծածկեալք յորոց արա-
բրենն 'ի քաւութիւն նոցին, և յանբաւ փառաւորութենէ
աստուածեղէն ողորմութեանցն, ոչ ևս երևին այնուհետև,
այսպէս 'ի յանցանս յայս սերտիւ խոստովանեալս և ապա
այնպէս ճոխաբար քաւեալս հաւատարիմ ծառայութիւնք,
չէ արժան յայլ ինչ հայել՝ բայց 'ի խոնարհ խոստովանու-
թիւն Իշխանիս զքջականի, և 'ի գթութիւն արքային մեծի
որ մոռացօնս արար նոցին։

Զի թէպէտ և հուսկ ուրեմն ձգեալ վարեցաւ 'ի
Թշուառայեղց պատերազմունսն, այլ այս նմա անկապուտ
պահին փառք, զի ոչ ետ յարհամարհանս զշուք տան իւ-
րոյ առ օտարազգիս։ Ի վերայ ամենայն ահաւորութեան
ինքնակալութեանն. ամենայն պերճութեանն Աւստրիոյ և
Ժառանգակալ Թագացն յարելոց 'ի տունն յայն, ևս և 'ի
տոհմին՝ որ արդ ինքնակալէ 'ի Գերմանիա, սորա զնամիւր
արարեալ իւր ապատան, միայն յարութիւն իւր և 'ի համ-
բաւն ևեթ խիզախեալ, ցայն տարաւ ետան զպարծանս գալ-
լիական իշխանի և նախապատիւ տանն տիեզերաց, մինչև
զայս միայն հնարաւոր եղև ընդունել 'ի նմանէ, զի ճաճեալ
հաւանեսցի՝ հաւասար ընդ հաւասարի վարիլ ընդ մեծի
այնմ սեպհին, թէպէտ և եղբօր ինքնակալին՝ և որդւոյ բա-
զում ինքնակալաց, և դաշամբ՝ զի իշխանս այս՝ ինքն յեր-
րորդ կարգի աւագամեծար լինիցի 'ի Սորին Նահանգսն։

Նոյն պատիւ պահեցաւ Սեպհին Անկիւնի, և տունն Գալ-
լիոյ կալաւ զկարգ իւր 'ի վերոյ քան զաւստրիականն մինչև
'ի Պրիւսսել քաղաքի։

Բայց աղէ տեսէք զինչ տայ գործել ստոյգ արութիւն։
Մինչ դեռ իշխանս պերճանայր այսպէս առ մեծի սեպհին
որ տէրն էր, զարքայն Անգլիոյ և զՍեպուհն Նորքայ՝ զթը-
շուառն յայնժամ, և այժմ անուանի Թագաւոր, մեծա-
պատիւ մեծարէր ըստ իւրում արժանի, և հուսկ ուրեմն
ուսոյց Սպանիոյ կարի ելմն արհամարհոտին՝ թէ զինչ էր
մեծվայելչութիւնն այն զոր ձախող պատահարքն չկարէին
կապտել յայնպիսի հոյակապ իշխանաց։ Նոյնչափ մեծա-
շուք եղեն և այլ ամենայն գնացք նորա։ Ի դժուարալոյծ
կնճռեան՝ զոր շահ օգտի իւրոյ արկանէր 'ի Պիրենեան դա-
շինսն, լուարուք զինչ ետ հրաման, և տեսէք թէ իցէ եր-
բեք առանձին ուրուք այսպէս աղատօրէն վարեալ 'ի խըն-
դիրս շահից իւրոց։ Գրեաց առ գործակալս իւր 'ի կաճառ
անդր տաճնի խորհրդակցութեանն, թէ չէ ինչ արժան և
իրաւ՝ զի քրիստոսակրօն ազանց խաղաղութիւն յատպէս-
ցէ ինչ 'ի պատճառս իմ. բարեկամաց խնց տարցի խնամ,
և ինձ թոյլ տացի գնալ ըստ կամս բախտին։ Ո՞վ որպիսի
նուէր մեծ եղանէ հասարակաց օգտին։

Իակ իբրև փոխեցան իրացն կերպարանք, և կամեցաւ
Սպանիա տալ նմա զԳամպրէ և զսահմանս նորա, կամ ըզ-
Լիւքսանպուրկ լեռն իշխանութեամբ, յայտ արար՝ նա-
խամեծար ընտրէր քան զայն ամենայն օգուտ և քան զոր
միանգամ մեծ ինչ կարող էին շնորհել նմա, զինչ. զպարտս
իւր և զսիրակամութիւն արքայի. այս համակ 'ի սրտի իւ-
րում կայր, զայս անդադար յեղյեղէր առ Սեպուհն Ան-
կիւնի(Ր)։ Աւադիկնա ինքն 'ի բուն ընութեան իւրում. յայն-
ժամ ետես զնա Գալլիա կատարեալ ըստ ամենայն կեր-
պարանացն, և բոլորեալ պատկեալ այնու չգիտեմ իւ ի-
սկ՝ զոր չուառութիւնք յաւելուն 'ի մեծամեծ առաքի-
նութիւնսն. ետես նա զնա դարձեալ առաւել քան զառա-
ջինն բոլորանուէր յարքայն իւր և 'ի տերութիւնն։

Բայց 'ի նախկին պատերազմունս իւր՝ մի ևեթ ունէր կեանս նուիրել նմա, իսկ այժմիկ՝ է նորա միւս ևս առաւել քան զիւրն սիրելի անձին իւրում: Սեպուհն Անկիեին յանդ հանեալ ըստ իւրում օրինակին զկարգս ուսմանցն, կազմ և պատրաստ է ընթանալ զհետ նորա 'ի մարտս պատերազմաց: Ոչ շատացեալ հրահանգել զնա 'ի պատերազմ, որպէս արքն մինչ 'ի սպառ բանիւք իւրովք, ածէ զնա Իշխանն 'ի կենդանի դաս և 'ի վարժս գործնականս: Թողցուք 'ի բաց զանցս Հռենոսի, զնոր Նշան դարուս և կենաց Լուդուիկեայ Մեծի: Ի Ճակատուն Անէփայ՝ Սեպուհն պատանի թէպէտ և զօրավարէր, որպէս արարեալ իսկ էր յայլ ևս գուպարածս, դայ 'ի գժնդակ հանդէս ասպարիսի ուսանել զպատերազմ առընթեր հօր իւրոյ Իշխանին. յայնքան և յայնպիսի վտանգս՝ տեսանէ զիշխանն մեծ տապալեալ 'ի խորխորատ մի ընդ արիւնաշաղախ երիվարաւն: Մինչդեռ կայ մատուցանէ նմա զիւրն, և ջանահնար լինի կանգնել զԻշխանն գլորեալ, անդէն 'ի գիրկս անդ գորովալիր հօրն վերս առնու առանց ինչ զիոյթ խնամոցն կասեցուցանելոյ, խրախամիտ լեալ 'ի հատուցանել միանգամայն զպարտս բարեպաշտութեան և փառաց: Զի՞նչ ընդ միտս հարկանէր Իշխանին, քան՝ զի ընտրականի այնմ որդւոյ ոչինչ այլ պակասիցի 'ի հանդէս մեծամեծ իրաց, բայց միայն պատեհ ժամանակի: Եւ սովին մեծարոյ վարիւք կրկնապատիկ առաւելոյին դուեալք իւր:

Ոչ առ որդին միայն էր նորա այս սիրա գորովալիր և ոչ առ ազգատոհմ իւր միայն. տեսի ես զնա, – և մի համարիցիք թէ կուտակեալ ստուարացուցանիցեմ ինչ ընդանքս, – տեսի ես զնա անհնարին շարժեալ ընդ վտանգս բարեկամացն. տեսի ես զնա՝ զի պարզմտութեամբ և բնաւորաբար կերպարանափոխ լինէր 'ի տեսիլ երեսացն ընդ զրոյցս ազատից նոցին, մանրակրկիտ ընդ նոսա լինէր ամենայն իրաց՝ իբրև զկարեւորաց. յիրաւախոհութիւնս ցածուցանէր զդառնացեալ ոգիս համբերութեամբ և քաղցրութեամբ, որում՝ չէր ակն ունել յայնմ եռանդուն բընութենէ, և ոչ յայնմ վսեմական բարձրութենէ: Տիր օն անդր 'ի բաց առ 'ի մէջ՝ գիւցազունքն անագորոյնք. կարող էին բռնաբարել Ճեպել զմեծարանս և շրջեալ զզարմանս, որպէս և ամենայն ինչ նորանչան, այլ ոչ կալցին զսիրտս:

Ի սահեղծուլ Աստուծոյ զսիրտ և զաղիս մարդոյն, արկ նախ 'ի նոսա զբարութիւն՝ իբրև զբուն կերպարանս աստուածեղէն բնութեանն, և զի զրոյմ եղիցի բարերար ձեռինն ուստի ելանեմքս: Բարութեան արժան էր լինել որպէս թէ բուն սրտից մերոց, և միանգամայն առաջին խանձ 'ի մեզ՝ յորսալ զայլս: Մեծութիւն 'ի վերայ եկեալ՝ ոչ միայն չջլատէ զբարութիւն, այլ 'ի սատար լինել կայ նմա յառաւել հաղորդականութիւն, որպէս զակն ինչ հասարակաց աղբեր՝ զոր 'ի բարձունս ամբառնայցեն առ 'ի զծորանան ծաւալելոյ: Այս գինք են սրտից. և մեծամեծք՝ որոց չէք ման և բաժին 'ի բարութենէ, յարդարակիւռ պատուհաս արհամարհոտ անզգայութեան իւրեանց՝ վրէպ մեռցեն յաւիտեան 'ի մեծագոյն բարւոյ կենցաղոյս, զանուշից ասեմ ընկերութեան:

Ոչ ոք լաւ ևս Ճաշակեաց զայնս քան զիշխանն զորմէ բանքս են. ոչ ոք անվեհեր քան զնա գտաւ՝ թէ գուցէ ընտանութիւն 'ի հնաս լինիցի մեծարանաց: Սա՛ էր նա՝ որ շատապ տագնապի 'ի վերայ հասուցանէր քաղաքաց և զպատերազմունս հարկանէր: Իսկ զնա՞ր. մոռացեալ թուի զբարձրաշուք աշխարհն՝ զոր տեսաք քաջաբար պահպանեալ 'ի նմանէ: Ծաներսուք զդիւցազնն՝ որ անդեղապէս յանձնէն, առանց փքանալոյ՝ առ 'ի մեծ երևեալ, առանց նուաստանալոյ՝ առ բարեկիրթ և մարդասէր լինելոյ, ինքնին 'ի ընէ այն գոանի՝ որ ինչ պարտի լինել ընդ ամենայն մարդկան. զոր օրինակ գետ մի մեծայաղթ ահեղակերպ և երախտագործ, որ յետ ծաւալելոյ զլիութիւն առոգմամբ 'ի դաշտս, ածէ զսյն հեզասահ գնացիւք 'ի քաղաքս, որ մատուցանէ զինքն համօրէն աշխարհի, և ոչ բարձրանայ

և ոչ ուռնու, բայց եթէ բռնաբար ընդդէմ կայցէ ինչ մեղմագնաց զուա 'ի Թափին՝ որ առեալ տանի զնա անդուլ՝ թեամբ 'ի հանդարտաքայլ ընթացս իւր: Այսպիսի էր քաղցրութիւն և այսպիսի զօրութիւն իշխանին Գոնտէի:

Է՞ ինչ քո դաղանիք կարևոր. հէղ զայն համարձակ 'ի սիրտ անդր ազնուական. վստահութեամբդ՝ իբք քո նորա լինին: Առաջի իշխանիս չիք ինչ անդրժելի քան զսրբանուէր իրաւունս բարեկամութեան: Եթէ շնորհս ինչ ոք 'ի նմանէ խնդրիցէ, ինքն թուի երախտագիտ, և չեռես ոք երբեք ուրախութիւն սեռն և սերտ քան զոր նայն խնդայր 'ի բարին առնել: Առաջին արծաթն զոր հրամանաւ արքայի ընկալաւ 'ի Սպանիոյ, 'ի կարօտութեան իսկ տան իւրոյ չքաւորելոյ՝ ընդարձակաւ բարեկամաց իւրոց, թէպէտ և զինի խաղաղութեանն չգոյր ինչ նորա ակնկալութիւն օգնականութեան 'ի նոցանէ. և քառասուն բիւր դահեկան իւրով հրամանաւ բաշխեալք, — իր չքնաղագիտ 'ի կեանս մարդկան, — յայտ արարին յիշխանին Գոնտէի այնչափ ինն երախտահատոյց միտս, որչափ է յայլս յոյս յորդորելոյ զմարդիկ:

Առաքինութիւն առ նմա մեծարգոյ եղև յամենայն ժամ. գովէր նա զայն և 'ի թշնամիս իւր անդամ: Յորժամ խօսել հասանէր նմա զգործոց ինչ իւրոց, ևս և 'ի պատճէնս թղթոյն առաքելոց յարքունիս, զմիոյ հնարագիտութիւնն գրուատէր, զմիւսոյն քաջութիւնն. ամենայն ոք զիւր կարգն ունէր 'ի բանս նորա. և 'ի տալ նորա իւրաքանչիւր ումեք զիւրն, ոչ ոք նշմարէր՝ յոր ուրեք իւրն կարդիցի արարուած: Անհնարանձ, անպաճոյճ և անպարծ, միշտ վեհ 'ի գործել և 'ի հանդչել, երթեալ երևեցաւ 'ի Շանթիլլի՝ որպէս 'ի գլուխ բանակաց: Թէ զմեծապայծառ ապարանսն զայն զարդարիցէ, կամ յերկիր թշնամեաց զակիչ ածեալ հարկանիցէ, և զամուրս ինչ պնդիցէ, թէ հորդան տուեալ բանակին՝ 'ի վտանգս արշաւիցէ, կամ ըզսիրելիս իւր շուրջ ածիցէ յամբարհաւաճ ճեմելիսն 'ի ձայն

երկնապող ջուրցն խաղացից զբօսանաց՝ որ զտիւ և զգիշեր կարկաչէին անլռելի, համակ նոյն այր էր, և փառք իւր անմեկին 'ի նմանէ ամենայն ուրեք:

Իբրև զի դեղեցիկ է, յետ մարտից պատերազմաց և խաղմական զնուցն շառաչմանց՝ գիտել տակաւին առնուլ զհամ խաղաղասէր առաքինութեանց, և զանդորրաւէտ փառաց՝ զոր չբաժանի ոք ոչ ընդ զօրականն և ոչ ընդ բախտն. յորում ամենայն ինչ զուարճացուցանէ, և ոչ ինչ շլացուցանէ, յոր գոյ հայել առանց յապուշ միտս եղծանելոյ՝ ոչ 'ի շնչիորաձայն բարբառոց, ոչ 'ի հրաձայթ թնդիւն ռմբաձիգ անօթոց, ոչ 'ի մռնչիւն վիրաւորաց. յորում մարդ ինքնին միայն այնպէս վեհ երևի, այնպէս մեծամեծար, որպէս զի թէ հրաման տայցէ, և ընթանայցէ ամենայն՝ բանիւ բերանոյ իւրոյ:

Անցցուք այժմ 'ի հանդամանս մտաց. և զի 'ի մեր թշուառութիւն՝ որ ինչ մտահաբեր քան զամենայն է կենաց մարդկան, զզինուորական արուեստէն ասեմ, հանճարեղ և ճարտարագոյն քան զբնաւս է 'ի նմա, նկատեսցուք նախ ըստ այմ մասին զոգի իշխանիս մերոյ: Եւ յառաջ քան զամենայն, որ զօրավար յառաջատես քան զնա գտաւ երբեք. էր մի 'ի սկզբանց իւրոց, երկնչել 'ի թշնամւոյն մինչ դեռ հեռին էր՝ առ չերկնչելոյ 'ի մօտուստ, և խնդալ ընդ գալուստ նորա: Տեսանիցէք զնարդ խորհի յամենայն օգտակարութիւնս զոր կարէ մատուցանել կամ առնուլ. քանիսն երագութեամբ յական թօթափել հասանէ կայ 'ի վերայ ժամանակաց, տեղեաց և անձանց. և ոչ շահիչ նոցին միայն և ազողակութեան, այլ և բարոյից և հաճոյից քմաց նոցա: Տեսանիցէք զնարդ ունի զհամար այրուձիոյ և հեռաւկայ թշնամւոյն, 'ի բնութենէ վայրացն և իշխանացն դաշնաւորաց. ոչ ինչ վրիպէ 'ի յառաջատեսութենէ իւրմէ: Սովին սքանչելագոր խելամտութեամբ ամենայն մանր հանդամանաց և բոլոր յօրինուածոյ պատերազմին, միշտ արթուն և զգաստ գտանի յամենայն պատահարս:

Ի դասալիք զինուորէ, 'ի փախստէ է, 'ի գերբոյ, յանցորդէ՝ որսայ զոր կամին ասել և զոր լռել, զոր գիտէն և գոգցես զոր ոչն իսկ գիտէ. այնչափ անվրէպ կարօղ գոյ խմանալ և դուշակել: Կողմնակիցք իւր հասուցանեն առնա և զզրոյցս մանուն, յամենայն ժամ ընդոստուցանեն զնա. զի հաստատուն սկիզբն ունէր և զոյս, թէ քաջի զօրավարի մարթի մատնել 'ի պարտութիւն, այլ չէ արժան 'ի խաբս ընկնիլ, զոր և պարտիմք իսկ հատուցանել նմա զայս գովութիւն, զի ոչ ուրեք ընկրնեցաւ: Յորում ժամու և յորմէ կուսէ և գայցեն թշնամիք, գտանեն զնա ցանգ 'ի զգուշի, հանապազ կազմ և պատրաստ յանկանել 'ի նոսա և մարթել զոգուտ իւր. զոր օրինակ արծուի, թէ ընդ օդս սաւառնիցի, թէ 'ի ծագս ուրեք ապառաժի հանդիցէ, տեսանիմք զի զորահայեաց բիբսն ընդ ամենայն կողմանս արձակեալ՝ սլանայ անսխալ 'ի վերայ որսոյ իւրոյ, և չիք Ճողոպրել 'ի մագլցս իւրոց որպէս և յաչացն: Այսպէս սրակնեայ էին աչքն, այսպէս աշխոյժ և բուռն յարձակումն, այսպէս հզօր և անզերծանելի ձեռք իշխանին Գոնտէի:

Ի բանակի իւրում անծանօթ են երկիւղք մնոտիք՝ որ առաւել քան զՃշմարիտսն պարտասնն և շատուցանեն. բովանդակ զօրութիւնք անվթար պահին 'ի հաւատոյ վանդամենայն ինչ կազմ կայ յառաջին ազդ փողանչանի մարտին, և ըստ մարգարէական բարբառոյն՝ ամենայն նետք սրեալ են և ամենայն աղեղունք լարեալ[1]: Առ ժամն 'ի քուն հանգստեան խաղաղացեալ հանդարտեալ կան՝ որպէս ընդ յարկաւ իւրեանց կամ 'ի բակի: Եւ զի՞ 'ի քուն կալ ասիցեմ. 'ի Բիւզանդիոն, առ ահաւոր Ճամբարաւն խմբելով յերից միաբանեալ պետութեանց, 'ի զօրս մեր անդուլ զբօսանք էին. բանակն ողջոյն յուրախութեան կայր, և չգիտաց ամենեքին թէ անօսրագոյն քան զթշնամեացն

1 Եսայ, Ե, 28։

լցէ: Ամբացուցեալ էր իշխանին իւրով զակշիռն՝ ոչ զսահմանս մեր ևեթ և զքաղաքս առհասարակ, այլ և զզօրականն մեր համօրէն. հսկէ նա, և այս շատ է:

Հուսկ ուրեմն ջուէ գնայ բանակ թշնամւոյն. այսմ մնայր իշխանն: Զհետ նորա ելանէ յառաջնում անգ շարժմանն. բանակն հոլանդացի իւրովք ամբարտաւան գրօշուք ոչ զերծցի 'ի նմանէ. յարիւն լուղի ամենայն, ամենայն յառ և յապուռ մատնեալ. այլ գիտէ Աստուած և չքնաղխմաց խորհրդոց կարգել չափ և սահման: Առ տեղեաւն ամենայն ուստեք հալածական վարին թշնամիք. Ուտնատ Ճողոպրի 'ի ձեռաց նոցա. 'ի թափել զնոսին ևս 'ի ձեռաց իշխանիս, թանձր մառախլով ծածկէ զնոսա երկինք. արհաւիրք և վայրավատն փախստականութիւն անկանի 'ի զօրս նոցին. ոչ ևս ոք գիտէ զի՛ եղև բանակն այն ահեղ: Անդ յայնժամ, Լուդովիկ՝ որոյ 'ի գլուխս հանեալ զդիոխատանչ պահ պատանէչ պաշարումն Պզանսոնի, և վերստին նուաՃեալ զՓրանչ-Գոնթէ անլուր արագութեամբ, դարձեալ դայր պերճապայծառ փառօք վարել 'ի պէտս զմերցանս իւրոյին բանակացն Փլանտրիոյ և Գերմանիոյ, սպառապետ եկաց այնմ ջոկատի՝ որ զծանօթ ձեզ սքանչելիսն գործեաց Յանլասիա, և մեծ քան զամենայն մարտիկ երևեցաւ, եթէ զարմանալեօքն զոր ինքնին կատարեաց, և եթէ զոր զօրավարացն իւրոց ետ առնել:

Թէպէտ և երջանիկ ծնունդ՝ բերեալ էր իշխանիս մերում ձիրս մեծամեծս, ոչ դադարէր բարգաւաՃել զայն մտաւորութեամբ. բնադիրք բանակացն Կեսարու էինորա ուսմանն պարապմունք: Ցիշեմ զի հիացուցանէր զմեզ պատմելով, որպէս 'ի Գալթալոնիա, 'ի տեղեան՝ յորս կայենիցն լաւութեամբ զօրաղլուխն այն անուանի 'ի նեղ արկեալ հինգ գունդս հռովմայեցիս և կրկին քաջահմուտ սալարս՝ ստիպեաց զենընկէց լինել առանց կռուելոյ[1]. էր.

1 Կեսար. յաղագս քաղաք. պատեր։

թեալ էր ինքնին լրատեսել զգեստն և զերինս որ 'ի պէտս եկին այսր խորհրդոյ մեծի։ Եւ այսչափ ոք արժանաւոր վարժապետ՝ չէր այնպիսի գիտնական ընթերցուածովք բաց այայտուեալ զսիշատակագիրսն Կեսարու։ Զօրապետք հանդերձելոց յաւիտեանցն զնոյն պատիւ հատուցին սահերթիցին խելամուտ լինել Ճառելոցն 'ի պատմութենէ ըզբանակետեղայն Բիւզանդի և զսքանչելեացն որ 'ի նմա գործեցան։ Ի Շաթնոայինն նկատեսցին զբերուն՝ զոր կալաւ զբրագլուխն մեծ, և զվտակն՝ որով պաշտպանեցաւ յերեսաց ամբաձիգ անօթոյ պատնիշին Շեղեշթատայ. անդ տեսցին արհամարհեալ վատթարեալ առաջի նորա զդաշնաւորսն Գերմանիա, և զնա՝ զի պատեհ առեալ զհետ մտանէ թշնամեացն հզօրագունից, զնորհուրդս նոցա ունայնացուցանէ, և տայ նոցա արձակել զպաշարումն Սաւեռնի, որպէս փոքր մի յառաջ արարեալ էր ընդ Հակնոյին։ Այսպիսեօք մարթանօք՝ որովք լի է վարքն նորա՝ բարձրացոյց զանուն իւր, որպէս զի անուանի լինել 'ի մարդիկ, և պարծանս ժառանգել 'ի զօրականն, եթէ զինուորեալ ոք երբեք ելցէ ընդ իշխանաւն Գոնտէի. և իրաւունս հրամանատարութեան, եթէ տեսեալ եթէ ուրուք ելցէ զգործել նորա։

Այլ եթէ նորանշան ոք այր երևեցաւ նա երբեք, եթէ մտահարուստ ոք և ամենայնի անխոտորաբար նկատող, 'ի յանկարծածին վայրկեանսն ծանուցաւ այդ՝ զորոց կախեալ կան յաղթութիւնք, և յեռանդան կռուոյն։ Յայլում ամենայնի՝ մտախոհ 'ի քնին կայ. հլուսաբար ունկն մատուցանէ ամենայն խրատու. է ուրեք՝ ուր ամենայն ինչ միախուռն պատահէ, իրացն ամբոխ ոչ չփոթէ զնա, անդէն զոր առնելոցն է՝ հաստատէ, հրաման տայ և ձեռն 'ի գործ առնէ համանդամայն, և ամենայն ինչ միաբան և անվոնդ խաղացեալ ընթանայ։ Ասացցի արդեօք. իսկ ընդէ՞ր ելցէ զանգիտէ՝ թէ գուցէ փառք այսքանոյ առն մեծի նուազեսցի խոստովանութեամբս։ Ոչ ևս յանկարծաթափ խան-

դիցն յոյզք են՝ զոր գիտէր նա փութով և գեղեցկապէս խաղաղել, և սակայն 'ի դէպս ինչ սովորականս էր երբեմն տեսանել զայնս 'ի նմա. գոյր ասել՝ թէ միւն ոմն մարդ ելցէ 'ի նմա՝ որում հոգի իւր մեծ թողու զդուզնաքեայ վասակ՝ զորս ոչ իւր ինչ վարկանի արժանիս։

Ի հուր, 'ի խառնուրդս ճակատուց, 'ի գլորդի անդ տեսանի ելմն յանկարծոյն ծագեալ 'ի նմա չգիտեմ զինչ յրատակ, զգօն, աշխոյժ, եռանդուն, քաջագր և հաճոյական իւրոցն, խրոխտ և սպառնական թշնամեացն, մինչև չգիտել՝ ուստ ուստեք գայցէ նմա այնպիսի ընդդիմակ զօրութեանց խառնուած։ Յահեղ անդ գուղարածին՝ ուր առ դրունս քաղաքին և 'ի տեսիլ քաղաքացւոց իւրոց՝ թուեցաւ թէ սահմանել կամեցան երկինք զվիճակ իշխանիս, ուր ընտրիւք զօրուն էր յառաջս անդ բանակին զօրավար մի յոյժ տագնապիչ, ուր առաւել քան այլ ուրեք երբեք տեսաւ մատնեալ 'ի վտանգ կամաց բախտին, և յորժամ յամենայն կողմանց 'ի վերայ տեղային հարուածք, անդ որ միանգամ առ իւրև պատերազմակիցքն էին ասացին մեզ յաճախ, զի թէ էր ինչ ուրուք խորհել ընդ իշխանիս զերբ ինչ խմբեալ զմեծէ, կարէր ընտրել յայն՝ զմի 'ի վայրկենից անտի՝ յոր ամենայն ինչ հուր ընչէր զնովաւ. այնքան միտք նորա վերաթևէր յայնժամ, այնքան հոգի նորա երևէր լուսաւորեալ 'ի բարձանց 'ի սոսկալի անդ պահուն, հանդոյն լերանցն բարձանց՝ որոց գլուխ գեր 'ի վերոյ ամպոց և մրրկաց՝ 'ի բարձրութեան անդ իւրում գտանէ զպարզութիւն, զզրկեալ ընաւ 'ի նշուլից լուսոյն որ զիւրև փայլատակելոյ։

Այսպէս 'ի հովիտն Լանայ, անուն քաղաքաւոր յունկն Գալլիոյ, սեպուհն այն մեծ հակառակ իւրոց խորհրդոցն վանեալ յանպարտելի կայից խաբանօք պատիր ակնկալութեան, յեղակարծ ելմն շարժմամբ իշխանին՝ որ 'ի տեղի գնդացն խոնջելոց ընդդէմ հանէ նմա 'ի ճակատ նորոգ վաշտս, ստիպի դառնալ 'ի փախուստ. հինաւուրց գումար-

տակք նորա սատակին, հրաձայթ զէն նորա ռմբաձիգ՝ յոր զոյս իւր էր եդեալ, անկեալ կայ 'ի մեր ձեռս. և Պէդ՝ որ հայեցուցեալ էր զնա յանշուշտ յաղթութիւն, վիրաւոր և ձերբակալ 'ի գուսպարին, գայ հատուցանել 'ի մեռանելն՝ տիրատեսակ մեծարանս յաղթողին իւրում իւրով յուսահատութեամբն:

Իցէ՞ն ինչ պէտք 'ի թիկունս հասանելոյ քաղաքի կամ նեղել տագնապել զնա. գիտասցէ իշխանս յօգուտ վարել զամենայն վայրկեան: Այսպէս յառաջին ազգումն կարեւոր իրիք պաշարման՝ ըստ գիպաց առ նա հասեալ, հատանէ անցանէ անհնարին տագնապաւ ընդ աշխարհ մի ողջոյն ընդ ահագին, և միով ակնարկութեամբ գտանէ անցս ինչ յօգնականութիւն նմին, 'ի վայրս ինչ ուրեք՝ զոր արթուն թշնամւոյն չէ էր տակաւին ամրացուցեալ բաւանդակ: Իսկ տոյ ուրեք ինքն պաշարումն զքաղաքաւ. զոր ամենայն նոքանոր հնարս հնարի՝ առնուլ զնա: Կարծի մղել զզօրսն 'ի մահ. այլ նա խնայէ 'ի նոսա՝ համառօտելով զժամանակ վանդիցն ուժգնութեամբ ճակատուցն: Յայնքան նորաստքնչ բախմունս՝ արիագոյն քաղաքապետք ոչ պահին զնոսամունսն առ զօրավարս իւրեանց. Տիւնքէռք առաւ յաւուրս երիքասան 'ի տեղալ անդ անձրևաց աշնայնոյն. և ահարկու նաւք մերոց դաշնաւորաց՝ երևին յանկարծակի մերով դրօշիւք ընդ բոլոր աշխարհածոցն:

Բայց իմաստուն սպարապետն պարտ է լաւագոյն ճանաչել զզօրականն իւր և զզլխաւորսն. զի այնիւ կատարի անթերի յօգաւորութիւն՝ որ զբանական շարժէ իբրև զմի մարմին, կամ ըստ գրոյն խօսելով՝ իբրև զմի այր. «Ժողովուրդն Իսրայէլն խրախուսեցին իբրև զմի այր [1]»: Եւ ընդ՞ի՞ իբրև զմի այր. վասն զի ընդ միով զօրագլխաւ՝ որ հրամուտ է զնոսորացն և իշխանաց՝ իբրև բազկաց և ձեռաց իւրոց, ամենայն ինչ աշխոյժ է և կշիռ հարթ հաւասար:

1 Ա. Թագ. ԺԱ. 7:

Եւ այս է որ ասայ զյաղթութիւն. և լուեալ է իմ 'ի մեծէ ասսի իշխանէս մերմէ՝ զի ասէր, թէ 'ի պատերազմին Նորաչենկայ այն հաւասաէր ինձ զյաջողութիւն, զի Ճանաչէի զսէրն Թիւռէն, որոյ կատարեալ հմտութիւն անկարօտ էր հրամանի 'ի գործ կարևոր պիտոյից: Եւ սա քարողէր փոխանակ, թէ անհոգ անկասկած գործեմ, զի Ճանաչեմ զնշխանն և զհրամանս իւր միշտ աներկեւանս: Այսպէս միմեանց հանգիստ մատուցանէին, որ տայր նոցա իւրաքանչիւր բոլորովին 'ի գործ իւրեանց պարապել: Այս գունակ վՃարեցաւ յաջողապէս պատերազմն բազմամեանգ և երկարատև քան զամենայն:

Տեսիլ մի մեծ երևեցաւ 'ի մերում գարու՝ 'ի միում ժամանակի և 'ի նոյն և մի Ճակատամարտս, զերկոսին արագ զայգոսիկ՝ զորս միաբարբառ ձայն համբէն Եւրոպայ հաւասարէր ընդ մեծամեծ զօրավարեանն գարուցն անցելոց, նկատել՝ ուրեք 'ի գլուխս առանձին բանակաց, և ուրեք 'ի միասին, առաւել 'ի միաշնչութենէ մտաց քան 'ի հրամանաց՝ զոր սորինն առնոյր 'ի միւսմէն, և այլ ուրեք գէմ ընդդէմ շահատակեալս, և երկնապատիկ մին 'ի միւսն արարեալ զժրութիւն և զարթնութիւն. որպէս եթէ Աստուծոյ, որոյ իմաստութիւն ըստ գրոյն խաղս խաղայ ստեպ յաշխարհի, կամեցեալ իցէ ցուցանել մեզ զնոսա յամենայն տարազս, և յայտ առնել մեզ միանգամայն՝ թէ զի՞նչ ինչ բաւական իցէ նա առնել 'ի մարդկանէ: Ո՞վ քանի բանակեալք, քանի՞ արշաւանք գեղեցիկք, որպիսի յանդգնութիւն, որչափ զգուշութիւնք, քանի՞օն վանդք, քանի՞ հնարագիտութիւնք:

Տեսա՞ն երբեք ուրեք յարս երկուս նոյն առաքինութիւնք 'ի բարս այնքան այլ և այլ, զի մի ասացից հակառակս: Մին գործել թուի խորախորհուրդ հանճարով, միւսն յանկարծածագ լուսաւորութեամբ. ուստի սա առաւել եռանդնոտ, բայց առանց հրոյն իւրոյ շտապիչ լինելոյ. իսկ նա ցրտագոյն ինն, այլ առանց իրիք տարտա-

մութեան. քան 'ի խօսել՝ առաւել 'ի գործելն խիզախ. թէ և տատամնեալ ինչ արտաքոյ, այլ 'ի ներքոյ պինդ և հաստատուն: Մին ընդ երևելն 'ի ճամբարս՝ բարձրագոյն իմն տայ կարծիս զևրմէ քաջութենէն, և նորանչան իմն իրաց տայ ակն ունել, սակայն կարգաւ յառաջ խաղայ, և ոմն ոմն գայ 'ի նորակերտ ահաւորութիւնսն՝ որ զընթացս կենաց իւրոց վախճանեցին. միւսն՝ իբրև հոգեշունչ ոք՝ անդրստին յառաջնմէ ռազմէն հասանէ 'ի չափ ամենակատար ճարտարապետաց. մին անդուլ և սաստիկ ճգնութեամբ՝ 'ի հիացումն յափշտակէ զազգ մարդկան, և պատանձեցուցանէ զնախանձ. միւսն՝ անդէն 'ի սկզբան այնպիսի իմն արձակէ շողիւն փայլակնանշոյլ, մինչև չիշխել մախանաց 'ի վերայ երթալ նորա. մին՝ բարձրութեամբ հանճարոյն և չաւատալի հնարիւք արութեան՝ ամբառնայ դեր 'ի վերոյ ամենայն վտանգից, և 'ի զրժանաց խակ բախտին հանէ իւր օգուտ. միւսն՝ առաւելութեամբ բարձրաշուք զարմին և մեծասքանչ երկնառաք խորհրդովք, և սիրալի իմն բնաձին բարուք՝ որ անծանօթ մարդկան է գաղտնիք, ծնեալ թուի ձգել ածել զբախտն զհետ կամաց սրտի իւրոյ, և ստիպել տագնապել զճակատագիրսն:

Եւ որպէս զի յարսդ երկոսեան տեսցին միշտ նկարագիրք մեծամեծք, բայց այլ և այլք, մին 'ի յեղակարծ հարուածոյ խլեալ՝ մեռանի 'ի վերայ աշխարհին իբրև զՅուդա ոմն Մակաբեան. կոծի զնա բանակն որպէս զհայր իւր, արքունիքն և ժողովուրդն ամենայն հեծէ, բարեպաշտութիւն իւր գովի զոյդ ընդ արութեանն, և յիշատակ նորա ոչ խամրի ժամանակաւ: Միւսն՝ ամբարձեալ զնուրբ 'ի ծայրս փառաց հանդոյն Դաւթի, մեռանի 'ի մահիճս իւր քարոզելով զգովութիւնս Աստուծոյ, և խրատելով զազգատոհմն, և թողու զամենայն սիրտ լի պատարուն փառօք կենացն և քաղցրութեամբ մահուն իւրոյ: Որպիսի՞ տեսիլ, հայել և նկատել զերկոսին արդ, և 'ի միտ առնուլ 'ի միոյ միոյ յայնցանէ զարժանաւոր յարգանս միւսոյն:

Զայս եռես դարս մեր, և որ մեծագոյն ևս է, եռես թագաւոր մի՝ զի վարէր յիւր պէտս զերկոսին զմեծ զօրագլուխդ, և 'ի շահ օգտի առնոյր զերկնից օգնականութիւնն: Եւ ապա իբրև զրկեցաւ 'ի նոցանէ՝ միոյն մահուամբ և հիւանդութեամբք միւսոյն, մեծ ևս 'ի միտ արկանէր խորհուրդս, և 'ի գլուխս տարեալ իրս մեծագոյնս և զիւրև իսկ անցեալ զանցեալ՝ զանցուցանէր և զիւրոցն յուսով և զակնկալութեամբ տիեզերաց: Այսքան վեհագոյն է իւր արութիւն, այսքան լայնատարդ հանճար, այսքան բախտն փառաւոր:

Աւադիկ, տեսլիք՝ զորս Աստուած 'ի հանգիսի անցուցանէ տիեզերաց, և արք՝ զորս առաքէ անդր յորժամ կամիցի փայլատակել, մերթ յայս և մերթ յայնմ ազգի՝ ըստ մշանջենական խորհրդոցն, զզօրութիւն իւր կամ զխնամատարութիւն: Զի աստուածեղէն անուանցն յորջորջանք միթէ պայծառ ևս փայլեցեն յերկինս՝ 'ի սեղծուածս մատանց իւրոց, քան 'ի չքնաղագիւտ տուչութիւնս՝ զոր բաժանէ որպէս և կամի յարս հնաշխարհիկս: Ո՞ր աստղ առաւել ճաճանչէ յերկնակամար արփին՝ քան զնշխանն Գոնտէի ծագեալ յԵւրոպա: Ոչ պատերազմ և ևթ նօթձէր նմա փառս. հանճար նորա մեծ բովանդակէր զընդհանուրս, զհինն որպէս զնորս, զպատմութիւն, զնմաստասիրութիւն, զաստուածաբանութիւն զյոյժ բարձրախօս, և զարուեստս գիտութեամբք հանդերձ:

Զէր մատեան զոր նորա չկրէ ընթերցեալ. չգոյր ոք այր հոյակապ 'ի մտաւորականս կամ 'ի գրաւորականս՝ ընդ որում չանկանէր նա զբանիւք. և ամենեքին առաւել լուսաւորեալ երևնէին առ 'ի նմանէ, և ուղղէին զմիտս իւրեանց 'ի նրբախնդիր հարցուածոցն կամ 'ի կորովամիտ տեսութեանցն: Սմին իրի կենակցութիւն նորա՝ հեշտութիւն էր, զի գիտէր խօսել ըստ իւրաքանչիւր բնութեան. ոչ ընդ պատերազմիկն միայն՝ զգործոց նոցին, ընդ արքունականն՝ զշահից նոցա, ընդ քաղաքավարն՝

զբանագնացութեանց իւրեանց, այլ և ընդ հետաքնին Ճառնապարհորդս՝ զգիւտից նոցին 'ի բնութեան իրաց կամ 'ի տեսչութիւնս աշխարհաց կամ 'ի տուրեառնիկս. ընդ արուեստաւորն՝ զհնարագիտութեանցն, և ընդ գիտունս ամենայն՝ զզարմանութեանց յոր հասու եղեալ էին:

Այս պարզեալ յԱրարչէն ելանեն, ո՞ երկմտէ. սխրալի են պարգևքս այս, ով ոչ տեսանէ: Այլ՝ առ կոր 'ի գլուխս առնելոյ զմարդկեղէն միտս հպարտացեալս ընդ պարգևսդ, ոչ ինչ զանգէտ լինի Աստուած շնորհել զայն և առելեաց իւրոց: Հանդէս առնէ սուրբն Աւգոստինոս յոգունց իմաստնոց 'ի հեթանոսաց, բազում աշխարհակալաց, յորս վից զգօնամիտ օրէնսդրաց, խուռն ընտիր ընտիր քաղաքացւոց, զՍոկրատ ոմն 'ի մէջ անցուցեալ, զՄարկոս Աւրելիոս, զՍկիպիոն, զԿեսար, զԱլէքսանդր, արս առ հասարակ անծանօթս աստուածութեան և տարամերժեալս 'ի յաւիտենական արքայութենէ նորա: Ո՞չ ապաքէն Աստուծոյ է և զնոսա ստեղծեալ. իսկ ո՞ այլ կարող էր ստեղծուլ բայց յայնմանէ՝ որ առնէ զամենայն յերկինս և յերկրի:

Իսկ ընդէ՞ր բնաւ ստեղծ զնոսա, զի՞նչ էին առանձինն խորհուրդք անբաւաղօր խմաստութեանն՝ որ չառնէ ինչ երբեք ընդունայն: Ո՛ւնկն դիք զինչ տայ պատասխանի Աւգոստինոսն սուրբ. «Արար զնոսա, ասէ ցմեզ,'ի զարդ այսր յաւիտենից». Զի զարդ այժմոս աշխարհիս զարդաբերեսցէ[1]: Հասատեաց զդոյզնագիւտ շնորհսդ 'ի մեծամեծ որեարն, որպէս հաստատեաց զարեգակն: Ո՞վ ոչ զքանչանայ ընդ աստղդ գեղեցիկ, ով ոչ հիանայ ընդ միջօրեայ պայծառութիւն նորա, և ընդ ահեղաշուք պաճոյճս ելից և մտից նորա: Այլ՝ քանզի ծագէ զնա Աստուած 'ի վերայ բարեաց և չարաց, ոչ գեղեցիկդ այդ արարած է որ առնէ զմեզ երանելս. 'արարեալ զնա հաստչին 'ի պճնել և 'ի լուսաւորել զմեծս զայս տեսարան տիեզերաց: Սոյնպէս՝ յորժամ և 'ի թշնամի իւր որպէս 'ի ծառայն արար զգեղեցիկ լոյն մտայ, զճառագայթս խմաստութեան իւրոյ, զպատկերս բարեբարութեան իւրոյ, ոչ յերջանկութիւն նոցին բաշխէ զճոխ պարգևսն, այլ 'ի վայելչութիւն են տիեզերաց և 'ի զարդարանս յաւիտենիս այսորիկ:

Եւ աղէ տեսէք զիշխանական վիճակ արանցդ զորս ընտրեալ է 'ի պաճուճանս դարուն իւրեանց. զինչ խնդրեցին արքն այն ինաշխարհիկք, բայց զառ 'ի մարդկանէ գովութիւն և զփառս: Իցէ թէ յամենի նոցին զանայցէ Աստուած զփառսն զայն մնոսի տենչանաց նոցին. ոչ. լաւս յամենի մատնէ զնոսա տալով նոցա զայն՝ ևս և անդր քան զակնկալութիւն նոցին: Այլ՝ Ալէքսանդր՝ այն որ չկամեր ինչ այլ, բայց շռնդ ևեթ հարկանել ընդ աշխարհ, ահար առաւել քան զոր ժամերակին յուսալ. տես զի գայ երևի տակաւին յամենայն գովասացութիւնս մեր. և Ճակատագիր նմին թուի փառաց տիեզերակալին այնմիկ, զի թագաւորի ուսմբ չեղեալ մարթ ընդունել գովութիւնս՝ որոց չլինի ցի և նա հաղորդ: Եթէ փոխարինաց ինչ արժանի էին մեծամեծ գործեան հռովմայեցւոց, գիտաց Աստուած գատնել զպատշաճաւորն արժանեաց նոցին՝ որպէս և տենչանացն, տայ նոցա 'ի փոխարինաց սակի զտերութիւն աշխարհի իբրու զանարդ ինչ պարգև:

Ո՛վ թագաւորք, կորագլուխս լերուք 'ի մեծութեան ձերում. աշխարհակալք, մի՛ 'ի յաղթանակս ձեր պարծեսջիք: Տայ նոցա 'ի վարձ զփառս մարդկան. վարձ՝ որ ոչ ժամանէ մինչև 'ի նոսա, որ ջանայ գամգիտ լինել կռուել, յի՞նչ. ո՞ գիտէ 'ի դահեկանս նոցա կամ 'ի դրօշեալս պեղեալս 'ի հողոյ, մնացորդք ամաց և խուժդժից. յաւերակս շիրմայ նոցին և դաստակերտից, որ 'ի կռիւ կան ընդ ժամանակին, կամ մանաւանդ յերևոյթս նոցին և 'ի ստուերս, յայն ինչ՝ որ անուն ասի նոցա: Այդ է ահա արժանի հաստուցումն այնչափ ճգանց, և 'ի լման անդ ըղձից նոցա՝ կշտամբութիւն մոլորութեան իւրեանց: Օ՜ն եկայք զմայ-

1 Ընդդէմ Յուլիանոսի, գիրք Ե:

ՀԵՑարուք, մեծամեծք երկրի. բուռն հարէք, թէ կա-
րէք, զցնորից աստի փառաց, հանդոյն աւագամեծար որե-
ցոյն ընդ որ սքանչանայքդ։ Աստուած՝ որ հանէ ընդ կա-
ռային նոցին 'ի դժոխս զպերճութիւն նոցա, ոչ խանդացաւ
'ի նոցանէ, ասէ սուրբն Աւգոստինոս, զտենչալին նոցա՝
զփառս. և «մնոտիք՝ ընկալան վարձս մնոտս իբրև զցան-
կութիւնս իւրեանց». ընկալան զքոխարէնս իւրեանց՝ մնոտիք
զանոտիս։

Ոչ այսպէս եղիցի և ընդ իշխանսն մեր ընդ մեծ. ժամն
Աստուծոյ հասեալ է, ժամ ակն կալեալ, ժամ անձկալա-
ւոտ, ժամ ողորմութեան և շնորհաց։ Առանց աղդ ինչ
'ի հիւանդութենէն առնլոյ, առանց տագնապելոյ 'ի ժա-
մէն, կատարէ աւասիկ զոր 'ի մտին ունէր։ Վանական ոք
իմաստուն՝ կոչեցեալ յականէ՝ կարդաւորէ զերս խղճի մը-
տացն. նա խոնարհ քրիստոնեայ՝ հպատակէ դատաստանի
նորին, և ջիք ուրուք երբէք յերկուացեալ զմիամիտ հա-
ւատոյ նորա։ Տեսաւ իսկ յայնմհետէ սերտիւ պարա-
պեալ 'ի փոյթ նուաճելոյ զանձն, զչէնս անտանելի ցաւոցն
նկուն առնելոյ, հպատակութեամբ իւրով հանապազորդ
պատարագ մատուցանելոյ զնոսին։ Աստուած՝ զոր կար-
գայրն հաւատով՝ շնորհեաց նմա զճաշակ գրոց իւրոց սքբ-
բոց, և 'ի մատենի անդ յաստուածայնում՝ զհաստատուն
կերակուր բարեպաշտութեան։ Աւաւել քան զոր երբեմն՝
խորհուրդք նորա արդարութեամբ ուղղէին, անդ սիռ-
փանք էին այրոյն և որբոյ, և տնանկն՝ աչալուրջ մատչէր
առ նա։ Ծանր և քաղցր հայր ազգատոհմին, 'ի քաղցրու-
թիւնս անդ յորս վայելէր ընդ որդիսն՝ ոչ դադարէր շնչել
'ի նոսա զսէր ճշմարիտ առաքինութեան. և պատանեակս
այս, թոռն իւր, իմասցի յանձին յաւիտեան՝ թէ յայնպիսի
ձեռաց է մշակեալ։ Տուն նորա համօրէն շահէր յօրինակէն
իւրմէ։

Բազումք 'ի գերդաստանաց իւրոց մնեալ էին թշուա-
ռութեամբ 'ի խոտորութեանն՝ որում՝ լուռ լինէր յայնժամ

Գալլիա։ Քանիցս անգամ տեսաւ տառապեալ ընդ փրկու-
թիւն նոցա, վշտամբեր ընդ ըմբոստութիւն նոցա, և ընդ
դարձ նոցին խրախամիտ։ Որպիսի անզուգական յստակու-
թեամբ մատաց ցուցանէր նոցա զհնութիւն և զստուգութիւն
ուղղադաւան հաւատոց։ Ոչ էս էր յաղթօղն այն փայլակն-
ընթաց՝ որ թուէր յափշտակել զամենայն. հեզութիւն՝
համբերութիւն և սէր էր, ուշակալ 'ի շահել զսիրտս և
բժշկել զախտաժէտ միտս։ Այս իրք են պարզք, տեսարք,
գարմանել զտուն իւր, շինել զսպասաւորս, իրաւ առնել
և ողորմութիւն, գործել զբարին զոր կամի Աստուած, և
համբերել չարեացն զոր ինքն առաքէ, այս են հասարա-
կախառն գործք քրիստոսակրօն կենաց՝ զոր Քրիստոս Յի-
սուս դրուատելոյ է յաւուրն յետնում առաջն սրբոց իւ-
րոց հրեշտակաց և առաջն հօր իւրոյ երկնաւորի։ Ընդ տե-
սութիւնսն ջնջեսցին և վէպք, և ոչ էս բանք լինիցին զփա-
ռացի հանդիսիցն որովք ակաղձեալն են։

Մինչ դեռ նա զսովին զբազմամբք եկեալ՝ զաւուրսն
անցուցանէր, և զփառս գեղեցիկ և բարեպաշտիկ առան-
ձնութիւնն՝ դեր 'ի վերոյ մեծահռչակ գործոց իւրոց ամբառ-
նայր, համբաւ հիւանդութեանն բամբաշնն (գ) Սեպհին Պուր-
պոնի՝ իբրև զփայլակն ելեալ շանթից՝ եկն անկաւ 'ի Շանթիլլի։
Ո՞ոք ոչ կայծակնահար եղև 'ի նշմարել զշնջումն նորանշոյլ
լուսոյն. ահ անկաւ՝ թէ գուցէ վճարեալ իցէ 'ի յուսոյ։ Զի՞նչ
եղև սիրտ իշխանին Գոնտէի, իբրև ետես՝ զի սպառնալիք
'ի վերայ կային նմա կորուսանել զնորոգն զայն կապ տան
իւրոյ ընդ անձին արքայի։ Պա՞ռտ էր ուրեմն 'ի ժամանա-
կի անդ յայնմիկ մեռանել զիւցաղնս. զոր այնչափ քաղա-
քաց պաշարմունք, այնչափ ճակատամարտք ջոջեցին խլել,
զրաւեսցէ արդ 'ի գթոցն։ Սիրտ նորա, որ միայն էր 'ի վա-
ղուց իւր զօրավիգն, 'ի խոր խոցեալ 'ի վշտաց անտի սոս-
կալն ահտին, 'ի կոր զնա կործանէ յայն հարուած. զօրն՝
որ անդուստ խաղայ 'ի նմա, մաշէ սպառէ զնա։

Թէպէտ և 'ի տեսիլ մատչելոյ արքային առ Բամբիշնն

խօթ՝ մոռանայ բնաւ զոկարութիւն իւր, թէպէտ և նա-
խանձու վառեալ, և յայս նուագ՝ անկարօտ օգնականի,
գիմեալ ընթանայ աղդ առնել նմա զամենայն վտանգս իրին՝
յորոց չերկնչէր արքայն մեծ, և հուսկ ուրեմն արգելու-
զնա չյառաջել, սակայն քայլս չորս անտի անդր, ինքն
ոանպիոխ լեալ, թալուկ զորթիւն եկեալ՝ նուաղեալ անկա-
նի. և այս օրինակ զոգիսն 'ի բաց դնելոյ 'ի վերայ արքային՝
'ի զարմանս եղև: Եւ թէպէտ տիկինն (Դ) Սեպհին Անկիե-
նի, որոյ առաքինութիւն չանդիտեաց երբեք յայլմէ իմքէ՝
բայց 'ի պակասելոյ առ աղգատոհմն իւր և առ պարտս
պատշաճից իւրոց, ընկալաւ օձան 'ի սպասու կալոյ առ
նմա 'ի սիրումն նմին, արթուն խնամք տիկնոջս ոչ հան-
դարտեցին զառաւատնս հոգոց նորա. և իբրև բամբիշնն
դեռահասակ զերծաւ 'ի վտանգէն, հիւանդութիւն արքա-
յին այլ ինն յոյզս յարուցանէ յիշխանն մեր:

Իցէ՞ ինձ հնար չառնուլ զկայ յայսմ վայրի: Ի տեսիլ
զուարթութեան նշողելոյ 'ի ճակատն յայն վեհափառ, մի-
թէ գոյր ինչ կասկածել՝ թէ արքայն մեծ դարձեալ ան-
դրէն'ի Վէռասայլ, երթեալ անկանիցի'ի ցաւսն դըժընդակս,
յորս ծանեան տիեզերք զաստուածպաշտութիւն նորա,
զարութիւն իւր, և զմեծ սէր ժողովրդոց իւրոց: Որո՞վ ա-
ջօք հայեաք մեք 'ի նա, յորժամ չնայեալ յառողջութիւն՝
'ի սիրելին մեզ քան զամենայն՝ հաճեալ հաւանէր ամբել
զդառնութիւն հոգոցս մխիթարութեամբ տեսոյն իւրոյ, և
որպէս զամենայն ինչ և զցաւսն նկուն արարեալ՝ տեսա-
նէաք զնա զոր ամենայն, ոչ միայն ըստ սովորութեանն
զիրսն տնօրինել, այլ և ընդ կաթողիկն արքունականացն զբա-
նիւք անկանել նովին հանդարտութեամբ զոր 'ի դէմս ա-
ծէ նոցա 'ի գիւթական դրախտս իւր: Օրհնեալ նա յԱ-
ստուծոյ և 'ի մարդկանէ՝ որ այսպէս խառնէ համակ զբա-
րութիւն յայլ ամենայն լաւութիւնսն ընդ որս սքանչա-
նամբ: Ցամենայն 'ի ցաւսն անդ՝ հարցանէր խնամսս փու-
թով զողջունէ իշխանին Գոնսալէ, և քան ընդ անձին առող-

ջութիւն՝ ընդ իշխանիս հոգայր: Անկանէր իշխանս մեծ յու-
ժոյ, այլ թաքուցանէր մահ զգալուսս իւր: Իբրև փոքր
մի գիւր եղև ախտն, և Սեպուհն Անկիենի, բաժանեալ
ցանգ ընդ պարտս որդւոյ և հպատակի, դարձեալ գնացեալ
էր իւրով հրամանաւ առ արքայ, ամենայն ինչ կերպարա-
նափոխ լինի յական թօթափել, և աղդ առնեն իշխանին
զմահուն մերձենալ:

Միտ դիք, քրիստոնեայք, և եկայք ուսարուք մեռա-
նել. նա մանաւանդ եկայք ուսարուք՝ մի սպասել յե-
տին ժամուն առ սկիզբն առնելոյ բարուք կենաց: Իսկ
զի՞արդ. ա՞ն ունել մեռալ սկիզբն առնելոյ նորոյ կենաց,
մինչդեռ 'ի բուռն անկեալ մահուն, պաղեալ 'ի սառնասա-
ռոյց ձեռս նորա, չգիտիցէք խսկ բնաւ թէ ընդ մեռեա՞լս
արդեօք իցէք, թէ տակաւին ընդ կենդանիս: Ո՛հ, աճապա-
րեալ կանխեցէք քան զժամն զայն խռովութեանց և խա-
ւարի՝ ապաշնարութեամբ: Սովն անվրդով ընդ վերջին
դատաւճիռն յայտնեալ առ նա՝ լուռ կայ վայրկ մի իշ-
խանն, և անդէն վաղվաղակի, «Ո՛վ Աստուած իմ, ասէ,
զայդ կամիս. եղիցին կամք քո. 'ի գիրկս քո անկանիմ, ա՛ուր
ինձ զնորհս բարուք մեռանելոյ:»

Ի՞մ այլ խիզ փափաքէք: Ի կարճառօտ խնդրուա-
ծի ասա տեսանէք զհնազանդութիւն հրամանաց Արարչին,
զապաւինութիւն 'ի Խնամն նորա, զվստահութի՛ն 'ի շնորհ-
սն, և զամենայն բարեպաշտութիւն: Եւ այնուհետև,
զոր օրինակ երևեալն էր յամենայն 'ի մարտս պատերազ-
մացն, անյողդողդ, անխռով, հանդարտօրէն պարապեալ 'ի
պէտս յաջողուածոյ նոցին, նոյնպէս գտաւ և 'ի վերջնում
անդ մրցամարտի. և մահն չերևեցաւ նմա առաւել սոս-
կալի՝ ժԺգոյն և թալկացեալ քան 'ի մէջ հրոյն ընդ ճաճան-
չիւք յաղթանակին զոր միայն յանգման առնէ: Ցորժամ
հեկեկանք ըրդեալ գուժէին յամենայն կողմանց, որպէս
եթէ իվերայ այլոց ուրուք էին, այնպէս ոչինչ կասէր 'ի հրա-
մանն տալոյ. և թէ արգելոյր յայլոց զարտասուս, ոչ

որպէս թէ խռովեցի ինչ յայնցանէ, այլ իբրև խափան ինչ
'ի յապաղումն ելից իւրոց: Ի ժամու անդ յայնմիկ տարա-
ծանէ զգուլթ խնամոց իւրոց մինչև 'ի հուսկ տրուպս ծա-
ռայիցն. ըստ արժանի իւրում տոհմին և նոցա ծառայու-
թեանցն՝ առատութեամբ ընու 'ի նոսա զպարգևս իւր, և
ևս առաւել պատուեալս թողու զնոսա նշանակօք յիշատա-
կի իւրոյ:

Ի տալ նորա հրամանս ինչ առանձինն ուշադիս և յոյժ
կարևորս, որ 'ի խիղճ մտացն և 'ի յաւիտենից փրկութիւն
իւր հայէին, իբրև զգացուցին նմա՝ գրով և ըստ օրինի կար-
գել զայնս, մեծապայծառ Տէր, թէպէտ և նորոգիցեմ ըզ-
ցաւսդ և զամենայն վերս սրտիդ արիւնիցեմ, ոչ լռեցից
զբանսն զոր ստէպ յեղյեղեաց զքէն, թէ ճանաչեմ ես
զնա, չէք ինչ արտաքոյ օրինական կարգաց՝ բայց ասել նմա
զկամս խորհրդոց իմոց, և զի նա ինքնին անդրադարձն ևս դի-
մեսցէ յօժարաբար, և ընուցու զաւ 'ի յինէն մուռացեալն:
Ընդ սէր հօր առ քեզ՝ ոչինչ զարմանամ, զայն սիրտ՝ բնու-
թիւնն տնկեաց 'ի մեզ. այլ զի հայր խնամատուն՝ ցուցեալ ի-
ցէ առ քեզ մինչ 'ի շունչ յետին զայդ վստահութիւն, 'ի
քեզ տպատան արարեալ զայնպիսի գործ կարևոր, և
սովին անկասկած յուսով մեռանիցի խաղաղիկ, այս է չքնաղ
վկայութիւն արժանի քում առաքինութեանդ. և 'ի վերայ
ամենայն պարծանացդ՝ բարձրութիւն քո ոչ ընկալցի այս-
օր յինէն այլ քան զայդ գովութիւն:

Զոր յետ այնորիկ սկիզբն արար իշխանն կատարել
զպարտս ատուածպաշտութեան, արժանի էին պատմելոյ
ամենայն երկրի, ոչ զի նշանաւոր ինչ իցեն, այլ զի՝ այս-
պէս ասել՝ չիցեն ինչ այնպիսի, և զի իշխան ոք իբրև զսա
յանգիմանակաց համօրէն տիեզերաց՝ չընծայէ ինչ բնաւ
յաչս հանդիսատեսաց: Արդ մի, տեսլիք, ակն ունիցիք մե-
ծապանծ բանից, որ յայտ առնեն, թէ ոչ զծածուկ ամ-
բարտաւանութիւն, այլ զէթ զՀիկն ամբոխեալ հոգւոյ՝ որ
վանիցէ կամ թաքուցանիցէ զգաղտնի խռովութիւնն: Իշ-

խանն Գոնտէի ոչ գիտէ զինչ իցէ բարբառել պերճապա-
ճոյճ խնամսոս, և 'ի մահուն որպէս և 'ի կեանսն՝ ճշմար-
տութիւնն եղև ամենայն մեծութիւն իւր:

Խոստովանութիւն իւր եղև խոնարհ, լի զղջութեամբ
և քաջալերութեամբ. չեղեն նմա պէտք երկայն ժամանակի
'ի պատրաստութիւն. լաւագոյն պատրաստութիւն առ յե-
տին ժամանակսն՝ է չկալ մնալ նոցա: Բայց որում զհեան
գայ՝ ունկն դիք, տեսլիք: Յերևեալ սրբոյ թոշակին ցան-
կացելոյ, տեսէք որպէս յառեալ հայի 'ի քաղցր տեսիլն
յայն: Յայնժամ յուշ եղեն նմա անպատուութիւնքն՝ ո-
րովք, աւաղ, անարգի խորհուրդն այն ատատուածային: Ոչ
ևս ճանաչեն քրիստոնեայք զերկիւղն սուրբ՝ զոր ազդէր
երբեմն 'ի տեսիլ անմահ պատարագին. գոգցես մերկացեալ
իցէ 'ի նմանէ ահաւորութիւնն՝ զոր անուանէին նմա հալքն
սուրբք, և արիւն զոհիս մերոյ ոչ ևս հեղուցու 'ի նմա
ատուգապէս՝ որպէս 'ի գագաթան տեղւոջն. ոչ միայն չգո-
ղամք առաջի սուրբ սեղանոյն, այլ և արհամարհեմք զոր
անգն զՅիսուս Քրիստոս. և մինչդեռ թագաւորութիւն մի
ողջոյն ատանի 'ի պատճառս դարձի հերձուածողաց, ոչ
զարհուրիմք համարձակել հայհոյութեանց: Աշխարհամոլ
ժողովուրդ, ոչ ածէք զմտաւ զսոսկալի պղծութիւնսն,
ածջիք զայն 'ի մահուն՝ յամօթ և 'ի դողումն: Յիշեաց
իշխանն զամենայն զգործեցեալ յանցանս իւր. և առ տկա-
րութեանն անբաւական ազդողաբար յայտ առնելոյ զնմա-
ցուածս սրտին, 'ի փոխ առ զձայն հօրն իւրոյ խոստովա-
նութեան՝ խնդրել թողութիւն յաշխարհէ, 'ի գերդաս-
տանկաց իւրոց և 'ի բարեկամաց: Հեծեծանք եղեն պա-
տասխանի. ահ, տուք այժմ նմա պատասխանի շահելով
յօրինակէդ:

Այլ ևս պատուէրքն կրօնից սրբութեան՝ կատարեցան
նովին ատատուածսիրութեամբ և նովին մտաւորութեամբ:
Որպիսի հաւատով և քանիցս անդամ 'ի համբոյր խաչին
պաղատեցաւ առ Փրկիչն հոգւոց, զի արիւն նորա վասն

իւր հեղեալ՝ մի՛ վայրապար լինիցի։ Այս է որ արդարացու-
ցանէ զմեղաւորն, այս է որ հզօրիչն է արդարոյն, այս է որ
վստահ առնէ զքրիստոնեայն։ Զի՞նչ ասացից զսուրբ մաղ-
թանացն օրհասականաց, ուր 'ի ջանս անդ Եկեղեցւոյ լսելի
լինին փոյթեռանդն ուխտաւք նորա, և գոգ վերջին քուքք և
ճիչք որովք մայրն սուրբ վճարէ զերկուսեան 'ի ծնանել զմեղ
յերկնաւոր կեանսն։ Երիցս եւ կրկնել զայնոսիկ յունկն
իւր, և յամենայն ժամ նորանոր մխիթարութիւնս եղիս
'ի նոսա։ Ի շնորհսն ունել բժշկաց իւրոց, Աւադիկ, ասէ,
այժմ իմ ստոյգ և ճշմարիտ բժիշկք, ցուցեալ զեկեղեցա-
կանսն՝ որոց միտ դնէր խրատուցն և յառաջ վարէր զա-
ղօթսն, սաղմոսք մշտամուտնչք 'ի բերան, յոյս անպակաս
'ի սրտին։ Եթէ տրանջեաց ինչ, էր միայն ընդ սակաւ ևեթ
շարչարելն 'ի քաւութիւն մեղաց իւրոց. խանդակաթ մինչ
'ի սպառ 'ի գութ իւրոցն, ոչ ընաւ պարտեալ նկուն եղև
այնմ. նա մանաւանդ խիթայր միշտ՝ թէ աւելի ինչ շնոր-
հիցէ բնութեան։

Զի՞նչ ասացից զյետին խօսից նորա ընդ Սեպհին Ան-
կիենի. ո՞ր երանդ կենդանի՝ մարթասցէ 'ի դէմս ձեզ ածել
զարութիւն հօրն և զանհնարին ցաւս զաւակին։ Երեսքն
արտօսրալից, առաւել հեկեկանօք քան բանիւք, մերթ
զչքթուենսն մածուցեալս 'ի յաղթական ձեռսն՝ այժմ նուա-
ղեալս, մերթ անկեալ 'ի գիրկսն և 'ի գոգն հայրենի, թուի
թէ կամիցի բազում ջանիւքն արգելուլ պահել զյանկալին
զայն, զպատկառելին և զսիրելին. պակասեալ յուժոյ՝
գլորի յանոտից նորա։ Իշխանն անխռով եթող նմա բերել
զոգի, ապա կոչեցեալ զբամբիչն Սեպհին՝ զնու իւր, զոր
տեսանէր նոյնպէս անշըշունչ և գրեթէ անշունչ, անմեղ-
կելի գթովք եւ նոցա զվերջին հրամանսն յորս բովանդակ
փայլէր բարեպաշտութիւն։ Աւարտեալ զայնս՝ օրհնեաց
զնոսա հաւատովք և աստուածահաճոյ խնդրուածովք,
օրհնելով ընդ նոսին, իբրև միւս ոմն Յակովբ, զմի մի ի-
բարեքանչիւր յորդեկաց նոցա. և 'ի կողմանցն երկոցունց

երևեցաւ այն ինչ, զոր թէ երկրորդեսցէ ոք՝ 'ի զօրութենէն
արկանիցէ։

Ոչ մոռացայց զքեզ, ով իշխանդ, եղբօրորդեակ իւր
սիրելի, և իբրև որդի երկրորդ, և ոչ զպանծալի վկայու-
թիւնն զոր եւ հաստատութեամբ քում արժանեսցդ, և
ոչ զդորովալիր փոյթ խնամոց նորա և զթուղթն զոր առ
դուրս մահուն գրեաց հաշտ առնել զքեզ ընդ արքայի՝
ընդ ցանկալին քան զբնաւս ուխտիցն քոց, և ոչ զգե-
ղեցիկ գեղեցիկ շնորհսդ, որ արժանի եւուն համարել
զքեզ այնչափ ուժգին գրաւելոյ զյետին ժամս այնր չքնա-
զագեղ կենաց։ Ոչ մոռացայց և ոչ զքաղցրութիւն արքայի՝
որ յառաջեաց քան զփափաքանս օրհասական իշխանին, և
ոչ զառատամիտ խնամս Սեպհին Անկիենի՝ որ շնորհիս
այսմիկ հոգաբարձու եղև, և ոչ զգոհութիւնն զոր մատոյց
նմա իշխանն վասն այնչափ փութոյ նորա և տալոյ ինքեան
զուրախութիւն՝ բարի առնելոյ սիրելոյդ տոհմայնոյն։

Մինչդեռ սիրտ նորա ընդարձակեալ էր և ձայնն կեն-
դանացեալ 'ի գովութիւն արքայի, հասանէ իշխանն Գոն-
թեայ սրատարոփ շնորհակալեօք և ցաւովք. անդրէն յու-
զեալ խաղան գութք, իշխանքն երկոքին լուան 'ի միասին
զոր ոչ ելցէ երբեք 'ի սրտից նոցա, և իշխանս կնքեաց հաս-
տատութեամբ, թէ չիք ձեզ լինել արս հոյակապս և ոչ
իշխանս մեծ, և ոչ մարդ բարի, եթէ չլինիցիք բարեգործք,
հաւատարիմք առ Աստուած և առ արքայ։ Այս վերջին
բան է նորա՝ զոր եթող գրոշմեալ 'ի միտս նոցուն. այս է՝
վերջին նշանակաւ սիրոյ իւրոյ՝ համառօտութիւն պարտուց
նոցին։ Ճչիւ աղաղակաւ հնչէր ամենայն, ամենայն յարտա-
սուս ցնդէր. իշխանն միայն անխռով կայր, և յամուրն յոր
ինքն անկեալ էր՝ չժամանէր վրդով։ Տէր Աստուած, դու
էիր նորա զօրութիւն, դու նորա ապաւէն անսասան, և
որպէս Դաւիթն ասէր [1], վէմ անվանելի յոր յեցեալ էր
ժուժկալութիւն նորա։

1 Բ. Թագ. ԻԲ, 2, 3։

Իցէ՞ ինձ լուռ լինել 'ի պահուս՝ որ ինչ յարքունիսն և զառաջեաւ արքայի գործէր։ Իբրև ետ նա ընթեռնուլ անդ զյետին գիրն՝ զգրեալն յառնէն մեծէ, և տեսան անդէն՝ յերիս ժամանակսն եղանագրեալս յիշխանէն՝ ծառայութիւնք իւր զորովք 'ի հարևանցի վեր 'ի վերոյ անցանէր 'ի սկիզբն և 'ի կատարած կոյս կենացն, և 'ի միջոցին վրիպակք իւր՝ զորոց ստուգապատում առնէր խոստովանութիւն, չգտաւ սիրտ որ ոչ փղձուկ անկանիցի՝ 'ի լսելն զի այնչափ պարկեշտութեամբ խօսէր զանձնէն, և այսմ կարգացման զհետ եկեալ արտասուք արքային՝ յայտ արարին զոր գիւցազունք զգան զմիմեանց։ Իսկ իբրև հասին 'ի տեղն շնորհակալութեանն, յորում դաւանէր իշխանն թէ գոհ մեռանի, և յոյժ երջանիկ՝ զի է իւր տակաւին կեանք բաւական առ խոստովան լինելոյ արքայի զշնորհս երախտեաց նորա, զիւր ինքնանուէր հպատակութիւն մտերմութեան, և եթէ իշխէր ասել՝ զգութ սիրոյ իւրոյ, անդ բոլոր բաղմութիւնն վկայեաց ճշմարտութեան բանիցն։ և որոց լուեալն էին յաճախ զնօսս նորա զարքայէն մեծէ յընտանի զրուցատրութիւնս, կարէին երաշխաւորել, զի չէր նոցա լուեալ երբեք ուրեք առաւել մեծամեծար ինչ և խանդաղատելի զնուիրական անձնէ նորա, և ոչ ազգու ինչ 'ի գովեստ արքայական առաքինութեանցն, բարեպաշտութեանէն, արութեանն, մեծի հանճարոյն, մանաւանդ 'ի գործ պատերազմի, քան զոր իշխանս մեծ ասէր՝ հեռի 'ի կուտակելոյ և 'ի սրակելոյ։

Յորժամ զայս վկայութիւն վկայէին զնմանէ, այրն մեծ ոչ ևս էր 'ի միջի հանգուցեալ 'ի գիրկս Աստուծոյ իւրոյ՝ յոր դամ մի ընկեցեալ էր զանձն, ակն ունէր ողորմութեան նորա, և հայցէր զօգնութիւն նորա, մինչև պակասեաց 'ի շնչոյ և 'ի կենաց։ Աստ արժան էր գուժել արդարոյն ցաւոց 'ի զրկումն այնքանոյ մեծի առն. այլ առ սէր ճշմարտութեան և 'ի կորանս անծանօթից նորա՝ լուարուք և զգեղեցիկ խոստովանութիւնն զոր դաւանեաց 'ի մեռանելն։ Թէպէտ ամենայն 'ի խոստովանահօրէն եղեալ, զի թէ չէցեն սիրաք մեր կատարեալ ըստ Աստուծոյ, պարտ է խնդրել 'ի նմանէ սիրտ՝ որպէս ինքն կամի, և ասել առ նա ընդ Դաւթի զխանդաղատական բանքս. «Սիրտ սուրբ հատեա յիս, Աստուած»։ Յայս բարբառ իբրև 'ի մեծ ինչ խորհուրդ ընկղմեալ՝ զկայ առնու իշխանն, ապա կոչեցեալ զսուրբ կրօնաւորն՝ զթեզադրիչն գեղեցիկ խնասանցս. «Իմ չէք երբեք, ասէ, երկմտեալ զսորհդոց աստուածպաշտութենէ, որ զինչ և զինէն բամբասեալն իցեն»։

Հաւատալ պարտիք նմա, քրիստոնեայք։ և 'ի վիճակի անդ յորում էն, չպարտի ինչ այլ աշխարհի բայց 'ի ճշմարտութենէ։ «Սակայն, յաւել ասել։ Ոչ երբեք առաւել աներկիմիտ եղեալ եմ քան այժմ։ Իբրև զի, 'ի վերայ ածէր սքանչելի քաղցրութեամբ, յստակին և լուսանան 'ի միտս իմ այն ճշմարտութիւնք։ Այո, ասէ, տեսանելոց եմք զԱստուած որպէս և էն, դէմ յանդիման»։ Եւ երկրորդեր լատիներէն զարմանալի ախորժանօք զահագին ձայնսն. Որպէս է՝ դէմ յանդիման [2]. և ոչ որ ձանձրանայր տեսանել զնա յայնմ քաղցր ցնծութեան։ Զի՞նչ լիներ 'ի հոգւոյ անդ յայնմիկ։ զի՞նչ լոյս նոր ծագէր 'ի նմա։ ո՞ր յանկարծելեաց Հառագայթ փեռեկէր զամպն, և ընդ զգայնոցն ագիտութեան՝ ցրուեալ փարատէր 'ի ժամուն՝ ևս և զմտայն, եթէ ժամցիմ ասել, և զսուրբ մթարան հաւատոց։ զի՞նչ եղեն յայնժամ գեղեցիկ անուանքն պատուոյ՝ յորս նազի ամբարտաւանութիւն մեր։ Ի ժամանել չքնաղ աւուրն և յառաջին անդ նշոյլս փայլակնացայտ լուսոյն, զիարդ նոյնհետայն չէք լինին ամենայն ցնորք աշխարհականք, շողուն չքեղաշուք յաղթանակի՝ խաւարին երևի, փառք նորա անդոսնին, և որ 'ի նոյնս շլացան Հայրոտեալ աչք՝ յատելութիւն դառնան։

1 Սաղմ. ԾԻ, 12։
2 Ա. Յովհ. Գ, 2։ Ա. Կոր. ԺԳ, 12։

Եկայք, ժողովուրդք, ծն եկայք այժմիկ. այլ մանաւանդ եկայք իշխանք և տեարք, և որ գոսիք ղերկիր, և որ զդրուսն երկնից բանայք մարդկան, և առաւել քան զբնաւս՝ գուք արքայք և տիկնայք, աղնուական շառաւիղք թագաւորաց բաղմաց, լուսաւորք Գալիլեոյ, այլ այսօր նսեմացեալք և 'ի թուխս համակեալք ցաւոցդ՝ իբրև մառախլապատք, եկայք տեսէք զդոյզն ինչ որ մնայ մեզ յայնչափ 'ի մեծաշուք սերնդենէ, յայնչափ մեծութենէ, յայնչափ փառաց. ակն արկէք շուրջանակի յամենայն կողմանս: Աւաղիկ է զոր կարող դառաւ առնել փառաւորութիւն և բարեպաշտութիւն 'ի պատիւ գիւցազնին. չքեղ անուանք, արձանագիրք, մնոտի նշանակք այնր՝ որ ոչ ևս է 'ի միջի, պատկերք յարտօսրաթոր կերպարանս շուրջ զշիրմաւ, և անցաւոր օրինակք ցաւոց՝ զոր ամենայնիւ հանդերձ՝ վարէ տանի ժամանակ. սիւնք՝ որ մինչև յերկինս ամբառնալ թուին զբարձրանչան վկայութիւն չքուութեան մերոյ. և յամենայն պատիւս յայս՝ չիք ինչ որ 'ի միջոյ պակաս իցէ, բայց այն ևեթ՝ որում լինին: Լայցէք արդ 'ի վերայ ողորմելի մնացուածոց մարդկեղէն կենաց, ողբս առէք 'ի վերայ եղուկ անմահութեանն՝ զոր ընծայեմք գիւցազանց:

Այլ մնա մատիք մանաւանդ ով գուք՝ որ հրաբորբոք ընթանայք յասպարիսին, հոգիք պատերազմիականք և ամենեքիք. ով ոք արժանագոյն դառաւ հրամանատար ձեզ կալոց. այլ յիւմ ուսիք պարկեշտագոյն դառք զհրամանատարութիւն: Աշխարեցէք ուրեմն զմեծ զօրավարն, և ասացէք հեծեծելով. Աւասիկ որ առաջնորդէրն մեզ 'ի վանդս. ընդ սովաւ վարժեալ կրթեցան այնքան անուանի զօրապետք, զորս օրինակք իւր բարձրացուցին յառաջին պատիւս պատերազմի. կարող էր ուրուն իւր տակաւին վանել զմարտս, և աւասիկ 'ի լռութեան ատ իւրում՝ անուանն անգամ խրախոյս մեզ հարկանէ, և միանգամայն ազդեցութիւն առնէ մեզ, թէ առ 'ի դատելոյ 'ի մահու զնշմար ինչ մնացեալ 'ի վաստակոցս, և չերթալոյ ամենևին անոյս 'ի յաւիտենից յարիս մեր՝ ընդ երկրաւոր արքային պարտ է պաշտել և զարքայն երկնից: Տարայք ուրեմն պաշտօն թագաւորին այնմիկ անմահի. որ լին է ողորմութեամբ, և զմի ևեթ հեծութիւն անգամ թուեսցէ զձեր, և զբաժակ մի ջուր մատուցեալ յանուն իւր, քան թէ այլք բնաւ զարիւն ձեր հեղեալ բովանդակ. և սկիզբն հաշուելոյ զժամանակ պիտանի ծառայութեանցդ՝ առէք յօրէ յորմէ ընծայիցէք զանձինս ձեր Տեառնն բարերարի:

Իսկ գուք ո՞չ գայցէք յայս տխուր մահարձան, գուք՝ ասեմ, զորս հաճեցաւ նա հանել 'ի կարգ բարեկամաց: Այնենքին միահամուռ, յոր չափս մտերմութեան իւրոյ և ընկալեալ իցէ զձեզ, փարեցարուք զշիրմաւս, հեղէք արտասուս հանդերձ պաղատանօք, և սիրացեալք ընդ իշխանին մեծի գիւրահեշտ բարեկամութիւն և ընդ անուշակ կենացն հաղորդութիւն, պահեցէք զյիշատակ գիւցազնին՝ որոյ հաւատար էր բարութիւն իւր ընդ սրտին արութեան: Ո՜ տայր թէ սիրելի լինէին ձեզ միշտ խօսք զնմանէ, ո՜ տայր թէ շահեալք յաւաքինութեանց նորա, և մահ նորա զոր արտասուէք՝ լինէր ձեզ 'ի մխիթարութիւն, համայն և յօրինակ բարի:

Իսկ ինձ, եթէ ներեսցի յետ այլոց ամենեցուն դալ և ինձ հատուցանել զյետին պարտս առ այս դամբարան, ով իշխան, այր արժանաւոր գովութեանց մերոց և ցաւոց, յաւիտեան կեցցես յուշ յիշատակիս. պատկեր քո կենդանի նկարեալ կացցէ անդ, ոչ անվեհեր քաջութեամբդ որ զյաղթութիւն աւետէր, ոչ. չկամիմ տեսանել ինչ 'ի քեզ զոր եղծանէ 'ի նմա մահ. այլ 'ի պատկերն անդ կերպարանք իցեն քեզ անմահականք. տեսից զքեզ անդ՝ որպիսի էիր յաւուրն յետնում ընդ ձեռամբն Աստուծոյ, յորժամ փառք նորա սկսան ելանել քեզ: Անդ տեսից զքեզ առաւել յաղթական քան 'ի Փրկպուրկ և 'ի Ռոքռոա. և հիացեալ ընդ էքնաղ յաղթանակդ՝ 'ի խոստովա-

նութիւն գոհութեան գոչեցից զգեղեցիկն բարբառ աշխարհերին սիրայնոյ. « Եւ այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր. [1] » Ճշմարիտ յաղթութիւն, որ կոխան դնէ ոտից մերոց զբնաւ աշխարհ, հաւատքն մեր են: Վայելեա՛ արդ, իշխանդ, 'ի յաղթութիւնդ յայդ, վայելեա՛ յաւիտեան՝ անմահ զօրութեամբ պատարագիս. հաճեաց ընդ յետին ճիգն ծանօթ քեզ ձայնի. դու վախճան առնիցես ամենայն ճառիցս այսոցիկ: Ցայսմ հեռէ՝ փոխանակ զայլոց մահ ողբալոյ, մեծդ իշխան, կամիմ ուսանել 'ի քէն՝ սուրբ առնել զմա. երանի թէ 'ի սպիտակ ալեաց ասի խրատեալ զհամարոյն՝ զոր կայ ինձ տալ ընդ պաշտօնն սպասաւորութեանս, պահեցից հօրս՝ զոր պարտիմ մնուցանել բանիւն կենաց՝ զնշխարեալ մնացորդս ձայնիս որ նուաղի, և զեռանդանս՝ որ շիջանի:

1 Ա. Յովհ. Ե, 4:

ՎԱԽՃԱՆ ԴԱՄԲՈՆՆԱԿԱՆԻ ԼՈՒԴՈՒԻԿԵԱՑ ՊՈՒՐՊՈՆԵԱՆ

ՀԱՅԿ. ԱՌՈՒԱՔԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀՍՍՌ Գիտ. ԸՍՏ
Լ. ՄԱՐ. Ա. ՄԱՏԻՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

(Ա.) Խօսեալ յեկեղեցւոջ Տիրուհւոյն մերոյ 'ի Փարիզ 'ի տաներորդ աւուր մարտի, 'ի 1687, առաջի իշխանին Գոնտէի որդւոյ հանգուցելոյն:

(Բ.) Իմա առ որդին իւր, որ 'ի յաջորդելն զհայրն յետ մահուան հաւուն՝ կոչեցաւ ըստ օրինի յայդ անուն, և զկնի մահուան հօրն՝ եղև ըստ օրինի իշխան Գոնտէի, և գահերեց կայր յակմբի անդ ունկնդրաց Ճառիս:

(Գ.) Կնոջ Թոռին իւրոյ՝ դստեր արքայի Լուդուիկեայ ԺԴ:

(Դ.) Նուն իւր:

ՅԱՆԿ

—

Հաս դամբանական Հենրիկէ Մարիամու Գալլիոյ դըշխոյի Մեծին Բրիտանիոյ . . . 1
» Հենրիկէի Անտայի Անգլիոյ տիկնոջ իշխանին Օռլէանայ 41
» Մարիամու–Թերեզեայ Աւստրիական գասեր արքային Սպանիոյ դշխոյի Գալլիոյ և Նաւարայի . . 79
» Անտայի Կոնզակագլեւեան իշխանահնոջ Պալատունեայ 121
» Միքայէլ Լըթէլլեան ատենադպրի Գալլիոյ 165
» Լուդուիկեայ Պուրպոնեան իշխանին Գոնտէի առաջին արքայազն իշխանի 211

45

0047587

23 Θ

<< Ազգային գրադարան
NL0027587